3979

9(495)
P - 35

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Նուէր օր. Մարիամ Արամեանից՝ ի յիշատակ իւր հօր՝ բժ. Միսաք Արամեանի։

1 - MAR 2013
3979
9(495)
Բ-35
05 OCT 2011

ԿԱՌԼ ՄԵՆԴԵԼՍԶՈՀՆ ԲԱՐԹՈԼԴՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ

ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՍՏԱՆՏՆՈՒՊՈԼՍԻ ԱՌՈՒՄԻՑ
1453 ԹՈՒԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.

Թուրքերի Կոստանտնուպոլսի առումից
1453 թուականից մինչեւ Նաւարինի ծովամարտը։

1004
17590

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.
1906։

Дозволено цензурою 25 Апрѣля 1906 г. Тифлисъ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ռուս-Թուրքական պատերազմը մի դարագլուխ է Հայոց նորագոյն պատմութեան: Սանստեֆանոյի խաղաղութեան 16-դ և Բեռլինի 61-դ յօդուածները սրբագործում էին այն յոյսերը, որ հայերը դարերից ի վեր տածում էին, որոնց իրագործման համար այնքան ճիգ ու ջանք էին թափել, բայց յուսախաբ եղել:

Մի նոր զարկ տուաւ այդ պատերազմը մեր արդէն եռանդով սկսուած դպրոցներին, լրագրութեան, գրականութեան և մեր բովանդակ կեանքին: Նորից արծարծուեցաւ մոխրի տակ թաղնուած կրակը. քաղաքական աւելի ազատ կեանքի մերձաւոր ապագայի արշալոյսը մաղկտում էր:

Այս նոր շարժումը իւր նախընթացներից այն տարբերութիւնն ունեցաւ, որ չմեռաւ հեղինակների հետ, այլ շարունակուեցաւ հետզհետէ պարարտ, թէև սկզբում սակաւ, հող գտնելով հայ ազգի մէջ: Հայ երիտասարդութիւնն էր այդ, երիտասարդութեան այն մասը, որ սնուել և մեծացել էր ազգային ոգով և դարու եւրոպական լուսաւոր գաղափարներով: Պատկանեանցը իւր ազատ երգերով բողոքում և ոգևորում էր և նոր ուղի գծագրում, իսկ Ծերենցը և մանաւանդ Րաֆֆին իւրեանց վէպերով ծրագրում:

Ապրելով այդ շարժման շրջանում և այդ կեանքով, պէտք է ասենք, որ այդ շարժումը թէև սկսուեցաւ Տաճկահայաստանի խնդրով, բայց հէնց սկզբից ռուսահայոց ուսանողութիւնը Ս.-Պետերբուրգից իւր գաղտնի հրատարակութիւնները ութսունական թուականներին ուղղեց նաև ռուսացման ծրագրի դէմ, որ սկսուեցաւ թոյլ և ծանր, բայց յետոյ արագ, եռանդագին քայլերով և վերջերս մոլեգնութեամբ շարունակուեցաւ: Դպրոցների և ընկերութեանց փակումը, լրագրութեան սեղմումն ու խափանումը, տնտեսական ճնշումները, եկեղեցու և իւր պետի իրաւանց բռնաբարումը, առհասարակ հայութեան ընդհանուր հալածանքը, որ իւր հեռակէտին հասաւ ազգային

եկեղեցու կալուածների յափշտակմամբ Գալիցինի օրով, այդ քաղաքականութեան պտուղներն են, որ հայերս վայելեցինք։

Համարեա ամբողջ հայ ժողովուրդը բողոքեց իւր ցոյցերով և ահաբեկմամբ՝ տերրորով, յատկապէս յեղափոխական կազմակերպութեանց գործակցութեամբ և յաճախ ղեկավարութեամբ, բայց մանաւանդ ազգիս Վեհափառ Հայրապետը՝ իւր դիմումներով և վերջին ընդարձակ յուշագրով։ Այնուհետև հայերս այժմեան փոխարքայ Վարանցով-Դաշկովի միջնորդութեամբ ետ ստացանք մեր դպրոցներն ու կալուածները, բայց ի հարկէ միայն միապետական կառավարութեան ճապոնացիներից կրած խայտառակ պարտութիւններից յետոյ, երբ բուն Ռուսաստանում ևս հայոց շարժման յաջորդեցին օտար տարրերի և ապա բուն ռուս ժողովրդի և հպատակ այլ ազգերի ներքին խլրտումները, երբ ուրեմն կառավարութիւնը արտաքուստ և ներքուստ թուլացաւ։—Բայց եթէ վրայ չգային ճապոնական պատերազմն ու ներքին խլրտումները, ի՞նչ կը լինէր մեր վիճակը... աւելորդ ենք համարում ասել. սակայն չենք կարող չհարցնել, թէ արդեօք այս հանգամանքն ևս չէ՞ կարող առ այժմ գէթ մասամբ խրատական լինել տաճկահայոց ազատութեան իղձերի չափն ու սահմանը, միջոցներն ու ժամանակը որոշելու։

Նոյն ռուսահայ ուսանողութիւնը մանաւանդ ապէս Մոսկուայինը տաճկահայոց ազատութեան գաղափարը հայոց մէջ վառ և բորբոք պահելուն և խրախուսելուն ու ութսունական թուականների վերջերին նպաստում էր իւր հրատարակած գրքոյկներով, յատկապէս բալկանեան թերակղզու նոր ազատուած ազգերի կեանքին վերաբերեալ վիպասանութեանց թարգմանութիւններով։ Այս շարժումը քաջալերեցին Եւրոպայից հետզհետէ Արմենիա, Հնչակ և Դրօշակ պարբերական թերթերը, որոնք և կազմեցին յեղափոխական գաղտնի ընկերութիւններ տաճկահայոց դատին ոյժ տալու։ Շարժումը գնալով մեծանում էր 1889 թուից[1], մանաւանդ 1890-ին Կումկապուի դէպքից յետոյ։ Մինչդեռ մի կողմից Եւրոպայում

1) Գուլակովեանի կարծեցեալ ի Գոլոշեանի սպանումը Կուչի լեռներում։

«Հայաստան» թերթը, հայ ուսանողութիւնը, Մինաս Չերազի l'Armenie-ն և Դաշնակցութեան Pro Armenia-ն եռանդագին աշխատում էին քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը գրաւել և Եւրոպայի մեծ պետութեանց ուշադրութիւնը դարձնել Տաճկահայաստանի վրայ՝ յիշեցնելով Բեռլինի վեհաժողովի խոստացած վերանորոգումները, միւս կողմից երկրում շնորհիւ Արմենիա, Հնչակ և Դրօշակ թերթերի և կազմակերպութեանց, մանաւանդ Դաշնակցութեան գործունէութեան, արտայայտուեցան այդ ջանքերը 1894-ի Սասունի և այլ կոտորածներով, ապա հետզհետէ Ռուսաստանից և մասամբ պարսկաստանից ներս խուժող ասպատակային խմբերի արշաւանքներով, մերթ եղբայրակիցներին պաշտպանելու, մերթ վրէժառութեան և մերթ երկրում ապստամբութիւն առաջացնելու դիմադրական պատրաստութեամբ։ Յեղափոխական շարժումը Ռուսաստանում լայն չափ և ծաւալ ստացաւ ռուսահայոց մէջ 1903-ին ազգային եկեղեցական կալուածների գրաւմամբ՝ յատկապէս այս յափշտակութեան դէմ բողոքելու, որ հասարակ ժողովուրդը զուգորդեց տաճկահայոց դատին, և այնուհետև համաժողովրդական դարձաւ 1904-ի փետրուարի արիւնալից օրերին՝ Կովկասում սկսած ընդհարումներով, երբ յեղափոխութիւնը, ինչպէս այսօր, դարձաւ ինքնապաշտպանութեան մի գործ։ Թէ ինչ կը լինի Անդր-Կովկասի հայ—թուրքական ընդհարումներից յետոյ, դժուար չէ նախագուշակել։

Եւրոպայում հրատարակուած վերոյիշեալ հայերէն թերթերն ու իրենց կազմակերպութիւնները ցարդ չեն տուել մեզ մեր բախտակից, երբեմն թուրքերի բռնութեան տակ հեծող, իսկ այժմ ազատուած յոյն, սերբ և բուլղար ժողովուրդների ազատութեան պատճառաբանական մի պատմութիւն, գոնեա մեզ յայտնի չէ. այն ինչ մեր նպատակի և ձգտումների համար օգտակար կը լինէր համեմատել մեր և նոցա հանգամանքները, ժամանակն ու միջոցները և ուրիշների փորձառութիւնից օգտուել։ Բաւական չէ միայն ոգևորութիւնը, պէտք է հեղեղ դարձած հոսանքին ուղղութիւն և կանոնաւոր ընթացք տալ։

Այդ պակասը լրացնելու կարևորութիւնը ցոյց տալու

համար հրատարակւում է այս գրուածքը: Մեզ դժբախտաբար աւելի համոզկեր և ազդու է դրսի ձայնը և օտարի խօսքը. ուստի կարևոր համարեցինք Կառլ Մենդելսզոհն Բարթոլդիի երկհատոր «Պատմութիւն Յունաստանի թուրքերի՝ Կոստանդնուպոլսի առումից՝ 1453 թուականից մինչեւ մեր օրերը» երկասիրութեան Ա. հատորի Բ. գրքի թարգմանութիւնը: Ա. հատորը հասնում է մինչև Նաւարինի ծովամարտը, Բ-ը մինչև Նոր Յունաստանի առաջին թագաւոր Օտտոյի ընտրութիւնը՝ 1835 թիւը: Հեղինակի հռչակը գործիս գրաւական է, Գերվինուսի այս արժանաւոր աշակերտը նորա խրախուսանքով 1860 թուականին սկսել է այդ գործը, աւարտել 1870-ին և տպագրութեան յանձնել իւր տասը տարուան դեգերման արգասիքը: Մինչև այդ թիւը եղած բոլոր նոր լեզուներով տպագրուած անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, ռուսերէն և յունարէն բազմաթիւ հեղինակների մենագրութիւններ, բազմահատոր պատմութիւններ աչքի առաջ ունի: Այլև օգտուել է անտիպ գրուածքներից Պետերբուրգի, Լոնդոնի, Պարիսի, Կոստանդնուպոլսի, Բեռլինի, Միւնխէնի և Շտուտգարտի դիւաններից. շատ քաղաքների մատենադարանապետներ օժանդակել են նորան այս գործի յաջողութեան համար «խօսքով ու գործով». բացի այդ Յունաստանից անթիւ անտիպ նամակներ և մասնաւոր հաղորդագրութեանց պատճէններ և բնագրեր է ստացել իւր այս ուսումնասիրութեան համար: Այլ և երեք անգամ ուղևորուել է Յունաստան երկիրն ու ժողովուրդը ճանաչելու նպատակով. «Դժբախտաբար միշտ միայն թեթևակի սահելով անցանք, մինչդեռ պէտք էր երկար տարիներ մնալ, որ երկրի ու ժողովրդի մասին հիմնաւոր վճռահատութեան հասնէինք», ասում է մեր համեստ բայց մեծ հեղինակը:

Եթէ Յունաստանի պատմութեան Ա. հատորի այս Բ. գիրքը ընդունելութիւն գտնի և առիթ ու դրդիչ դառնայ հետզհետէ գործի ամբողջ և նման դասական պատմագրութեանց թարգմանութեան, մեր նպատակին հասած կը լինինք:

Հայ-Արմէն

Դեկտեմբեր, 1905 ամի,
Վաղարշապատում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թուրքերի քայքայումը էջ 3.—Ռուսաստանի միջամտութիւնը 7.—1770 թուականի ապստամբութեան վախճանը 10.—Քիւչիւկ Կայնարջիի խաղաղութիւնը 11.—Նաւագնացութեան և առևտուրի բարգաւաճումը 12.—Ռուսաց և Աւստրիացոց բաժանման ծրագրեր 15.—Ֆրանսական յեղափոխութեան ազդեցութիւնը 18.—Ռհիգասի մահը 22.—Մարսէյլէօզն արևելքում 23.—Կենտրոնախոյս ոյժերը Թուրքիայում 28.—Ալբանացոց դրութիւնը 29.—Ալի փաշայ 33.—Ալու բարձրանալը 35.—Սուլեցիք 42.—Սուլիի կռիւները Ալու դէմ 46.—Ալու յարաբերութիւնները ֆրանսացոց հետ 49.—Նոր կռիւ սուլեցոց դէմ 54.—«Վերջին դատաստան» 57.—Սուլեցոց աղէտը 60.—Ալին և կլեֆտները 63.—Եւթիւմիոս Բլախաւաս 65.—Արգիւրո-Կաստրո 69.—Վրիժառութիւն Գարդիկիից 70.—Պարգայի ողբերգութիւնը 75.—Ալին իւր զօրութեան հեռակէտին 77.—Ալու քաղաքականութիւնը 80.—Ալու ընդհարումը Դռան հետ 85.--Ալու վերաբերմունքը դէպի յոյները 87.—Ալու ապստամբութիւնը 90.—Սուլեցոց անկախութեան հռչակումը 95.—Յունաց յեղափոխութեան սկիզբը 98.—Ալու վախճանը 101.—Հետերիա 102.—Սերբերի և յոյների դաշնակցութիւնը 110.—Ջեօրնի-Գէորգի և Գալատիսի սպանումը 110/11.—Հետերիայի տարածումը 112.—Կապոդիստրիաս և Իպսիլանտիս 115.—Քսանթոսի և պելոպոննէսացոց առաքելութիւնը 118.—Քսանթոսի առաքելութեան հետևանքը 121.—Ալէքսանդր Իպսիլանտիսը Հետերիայի վարիչ 124.—Հետերիայի զինուորական կազմակերպութիւնը 125.—Յեղափոխական ծրագրեր 126.—Իսմայիլի ժողովը 130.—Իպսիլանտիսը փոխում է իւր միտքը 131.—Որոշում Դանուբեան իշխանութեանց մէջ ապստամբութիւն սկսելու 132.—Ռումանիոյ դրութիւնը 133.—Պրուտն անցնելը 136.—Իպսիլանտիսը Եաշիում 137.—Յունաստան և Ռումանիա 138:

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Յունաց յեղափոխութեան նախապատրաստող շարժումները եւ բռնկումը:

Բաւական ախորժալուր է հնչում, թէ մի ժողովուրդ սեփական ուժով է իւր ազատութիւնը ձեռք բերել։ Բայց պատմական հիմնաւոր հետախուզութեամբ սովորաբար չէ հաստատւում այն, ինչ որ ժողովրդական ճարտասանները խանդավառ և յաղթանակով աւետում են։ Հետազօտութիւնը ընդհակառակը պարզ և մեկին պիտի որոշի ամեն մի անկախութեան կռուի ծագման պատմութեան մէջ բախտի բերմունքը ազատ զարգացումից, օտարի ազդեցութիւնները ժողովրդի սեփական գործունէութիւնից։ Այսպէս յոյների անկախութեան կռիւը մեզ չէ ներկայանում ինչպէս մի մեծ գետ, որ յանկարծ յորդահոս և պարզ ու վճիտ գետնից դուրս է ժայթքում. ոչ, այլ պղտոր և ճահճահոտ հոսանքներից միայն հետզհետէ զտւում է բիւրեղեայ մաքուր տարրը։

Յոյների համար էլ չափազանց հելլենասէրները երգում էին, որ նոքա իրենց քաղաքական անկախութիւնը միայն իրենց են պարտական։ Բայց այն երգը կեղծ է. այն երգը խառնում է կարելին իրողութեան հետ։ Յոյները շատ ջանք պիտի թափէին, որ կարողանային օտարի տիրապետութեան ազդեցութեանց վատ հետեւանքները վանել և միայն իրենք իրենց իբրև ազգութիւն պահպանել։ Նոցա արժանիքն այն է, որ նոքա իրենց պահպանեցին. բայց այդ դեռ չէ նշանակում, որ նոքա կարող էին իրենց սեփական ուժով յառաջ բերել քաղաքական այն մեծ յեղաշրջումը, որ ԺԹ. դարի սկզբում բովանդակ Հեմոս թերակղզին ցնցեց։ Մանաւանդ թէ չպէտք է մոռանալ, որ շատ արտակարգ հանգամանքներ նոցա նպաստեցին։

Երբ Լորդ Բայրոնը առաջին անգամ նոր հելլեն-
ների հետ ծանօթացաւ, հետեւեալ նկատողութիւնը գրի
առաւ. «Յոյները երբեք անկախ չեն դառնալ, նոքա երբեք
ազատութիւն ձեռք չեն ձգիլ, և Աստուած չանէ. բայց կարող
են հպատակ մնալ, առանց ստրուկ լինելու։ Այժմ նոքա տան-
ջւում են Իռլանդիոյ կաթոլիկների և հրէաների և ուրիշ
չարատանջ հերձուածողների պէս այն բոլոր բարոյական և
ֆիզիքական ցաւերով, որ կարող են մարդկութեան՝ գլխին
գալ։ Նոցա կեանքը մի ոգորումն է ճշմարտութեան դէմ.
նոքա մոլի են դարձել անձնապաշտպանութիւնից ստիպուած։
Բարութեան այնքան անսովոր են, որ եթէ մարդ պատահ-
մամբ նոցա սիրալիր կերպով հանդիպի, կասկածամիտ են
դառնում, ինչպէս որ մի յաճախ ծեծ կերած շուն ատամ է
ձգում իրան փաղաքշող ձեռքին»։ Երբ Բայրոնը 1810/11
թուականի ձմեռն Աթէնքումն էր անցկացնում, ամենքը նո-
րան հաւատացնում էին, թէ յոյներն արժանի չեն ազատա-
գրութեան. և ֆրանսացի Ռոքը պարծենում էր իւր արհա-
մարհական սրախօսութեամբ, թէ «Յոյները դեռ բոլորովին
նոյն սրիկաներն են, ինչպէս Թեմիստոկլեսի օրերում։

Եթէ այդպիսի դատավճիռները թերևս շատ էլ խիստ
էին և ապագան ջրեց այն տարակոյսը, որ կար յոյների
դիմադրական կարողութեան մասին, բայց և այնպէս այդ
դիմադրական կարողութիւնն եւ միայն չափազանց յաճախ
ցոյց տուաւ այն ստրկական ոգու և բարոյական քայքայման
հետքերը, որ մի օտարի իշխանութիւնը սովորաբար պատուաս-
տում է։ Կարելի էր միթէ կարծել, որ «ծեծուած ստրուկը»
մենակ՝ իւր մէջ այնքան բարոյական և ֆիզիքական ոյժ կարող
էր զգալ, որ յանկարծ մի թափով իւր շղթաները փշրէր։
Դժուար... խորագինին պատմական դիտողութիւնն ընդ-
հակառակը ցոյց պիտի տայ, որ ստրուկը քանիցս շղթան
թօթուել է, բայց չէ կարողացել թօթափել, որ նա աջ ու ձախ,
հիւսիս և արեւմուտք օգնութեան է կանչել, բայց որ թեթեւու-
թիւն է գտել միայն իւր բռնապետի անհոգութեամբ։ Յոյ-
ներն իրենց ազատութիւնը պարտական են ամենից առաջ
իրենց տէրերի անզօրութեան և բթամտութեան. հետզհետէ
Թուրք կառավարութեան աւելի և աւելի վատթարանալով

զօրացան հելլենների ազատութեան յոյսերը և տենչանքը։
Ուստի մեր գործը պիտի լինի նախ ներկայացնել Թուրքերի
անկման ընթացքը և ցոյց տալ այն պատճառները, որոն-
ցից կարողացան օգտուել պատուասէր Աւստրիան, Ռուսաս-
տանը, Ֆրանսիան և վերջապէս ռայան։

Բաւական արագ սկսաւ նուազել այն ոյժը, որով սկզբ-
ներում Թուրք պետութեան կազմը կենդանացել էր։ Մի
զինուորական կազմութիւն, որ հպատակներին տրորում էր,
փոխանակ կառավարելու, մի բացառիկ դրութիւն, որ միայն
սրի վերայ էր յենուած, կարող էր տևել, որքան որ մի շարք
հզօր ինքնակալ իշխաններ Օսմանի գահն էին բազմել, որոնց
բազուկները այնպէս ջլապինդ և հուժկու էին, ինչպէս իրենց
կամքն ու վճռականութիւնը։ Բայց արդէն Ժ.Զ. դարում,
Թուրքերի պատմութեան ամենաբարձր, փայլուն շրջանում
հասաւ այն վարկեանը, երբ պետութեան հիմնող և պահպա-
նող ոյժը թուլացաւ։

Սուլէյման Ա.-ի ժամանակ Թուրք պետութիւնը ներսից
հասել էր ամենախիստ կենտրոնացման, դրսից ամենամեծ
հողային ընդարձակութեան։

Երբ սուլթանի, Պօղոս Գ. պապի, Ֆրանսիոյ Ֆրանցիսկոս
կամ Ֆրանսուա Թագաւորի և գերմանացոց բողոքականների
միակ դաշնակցութիւնը կայացաւ, այն ժամանակ թւում էր,
թէ Եւրոպայում գոյութիւն ունեցող հին կարգերը հիմնովին
պիտի խախտուէին։ Բայց Օսմանցոց հանդէպ գալը Եւրոպայի
տէրութեանց այն ժամանակուայ դասաւորութիւնը կարող էր
միայն առժամանակ կասկածելի դարձնել։ Ճիշտ հենց այդ
փայլուն շրջանում պետական անձանց և պատմագէտների
սրատես աչքը նշմարեց քայքայման և անկման սաղմը։ Այստեղ
Վենետիկի հասարակապետութեան վերատեսուչները կառա-
վարութեան տուած իրենց ծանուցումներով բոլորովին համա-
ձայն են նոյն իսկ Թուրք պատմաբանների հայեացքներին։
Մինչդեռ առաջուայ սուլթանները անձամբ մասնակցում էին
պետական խորհրդին, Սուլէյմանը երբեմն էր միայն մասնակից
խորհրդակցութեանց կամ շատ շատ ունկնդիր էր լինում քօղով
ծածկուած պատուհանի ետեւից։ Յետ քաշուելով պետական
գործերից՝ նա արեւելեան առանձնասիրութեան առաջին ազե-

տաքեր օրինակը տուաւ, որին կանանոցի հեշտանքներում մեղկացած մի սերունդ չափազանց կամակորութեամբ պիտի հետեւէր։ Սուլէյմանի օրով սկսուեցան արքունի և պետական պաշտօնները խառնուել, որ այնքան վտանգաւոր եղաւ։ Մինչև այդ ժամանակ մեծ վեզիրները միայն զատական ամենաբարձր աստիճաններից բարձրանում էին իրենց պաշտօնին։ Բայց Սուլէյմանը խանգարեց դարաւոր կարգը՝ իւր բազէակրին մեծ վեզիր անուանելով, և այսպիսով կանանց, սիրականների, ներքինիների խարդաւանքներին ասպարէզ բաց արաւ։ Միևնոյն ժամանակ ներմուծեց պետական պաշտօններ վաճառ հանելը. փոխարքայութիւնները սակագներով ծախւում էին, արքայական և պետական կալուածքները հրէաներին կապալով էին տրւում։ Ամենուրեք շատ լաւ հասկացան այն առակ դարձած խօսքը, թէ «Փադիշահի գանձը ծով է, և չվայելողը խոզ է». և մարդիկ միամտաբար ընդհանուր կաշառակերութիւնը արդարացնում էին այս գեղեցիկ խօսքով. «Մահմեդականութիւնը ողորմածութիւն է»։ Սուլէյմանի սիրելի Ռուստէմը կարողացաւ իրեն շնորհուած աւատական հողերը մինչև իսկ «վակըֆ»՝ ժառանգական կալուածք դարձնել և ի հաշիւ ժողովրդի բարօրութեան իւր տարեկան եկամուտը հասցնել 10 միլիոնի։ Հետզհետէ հարստութեան աճման հետ ճոխութիւնը հաւասար քայլեր էր անում։ Այժմ սկսեցին ստրուկների ամբողջ բանակներ պահել, միմիայն նոցա բազմութեամբ պարծենալու համար. խուզարկում էին ամենահեռաւոր երկիրներ և շրջում սեղանի համար համեղ պատառներ ճարելու. ասպատակում էին Վրաստանն ու Չերքեզների երկիրը կանանոցի համար գեղեցիկ ստրուկներ գտնելու։ Շուտով արհամարհեցին իրենց նախնիքների հասարակ զգեստը, ինչպէս դժկամութեամբ նկատում է Թուրք պատմագիր Կոչիբէկը։ Իւրաքանչիւր ոք ձգտում էր երեք տեսակ մուշտակ ունենալու. մէկը տանու, մինը դրսի և միւսը պետական՝ արքունիք գնալիս հագնելու համար։ Շատերին կարող են այս նշանները չնչին երեւալ, բայց կարեւորութիւն են ստանում շնորհիւ այն հանգամանքի, որ այս բոլորը հետեւանք է սկսուող քայքայման։ Այս նշաններից երեւում է, որ Օսմանի յաջորդները ընկճուեցան այն ազդեցութիւններից, որ նուաճուած երկրների

կարգերն ու բնական յատկութիւնը ունէին։ Ո՛չ ապաքէն այն կազմակերպութիւնը, որ հիմնուած է բոլոր ույժերի լարման վրայ, պէտք է քայքայուէր, հենց որ մի թոյլ զսպանակ փչանայ. Վենետիկի հասարակապետութեան դեսպան Լօռենցօ Բեռնարդօն իւր 1592 թուականի զեկուցումներով Թուրք իշխանութեան հիմնական սիւներն է համարում. «Կրօնը, խնայողութիւնը և հնազանդութիւնը. բայց արդ այդ հիմնական սիւները խախտուել են։ Կրօնական աղանդներ են յառաջ եկել։ Սկսւում է տատանուիլ նախասահմանութեան հաւատքը, որ կռուի մէջ Թուրքերին ոչ միայն մահն էր արհամարհել տալիս, այլ նոյն իսկ սարսուռ ազդող մահուան տենչանքով լցնում։ Թուրքերի կեանքի հին պարզութիւնը և զգաստութիւնը անհետանում է եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ։ Անպայման հնազանդութեան փոխարէն բռնում է պետութեան մեծամեծների խանդածութիւնը։ Սուլթանի անձնաւորութեան պատիւն ընկնում է։ Այս հանգամանքներից կարելի է բանականօրէն եզրակացնել, ինչպէս որ Թուրք պետութիւնը այնքան կարճ ժամանակում կարողացաւ հեշտութեամբ զարմանալի յառաջադիմութիւն անել շնորհիւ սուլթանի հեղինակութեան, գործակցութեան, վարձատրութեան և պատուի ակնկալութեան, նմանապէս կարելի է այժմ արդէն նորա անկումն սկսուած համարել»։

Այսպէս ակներև էին Թուրքերի զօրութեան նուազման արտաքին նշանները։ Շատ շուտով առասպելական դարձաւ Թուրքերի ազդեցութեան այն շրջանը, երբ սուլթանների ձեռքին էր ամբողջ Եւրոպայի պետութեանց կազմի ձևափոխելը։ Յիրաւի երեկոներին դեռ հնչում էր գերմանացոց շատ խաղաղ գիւղերում զանգակը և յիշեցնում այժմեան գերմանացոց պապերին Թուրքերի տուած նեղութիւնները. յիրաւի Թուրքը գերմանացոց եկեղեցական երգերում «խարդախութեամբ, խորամանկութեամբ, քինախնդրութեամբ» սատանայից յետոյ առաջին տեղն է բռնում. յիրաւի աղօթում էին առաջ և յետոյ հին աղօթքներում բոլոր քրիստոնեաների համար. «Եւ պահէ՛ մեզ քո թշնամիներից, Թուրքերից, Աստուած հայհոյողներից, սպանութիւնից, բղջախոհութիւնից»։ բայց այդ նեղութիւնն ու հոգսն անհետացել էին, և եթէ ընդհան-

բայց արևելեան հարևաններին՝ Թուրքերին յիշում էին, երևում էր ընդհակառակը, թէ ժամանակ է խաչակրութիւնը թարմացնելու, և «Եւրոպայում առաջացած բարբարոսներին» արևմուտք հատուցանելու նոյն աշխարհակալական և աւերիչ քաղաքականութեան համար։ Եկեղեցական յեղափոխութեան և խոր կրօնական հակադրութեանց մի այնպիսի շրջանում թւում էր, թէ քաղաքականութեան ամենաարժանաւոր գործն է աշխարհի այդ մասը նորից քրիստոնէութեան վերադարձնել։ Թուրքերին Եւրոպայից դուրս քշել՝ ականաւոր պետական անձանց փայփայած մտածմունքն էր, որի հնարաւորութիւնը կոպէկ առ կոպէկ, և չարչարանքի տևողութեան մինչև իսկ ամիսն ու օրը հաշուած էր։ Ինչոր ԺԵ. դարում մի Պոդիեբրադ, ԺԶ. դարում մի Կարլ Ե. երազել էր, ԺԷ. դարում դարձաւ մի Վալլենշտայնի և մի Եւգենի համար մտածուած ծրագիր։ Թէև Վալլենշտայնը կարծում էր համեմատաբար նուազ գումարով 8 միլիոնով մի քանի տարում կը հասնի իր նպատակին՝ Կոստանդնուպոլիս, և իր վարձկանների քաջութեան շնորհիւ յաղթանակ կը տանի Օսմանցոց անկարգ ռազմական արուեստի վրայ, բայց անձնական հոգսերը և հաշիւները նրան հեռացրին այսպիսի արշաւանքի ծրագրերից։ Սակայն այժմ նորագոյն Աւստրիոյ ամենամեծ պետական անձը և զօրավարը՝ Եւգէն սեպուհը կոչուել էր Վալլենշտայնի մտքերը իրագործելու, երբ նա կարողացաւ Օսմանցոց զինուորութեան յարձակողական ոյժը ընկճել և Ցենթայի, Պետերվարդայնի, Բելգրադի դաշտերում նսեմացնել սպահիների և ենիչարների անյաղթութեան փառքը։ Եթէ Օսմանցիք ցարդ մի քանի անգամ արևմուտքին, նոյն իսկ Աւստրիոյ մայրաքաղաքին սպառնացել էին, այժմ պէտք է միմիայն մտածէին պաշտպանողական դիրք բռնել, գուցէ և շուտով ափսոսէին Կոստանդնուպոլիսը պաշտպանելու։ Աւստրիոյ պատմութեան ամենափառաւոր շրջանն էր, երբ աշխարհ ասպետի՝ Եւգէն սեպուհի, սուրը շողշողում էր, Աւստրիոյ տան համար բաց էր յաղթութեան և պատիւների ճանապարհը։ Սակայն Վալլենշտայնի և Եւգենի մտքերը անարժան յաջորդների համար անհասանելի էին։ Աւստրիոյ քաղաքականութեան չէր վերապահուած Թուրքերի պարտութեան պտուղները քաղել։ Փոխանակ զօրեղ յարձակողական պա-

տերազմով Վալլենշտայնի ծրագիրն իրագործելու, Աւստրիան գոհանում էր յաջող դիմադրութեան փառքով։ Այս. Աւստրիան մինչև իսկ թողեց, որ յոյն ազգայնութեան վերջին պատուարները՝ Կրետէն և Մորէան ԺԷ. դարու վերջում և ԺԸ-ի սկզբին Օսմանցոց ձեռքն ընկնին։ Այսպիսով թողին, որ Արևելեան խնդրի գրական մասը ձեռքից գնայ։ Վասնզի այժմ ԺԸ. դարում Ռուսաստանը ազդու կերպով միջամտեց արևելեան պայքարին, և սկսեց իբր կրօնական և ազգային ձգողական ոյժը գործ ածել Հեմոս թերակղզու ճնշուած քրիստոնեայ ժողովուրդների վրայ։ Ռուս-շուեդական պատերազմին Թուրք կառավարութեան թուլութիւնը և անհոգութիւնը ակնյայտնի երևան եկան. Պետրոս Մեծը ճիշտ այն անձնաւորութիւնն էր, որ կարող էր Թուրքերի անզօրութիւնը ռուսների բարձրանալու փառասիրական ծրագրերին ծառայեցնել։ Մոսկուայից առատ նուէրներ էին թափւում Յունաստանի վանքերը. ռուսաց ոսկու ազդեցութիւնը նշմարւում էր Աթոս լեռան, ինչպէս և Կ. Պոլսի սինոդում. Երբ ցարը Թուրքերի դէմ կռուի գնաց, պատուիրեց, որ Մոսկուայի Մայր եկեղեցում մի խաչադրօշ կախեն այս վերտառութեամբ, «In hoc signo vinces» այսինքն «Այս նշանով կը յաղթես»։ Նա անհաւատներին յաղթելու վրայ վստահ էր, նորա կամքն էր Կ. Պոլսում թագուել։ Իզուր չէր, որ նա 1714-ին Ռիգայում յայտնեց, թէ գեղարուեստը և գիտութիւնը երբեմն Յունաստանից են տարածուել, որոնց թափառումը նմանում է մարդկային մարմնի արեան շրջանառութեան. Նա ինքն զգում է, որ գեղարուեստն ու գիտութիւնը մի ժամանակ յետ դառնալով մի քանի դար Ռուսաստանում կը մնան, որպէսզի իրենց հին հայրենիքը վերադառնան։ Եթէ Պետրոսը իր յաջորդներին ձեռական կտակով արևելքի ճանապարհը ցոյց չէ տուել, գոնեա իր գործերով և օրինակով մատնանիշ է արել, որ օգտուին Թուրքերի անկումից և յոյն ժողովրդի ազգային յոյսերից։ Այս ոգով կոմս Մինիխը մտածում էր Աննայ կայսրուհու ժամանակ 1736—1739-ի պատերազմի միջոցին արևելքի յոյն քրիստոնեաներին որոշ ծրագրով շարունակ գրգռել։ Այս իմաստով ամենից առաջ Հիւսիսի Շամիրամ Եկատերինա Բ-ին պէտք է համարել Պետրոսի ոգու իսկական ժառանգորդ։

Եկատերինայի սիրեկանները, որոնք նորա ամուսնուն սպանելով թագը նորան հասցրին, ճգնում էին նոր ձեռնարկութիւններով փառքի հասնելու։ Ինքը Եկատերինան ցանկանում էր իւր գահ բարձրանալու ոճրագործութիւնը փառքով ծածկել։ Օրլովների մօտ երեսի զօռով հասաւ մի յոյն Պապադոպուլօ անունով. տաքարիւն, պերճախօս և խոստմնառատ, ինչպէս բոլոր իւր ցեղակիցները, ռուսներին յոյս էր ներշնչում Յունաստանը ոտքի հանելու։ Նա ցոյց էր տալիս, որ թէև յոյների մարմինները Թուրքերին հպատակ են, բայց ոչ նոցա սրտերը։

Իրօք միայն բռնութիւնն ու սարսափն էր սանձում ժողովրդին, որ օտարի ցոյց տուած ազատագրութեան իւրաքանչիւր նշոյլը յուսով և տենչանքով ողջունում էր։ ԺԷ. դարու վերջին և ԺԸ-ի սկզբին Վենետիկցոց դրօշակը Կրետէի և Մորէայի ափերից անհետացել էր, բայց և այնպէս յոյները հաւատով և յուսով նայում էին դէպի սրբազան Ռուսաստանը, որի հետ դարերից ի վեր սերտ յարաբերութիւններ ունէին։ Ժողովրդի մէջ շրջում էր Ագաթանգեղոսի հին գուշակութիւնը, թէ հիւսիսից «ռոս» անունով շէկ մարդիկ պիտի արշաւեն, Թուրքերի իշխանութիւնը կործանեն և խաչը կիսալուսնի վրայ բարձրացնեն։ Երբ 1767-ին Խանդլէրը Մորէայում ճանապարհորդում էր, ամենուրեք լսում էր, որ Յունաստանը այժմ ռուսների ձեռքով կ'ազատուի։ Պատմում էին թէ մի լուսաւոր խաչ է երևացել սուրբ Սոֆիայի գմբեթի վրայ, և Թուրքերն իզուր ճիգ են թափել զարմանալի նշանը վանելու։ Մոնտենեգրոյում կամ Չեռնագորիայում այդ ժամանակ երևեցաւ մի մոլեռանդ վարդապետ Ստեփանօ անունով, որ հրատարակեց թէ ինքը Պետրոս Գ-ն է, և գիւղացոց հրաւիրեց Թուրքերի դէմ կրօնական պատերազմ մղելու։ Պապադոպուլօն ինքը ամենագեղեցիկ խօսքեր էր շռայլում Մանիի լեռնականներին. և որովհետև այդտեղ ոչինչ չկարողացաւ անել, Մեսենայի կապիտան Բենակիից խոստումն առաւ, որ ռուսների երևալուն պէս 100000 յոյն զինուած լինին։ Այսքան քիչ էր ճանաչում այս բախտախնդիրը իւր հայրենիքը. պատրանք և փորձառութեան պակասութիւն, որ ԺԹ. դարու քաղաքական թուականների ազա-

տութեան կռիւներում աղետաբեր կերպով պիտի կրկնուէր։ Պապադոպուլոյի բարձր բարերար Օրլովները այս միջոցին դիմել էին Վենետիկ, որտեղից նոքա Հեմոս թերակղզին հեղեղեցին թռուցիկ թերթերով և ոսկեայ շքադրամներով, որոնց վրայ դրոշմուած էր Եկատերինայի պատկերը։ Յունաստանի մայր ցամաքը և կղզիները շարժուեցան, երբ Բալթեան ծովում գրահաւորուած ռուսաց նաւատորմը ծովապետ Սպիրիտովի առաջնորդութեամբ Ջիբրալտարն անցաւ և Յունաստանի ջրերում երևեցաւ. Ալեքսէյ Օրլովի մի կոչնագիրը հրաւիրում էր հաւատակից բոլոր յոյներին ազատութեան և կրօնի պաշտպանութեան։

Դիւանը այսինքն Բարձրագոյն Դուռը մինչև այժմ ինքնախաբ վստահութեամբ օրօրւում էր։ Դիւանը դեռ 1769/70 թուականի ձմեռը ծաղրել էր ֆրանսացոց դեսպանի նախազգուշացումը՝ յայտնելով, թէ անկարելի բան է, որ ռուսները Միջերկրական ծովում երևան։ Չէ որ այն ժամանակ օտար դիւանագետին՝ դիպլոմատին ամօթահար անելու համար Թուրք պետական քարտուղարներից մինը այգորման ժամանակ բերաւ այն ճոչ քարտէզը, որի վրայ թէ և Սև, Միջերկրական և Ատլանտեան ծովերը կային, բայց չկար Ջիբրալթարի նեղուցի հետքն անգամ. որովհետև քարտեզագիր դերվիշը Եւրոպան Աֆրիկայի հետ մեծ լայնութեամբ միացրել էր և միապաղաղ շերտ կազմել, որի ետևը Ատլանտեան ովկիանոսը փոքր ջրակոյտ էր երևում։ Բայց ի հարկէ երբ ութ շաբաթ յետոյ ռուսներն իրօք Մորէայի ափն իջան, իմաստուն Դիւանին մնում էր հրաշք և կախարդութիւն համարել այս, բայց և եռանդուն միջոցների դիմել առաջն առնելու համար։ Խիստ հրամաններ արձակուեցան, որ ռայաներին թոյլ չտան զէնք կրելու. քրիստոնեաներին արգելեցին հրապարակաւ աղօթել. եկեղեցիները փակուեցան։ Օգնութեան կանչուեցաւ Հեմոսի՝ Բալկանի ռազմասէր գուգագը՝ միլիցիան, ալբանացոց հրոսակները փադիշահի հրամանով յորդան տուին Յունաստանի վրայ։

Ո՛չ Մորէայի ժողովրդի թեթև ոգևորութիւնը, որ պատճառել էր ռուսաց ոսկին, ո՛չ էլ Օրլովի արշաւախումբը չկարողացան յաջողութեամբ դիմադրել այս ահարկու և խուժադուժ զինուորների թափին։ Ֆէոդոր Օրլովը 17-ն

փետրուարի 1770 ամի Պորտօ—Վիտուլոյում ափ իջնելուն պէս՝ շտապեց մառէացիներից և մանիացիներից երկու գունդ կազմել «Արևմտեան և Սպարտական լեգէոն անունով», պահանջելով՝ որ ցարուհուն հաւատարմութեան երդում տան։ Նա իր սակաւաթիւ զօրքն ուժասպառ արաւ Կորոնը պաշարելով, և երբ Ալեքսիսն էլ նորան միացաւ ռուսներն անզօր հանդիսացան ալբանացոց առաջն առնելու։ Թէև 1770 թուականին ռուսաց մի երկրորդ արշաւախումբ Ելֆինստոնի առաջնորդութեամբ Միջերկրական ծովում երևեցաւ, և թուրքերի նաւատորմը Չեսմէնի մօտ վճռական պարտութիւն կրեց, որ յոյն ժողովրդի յիշողութեան և երգերի մէջ մնացել է որպէս ազատութեան ուրախարար հուր. սակայն Մառէական պատերազմը ամենադժբախտ վախճանն ունեցաւ, որ կարելի էր երևակայել։ Թերակղզին սարսափելի կերպով տառապեց ալբանացոց աւերմունքներից։ Ֆէոդոր Օրլովի լեգէոնները ցրուեցան, Ալեքսիս Օրլովը ջարդուած փախաւ Նաւարին և պարիսպներից հանգարտ դիտում էր իր դժբախտ դաշնակիցների արեան նախճիրը։ Շատ ողբալի կերպով խորտակուեցան երկու ռուսների ազատագրական ծրագրերը. խաբուած և դժբախտ յոյների մէջ մնաց անվստահութեան մի մութ սերմ դէպի հիւսիսային ազատարարը։ Դիւանն այժմ մտածեց յոյներին ալբանացոց ձեռքով իսպառ ջնջել, և միայն «խարջի» այսինքն հարկի համար թուրք հրամանատար Հասանը արիւնահեղ ծրագիրն իրագործելուց յետ կացաւ։ Նա վճռեց յաղթահարել և հնազանդեցնել ալբանացոց, որոնց գոռոզութիւնը յաղթողին ինչպէս և յաղթուողին անտանելի էր. ջախջախեց այդ ըմբոստ և վարձկան հրոսակներին Տրիպոլիցայի մօտ և ցրուեց։ Ինչպէս ուրիշ ժամանակներ՝ այժմ էլ յոյն հոգևորականութիւնը ընդհանուր թշուառութեան միջոցին մի փրկարար գործունէութիւն սկսեց։ Յոյն գիւղացիները, որոնք ռուս-թուրքական պատերազմից և ալբանացոց աւերմունքներից պրծան, հառաչում էին անտանելի ծանր բեռան տակ, նոքա պէտք է սպանուածների փոխարէն էլ աշխատէին և հարկ տային. այն ժամանակ սոցա օգնեցին վանքերը, կրօնաւորներն էլ ձեռք մեկնեցին երկիրը մշակելու։ Նոքա օրհնում էին նորից գութանի ակօսները։ Նոքա կենդանացրին մշակ-

ներին քաջալերելով և օրինակով։ Նոքա այժմ իրենք էին տուժում, որ Դուռը կասկածանքով էր վերաբերւում դէպի այն ամենը, ինչ որ յոյն անունն էր կրում. որովհետև նոցանից խլեցին այն կալուածքները և յանձնեցին մզկիթներին, որ Մահմէդ Բ-ը նոցա էր թողել։ Մայր ցամաքի յոյների վիճակից աւելի լաւ էր կղզիների բնակիչներինը. որովհետև Դուռը ծովի վերայ բոլորովին անզօր լինելով՝ չէր կարողանում սոցա ռուսներին ցոյց տուած համակրութեանց համար խստութեամբ պատժել, և որովհետև 1774 թուի Քիւչիւկ Կայնարջիի դաշինքը գլխաւորապէս Արշիպելագոսի բնակիչներին նպաստաւոր եղաւ։ Այս դաշինքը, որ «Ռուսների ճարպկութեան և թուրքերի ապշութեան գլուխգործոցն է», Արևելեան խնդրի զարգացման պատմութեան դարագլուխ դարձաւ, և անհամեմատ աւելի կարևոր է, քան 75 տարի առաջ Աւստրիոյ հետ կնքած Կարլովիցի խաղաղութիւնը, որ Համմերի խօսքով՝ «Աշխարհին առաջին անգամ Օսմանեան պետութեան անկումն էր աւետում»։ Վասնզի եթէ այն ժամանակ Դուռը հրաժարուել էր իւր յարձակողական դիրքից Աւստրիոյ դէմ, սակայն առանց իւր լրութիւնը վտանգելու և զգալի կերպով նուաստանալու. բայց այժմ Ռուսաստանը ձեռք բերաւ մի նշանաւոր հնարք միշտ միջամտելու և Եւրոպական Թուրքիոյ գոյութեանն սպառնալու։ Թուրք պետական կազմի անզօրութիւնը Քիւչիւկ Կայնարջիում այսպէս ասած պաշտօնապէս սրբագործուեցաւ հաստատուեցաւ։ Ռուսաստանը այնուհետև իւր իրաւունքը համարեց յենուելով դաշնագրութեան Է. ԺԶ. և ԺԷ. յօդուածների վրայ հովանաւորել թուրք իշխանութեան տակ գտնուած քրիստոնեաներին։ Թէև սուլթանը միայն ընդհանրապէս խոստումն արաւ քրիստոնէութիւնը և եկեղեցիները հովանաւորելու (Է յօդուած). յատկապէս ապահովեց իշխանութեանց՝ Մոլդաւիոյ և Վալախիոյ բնակիչներին ընդհանուր ներումն, վերադարձնելով կալուածքները՝ վերահաստատեց Status quo ante bellum այսինքն պատերազմից առաջ եղած դրութիւնը, կրօնական ազատութիւն, արդար հարկահանութիւն։ Այլ և իրաւունք տուաւ ռուս դեսպաններին իւր առաջ «Իշխանութեանց համար միջնորդելու, որ վայելուչ յարգանքով լսելու էր» (յօդուած ԺԶ.)։ Վերջապէս կղզիներին

տը Ռուսաստանը Դոան վերադարձրեց, խոստացաւ ներումն շնորհել, յաւիտեան մոռանալ բոլոր իրական և ենթադրական ոճիրները և վնասները, խոստացաւ ևս քրիստոնէութիւնը ամենևին չը ճնշել, եկեղեցիների վերաշինութիւնը, վերանորոգումը կամ կառուցումը չարգելել։ Խոստացաւ նաև ռուսաց պատերազմի ժամանակուայ հարկերը ներել և երկու տարի ևս հարկ չառնել. նա և իրաւունք տուաւ մի տարուան ընթացքում ազատ դուրս գաղթելու (յօդուած ժէ)։ Որքան որ սահմանափակ և չնչին էին երևում դաշինքի որոշումները. բայց ի նկատի առնելով՝ որ եւրոպական դիպլոմատիան այն ժամանակ չէր ճանաչում արևելեան գործերը, և օրթոդոքս յոյն ռայայի դիւրահաւատութիւնը, ռուսների համար դժուար չէր լինիլ արևելեան գործերին միջամտելու։ Ռուսները, որոնք մոլութիւն ունէին ամեն տեղ քիթ կոխելու, դաշնադրութեան որոշումներից դիւրութեամբ կ՚օգտուէին Թուրքերի ռայաներին հասցրած ամեն մի անարդարութեան համար բողոքելու՝ դաշնադրութեան դէմ համարելով. Դիւանը շատ շուտ սկսեց զղջալ ռուս դիպլոմատիային արած զիջումների համար։ Թէպէտ և Յունաստանի մի մասը ռուսաց կռուից վիրաւոր ընկած էր, բայց երևեցաւ իսկոյն, թէ ինչպէս ճարպիկ յոյն ժողովուրդը դաշինքի տրամադրութիւնը շահագործեց։

Կայնարջիի խաղաղութիւնից ի վեր յունաց առևտուրը և նաւագնացութիւնը շատ զարգացաւ։ Արշիպեղագոսի բնակիչներն սկսեցին ռուս դրօշակի տակ Թուրքիոյ առևտրական գործերի միջնորդ հանդիսանալ, ռուսական «բերաթ» ձեռներին յունաց փոքր նաւերը ուղևորւում էին Խերսոնեսից մինչև Ջիբրալթար։ Շուտով ռուսաց հացահատիկների արտահանումն անցաւ միայն յոյների ձեռքը. ինչպէս հին դարում, այժմ էլ ծաղկեցան Սև և Եգէեան ծովի ափերին յոյն առևտրական գաղութներ։ Օդեսան ծաղկեցաւ շնորհիւ յունաց ժրութեան և ջանասիրութեան։ Եթէ մինչև այժմ համարեա բացառապէս անգլիացիք էին շահւում օսմանցոց առևտրական թուլութիւնից և անտարբերութիւնից և նոքա էին, որ առանց մաքսի կամ շատ աժան ներածում և արտահանում էին ապրանքները, այժմ անգլիացոց վտանգաւոր մրցակից դարձան յոյները։ Իտալիայում և Սպանիայում, այո նոյն իսկ

Ֆրանսիայում և Անգլիայում սկսեցին յոյները հացահատիկ-
ների գների վրայ ազդել. արդէն նոցա առևտրական նաւերը
համարձակ անցնում էին Ջիբրալթարի նեղուցից դուրս մինչև
Ատլանտեան ովկիանոսի միւս եզերքը։ Աֆրիկէի բարբարոս-
ների և Ալժիրի ծովահէնների սպառնացած վտանգը, երբ
առևտուրը կռուով էր լինում, ստիպեց յոյն առևտրականներին
մեծամեծ և զրահաւորուած նաւեր շինել։ Չկայ յունաց նաւե-
րից աւելի դիւրաշարժը և աւելի անխոնջը։ Արշիպեղագոսի
կղզիներում մայրը իւր զաւակներին շատ շուտով ծովն է
մղում և սովորեցնում լող տալ, ինչպէս բադը իւր ձագերին։
Ապա հայրը տղային հետը տանում է նաւ, կայմի մօտ կան-
գնած բռնում է գրկին, ցոյց է տալիս նորա կեանքի հայրե-
նիքը, հեռուն տարածուող մռայլ ծովը. ամեն մի կղզու, ամեն մի
խութի նա կը ծանօթանայ։ Ծերունին է, որ նորան առնարիւն
արիութեան, մրրկով հրճուելու օրինակ է տալիս։ Նա ուրա-
խութեամբ նաւաստու զուարթ երգերում իրեն համեմատում
է դելֆինի հետ, որ ալիքների վրայ խաղում է. երգն ու
պարը զուարթացնում են նաւորդութիւնը։ Բացի այդ յոյն
նաւաստին զուրկ է կարիքներից. նուազ ծախքերը, բայց մեծ
աշխատանքը, որ անում էին յունաց նաւերը, իսկապէս
վերագրելու է յոյն նաւաստու զգաստութեան և սակաւապե-
տութեան. նորա աշխատութեան եռանդը սովորաբար խթան է
ստանում և նաւորդութիւնից ստանալիք օգտի բաժնով։
Այսպէս է բարգաւաճում մի կենդանի և կայտառ, մի արի
և բարեկեցիկ ժողովուրդ. և անշուշտ կարելի չէ ուրանալ, որ
նիւթական վաստակի ուրախութիւնը զարթեցրեց և նոր
մտաւոր և քաղաքական կարիքներ։ Վասնզի ինչպէս կարելի է,
որ յոյները, որոնք ճանաչել էին արևմուտքն ու արևմտեան
քաղաքակրթութիւնը, հայրենիք վերադառնալով՝ չզգուէին
օսմանցոց անշարժ և լճացած դրութիւնից։ Ունևոր յոյների
որդիքը արտասահման էին աճապարում, այնտեղ բժշկակա-
նութեամբ և առևտրական ուսմունքներով զբաղուելու։ Արդ
ինչպէս կարելի է չզարթնէր նոցա մէջ ինքնագիտակցութեան
մի կայծ, և չամաչէին հարազատ ժողովրդի հասարակական
և քաղաքական ստորացումից։ Ազգային ուղղութիւնը, որ ԺԸ.
դարու սկզբում սկսում է իշխող հանդիսանալ յունաց գրակա-

նութեան մէջ, բազմաթիւ դպրոցների բարգաւաճումը, գիտութեան և գեղարուեստի զարգացումը, այս բոլորը սերտ կապուած է Կայնարջիի դաշնագրութիւնից ի վեր առաջացած բարգաւաճման հետ։ Որքան հարստանում և կրթւում էր յոյն ժողովուրդը, որքան աւելի իւր Թուրք տէրերից նիւթապէս և մտաւորապէս գերազանցում էր, այնքան աւելի զօրեղ և անտանելի էր դառնում ժամանակի քաղաքական ճնշումը. ուստի և հետզհետէ զգալի և անհրաժեշտ էր դառնում յեղափոխութիւնը։ Միայն թէ մարդ կը սխալուի, եթէ յունաց շարժման վճռական զարկը միմիայն յունաց հասարակական և մտաւոր կեանքում տիրող այս հոսանքները համարէ, ինչպէս այդ անում են յոյն հեղինակները։ Անշուշտ կար այդ հակադրութիւնը, որ ամեն տարի աւելանում էր, իշխողների և տրուկների՝ Թուրքերի և յոյների միջև, հակադրութիւն՝ մի կողմից խուլ անշարժութեան, ճակատագրական անգործութեան, միւս կողմից հարուստ և մտաւոր շարժունութեան։ Բայց դեռ կարող էր շատ երկար տևել, մինչև որ միայն այս հակադրութիւնից մի քաղաքական գործ յառաջանար։ Եւ-ահա դեռ պէտք է նախ նոր ու նոր ընդհարումներ ծագէին Դիւանի և եւրոպական պետութեանց միջև և վերջապէս Թուրքիոյ ներքին քայքայումները յառաջ բերէին յունաց ապստամբութեան բռնկումը։

Ցարուհին «յունական ծրագիրը» անյողդողդ աչքի առաջ ունէր։ Իզուր չէր, որ այն դարու պատգամախօս Վօլթէրը կայսրուհուն յորդորել էր «իւր սիրելի» յոյներին ազատել։ «Յանուն Աստուծոյ դուք կը ջարդէք Թուրքերին հակառակ սոցա բարեկամ պապի Լեհաստանի նուիրակին.

Soyez à la fois triomphante
Et du Saint père et du muphti.

Յաղթիր միանգամայն թէ սուրբ հօրը՝ պապին և թէ մուֆթիին»։ Մի հիանալի տեսարան կը լինէր, եթէ երկու կայսրուհիներ Մուստաֆայի երկու ականջից բռնած իւր հայրենիքն՝ Ասիա ուղարկէին։

Ֆրանսիոյ բանաստեղծի այս խօսքերից աւելի պայծառ ի հարկէ խօսում էին ռուսաց քաղաքական շահերը և Թագուհու նոր սիրական Պատեօմկինի բուռն կրքերը։ Պէտք էր,

Յովսէփ Բ. կայսեր անհանգիստ փառասիրութիւնը արևելքում օգտակար կերպով զբաղեցնել, Աւստրիան ռուսաց ծրագրերին ծառայեցնել։ Եկատերինան մտադիր էր Բիւզանդիոյ կայսերական գահը վերահաստատել իւր թոռ Կոստանդինի համար և Դանուբեան իշխանութիւններից կազմել մի Դակեան պետութիւն Պատեօմկինի համար։ Եկատերինան ինչպէս լեհական խնդրում ջանացել էր Պրուսիան յօգուտ իւր գործածել և զրկել, այժմ էլ զբաղուած էր իւր արևելեան ծրագիրը Աւստրիոյ օգնութեամբ և հաշուով իրագործելու։ Արդարև Յովսէփ Բ-ն էլ Ֆրիդրիխ Մեծի պէս չհամաձայնեց անպայման ռուսաց առաջարկներն ընդունել։ Չէ կարելի առանց հոգեբանական հարցասիրութեան չհետևել ռուս-աւստրիական դաշնակցութեան ծագման և հաստատուելուն, որ երևում է այժմ Առնեթի ձեռքով հրատարակուած Յովսէփ Բ-ի Եկատերինա Բ-ի հետ ունեցած նամակագրութիւնից։ Խնկի բուրմունքների և փոխադարձ սնափառական փաղաքշանքների ետև թաքնուած է ինքնամոլութեան սաստիկ ոգորումն, որ Յովսէփի և ցարուհու անձնաւորութեան վրայ պարզ ու պայծառ լոյս է սփռում։ Մտերմական և անձնական նամակների ձևով 1781-ին գլուխ է գալիս երկու կայսերական արքունիքների դաշնակցութիւնը. Թուրքիոյ բաժանման վիճակը ձգւում է. Յովսէփը համաձայն է, որ յունաց կայսրութիւնը վերահաստատուի. բայց որ Աւստրիան փոխարէնն ստանայ Սերբիան, Բոսնիան և Վենետիկը։ Սակայն մարդու կարճատես կեանքը բաւական չէ այսպիսի յեղաշրջման ծրագրեր իրագործելու. ոչ Յովսէփը, ոչ էլ Եկատերինան պիտի տեսնէին արևելքի այն նոր ձևակերպութիւնը, որ իրենք ծրագրել էին. երկուսն էլ արեւմուտքի նոր կերպաւորութեամբ յանկարծակի պիտի գային և Արևելեան խնդիրը բարձի թողի անէին։ Մի անգամ ևս պիտի պարզուէր, թէ մարդս, որ իրեն ճարտարապետ է կարծում, միայն մշակի՝ գործիք է։ Որքան նպաստաւոր էր երևում աշխարհիս դիրքը ԺԸ. դարու ութսունական թուականի վերջերին, երբ երկու դաշնակիցները խօսքից գործի անցան, երբ պատերազմը Թուրքիոյ դէմ ծագեցաւ։ Ֆրիդրիխ Մեծը, Եւրոպայի հաւասարակշռութեան պահապանը, այլևս չկար. Անգլիան թուլացել էր Հիւսիսային Ամերիկայի պատե-

բազմով, Ֆրանսիան կարելի էր գրաւել՝ Եգիպտոսը մասն ու բաժին տալով. և ահա այստեղ տոհմական խնամութիւնը Աւստրիոյ հետ կարծես ապահովութիւն էր ներշնչում։ Որպիսի վստահութեամբ Յովսէփը Սեմլինից 6-ն յուլիսի 1788 ամի գրում էր Ֆրանսիոյ նախարար Մոնմորինին. «Հասել է ժամանակը, երբ ես պիտի հանդէս գամ իբրև մարդկութեան վրիժառու, երբ ես ինձ վրայ կ'առնեմ հատուցանել Եւրոպային այն չարչարանքների վնասը, որ նա երբեմն քաշել է անագորոյն Թուրքերի ձեռքից, և երբ ես յոյս ունիմ աշխարհը մաքրել մի բարբարոս ցեղից, որ այնքան ժամանակ պատուհաս է եղել»։ Մարդ մի տեսակ մելամաղձոտ է դառնում, երբ այս սէգ խօսքերին կից կարդում է վիրաւոր սրտից բղխած այն գրութիւնը, որ մահամերձ կայսրը՝ իւր բոլոր յոյսերը փշրուելուց յետոյ ուղղում էր իւր հիւսիսային դաշնակցուհուն։

Իրօք Արևելեան խնդիրը զէնքով կամ քաղաքականութեամբ լուծելն երկու դաշնակից կայսրների ոյժերից այլևս վեր էր։ Զէնքով լուծելը դժուար էր. վասնզի Թուրքերի բրդութիւնը, ամբոխի ռազմասիրութիւնը և մոլեռանդութիւնն իբրև դիւանի բնական պաշտպաններ չէր կարելի արհամարհել. միւս կողմից ռուսաց և աւստրիացոց զինուորական պատրաստութեանց պակասութիւնը ակներև եղաւ։ Քաղաքականութեամբ լուծելն ևս անկարելի էր. վասնզի երկու կայսերական արքունիքների հանդէպ կարճ ժամանակում կանգնեց Անգլիոյ, Հոլանդիոյ և Պրուսիոյ եռապետական դաշնակցութիւնը, և Ֆրանսիոյ մեծ յեղափոխութեամբ ի չիք դարձան այն բոլոր ենթադրութիւնները, թէ Ֆրանսիան կ'օգնի և Անգլիոյ առաջը կ'առնի։ Երևաց, որ պէտք է կռուել նոր և չնախատեսուած գործօնների դէմ և բոլոր ոյժը արևելքից արևմուտք ուղղել։ Այստեղ աւելի քան այլ ուրեք կարելի է նշմարել Ֆրանսիոյ յեղափոխութեան եւրոպական նշանակութիւնը և հեռատարած ոյժը։ **Եթէ Թուրքերի Եւրոպայում իշխելուն նպաստել էր կրօնական վերանորոգութիւնը և արեւմտեան քրիստոնեաների երկպառակութիւնը, այժմ այդ տէրութիւնը պէտք է հիմնովին խախտուէր Ֆրանսիոյ մեծ յեղափոխութեան շնորհիւ:** Եթէ Աւստրիան և Ռուսաստանը սկզբում ջոկ ջոկ, յետոյ դաշ-

նակցութեամբ ետևէ եղան Վալլենշտայնի և Եւգենի ծրագիրն իրագործելու Եւրոպական Թուրքիոյ վրայ յարձակուելով և Թուրքիոյ գոյութեան դէմ կռուելով, այժմ Ֆրանսիան, ի հարկէ ակամայ, ստանձնեց նոցա խնդիրը և ֆրանսական գաղափարների խաղաղ և ճակատագրական զօրութիւնը սկսեց արևելքը փորփրել և տակնուվրայ անել։ Ռուսաց և աւստրիացոց դիպլոմատիան ի հարկէ Յովսէփի մահից և Ֆրանսիոյ մեծ յեղափոխութեան բռնկումից յետոյ մի կողմ չթողեց «յունական ծրագիրը»։ Ռուսաստանի և Աւստրիոյ մէջ Լեհաստանի բաժանման համար 1795 թուականի դաշնագրութեան կցուած գաղտնի յայտարարութիւնն ապացոյց է, որ 1781 թուականի ծրագիրը նոյն իսկ Եւրոպայի պետութեանց դրութեան փոփոխմունքներից յետոյ չարունակ խոկմունքի առարկայ է. և որ Աւստրիան պատրաստ էր Վենետիկը, Բոսնիան և Սերբիան ստանալով օգնել ռուսներին, որ սոքա իրենց դիտումները Կ. Պոլսի նկատմամբ իրագործեն։ Սակայն այս գաղտնի դիպլոմատիկ համաձայնութիւնները մնացին միայն թղթի վրայ։ Եւ եթէ իրողութիւնները ի նկատի առնենք, պիտի խոստովանինք, որ այնուհետև Թուրքերի քայքայման ընթացքը ամենից աւելի ֆրանսացոց ազդեցութեամբ արագացաւ։ Արևմտեան գաղափարները և յեղափոխութեան զէնքի փայլը աւելի զօրեղ կերպով ազդեցին խմորուած ռայաների վրայ, քան նոյն իսկ Ագաթանգեղոսի գուշակութիւնը։

Յոյները՝ ինչպէս 1770-ին այնպէս էլ 1790-ին սաստիկ խաբուեցան, երբ իրենց յոյսը դրին հիւսիսային աստղի՝ Ռուսաստանի վրայ։ Այս երկրորդ անգամն էլ, երբ ռուս-աւստրիական պատերազմի ժամանակ յոյների սրտերը սկսան ուժգին բաբախել, երբ նոցա մէջ նորից երևան եկան գործակալներ, որոնք առատ խոստումներով հաւատաւորներին ոսկով և ազատութեամբ հրապուրեցին, այս երկրորդ անգամն էլ շուտով յոյները դառնապէս քաւեցին իրենց դիւրահաւատութիւնը և յիմարութիւնը։ Միւկոնացի Պսարօն, որ ռուսաց պատուէրներով և միջոցներով 1788 թուին արևմտեան Յունաստանի բնակիչներին դրդում էր ապստամբելու, աւելի լաւ չէր կշռադատում, քանց այն բախտախնդիր Պապադոպուլոսը, որին յոյները քանի տարի առաջ հետևելով կորստեան

չէին մատնուել։ Նա ռուսաց նպաստները իւր սեփական օգտին էր գործածում. նորան մեղադրում էին, որ մարտիկներից զէնք ու պաշար է պահել և հայրենիքի կարիքներից իւր համար դրամագլուխ է կազմել։ Թէև Լամբրոս Կացոնիսի և Անդրուտսոսի պէս շիտակ մարդիկ ռուսաց փառամոլութեան գործիք էին դարձել. բայց շուտով օտարական դրդիչները երեսի վրայ թողին նոցա, իսկ ռուսաց օգնութեան գնդերը միայն թղթի վրայ գոյութիւն ունէին։ Երբ Լամբրոսը 1790 թուականի ապրիլին յունաց կամաւոր նպաստներից կազմուած փոքրիկ նաւախմբով ռուսաց դրօշակի տակ Տրիեստից նաւեց և սկսեց Արշիպելագոսը չափչփել, դանդաղկոտ Դիւանը յուզուեցաւ. Թուրքաց նաւատորմի մի մասը հրաման ստացաւ յոյն ծովահէնի դէմ գնալու։ Լամբրոսը յարձակուեցաւ Զէայի վրայ, գրաւեց կղզին, այնտեղ հաստատեց գլխաւոր բանակը և այդ դարձրեց իւր ծովային ասպատակութեանց յենարան։ Բայց Զէայի մօտ Լամբրոսի վրայ յարձակուեցան եօթը ալժիրցի ծովահէն, որոնք միացել էին Թուրքաց նաւատորմին։ Թուրքերը յաղթեցին շնորհիւ իրենց բազմութեան և դիմացկուն նաւերի. յուսահատական կռուից յետոյ յանդուգն ելուզակը պրծաւ երկու ուղեկիցների հետ մի նաւով, մինչդեռ նորա մնացեալ նաւատորմը ծովահէնների ձեռքով խորտակուեցաւ։ Այս ճգնաժամին ռուսաց գաղտնի պատուիրակները դրժեցին իրենց խօսքը և ոչ մի օգնութիւն չտուին։ Լամբրոսն ստիպուեցաւ իբրև թափառական ասպետ իւր գլուխն առած մի կղզուց միւսը շրջել, խաղաղ բնակիչներին հարստահարել, ազգային գործը ծովահէնութեամբ պղծել։ Նորա նաւը 1793-ին ջախջախուեցաւ. Նա փախաւ Ալբանիա և ռուսաց բանակում մի կերպ տեղ գտաւ։ Յիրաւի որպիսի ողորմելի հատուցումն։ Այլև կլեֆտ Անդրուտսոսին, Ոդիսեսի հօրը, ցամաքում ռուսաց օգնական գնդերը երեսի վրայ թողին և սա կարողացաւ միայն մի յանդուգն նահանջով պրծնել։ Բայց այս երկու մարդկանց գործերը, թէպէտև կլեֆտների և ծովահէնների գործեր, ապրում էին շարունակ ժողովրդի յիշողութեան մէջ աւելի մեծ փառքով, որքան աւելի խայտառակութեամբ ռուսները նոցա բարձի թողի էին արել։ Եաշիի խաղաղութիւնը, այն անտարբերութիւնը, որով

Եկատերինան իւր յոյն դաշնակիցներին անտես արաւ, հենց որ եւրոպական մեծ քաղաքագիտութիւնն այդ պահանջեց, և գոհացաւ միայն դատարկ պայմաններ կապելով, պայմաններ, որ՝ ինչպէս սպասելի էր թուրքերը երբեք կատարելու չէին. այս բոլորը ահա իսպառ սառեցրին ռուսների համակրութեան այն հետքը, որ յոյները տակաւին ռուսների 1770 թուականի ուխտադրժութիւնից յետոյ պահել էին։ Արդ ռուսաց ազդեցութեան տեղ անցաւ Ֆրանսականը։

Որքան աւելի զարմանալի լուրեր էին լսում արևմուտքից, այնքան աւելի անձկութեամբ յոյների աչքերը այն կողմն էին դառնում։ Կոլոկոտրոնիսը յիրաւի յետոյ մի անգամ խոստովանուել է, որ Ֆրանսիոյ յեղափոխութիւնն ամենից առաջ նորա աչքերը բաց արաւ։ Այդ յեղափոխութիւնը աշխարհի շեփորն էր, որ հնչակում էր, թէ ազատութեան օրը հասնում է։ Իրօք մարդկային իրաւունքների յայտարարումը, ազգերի ազատութեան նոր աւետարանը, որ 1789 թուականի սահմանադիր ժողովը հնչակեց, ուղղուած էր և յոյն ռայային։ Ֆրանսիոյ հետ յոյները ԺԸ. դարու վերջին տասնամեակից ի վեր կենդանի հաղորդակցութիւն էին սկսել։ Սովի ժամանակ, որ ծայրայեղ ահաբեկման՝ տերրորի հետևանք էր, հարաւային Ռուսաստանի ամեն հացահատիկը գնում էր Ֆրանսիոյ նաւահանգիստները։ Յոյները՝ հացահատիկի առևտրի միջնորդ լինելով՝ իրենց հետ բերում էին ֆրանսացոց կրթութիւնն ու բարքերը. հացահատիկի և ցորենի փոխարէն նոքա ստանում էին Ֆրանսիայից նոր ազատութեան մտքեր և պահանջներ։ Յեղափոխութիւնը մի անցք էր, որի իրական գործադրութիւնը արևելեան աշխարհում յոյն ազգի բոլոր դասերին, քահանային և վաճառականին, հովուին և նաւաստուն հաւասար ցանկալի էր. այո՛ նոյն իսկ Ֆանարի հարուստ իշխանին, որին իւր պալատում անգամ ճիպոտն ու կախաղանի պարանն էր սպառնում։ Կ. Պոլսի փողոցներում այն ժամանակ օտարները տեղ տեղ նկատել են ժողովրդի խուռն բազմութիւն, որի ժամանակ յոյները անպատիժ ծեծում էին թուրքերին։ Յուզումը սաստկացաւ Նապոլէոնի Եգիպտոս արշաւելու ժամանակ։ Թէպէտև Բոնապարտի կեսարական բնազդին անտանելի էին յոյների բնաւորութիւնն ու պետական կազմի

մասին ունեցած հասկացողութիւնը. յունաց խայտաբղէտ կեանքը, հարուստ անհատական զարգացումը ատելի էին նորան այնպէս, ինչպէս և նոցա անհրահանգ և անկարգ ընթացքը: Սակայն այն ժամանակ երբ Նապոլէոնը Եգիպտոսի արկածաւոր արշաւանքն էր մտորում, յոյները նորան միշտ հաճելի էին ինչպէս միջոց, իբրև թթխմոր արևելքում. Նա շոյում էր նոցա ազգային յոյսերը, ինչպէս որ շոյել էր լեհերինը. մինչդեռ իսկապէս սրտով համակիր չէր և երբեք էլ լրջութեամբ չէր մտածել այդ յոյսերն իրագործելու: Ֆրանսացոց ոսկին և խոստումները այժմ բանեցին ռուսաց գրգռումների տեղը: Մորէայում այժմ երևացին երկու կորսիկացի, Դիմօ և Նիկոլօ Մանիպուլի, մանիացի ծագմամբ, որոնք գեղեցիկ խօսքեր էին բարբառում «Աթէնքի և Լակեդեմոնի» մասին, և մատնացոյց էին անում, որ ոչ թէ ռուսներն, այլ ֆրանսացիք են արևելքի ազատարարը: Սոցա հաղորդեցին Նապոլէոնին, բաւական է միայն նորա ներկայութիւնը, որպէսզի գալլո-հելլենական ազատութեան սահմանը մինչև Ոսփոր տարածուի:

Երբ Եգիպտական արշաւանքն սկսուեցաւ, Կոլոկոտրոնիսը հիացած՝ Բոնապարտին համարում էր «պատերազմի աստուած». Մանիի բեկը յաջողութիւն ցանկացաւ Նապոլէոնին յաղթութեան համար: Ֆրանսայի աշխարհակալը ինքը բացէիբաց յայտնեց Սենտ-Ժան-դ՚Ակրի առաջ, թէ Թուրքիան պէտք է կործանել և արևելեան մի նոր պետութիւն հիմնել: Բայց այս անգամ էլ խօսքը գործ չդարձաւ և Ռիգասի ապստամբութեան վախճանը ցոյց տուաւ, որ ազատման օրը տակաւին այնքան էլ մօտ չէր, ինչպէս շատ խիզախ ցնորապետներ կարծում էին: Ռիգասի կրակոտ հոգու մէջ վաղուց զարթնել էր բոլոր յոյներին Թուրքերի դէմ միացնելու միտքը: Նա Բուխարեստում նախ և առաջ վստահացել էր իր միտքը յայտնելու միայն մի քանի ընկերների, որոնք նորա խօսքերին երկիւղածութեամբ և ուշի ուշով ականջ էին դնում և պատրաստ էին ամեն ինչ սուրբ գործին զոհելու: Այնտեղ կազմուեցաւ այն քաղաքական գաղտնի ընկերութեան սաղմը, որ կամենում էր բռնաւորի շղթաները փշրել: Շուտով ազգի նշանաւոր մարդիկ հաւաքուեցան այս հայրենասէր Թեսալացու շուրջը. աչքի ընկնող հոգևորականներն ու աշխարհականները, հարուստ

վաճառականներ, քաջ կապիտաններ պատկանում էին դաշնակցութեան՝ Ռիգասի «Հետերիա» ընկերութեան: Վեննայում Ռիգասի հաստատած Հետերիան, ինչպէս օրուայ հոսանքն էր դրդում, տացաւ ֆրանսական գոյն: Հետերականները Բոնապարտին համարում էին իրենց անդամ: Նոցա շրջիկները լուր էին տարածում, թէ նա յոյն է և ծագում է Մորէայից, ինչպէս որ արդէն Բոնապարտ կամ Կալլիմերի ազգանունը պարզ ցոյց էր տալիս: Ֆրանսացոց Վեննայի դեսպան Բերնադոտտին, որ տենչանքով ամենայն առթից օգտւում էր խռովութիւն և շփոթութիւն առաջ բերելու, Ռիգասի հետ անձամբ բանակցութիւն սկսեց: Արևելքի պաշտպանութեան այս հզօր յենակէտը հետերականներին ներշնչում էր ռազմական այնպիսի հրճուանք և վստահութիւն, որ հասնում էր ամբարտաւանութեան: Բարձրագոյն վիճում էին Վեննայի սրճարաններում Թուրք իշխանութեան կործանման վրայ և նոցա կասկածաւոր շարժումները շուտով իրենց վրայ հրաւիրեցին աւստրիացոց ոստիկանութեան ուշադրութիւնը: Աւստրիան միշտ առանձնապէս կասկածանքով է նայել այն ամեն բանի վրայ, ինչ որ կարող է շարժումն կամ յեղաշրջումն յառաջ բերել իր արևելեան սահմանում: Եւ եթէ ի նկատի առնենք Աւստրիոյ արքունիքի և Բարձրագոյն դրան նմանութիւնը և շահերի ընդհանրութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի Թուգուտի քաղաքականութիւնը, որ ձգտում էր ամեն բանից առաջ Հեմոս թերակղզում պահպանել Status quo-ն: Եւ որովհետև Աւստրիոյ կայսրութիւնը և Ֆրանսիոյ հանրապետութիւնը գաղտնապէս իրար դէմ էին լարուած, ուստի Ռիգասի հետերիայի ֆրանսական գունաւորութիւնը իրեն շատ էլ չէր կարող օգտակար լինել:

Ռիգասը 1798 թուականին ճանապարհ ընկաւ դէպի Տրիեստ, որպէսզի անցքերի թատերաբեմին մօտ լինի և քաղի այն պտուղները, որոնք պիտի հասունանային յոյների համար Բոնապարտի արևելեան արշաւանքով: Նա տասներկու արկղ տառաւորներ և մի կապոց նամակներ Բոնապարտի անունով առաջուց ուղարկել էր իր Կորոնիոս ընկերոջ, որի բացակայութեան պատճառով սորա ընկերակից Դեմետրիոս Էօկոնոմոսը բաց արաւ: Սա իսկոյն Աւստրիոյ նահանգապետին հա-

ղորդեց այդ մասին։ Երբ Ռիգասը Տրիեստ եկաւ, աւելի նա իւր անզգուշութեամբ հակառակորդների հացին իւղ քսեց։

Նա իւր Պեռհեւոս ընկերոջ հետ իջաւ մի ծովափնեայ հիւրանոց։ Այստեղ ներկայացաւ իբրև հելլէնների ընդհանուր զօրավար ազգային տարազով, գլխին դասական սաղաւարտ։ Բայց ոստիկանութիւնը ուշի ուշով հետեւում էր. գիշերը նորան բռնեցին և բանտ դրին։ Նա Կորոնիոսի և միւս հետերականների հետ Վիեննայում պիտի ներկայանար քննիչ դատաւորին։ Ռիգասը տեսաւ, որ ինքը կորած է, մտածում էր միայն գործի մասին, որ մի անպատեհ խօսքով կարող էր բացուել. ուստի ուզեց ազնուասիրտ յուզմամբ անձնասպան լինել և երեք անգամ դաշոյնը իւր կուրծքը խրեց։ Նորա ձեռքից զէնքը խլեցին, վէրքերը մահացու չէին, և բժիշկների օգնութեամբ շուտով բուժուեցան։ Այժմ նորան Վիեննա տարան, հարցափորձ արին. և վերջն Աւստրիոյ կառավարութիւնը՝ մտածելով իւր հարևան Թուրքերին ցոյց տալ իւր բարեկամութիւնը Ռիգասին միւս հինգ հետերականների հետ միասին առանց պայմանի յանձնեց Բելգրադի փաշային։ Փաշան չէր կարող կալանաւորին Կ. Պոլիս ուղարկել, ինչպէս որ կուզենար, որովհետև ճանապարհը ապահով չէր. Ռիգասի բարեկամ Վիդդինի փաշայ Պասուան Օղլին տիրում էր Դանուբի ընթացքին և Բալկանեան կրճերին։ Ամեն միջոցի դիմեցին կալանաւորին ազատելու. Ալեքսանդր Իպսիլանտիսի մի գործակալ ջանաց Դիւանը կաշառել. Եանինայի փաշայ Ալին սուրհանդակ ուղարկեց Ռիգասի համար միջամտելու և խոստացաւ սուլթանին միջնորդելու։ Բայց ազատման այս բոլոր ջանքերը՝ միայն գրգռեցին փաշային կալանաւորի վախճանն արագացնելու։ Բելգրադի փաշան Եանինայի ահարկու Ալի փաշային հաղորդեց այս հեգնական պատասխանը, թէ նորա խնդիրը սիրով և յօժարութեամբ կը կատարէր, եթէ միայն կալանաւորները կենդանի լինէին։ Ապա պատուիրեց, որ նոցա մէկ մէկ բանտից հանեն։ Առերևս նոցա մխիթարելու համար հաղորդել էին, թէ նաւով Կ. Պոլիս պիտի տարուին։ Սակայն նոցա խեղդեցին Դանուբի մէջ։ Ի վերջոյ կարգը հասաւ Ռիգասին. օրհասական վայրկենին նա ցոյց տուաւ բնութեան զաւակի բովանդակ մեծութիւնը և կատաղութիւնը. նախ կտրատեց

այն պարանները, որոնցով ուզում էին նորան կապել և ապա առաջին պահապանին, որ ուզում էր նորան մօտենալ. բռունցքի մի հարուածով գետին գլորեց։ Փաշան հրամայեց նորան հրացանի բռնել. երկու Թուրք հրացանները ուղղեցին նորան։ «Այսպէ՞ս են մեռնում պալիկարները՝ Փիդայիները. ես բաւական սերմեր ցանեցի, կը հասնի ժամը, երբ իմ ժողովուրդը կը հնձէ քաղցր պտուղները», գոչեց Ռիգասը, երբ տակաւին գնդակները նորա կուրծքը չէին ծակծկել։

Ռիգասի մահով թէև մի վայրկեան խեղդուեցաւ այն շարժումը, որ նա յառաջ էր բերել. հետերիան ցրուեցաւ և միայն անունն ու յիշատակը մնացին. այնուամենայնիւ մի զօրեղ զարկ ազատագրի համար տրուած էր և ծանրակշիռ էր այն հանգամանքը, որ ամբողջ յոյն ազգն միացել էր Դիւանի դէմ։ Ռիգասը մանրամասնաբար դիմել էր Հեմոս Թերակղզու ճնշուած բոլոր ցեղերին, այո մինչև իսկ Թուրք ազատամիտ տարրերին. Նա կարողացել էր իւր դաշնակից դարձնել բոլոր դժգոհ և անկախ տարրերը, այնպիսի տղամարդկանց, ինչպէս այն բռնակալ (usurpator) Պասուան Օղլուին, որ Վիդդինում Դիւանի բովանդակ բանակին կարողանում էր դիմադրել, կամ ինչպէս Եանինայի հզօր Ալի փաշային։ Եթ Թուրքերը և յոյները կարող էին Կ. Պոլսում միանալ եղած կարգը յեղաշրջելու, այդ ի հարկէ մի օրհասական նշան էր ներքին քայքայման, որ բովանդակ Հեմոս Թերակղզին բռնել էր։ Թուրք կառավարութիւնն էլ վարակուել էր բարենորոգման ճարակիչ մոլութեամբ, որի շրջանը ԺԸ. դարու ընթացքում Եւրոպայի բոլոր մտածողներին, պետական անձերին և իշխաններին գրաւել էր. բայց ինչպէս որ քաղաքակիրթ արևմուտքում վերևից սկսուած վերանորոգումները լսեցին ներքևից սկսուած յեղափոխութեան առաջ և պատասխանն եղաւ մարսելէզն ու գիլյոտինը, այսպէս էլ տէրութիւնը բարեոքելու ուղղամիտ, բայց հապճեպով կատարուած և անապահով փորձերը օսմանեան պետութեան մէջ ոչ մի այլ հետևանք չէին կարող ունենալ, բայց եթէ արթնացնել ճնշուած ժողովուրդների նիրհած ոյժերը և արագացնել տիրող ցեղի անկումը։

Իսկական խորունկ հիմնութեան պակասութեան և չափազանց վառ երևակայութեան պատճառաւ, որ յատուկ է

արևելցիներին, պէտք է արտասոց և տարօրինակ գաղափարներ հող գտնէին Թուրք ժողովրդի մէջ: Մարդկային ցնորքի ամէն մի վիժումը իւր հետևողներն ունէր բազմաթիւ կրօնական աղանդների, պարզ, ծիծաղելի և արտասովոր դերվիշների մէջ: Առաւել կամ նուազ արկածալից կրօնական յեղաշրջման ծրագրեր ևս երևան եկան. պէտք էր մահմեդականութիւնը ենթարկել մի բնական կրօնի: Երկար ճնշուած մարդկային բանականութիւնը ձգտում էր դիմադրել մարգարէի քարացած կրօնական և քաղաքական ուղղափառութեան: ԺԸ: դարու կեսին Կայիրէի փաշայ Ալի-բէն-Աբդուլլահը սուլթանին մատոյց արմատական վերանորոգման մի ծրագիր, որով նա պաշտպանում էր, թէ պէտք է արմատախիլ անել ամէն դրական կրօն, թողնել հեռանալ ամբողջ կրօնական հեղինակութիւնից, ջնջել վերացնել կրօնական և աշխարհիկ դատաւորների դասակարգը՝ ուլեմաների նուիրապետութիւնը: Իբրև օրինակ նա մատնացոյց էր անում քրիստոնեայ բողոքական իշխանների վրայ, որոնք ևս թօթափել էին հռովմայեցոց մուֆտիի՝ պապի լուծը: Նա ասում էր, թէ այդ հեշտ կը լինի մի իմաստուն և հզօր միապետի համար, քանի որ մի աղքատ և փառատենչ հրէայ է առաջ բերել քրիստոնէութիւնը և մի խորագէտ վաճառական՝ մահմեդականութիւնը: Երբ նորամոլութիւնը և ազատամտականութիւնը օսմանցոց մէջ շարունակ արմատ էր ձգում, երբ ֆրանսացոց յեղափոխութիւնը և նոր ժամանակի բոլոր պահանջները իշխանաբար Դիւանի դուռն էին բաղխում, Սելիմ Գ-ը ձեռնարկեց Թուրքիան բոլորովին եւրոպականացնելու: Եաշիի խաղաղութիւնից սակաւ ինչ յետոյ սկսեց Դիւանը կազմակերպել, անդամների թիւն ու իշխանութիւնը շատ մեծացնել: Հասարակ խորհրդատու դիւանը դարձաւ մի օրէնսդրու սահմանադիր ժողով, որ սկսեց պետութեան եկեմուտքը և զինուորութիւնը լայն ծրագրով բարենորոգել: Այս բարենորոգումներն են սուլթան Սելիմ Գ-ի «Նոր կարգերը» ըստ ծրագրի Մոհամմէդ Քէօպրիւլիի: Հաստատեցին մի պատերազմական դրամարկղ, որի համար յարքունիս գրաւեցին այն բոլոր մեծ և փոքր աւատական կալուածքները, որոնց տէրերը զլացել էին իրենց աւատական ծառայութիւնները կատարելու. Այստեղ էին կենտրոնանում այն մշտնջե-

նական կապալով տուած տասանորդները, Կ. Պոլսի մաքսերը և ծխախոտի կապալը, որով ձեռք բերին տարեկան 75 միլիոն պիաստր: Այսպիսի նիւթական միջոցներով սուլթան Սելիմ Գ-ը մտածեց Թուրքաց տէրութեան չարիքների արմատը ջնջել. մահմեդականութեան պրետորիան զինուորների՝ եանիչարների ոյժն ու ըմբոստութիւնը ջախջախել և Թուրքիան զինուորութեան կողմից եւրոպական տէրութիւն դարձնել:

Այս վայրենի միլիցիայի կամ զուգապի հիմնադիրն էր զինուորական դատաւոր Կարա Խալիլ Ջենդերալին: Ջենդերալին մտածել էր եանիչարների ձեռքով կոտրել մշտական զօրքի գոռոզութիւնն ու անկարգութիւնները. ուստի Օրխան սուլթանին խորհուրդ տուաւ նոր գունդ կազմել քրիստոնեայ մանուկներից, որոնց բռնութեամբ մահմեդական էին դարձնում: Սոքա նիւթական առաւելութիւններով և կրօնական ծէսերով մտնելով Թուրք բեգտաշիների նոր կարգը, պէտք է դառնային մի զինուորական կրօնական կարգ, որ մահմեդականութեան այնպիսի ծառայութիւններ անէր, ինչպիսին քրիստոնէական ասպետական կարգերը մատուցել էին պապականութեան: Եւ անշուշտ կրօնական այս կողմը եանիչարներին ներշնչեց մի կատաղի մոլեռանդութիւն անհաւատների դէմ կռուելու. ինչպէս և հիմնադրի նպատակին նպաստեց նիւթական լաւ խնամքը, որ արդէն ցոյց էր տալիս այս գնդի անունն ու նշանը՝ գդալներից կախուած փայտեայ գդալները: Սակայն ժամանակին սոցա սկզբնական ոգին և խստագոյն կարգապահութիւնը թուլացաւ, ճիշտ այնպէս՝ ինչպէս քրիստոնեայ ասպետական կարգերինը: Հարստահարութեանց, անսանձութեանց և կեղեքումների մի շարք ցոյց է տալիս եանիչարների յարաբերութիւնները արքունիքի նկատմամբ: Զուր էր Բայազիտ Բ-ը նոցա դէմ կռուել. զուր էր ջանացել Օսման Բ-ը նոցա տեղ եգիպտացի և սիրիացի նոր վարձկան գունդ բերել: Բայց ահա Մուրադ Դ-ը խաղտեց նոցա հիմունքը վերջացնելով քրիստոնեայ մանկաժողովը. եանիչարներին ստիպեց իրենց թիւը իրենցից լրացնել, և նոցա հակառակ ալբանացիներից մի նոր զուգապի միջոցով հաստատեց: Սորին պաշտօններից մեծ վեզիրի պատուին հասած ալբանացի այն նորելուկ Մոհամմէդ Քէօպրիւլին, որ իւր հետ բերել էր բովանդակ փոր-

ձեռնութիւնը մի այնպիսի մարդու, որ պէտք է կռուէր աննպաստ հանգամանքների դէմ, եռանդով շարունակեց Մուրադ Դ-ի սկսած ուղին. ամենամեծ խստութեամբ կատարեց նորա պատուէրները և այսպիսով առանձնապէս իւր դէմ գրգռեց ենիչէրիների զայրոյթն ու բարկութիւնը։ Այն ժամանակից երբ նոքա իրենց միջից պիտի լրացնէին իրենց թիւը, աւելի ևս կազմեցին մի նեղ ազնուական կաստայ՝ դասակարգ, որ բոլոր միւս դասակարգերի արտօնութիւնները իրենց մէջ միացնում էին և միևնոյն ժամանակ տէրութեանը ոչ մի ծառայութիւն չէին ուզում մատուցանել։ Նոքա մտան համքարութեանց մէջ և սկսեցին ամեն տեսակ ազնիւ և անազնիւ արհեստներ։ Նոքա իրաւունք ստացան իրենց համար ներմուծուած ապրանքների մաքս չվճարել, սկսեցին առևտուր անել, առևտրական դասի առաւելութիւնները միացնել զինուորական դասի իրաւունքներին։ Ըմբոստութիւնն ու յափշտակութիւնը մեծացել էին, բայց քաջութիւնն ու մոլեկան ոգևորութիւնը ռազմի դաշտում անհետացել էին և նոցա թշնամիների առաջից արագ փախուստը շուտով առած դարձաւ այնպէս, ինչպէս նոցա քաջութիւնը հրկիզելու և այրելու, կողոպտելու և մոլեգնելու թշնամու երկրում։ Կարապի ճակատամարտին ամբողջ գունդը՝ լսելով լոկ իբրև թէ շրջապատուել են ռուսներից, փախաւ և յարձակուելով Դանուբի ափին մեծ վեզիրի բանակի վրայ բոլորովին կողոպտեց հետն էլ պատերազմի դրամարկղը։ Զննելով՝ որ Սելիմ Գ-ի նախորդների վերանորոգմանց բոլոր ջանքերը չնչին հետևանք էին ունեցել, այնուամենայնիւ սա աներկիւղ դիմեց գործի՝ երկրի այս պատուհաս ենիչէրներին ջնջելու։ Նախ և առաջ կազմեց մի փոքր գունդ կանոնաւոր զօրք այն պատրուակով՝ թէ կամենում է Կ. Պոլսի ջրամբարներն ռուսներից պաշտպանել. հետզհետէ զօրքի թիւը հասցրեց 12000 հոգու։ Հրամայեց այս գունդերը մայրաքաղաքից հեռու եւրոպական կարգով մարզել. որովհետև հնաւանդ թուրքերի մոլեռանդութիւնը չգրգռէ։ Նա դիմեց պրուսացի զօրավար Կնոբլեսդորֆին և նորանից խորհուրդ հարցրեց, որովհետև, ինչպէս ասում էր, Պրուսիան Եւրոպայի բոլոր միապետական տէրութիւններից լաւ է կառավարւում։ Կնոբլեսդորֆը հաւանեց և ուրուագծեց վերանորոգմանց մի

ծրագիր, որով 25 գունդ պէտք է պրուսացոց օրինակով և պրուսացոց կանոններով մարզուէին։ Զօրքի պակասը պէտք է լրացնէին «նոր գունդերով»։ Քսան և հինգ գունդերը իբրև կայուն սահմանապահ զօրք Բալկանից դէպի Սիլիստրա պիտի շարուէին, զօրանոցներ շինուէին այն գծի երկարութեամբ և այնտեղի անտէր երկիրը զինուորներին յանձնուէր։ Այս ձևով ընտիր զինուորական գաղթավայրեր պէտք է հիմնուէին, որոնք երկիրը մի քանի ամրոցների օգնութեամբ Բալկանում բոլորովին պիտի սանձահարէին և մինչև անգամ բաւական խոշոր գումար պատերազմական դրամարկղի համար յատկացնէին։ Հետզհետէ կարելի էր, ինչպէս կարծւում էր, կրկին 25 գունդ կազմել և յետոյ միւս նահանգներում ևս զինուորական գաղթավայրեր հաստատել։ Որ նման ծրագրերն արդէն իրենց առաջին քայլերում պիտի խանգարուէին, շատ հասկանալի է։ Կ. Պոլսի յուզմունքը միայն ուժով կարելի էր ճնշել։ Ֆրանսիոյ հանրապետութեան դեսպան Դէկօրշը (Descorches) ի մեծ ցնծութիւն Թուրք ամբոխի Կ. Պոլսում ներկայացրեց Պարիզի տեսարանների մի պատկեր. ցուցեցան ազատութեան սիւներ և Թուրքիոյ մայրաքաղաքի խուժանը պարում էր յեղափոխականների կարմանյօլ պարը Ça ira-ի եղանակով։ Սուլթան Սելիմն, ինչպէս ասում են, այս վայրենի տեսարանը հաճութեամբ դիտում է եղել. Նա չըմբռնեց, որ եւրոպական քաղաքակրթութեան կղկղանքը հովանաւորելով՝ այդ քաղաքակրթութեան բարիքը վտանում է։ Եւրոպական քաղաքակրթութիւնը ոչ միայն լուսափայլ կայծ է, այլ և լափող կրակ, որ կործանարար է, երբ առանց միջնորդութեան անմիջապէս անկուլտուր տարրերի հետ է շփւում։ Բանականութեան սատուրնեան տօներ կատարելը ամեն տեղից աւելի Թուրքիոյ համար անժամանակ էր։ Ֆրանսացոց եռագոյնը տուրքանի՝ չալմայի վրայ և մշտապէս պաշարուն մահմեդականը Պարիզի ժակոբէնների նեղլիկ թիկնոցով՝ նշան էր իրօք վերահաս աղէտի. արևելքում՝ ինչպէս և արևմուտքում պէտք է պարզուէր, որ յեղափոխութեան հետ չէ կարելի խաղ անել, և որ չէ կարելի յեղափոխութիւնը յառաջ բերել առանց նորան կուլ գնալու։ Իզուր Սելիմը հրաման արձակեց բոլոր այն աստղագէտներին, որոնք կարող էին չարիք գուշակել, անմիջապէս

իբրև դաւաճանների մահուան պատժի ենթարկել։ Զարկն արդէն վրայ էր հասել. և Թուրքիայում լուսաւորեալ բռնապետութեան ճակատագիրն եղաւ, որ ինքն իրեն քայքայուեցաւ և ոչնչացաւ յօգուտ ճնշուած ռայայի։ Սելիմ Գ-ը 1807-ին ընկճուեցաւ հին Թուրքերի՝ ուլեմաների և եանիչարների միացեալ ոյժից։ Մահմուդը նորա վրէժը հանեց այս ներքին թշնամիներից. բայց այսու միայն սահմանեց ծերացող Թուրք պետութեան մարմնի արագահոս քայքայումը և յառաջ բերաւ նոր երիտասարդ տարրեր։ Վասնզի այժմ երևան եկան այն կենտրոնախոյս ոյժերը, որոնք առաջացել էին օտարների տևական միջամտութեան և Սելիմի անյաջող վերանորոգման փորձերից։ Այժմ երևեցաւ, թէ որպիսի թոյլ հիմքերի վերայ է կանգնած նոյն իսկ ամենազօրեղ զինուորական տէրութիւնը, հենց որ սորան կեանք տուող բացառիկ հանգամանքներն այլևս չկային։ Պարզուեցաւ, որ ընտիր և կենսունակ տարրերը չէին գտնւում Թուրք պետութեան կենտրոնում, այլ նորա առանձին առանձին մասերում։ Ամենուրեք փորձեր էին երևում ակնյայտնի անզօր Թուրք կառավարութիւնից անջատուելու և ջոկ մի առանձին զօրեղ անկախութիւն հիմնելու։

Խիզախ նորելուկներ յառաջացան, որոնք աշխատում էին Դռան թուլութիւնից օգտուել իրենց անձնական փառամոլ ծրագրերի համար։ Պետութեան ամբողջութեան թուլութիւնը և առանձին մասերի զօրութիւնը ակներև է դառնում, երբ Վիդդինի փաշայ Պասուան Օղլու, Եգիպտոսի տիրապետ Մեհմէտ Ալու և Եանինայի Ալի փաշայի պէս ինքնակոչ իշխաններ են դուրս գալիս։ Սոքա այնպիսի բնաւորութիւններ էին, որ ծնում է մի կատաղի յուզուած ժամանակի քաոսը, լի դիւական ոյժով, կորուկ ու յարիր և լի անխնայ վայրագութեամբ։ Բայց սոցանից ամենից աւելի Մաքիավելլու բռնաւորին նմանում է Ալի փաշան։ Կարելի է մի այսպիսի երևոյթ անդորր ու խաղաղ կենցաղավարին և իդիլիական՝ հովուերգական պատմութիւն գիտողին դիւր չկայ, բայց խորախոհ քաղաքագէտի համար այս երևոյթը կը դառնայ ակնապիշ դիտողութեան առարկայ։ Վասնզի Եանինայի բռնաւորն էր, որ մինչդեռ իւր ֆսկական հաշուով աշխատում էր ճնշել յոյներին, հակառակութիւնից չունչ քաշող յոյների ձեռքը զէնք տուաւ և

որ, ի հարկէ առանց կամենալու, յունաց յեղափոխութեան բռնկման և յաջողութեան նպաստեց։ Սորա ապստամբութիւնը սուլթանի դէմ և յոյների ազգային դաղտնի ընկերութիւնը՝ Հետերիան ուղղակի պատրաստեցին 1821 թուականի յեղափոխութիւնը։

Ալի փաշան ծնուել է մի այնպիսի երկրում, որ թէև նեղ Ադրիական ծովով է բաժանուած Իտալիայից, բայց մեզ համար աւելի անծանօթ է քանց Ամերիկայի շատ երկիրներ։ Պինդոս լեռան արևմտեան լանջերին, այն կողմերում, որ հին յոյները համարում էին երկրիս ամենահեռաւոր ծայրը և յաւիտենական խաւարի վայր, ապրում են ալբանացիք. մի ժողովուրդ, ռազմիկ և վայրենի, որ իւր կոչումն է համարում կռիւն ու զէնքը, իւր փառքը՝ խաղաղ և քաղաքացիական պարապմունքներից մեկուսանալը։ Ալբանացիք իբրև սերունդ արիական այն ցեղի, որ նախապատմական ժամանակում հիւսիսային կողմից տիրեց Հեմոս թերակղզուն և իլլիւրացի, եպիրացի և սկիպետար անուններով միայն մի ընդհանուր ազգայնութիւն կազմեցին, վաղուց ի վեր բազմատեսակ կապեր են ունեցել հելլէնների հետ։ Սոքա Թուրքերի տիրապետութեան ժամանակ և առաջ գաղթում էին դէպի Յունաստան։ Այժմեան Յունաստանի բնակչութեան բաւական խոշոր մասը ծագմամբ ալբանացի է։ Ատտիկէում և Մեգարիսում, Կորինթոսում, Արգոլիսում, Արկադիոյ հիւսիսային և Աքայիոյ արևելեան մասում, Լակոնիայում (Բարդունիա) Մոնեմբասիոյ, Վատիկայի, Լալայի և Կարիտենայի մօտ, Նավարինի և Կորոնի միջև հանդիպում ենք ալբանական գաղութների հետքերի։ Այս մի իրողութիւն է, որին Ֆալմերայերը իւր հետևողներով շատ անգամ ծուռ մեկնութիւն է տուել և համարել հաստատութիւն իւր այն տեսութեան, թէ այժմեան յոյները սլաւական ծագումն ունին։ Եթէ այսօրուան օրս էլ Աթէնքի փողոցներում ալբանական հնչիւններ են լսւում նոյն իսկ Արամազդի տաճարի սիւների տակ խաղացող երեխաների բերանից, բայց և այնպէս տարակոյս չկայ, որ Յունաստան մտած ալբանական տարրին վիճակուած է անյոյս կերպով հելլէն դառնալու։ Ինչպէս երբեմն Պելասգների մի մասը հելլէններից յաղթահարուելով մտաւորապէս էլ ձուլուեցաւ, այնպէս որ

պելասգացոց լեզուն Հերոդոտոսի ժամանակ համարեա թէ մեռած էր. այսպէս էլ այսօրուան օրս ալբանացիք Յունաստանում կ'ենթարկուեն յունաց կուլտուրային և լեզուին և բոլորովին հելլէն կը դառնան։ Սակայն այլ է ալբանական ցեղի վիճակը իւր բուն հայրենիքում։ Չնայելով միջնադարեան բազմաթիւ ցեղերի արշաւանքներին՝ ազգայնութիւնն այնտեղ անխառնութեամբ պահպանուեցաւ։ Ամեն տարի յիրաւի ժողովրդի մի մասը գաղթում է դուրս, բայց հետը ոչինչ չէ բերում Ալբանիա այն ամենից, ինչ որ օտարութեան մէջ տեսնում է և լսում։ Չնայելով ալբանացու պանդխտական և թափառական կեանքին՝ նա երկաթի պնդութեամբ ամուր կառչել է հայրենիքին և հայրենի սովորութեանց։ Կարծես թէ նա օտար աշխարհներ ճանաչում է, որպէսզի իւր նեղ հայրենիքը, երկրի այս կղզիացած մասը, աւելի գեղեցիկ գտնէ և աւելի գորովով սիրէ։ Օտարը նորա վերայ չէ կարողանում ազդել. այսպիսով է միայն բացատրւում, որ Ալբանիան տակաւին Թուրքիայ այն մասն է, որտեղ միջնադարեան բարբարոսութեան բոլոր տարրերը պահպանւում են, որ իւր բոլոր հասարակական յարաբերութեանց մէջ բռունցքի իրաւունքի, արեան վրէժխնդրութեան և ցեղական կապերի գաղափարներից դէն չէ անցել։ Ժողովրդի մտածութիւնը կապւում է նեղ ընտանեկան գոյութեան սահմանափակ շրջանին. նորա սիրոյ բոլոր ոյժը կենտրոնանում է ընտանիքի, ցեղի վրայ, որի անխզելի կապը արտայայտուած է տոսքական այն առածով, թէ «արիւնը ջուր չի դառնալ»։ Այն յամառութիւնը, որով ալբանացին խաղաղութեան միջոցին ևս իւր ռազմական սովորոյթները պահպանում է, մինչև այսօր ամեն մի ընկերական զարգացում յետ է մղել։ Եթէ օտար թշնամի չկար դէմը կռուելու, այն ժամանակ իրար մէջ էին ուտում բազմաթիւ ալբանացի «պսարներ» այսինքն ցեղեր կամ կլաններ։ «Ծôռում փիս» այսինքն որ օջաղից կամ ցեղից ես, հարցնում են սովորաբար երկու տարբեր ցեղի ալբանացի իրար հանդիպելիս. և այս միջոցին հարցողը բարձրացնում է իւր հրացանի շնիկը։ Վասնզի շատ կարելի է, որ այս երկուսի ցեղերը «չետայ» այսինքն թշնամութիւն ունին, որ մէկի ցեղը միւսին արիւն է պարտական։ Արեան վրիժառութիւնը Ալբանիայում, ինչպէս

Կորսիկայում և Մանիում, մի սուրբ, կրօնի հետ սերտ կապուած սովորոյթ է և այս ժողովուրդների ամբողջ բարոյականութեան հիմքն է այս ահարկու ասացուածքը (maxime). ով իւր վրէժը չէ հանում, չէ արդարանում։ Ով կատարուած անարդարութիւնը ներում է, ալբանացու ըմբռնմամբ միայն ուրիշների բռնութիւնն է սրբագործում։ Սպանութիւնը դաշնադրութեամբ վճռւում է և կտակւում ժառանգներին. մահուան անկողնում ընտանիքի հայրը սովորաբար իւր ցեղից սպանուածներին է հաշւում և իւր որդոց վրայ ամենայն ջերմեռանդութեամբ պարտք է դնում նոցա վրէժը լուծելու։

Ինչպէս հին ժամանակներում հելլէնները երկու զանազան խմբերի էին բաժանուած, որոնց երկուսի երակներում սակայն միևնոյն տաք և հասուն արիւնն էր շրջում, այնպէս էլ ալբանացիք հնագոյն ժամանակներից բաժանւում են երկու գլխաւոր ցեղի, և ինչ որ Ստրաբոնի ժամանակ Իլլիրացիք և Էպիրացիք էին, նոյն են գեղերը հիւսիսային և միջին Ալբանիայում, իսկ տոսկերը հարաւային Ալբանիայում։ Այն երկու ցեղերը, որոնց բարբառները միմեանցից զանազանւում են այնպէս, ինչպէս հայոց արևելեան և արևմտեանը, նախնիքներից ժառանգել են մի հակակրութիւն, որ յաճախ Թուրքերի բանակներում քովէքով կռուելիս արիւնահեղ վէճերի առիթ է տուել։ Վասնզի մինչդեռ գեղերը մասամբ ուղղափառ մահմեդական են, մասամբ կաթոլիկ. տոսկերի մի մասը Ալու չիա՝ աւելի ազատ աղանդին են պատկանում. իսկ քրիստոնեայ տոսկերը յունադաւան են։ Գեղերի միջից ԺԵ. դարում ծագեց դիւցազնաւոր, մահմեդականութեան դէմ առաջամարտիկ, քառասուն ճակատամարտներում յաղթանակող Սկանդար բեկը կամ Գէորգ Կաստրիոտան, որ այժմ ևս նոցա բալլադներում երգւում է իբրև Ալբանիայ վիշապ։ Տոսկերի միջից ծագեց այն նորագոյն ալբանացի բռնապետը (Despot)՝ Ալի փաշան, որ Սկանդար բեկի պէս մեծացաւ բռունցքի իրաւունքի և վայրենութեան դպրոցում և իւր յաջողութիւնները պարտական էր իւր աննկուն եռանդին, որով կարողացաւ իւր շրջապատող բարբարոսութեան հետևանքներից օգտուել և իւր ժողովրդի յ[illegible]ղ կրօնական քաղաքական գաղափարների ներկայացուցիչ հանդիսանալ։ Ալի փաշայի նշանակութիւնը միայն այն ժա-

մանակ կարելի է գնահատել, երբ մարդ ճանաչէ ալբանացոց դրութիւնը, տոսկերի և գեգերի հակադրութիւնը, ինչպէս և ալբանացոց յարաբերութիւնը յոյների հետ։ Ռուս-թուրքական պատերազմներին յոյները ծանօթացան ալբանացոց զինուորական ոյժին։ Ալբանիոյ վայրենի լեռնականները 1770 թուականից իվեր աւելի մեծ սարսափ էին տարածում յոյների վրայ քան թուրքերը. Դիւանն՝ ի հարկէ ոչ միշտ սիրով օգտւում էր այս աւազակաբարոյ գուգազից, որի գոռոզութիւնն ու ըմբոստութիւնը դիւրութեամբ իւր դէմ էր դառնում. սակայն թուրքերի պատերազմական քաջութեան նուազման պատճառով ալբանացի վարձկան զինուորների թիւը շատանում էր, և Ալի փաշայի ժամանակ Եւրոպական Թուրքիոյ բոլոր փաշաները աշխատում էին իւրեանց ալբանացի թիկնապահ գնդերի թիւը շատացնել։ Մուստոյիզատ ընտանիքը, որից Ալի փաշան էր, իւր նահապետը համարում էր Մուստախուզոս Թուրքին, որ պէտք է փոքր Ասիայից Ալբանիա գաղթած լինի*։ Մուստախուզոսի սերունդ Մուխտար-բէյը համարւում էր իւր ժամանակի քաջամարտիկ. Նա ընկաւ զէնքը ձեռին Կորֆուի պաշարման ժամանակ Շուլենբուրգի դէմ 17:6 թուին։ Հօր քաջութեան ի վարձատրութիւն Դիւանը Մուխտարի կրտսեր որդի Վելիին շնորհեց փաշայութեան պատիւը ձիու երկպոչանով և Դելվինոյի փաշայութիւնը։ Վելիի մղած կռիւները լեռնական յոյն կլեփտների դէմ տակաւին ապրում են ժողովրդի յիշողութեան մէջ։ Ամենից առաջ երգը գովաբանում է պալիկարների պարագլուխ Յովհան Բուկովալլասի յաղթութիւնը Կերասովոյի մօտ։ Մի չիկահեր աղջիկ պատուհանից այս քաջին, որ փաշայի դէմ կռւում էր, ձայն էր տալիս. «Դադարի՛ր, Յովհա՛ն, թո՛ղ կռիւն ու հրացանը, որ մառախուղը բացուի, մուխը ցրուի, հաշուենք քո գունդը և տեսնենք որքան են մնացել։ Երեք անգամ հաշւում են թուրքերի թիւը, պակաս է հինգ հարիւր։ Ապա հաշւում են կլեփտների թիւը, և ահա պակասում են երեք

* Ἱστορία τοῦ Ἀλῆ Πασσᾶ Μουτσοισάτη ὑπὸ Δ. Κουτσανικα. Ἀθ. 1863։ Համ. և հեղինակիս յօդուածը. Ali Pascha. Historisches Taschenbuch. 1867, էջ 95։

քաջեր։ Մէկը գնաց ջրի, միւսը հացի, երրորդը՝ լաւագոյնը հանգչում է իւր հրացանի քով»։ Վելին չկարողացաւ դիւանի շնորհած պատիւը երկար ժամանակ պահպանել. Նա վայր ընկաւ անխիղճ հակառակորդների խարդաւանքով. տնից տեղից քշուելով՝ իւր հօր ժառանգական Տեպելէնի կալուածքից հալածուած՝ ընկճուած վշտից և թշուառութիւնից մեռաւ 45 տարեկան հասակում և իւր Խամկօ կնօջը և Ալի ու Խայնիցա զաւակներին անօգնական թողեց։

Ալին ծնուել է 1741 թուին Տեպելենիում։ Այս փոքրիկ վայրը ընկած է հառաչանքի գետ՝ Ոյուսայի ափին, որ շրջապատուած է բարձր և սեպ կրային լեռներով։ Բնութիւնը Ալբանիոյ այս մասերում այնպէս վայրենի է և անմխիթար՝ ինչպէս մարդիկը։ Տեպելենու կրճում անդադար տեղի ունին հողմեր և փոթորիկներ. ոչ մի ծառ, ոչ մի ուռենու թուփ չէ հասնում Ոյուսայի ամայի ժայռերի կողերին։ Այս շրջապատում մեծացաւ Ալին, որ մի անկոփ, բայց ուժեղ լեռնական մանուկ էր։ Ճակատագիրը կարծես այդ պատանուն խրատ էր տալիս, հրաւիրում էր նորան վրէժ հանել իւր ընտանիքի կրած նախատինքի և արտաքսուելու համար։ Դեռ տղայութեան հասակում նկատւում էր մի աշխոյժ մտքի և մի կայտառ հումորի նշաններ, որ աչքի էր ընկնում համեմատելով իւր հասակակից խաղաղ ու հանդարտ թուրքերի հետ։ «Նորա անհանգիստ ոգին, պատմում է ժերոմ Դը-Շալանսը, երեւում էր արդէն նորա կանանոցից դուրս գալիս. վասնզի սովորաբար նորա վերայ նկատւում էր ժպրհութիւն և գործունէութիւն, որ բնութիւնից հպարտ և լուրջ երիտասարդ թուրքերին յատուկ չէին։ Հենց որ նա կարողանում էր իւր ծնողական տանից դուրս գալ, գնում էր լեռները ձեան և թաւուտների մէջ թափառելու։ Իզուր հայրն աշխատում էր նորա ուշադրութիւնը գրաւել։ Կամակոր և հաստագլուխ պատանի լինելով՝ փախչում էր իւր ուսուցչի ձեռքից և վիրաւորում նորան, հենց որ ապահով էր, թէ անպատիժ կը մնայ»։ Այն տխուր հանգամանքները, որոնց ժամանակ իւր հօրը կորցրեց, խոր տպաւորութիւն էին թողել Ալու վրայ։ Նորա կեանքի առաջին փորձառութիւններով զօրեղացան այս տպաւորութիւնները։ 1782-ին նա մտաւ ծառայութեան Բերաթի Կուրտ փաշայի

մօտ, որ իշխում էր միջին և ստորին Ալբանիայում: Կուրտն սկզբում այնպէս հաւանեց այս յանդուգն, ճարտար և ճարպիկ մարդուն, որ իւր հարազատ դստեր հետ նշանեց: Բայց նորա զօրեղ հակառակորդները, որոնք ջանացին Ալու բնաւորութիւնն ու ծագումը նսեմացնել, ազդեցին և Կուրտը յետ առաւ նշանը, իսկ իւր դուստրն ամուսնացրեց Սինան փաշայի ցեղից Իբրահիմ բէկի հետ: Այժմ Ալին Բերաթից գաղտուկ փախաւ և իւր շուրջը հաւաքեց մի խումբ արկածախնդիր մարդիկ. մի բան որ դիւրին է Ալբանիայում բնակիչների կռուասիրութեան և աւարասիրութեան պատճառով: Մայրը և քոյրը հետևեցին նորան իւր արշաւանքներին:

Խամկօն մի անսովոր վճռական և անսահման փառամոլ կին էր: Նորա բոլոր արտաքինից և վարմունքից երևում էր խստութիւն, տղամարդութիւն, կարծես թէ իրան մի Ոլիմպիադա էր համարում: Այժմ նա բացաւ իւր երեսը և զէն քցեց իւր աղէկառը՝ թեշին և զէնք առաւ իւր որդու շահերը պաշտպանելու: Ցադորիայի մօտ Ալին ընդհարուեցաւ Կուրտի զունդերի հետ, սակայն կռիւը հետևանք չունեցաւ, որովհետև երկու կողմի ալբանացիք ցանկանում էին, որ պատերազմը երկարի, քանի որ իրենց ձեռնտու էր: Բայց շուտով Ալու նիւթական միջոցները սկսան սպառուել: Նորա ընկերները թողին հեռացան և վերջը Ալին իւր մօր և քրոջ հետ գերի ընկաւ Խորմովոյի և Գարդիկիի բնակիչների ձեռքը: Խամկօն և Խայնիտցան ենթարկուեցան այնպիսի չարաչար տանջանքների, որ ճարտարամիտ չարութիւնը կարող է հնարել կանանց համար: Սոցա քցեցին մի խոնաւ բանտ, որտեղից դուրս հանեցին միայն, որպէսզի Գարդիկիի և Խորմովոյի նշանաւոր անասնաբարոյ բնակիչների ձեռքը մատնեն: Այս երկու կանանց տանջանքները չարժեցին չարերի կարեկցութիւնը. սկսուեցաւ բանակցութիւն նոցա ազատելու համար, և մի յոյն տուաւ հարկաւոր գումարը: Գարդիկեցիք 22,800 պիաստր փրկանք ստանալով արձակեցին գերիներին: Հասկանալի է, որ այս դառնացած կանայք այնուհետև արծարծում էին Ալիի սրտում վրէժխնդրութեան հուրը: Մայրը նորանից երդում առաւ, որ դադար չունենայ, մինչև որ Գարդիկին քանդուի և հողին հաւասարուի: Խայնիտցան էլ նորանից աղերսագին

խնդրում էր, որ իւր տան նախատինքը սրբէ: «Ես միայն այն ժամանակ հանգիստ կը մեռնեմ, յաճախ կրկնում էր նա, երբ ես իմ անկողնի բարձերը Գարդիկիի կանանց մազերով լցրած լինեմ»:

Ալին ինքը իւրայիններին հասած նախատինքի համար սաստիկ դառնացել էր: Բայց նա հասկանում էր, որ թշնամիք առայժմ չափազանց զօրեղ են, որ նոցա միայն հետզհետէ կողմնակի ճանապարհներով կարող է թակարդ ձգել: Երկար տարիներ նա կարողացաւ կեղծել և իւր նախատինքը կուլ տալ, բայց տարիները չկարողացան նորա բարկութիւնը մեղմացնել: Վրէժխնդրութիւնը նորա համար մի կերակուր էր, որ պէտք էր սառն ուտել: Նպատակին հասնելու և թշնամիներին պատժել կարողանալու համար Ալուն ամենից առաջ ոյժ էր հարկաւոր: Ոյժ ձեռք բերելը նորա անկեղծ ձգտումն էր: Այս էին շնչում իւր մօր մաքիավելլական խորհուրդները, որ միշտ կրկնում էր, թէ հետևանքն ամէն ինչ արդարացնում է:

«Որդիս, ով իւր ժառանգութիւնը չէ կարող պաշտպանել, արժանի է որ նորանից խլուի այն: Մտածիր, որ ուրիշների սեփականութիւնը միայն պատկանում է իրենց, որովհետև նոքա աւելի զօրեղ են, և եթէ դու կարողես նոցանից յափըշտակել՝ քոնը կը լինի»: Ինքն Ալին խոստովանում էր, թէ որքան խոր դրոշմուել էին նորա մտքում իւր մօր բուռն խրատները: Ալին յետոյ պատմում էր Ֆրանսացի Պուքըվիլլին. «Երբ հայրս մեռաւ, ինձ թողեց միայն մի բոյն և մի քանի օրավար հող: Իմ երևակայութեան ոյժը՝ բորբոքուած մօրս խորհուրդներով՝ որ կրկին անգամ ինձ կեանք տուաւ ինձ մարդ և վեզիր դարձնելով, բաց արաւ իմ առաջ կոչման գաղտնիքը: Ես երազում էի միայն ոյժ, գանձեր և պալատներ. մի խօսքով այն ամէնը, ինչ որ արդէն ժամանակն ինձ համար իրագործեց և դեռ շարունակում է ինձ խոստանալ. որովհետև այս կէտը, որին հասել եմ, դեռ իմ յոյսերի կէտ նպատակին չէ»: Ալու առաջին փորձերը և փառատենչ ծրագրերը, որ Խամկօն դրդել էր կատարելու, խորտակուեցան. երբ Ալին բախտախնդիր հրոսակների գլուխն անցած Խորմովոյի կողմերն ասպատակեց, ջարդուեցաւ և ինքն իւր ընկեր-

ների փախուստի առաջին օրինակը տուաւ: Խամկօն ականց անէծքների տարափ թափեց իւր որդու գլխին, երբ տեսաւ, որ նա այսպէս վերադարձաւ, և իւր թեչին՝ որ գերութիւնից իվեր նորից ձեռքն էր առել, նորա առաջ բռնելով հետևեալ խօսքերն ասաց. «Գնա, թուլամորթ, և թել մանի հարէմի կանանց հետ, այդ զբաղմունքը քեզ աւելի վայել է քան զէնքը»: Սոյնպէս Ալու օգտին չծառայեցին նորա յետագայ անմիջական գործերը, երբ Նեգրոպոնտում և Թեսալիայում իբրև թափառական ասպետ շրջում էր, այծեր ու ոչխարներ յափշտակում և յոյն ռայաներին կողոպտում:

Ալին սիրում էր, ինչպէս բոլոր նորելուկները (parvenus), և աւելի ուշ յաջողութեանց ժամանակ յիշատակել իւր կեանքի ընթացքի աննշան սկզբնական դէպքերը, որպէսզի միանգամայն յիշեցնէ այն չարչարանքները, որ նա կրել էր բարձրանալու համար: Այն պատմուածքը, որ նա լեռներում թափառելիս իբրև թէ 60 փարայ է ունեցել գրպանում, նոյն իսկ իւր թուրը ծախել է, և երբ շատ նեղութեան մէջ է եղել գանձ է գտել, որ կարօտ է ստուգութեան, ծառայում էր նորա անձի խորհրդաւոր շուքը բարձրացնելուն: Նա ինքը յետոյ այս ցոյց էր տալիս իբրև Բալլիդա խաբեբայ վարժապետի հնարովի զրոյց, բայց աւելացնում էր, թէ լաւ է, մարդիկ հաւատան այսպիսի բաների, որ իւր բախտին հրաշքի գունաւորութիւն են տալիս: «Ա՜խ, հառաչում էր նա Պուքըվիլլին պատմելիս, ափսոս որ ես վաղ չեմ եկել աշխարհ, թէ չէ թերևս ես էլ մի քանի յիմարների օգնութեամբ մարգարէ դառնայի»:

Ալին իւր դրութիւնը կարողացաւ բարւոքել նախ մի յաջող ամուսնութեամբ. նա կին առաւ Դելվինոյի փաշայի Եմինեհ դուստրը: Ապա սկսեց լրջութեամբ մտածել, որ իւր տան զօրութեան հիմքը ձգէ և իւր ծննդավայր Տեպելենին նուաճէ: Այստեղ նա ձեռք առաւ այն նախազգուշութիւնը և կատուի խորամանկութիւնը, որ բնորոշում է նորա բոլոր ձեռնարկութիւնները: «Ես զգում էի, պատմում է նա Պուքըվիլլին, որ անհրաժեշտ է ամուր արմատներ ձգել իմ ծննդավայրում: Այնտեղ ես ունէի մտերիմ կուսակիցներ և սարսափելի թշնամիներ: Վերջիններիս պէտք է ես որ և է

կերպով մոլորեցնէի, որպէսզի յետոյ նոցա խմբովին ջնջէի. ուստի ես կազմեցի հետևեալ ծրագիրը:

«Ես սովորութիւն ունէի իմ որսորդութիւններից յետոյ Բեխչայի ափին ծառերի ստուերում հանգչելու և ճաշերից յետոյ քնելու: Իմ մտերիմներից մէկին ես ուղարկեցի թշնամիներիս մօտ, որ նոցա առաջարկէ ինձ սպանել: Ես իմ թըշնամիներից առաջ շտապեցի ժամադրութեան վայրը և ծառերի սաղարթների տակ մի այծ կապել տուի ցախակապով և գդակս վերան դրի: Ապա ծպտեալ կողմնակի ճանապարհներով տուն վերադարձայ. մինչդեռ այս միջոցին թշնամիներս բազմաթիւ գնդակներ կենդանու վրայ արձակելով իբրև թէ ինձ սպանեցին: Իմ մարդկանց մի մասը այս աղմուկի վրայ պէտք է խոյն ելնէր, որպէսզի թշնամիներն աւելի մօտ չգային և հետևանքը չտեսնէին: Ապա իմ կարծեցեալ սպանիչները վերադարձան Տեպելենի բարձրաձայն գոչելով. «Ալին այլևս չկայ, մենք նորանից պրծանք»: Այս լուրը հասաւ մինչև կանանոց. ես լսում էի իմ մօր լացն ու կոծը և իմ թշնամիների փառում գոչումը: Ես թոյլ տուի, որ աղմուկը մեծանայ, սպասեցի մինչև թշնամիներս գինով և ուրախութեամբ հարբեցան: Բայց ապա պայմանական նշանը տուի և իմ կուսակիցներով նոցա վրայ ընկայ: Արդարութիւնն իմ կողմն էր, բոլորը մինչև միւս օրը կոտորուեցան, ես նոցա կալուածքներն ու տները բաժանեցի իմ օգնականներին. և այս վայրկեանից սկսած կարող էի ասել, թէ Տեպելենին ինձ է պատկանում»:

Ալին այս կերպով իւր տան զօրութեան հիմք դնելով աստիճան առ աստիճան յառաջացաւ բռնութեամբ և կաշառքով: Թէև նա դեռ ասպատակաւորների առաջնորդ էր միայն, սակայն նորա փառամոլութիւնը աւելի բարձր էր ձգտում: Ալբանիոյ խառնաշփոթ դրութիւնը, մշտական կռիւներն ու խարդաւանքները մի անխիղճ հնարագէտ մարդու ամենալաւ առիթ էին տալիս աստիճանէ աստիճան բարձրանալու: Դելվինոյի փաշայութիւնը նորա առաջին աւարը դարձաւ: Նորա աները, Դելվինոյի փաշան, խառնուել էր ռուս-չերնոգորիական 1767 թուականի կռիւներին և Մոնաստիրում գլխատուել էր: Առան յաջորդեց Արգիրո-Կաստրոյի Ալի փաշան, որին մեր Ալի փաշան իւր քոյր Խայնիտցան կնութեան տուաւ,

յուսալով թէ այս ճանապարհով աւելի շուտով իւր նպատակին կը հասնի։ Բայց նա տեսաւ, որ խաբուած է։ Իւր փեսայի բանի մահից յետոյ Բ. Դուռը նշանակեց ոչ թէ Ալի փաշային, այլ Սելիմ բէյ Կոկային Դելվինայի սանջակի փաշայ ձիու երկագնչանով։ Բայց Սելիմը շուտով անուանարկ եղաւ, որով կարող էր պաշտօնանկ լինել։ Նա թողել էր իւր նախորդների ընթացքը, որոնք միշտ Վենետիկցոց հետ վէճեր ունէին, և Կորֆուի վերատեսուչների հետ համերաշխ էր։ Այս քաղաքականութիւնը Դիւանի կասկածը յարուց նորա դէմ, և Ալին, որ սիրով լրտեսի դեր էր ստանձնում, պատուէր ստացաւ Սելիմի վրայ հսկելու։ Ալին յանձն առաւ, գնաց Սելիմի մօտ, քաղցրութեամբ ընդունուեցաւ, հիւրասիրուեցաւ և մտաւ նորա աչքը։

Շուտով առիթ ներկայացաւ փաշային ոչնչացնելու։ Սելիմը Վենետիկցոց ծախել էր մի անտառ Պելոդաս լճի մօտերքը։ Արդ Ալին ամբաստանեց Սելիմին, թէ յանցապարտ է, որ սուլթանի հողը ծախել է։ Եւ եթէ միջոցներ ձեռք չառնուին, շուտով փաշան ամբողջ Դելվինոյ նահանգը անհաւատների ձեռը կը մատնէ։ «Ցաւում եմ, աւելացնում էր նա, որ իմ բարերար Սելիմի խաբէութիւնները երևան եմ հանում. բայց իմ տէր սուլթանի շահը ինձ գրդեց բաց անել այս գաղտնիքը, որ հաւասարապէս վերաբերում է կրօնին և տէրութեան»։ Առանց մի որ է քննութեան Դիւանը Սելիմի դէմ մահուան ֆերման՝ հրովարտակ ուղարկեց և պատուիրեց Ալուն հրամանը կատարել։ Ծերունի Սելիմ փաշան չէր կասկածում, թէ որպիսի օձ էր սնուցանում իւր ծոցում։ Ալի փաշան հիւրասիրութեան սուրբ օրէնքների հակառակ նախապատրաստեց այն մարդու սպանութիւնը, որ իրեն հիւրասիրել էր։ Ամեն օր գնում էր տան տիրոջ մօտ, նորան երկրի սովորութեան համաձայն իւր յարգանքը մատուցանելու։ Սակայն մի օր պատրուակ բռնեց, թէ հիւանդ է և Սելիմին խնդրեց, որ իւր բնակարանը գայ և լսէ մի կարևոր տեղեկութիւն։ Սելիմն ընդունեց այս հրաւէրը և գնաց։ Բայց Ալին պահել էր մի պատի դարակի մէջ վարձկան հրոսակներ, որոնք նշանը տրուելուն՝ սուրճի թասը Ալու ձեռքից վայր ընկնելուն պէս դուրս պրծան և Սելիմին մահացու վէրք հասցրին։ Նա մեռաւ

վշտահար յանդիմանելով Ալուն դաւաճանութեան համար։ «Դու ես այդ, որդեակ, որ ինձ կեանքից զրկում ես. Տէր, մի խառնիր ինձ չարերի հետ»։ Սորա թիկնապահ խումբը այս զոռում գոչումի վրայ ներս մտաւ։ Սոքա տեսան Ալուն սպանիչների մէջ, որ հրովարտակը բաց արած և ձեռքին բռնած սպառնական ձայնով գոչեց. «Ես դաւաճանին սպանեցի մեր փառունակ փադիշահի հրամանով։ Ահա, տեսէք, կայսերական հրովարտակը»։ Այս խօսքերի վրայ և վաւերագիրը տեսնելով սամանցիք խոնարհեցան և սարսափից անշարժ մնացին, մինչդեռ այս միջոցին Սելիմի գլուխը արիւնաշաղ իրանից կտրեցին։ Մի խոջայ հոգոց առաց, և այս ոճրագործութիւնը յանուն գթառատ և ողորմած Աստուծոյ օրինական հրատարակուեցաւ։ Ինքն Ալին իբրև վարձ ստացաւ Թեսալիոյ նոր Դելվինոյ փաշայի օգնականի տիտղոսը։ Ալին օգտուեցաւ այս տակաւին ստորագրեալ գիրքից հարստութիւն դիզելու. և որովհետև պատուէր էր ստացել երկիրը աւազակներից մաքրելու, ուստի յափշտակութիւնն օրինականացնելու համար նա կլեֆտներին յափշտակութեան մրցագրեր (diplom) էր բաշխում։ Աւազակութիւնը շուտով այնպէս շատացաւ, որ անցուդարձը դադարեց և մի քանի կողմերում անհնարին դարձաւ ճանապարհորդելը։ Եւ ահա տեղի ունեցաւ մի իսկ թուրքական ապականուած վարչութեան տեսարան։ Դելվինոյ փաշան ետ կանչուեցաւ Կ. Պոլիս և իւր փոխանորդի ոճրագործութեանց համար գլխատուեցաւ։ Իսկ Ալին այն խայտառակ առևտրով շահած գումարի մի մասն ուղարկեց Կ. Պոլիս փոխանակ անձամբ ներկայանալու. այսպիսով ահա՝ ինչպէս որ Դիւանում հանգամանքները ներում էին Ալին յաջողեց իւր յափշտակութեան արդիւնքով յափշտակութեան հետևանքներից ազատուել։ «Ջուրը քնում է, բայց ոչ երբեք անձնական օգուտը», այսպէս էր նա ինքնահաճութեամբ բարբառում, երբ յիշատակում էր Կ. Պոլսում ձեռք բերած արդիւնքները։ Նորա զինուորական համբաւը այնպէս էր հռչակուել, որ 1787 թուին, երբ պատերազմ ծագեցաւ Թուրքիոյ և երկու կայսրութեանց միջև, նորան առին մի կարևոր զինուորական պաշտօն մեծ վեզիր Իւսուֆի հրամանատարութեան ներքոյ։ Այս արշաւանքում կատարած ծառայութեանց պատճառաւ Բ. Դուռը նորան

յանձնեց Տրիկկալայի փաշայութիւնը, ձիու երկագնիչով և Դերվենդչի-փաշայի տիտղոսը, որ է մեծ վերատեսուչ Ռումելիի բոլոր ճանապարհների։ Այս նոր պատուի հետ կապուած գլխաւոր պարտականութիւններից մէկն էր Կ. Պոլսից Եանինայ տանող արքունի ճանապարհը ազատ և ապահով պահել և Պենեոս գետի հովիտը աւազակներից մաքրել։ Ալին օգտուեցաւ այս հանգամանքից, և մի գունդ վարձկան զօրք կազմեց, որի թիւը մինչև 4000-ի հասցրեց։ Այս գնդերի գլուխն անցած շուտով նա ցոյց տուաւ, թէ ինչեր կարելի է նորանից սպասել։ Նա ջարդեց և ցրուեց հրոսակային խումբերը դաշտերից դէպի լեռները։ Սարսափը նորա անունից առաջ էր ընթանում, այնպէս որ կարգ և ապահովութիւն վերահաստատուեցաւ Պինդոսից մինչև Թերմոպիլէ։ Նա ձեռք բերաւ գործունեայ և ճարպիկ կառավարչի հռչակ և միջոցներ նոյն իսկ Դուան վտանգաւոր դառնալու։

Այժմ նա ծրագրեց ձեռք ձգել Եանինայի փաշայութիւնը, որով կարողացաւ Եպիրոսի կենտրոնում այնպիսի դրութիւն ստեղծել, որ Ալբանիոյ վերայ իշխէ։ Այս միջոցին մեռաւ նորա մայր Խամկօն, պատուիրելով որ Ալին և քոյրը Խորմովոյի և Գարդիկիի բնակիչներից վրէժ հանեն։ Այս բաւական հիմունք էր, որ Ալու տենչանքը գրգռէ Եանինայի փաշայութիւնը գրաւելու։ Պաղաւէտ Թեսալիոյ հացահատիկները Եանինայի բնակիչների համար կեանքի անհրաժեշտ պայման էին։ Իբրև Տրիկկալայի փաշայ՝ Ալին իշխում էր Եպիրոսից Կ. Պոլիս տանող առևտրական ճանապարհի՝ մանաւանդ Եանինայի և Թեսալիոյ հաղորդակցութեանց վրայ։

Եանինայի բնակիչները Թուրքերից նուաճուելուց ի վեր մի տեսակ կէս ազատութիւն էին պահպանել իրենց փաշաների ձեռքի տակ, որոնց կարող էին ըստ ցանկութեան յետ կանչել տալ։ 1716 թուին առաջին անգամ խարջ՝ հարկ տուին. 1740-ին ենթարկուեցան ձիու երկագենիչ փաշայի իշխանութեան, որ առաջ կախումն էր ունեցել Տրիկկալայի վեզիրից։ Այս բանի վերայ էր հիմնում Ալին իւր կարծեցեալ իրաւունքները։ Նա Եանինայի յոյներից կազմեց մի կուսակցութիւն, գործակալներ էր պահում, որոնք պէտք է արծարծէին այնտեղի բէյերի երկպառակութիւնը։ Այժմեան փաշայի

մահը դարձաւ նշան սաստիկ կուսակցական կռիւների այն փառամոլների համար, որոնք ուզում էին նորա տեղը բռնել։ Սպանութիւններ տեղի էին ունենում օր ցերեկով։ Շուկան երեսի վրայ էր թողնուած։ Այս վարկեանն Ալին յարմար համարեց։ Նա գնդեր հաւաքեց և 1788 թուի աշնանը Պինդոսն անցնելուց յետոյ Եանինայի առաջ երևեցաւ։ Ալու երևալովը երկպառակուած բէյերը մոռացան իրենց վէճերը, հաւաքեցին իրենց կռուող ոյժերը և լճի վերևի կողմերում ճակատ մղեցին։ Սակայն ջարդուեցան և յետ մղուեցան քաղաք։ Ալին իւր բանակով յառաջացաւ մինչև Եանինայի պարիսպների տակ։ Բայց որովհետև նա բաւական գունդեր չունէր յարձակում գործելու համար, սկսեց խնդրել և խոստումներ անել և դրդեց, որ իւր կուսակիցներից մի մեծ բազմութիւն պատգամաւորութիւն ուղարկէ Կ. Պոլիս, որպէսզի խնդրեն, որ իրեն Եանինայի փաշայ նշանակեն։ Ի հարկէ առաքելութեան արդիւնքը նորա սպասածը դուրս չեկաւ։ Դուռը պատգամաւորներին ետ ուղարկեց հրամայելով՝ որ Ալին պէտք է իւր գունդերն արձակէ և գնայ իւր սահմանը Տրիկկալայ։ Սակայն Ալին իւր մի հաւատարիմ ծառայից, որ աճապարել էր տիրոջ մօտ հասնելու՝ տեղեկացաւ, որ իւր պատգամաւորութիւնն ապարդիւն է անցել։ Այն ժամանակ նա վճռեց գործ դնել քաղաքական այն բռնութիւնը, որ մի թոյլ կառավարութեան մէջ միշտ արդիւնք պիտի ունենայ։ Նա պայմանաւորուեցաւ իւր ծառայի և Կ. Պոլսից վերադարձածների հետ։ Ըստ սովորութեան Եանինայի բէյերը դուրս են գալիս կայսերական հրովարտակին ընդառաջ և ակնածութեամբ ողջունում։ Ամենից մէկը հրովարտակը ճակատին է դնում իբրև նշան հպատակութեան։ Կարդում են հրովարտակը և զարմացմամբ լսում, որ Ալին նշանակուած է Եանինայի փաշայ և ամենքին հրամայուած է, որ իսկոյն և եթ ճանաչեն նորա հեղինակութիւնը։ Շանթահար եղան բէյերը։ Առանձին անհատներ յիրաւի հակառակեցին և քրթմնջում էին, որ հրովարտակը կեղծուած է։ Սակայն մեծամասնութիւնը ջանաց հնազանդութեամբ վաստակել այն մարդու բարեհաճութիւնը, քանի որ նախատեսում էր փաշայութիւնը նորան է հասնելու։ Նորա կուսակիցները կրկնապատկում են իրենց ջանքերը. Ալին օգտուում է այս

խառնաշփոթ վայրկենից և 1788 թուի նոյեմբերին յաղթանակով մտնում է քաղաքը, մի զօրեղ պահակ գունդով մտնում է միջնաբերդը և տիրում, վարձատրում է իւր բարեկամներին, իւր կողմն է գրաւում նոյն իսկ հակառակորդներին կեղծաւորութեամբ բարեհաճ ձեւանալով: Այսպէս Ալին մի նոր աւելի բազմաթիւ պատգամաւորութիւն ուղարկեց Կ. Պոլիս, որ նորան իւր նպատակին հասցնելու համար ազդու միջոցներով առատ նուէրներով բեռնաւորուած կարողացան Դիւանի գլխաւորներին կաշառել և կատարուած իրողութիւնը ճանաչել և ընդունել տալ: Եանինայի բնակիչները այս փոփոխութիւնից միայն գոհ կարող էին լինել: Ժողովուրդը դժգոհ չէր, որ մի ճնշող օլիգարխութեան (Oligarchie) ձեռքից իշխանութիւնն անցաւ մի անհատի ձեռք, որով փակուեցաւ քաղաքացոց երկպառակութեանց շրջանը: Ալին նման միջոցներով Արտայի փաշայութիւնը և Ակարնանիան նուաճեց և յետոյ մտածեց Խորմովայի բնակիչներից իւր ոխը հանել: Քաղաքը խորամանկութեամբ գրաւեց և գետնին հաւասարեցրեց: Ով չկարողացաւ փախչել և ազատուել, սրի զոհ գնաց: Գերիներից մէկին, որին մեղադրում էին թէ Խամկոյին բռնաբարել է, Ալին հրամայեց տապակի վրայ դնել, հրաշեկ ունելիքով կտրել ու դաղել և մարմինը կրակով տապակել: Այժմ նա իւր աչքը դարձրեց միջին Ալբանիայ վրայ: Այս հարուստ և պտղաբեր երկիրը դեռ ևս գտնւում էր Բերատի փաշայի իշխանութեան տակ, իւր այն ախոյեանի, որ Ալու հարսնացուն իւր հարստութեան և ազդեցութեան շնորհիւ խլել էր: Վտանգաւոր կը լինէր Դռան աչքի առաջ սորա վրայ յարձակուել և երկիրը յափշտակել.

Մանաւանդ որ Իբրահիմի կողմն էին հարաւային Ալբանիոյ անկախ ժողովուրդները, յատկապէս Սուլիի բնակիչները: Ուստի Ալու բոլոր ճիգն ու ջանքը նախ այն էր, որ ալբանացոց այս փոքր համայնքների անկախութեան վերջ դնէ:

Սուլեցիք ալբանացի քրիստոնեաների սերունդ են Զամ ցեղից, որոնք ԺԷ. դարի ընթացքում թուրքերի ձեռքից Կատրոպէի վայրի լեռները փախչելով՝ ժայռերի վրայ ինչպէս բնական բոյներում Աքերոնի կիրճերի բարձունքներին ապաւինեցին: Ջուրը հազարաւոր դարեր առաջ հսկայական ժայռերի կոյտերի մէջ ճանապարհ է հարթել: Այն շաւիղը, որ հովտից ոլոր մոլոր բարձրանում է դէպի լեռնային Սուլի ամրոցը, այնքան նեղ է, որ ուղևորը մերթ պիտի վերելակէ փրփրադէզ գետի միջով, մերթ ժայռերի կողքերով, ուր սովորաբար միայն այծերը կարող են բարձրանալ: Աքերոնի աջ ափին՝ Կլիսուրայի ժայռէ դռների մօտ ընկած են առաջին գիւղերը Աւարիկօ, Կիաֆա և Սամոնեւա. մի քիչ հեռու դէպի հիւսիս համայնքի գլխաւոր վայրը «Կակոսուլին» այսինքն չար Սուլին: Այն տեղի մօտերը ուր լեռնային արահետը Աքերոնից հեռանում է և Կիաֆայի և Կակոսուլիի լանջերով բարձրանում է, վերևից այդ կածանի վրայ կախուած է առանձին մի ժայռ Կունգի անունով, որի վրայ բարձրանում էր Սամուէլ կրօնաւորի հիմնած ամրոցը: Այստեղ մի առու անտառից թափւում է Աքերոնի մէջ: Գետը Գլիկիի կաղանը կտրելով անցնում է Պարամիւթի դաշտը, ընդունում է իւր մէջ Կոկիտոս գետը, ճեղքում անցնում է Աքերոս լիճը և հին «Քաղցրաջուր» այժմեան Ֆանարի նաւահանգստի մօտ թափւում է Յոնիական ծովը: Այս խառնարանի հարթավայրն այնպէս անառիկ է, որ հին յոյներն իրաւամբ կարող էին սանդարամետ տանող ամենակարճ ճանապարհը անուանել: Բնութիւնից և արհեստից աւելի՝ Սուլին պաշտպանուած էր իւր բնակիչների համոզմունքով և դիւցազնութեամբ: Լեռների այս վայրենի և հուժկու զաւակների բոլոր ջանքերն ուղղուած էին յարձակման և պաշտպանութեան համար: Նոքա իրենք իրենց առանձին սիրով անուանում էին «մարտիկների դաշն». արհամարհում էին առևտուրն ու արհեստները, իսկ խաշնարածութիւնն ու յափշտակութիւնը համարում էին տղամարդին վայել զբաղմունք: Տասը տարեկանից մանուկներն սկսում էին վարժուել զինուորական արհեստին: Սուլեցին երբեք չէր բաժանւում իւր զէնքից: Հրացանն ուսին, թուրը կողքին, դաշոյնը գօտում իւր հօտը արօտ էր տանում, չոքում իւր աստուծոյ սեղանի առաջ. Նորա կեանքը մի անդադրում կռիւ էր, լի զրկանքներով և ամեն տեսակ փոփոխական բերմունքներով: Նոյն իսկ կանայք, երբ կարիք կար, թողնում էին տնէջքն ու ճախարակը և դիմում էին զէնքի:

Իւրաքանչիւր գիւղ բաժանւում էր փարերի՝ գերդաս-

տանների, որոնց գլխաւորն էր Նահապետը։ Գրաւոր օրէնքներ չկային. հին սովորոյթը, որ դարերի ընթացքում պահպանուել էր, համարուել է օրէնք։ Հասարակաց կեանքի դժուարին կացութեան ժամանակ խորհուրդ էին կազմում չորս գլխաւոր գիւղերի մեծերը։ Բոլոր բնակիչների թիւը 1730-ին միայն հարիւր ընտանիք էր համարւում, որոնք վայելում էին զէնք կրելու իրաւունքը։ ԺԸ. դարի վերջընթեր տասնամեակին զէնք կրելու ընդունակ տղամարդկանց թիւն էր 1000 հոգի նախնական բնակիչներից և 1500 գաղթականներից, եօթը համայնքի (հեպտախորիոն) բնակիչներից, որոնք ժամանակի ընթացքում հետզհետէ աւելացել էին սուլեցի համայնքների վրայ։

Սուլեցիք Զամ ցեղի ամենայն կարիճ և գործունեայ երիտասարդ քրիստոնեայի ընդունում էին իրենց հասարակութեան անդամ, և նորան թոյլ էին տալիս, եթէ պատերազմում աչքի էր ընկնում, սուլեցի աղջիկ կնութեան առնելու։ Նոքա աճեցին և զօրացան թուով և զօրութեամբ, դարձան պատուհաս դրացի Մարգարիտի և Պարամիւթիոյ թուրք համայնքների գլխին, որոնց հետ չարունակ կռիւներ էին մղում։ Վենետիկցոց Պարգա և Պրեւեզա նատող կառավարիչների բարեկամական պաշտպանութիւնը վայելեցին միշտ։ Նոքա խառնուեցան մինչև իսկ մեծ քաղաքականութեան. մասնակցեցին ռուսաց խարդաւանքներով նիւթած 1770 և 1790 թուականների շարժմանց։ 1790 թուականի ապրիլին սուլեցիների մի պատգամաւորութիւն ուղևորուեցաւ Ս. Պետերբուրգ և ցարուհուն մատուց մի յուշագիր, որով այն Միւկոնացի Պաարոսի գործերը խստութեամբ պախարակում էին և ցոյց էին տալիս այն կորստաբեր հետևանքները, որ կարող էին նորա վատութիւններով յիմարացած բայայի գլխին գալ։ Նոքա յայտնում էին. «Մենք ուզում ենք ոչ թէ կայսրուհու գանձերը. այլ միայն վառօդ մեր գնդակների համար»։ Նոքա դրին «իրենց հին թագաւորութեան թագը Եկատերինայի ոտքերի տակ և խնդրեցին մի իշխան, որովհետև, ինչպէս ասում էին, իրենց արքայական ցեղը սպառուել է», Եկատերինան նոցա շատ սիրով ընդունեց, կատարեց նոցա ամեն մի խնդիրը և խոստացաւ արագ օգնութեան հասնել։ Նա պատուի-

րեց պատգամաւորներին առաջնորդել Կոստանդինի սենեակը. և ուրախացաւ, որ նոքա իւր թոռան իբրև «Յունաստանի թագաւորի» ողջունեցին։ Սուլեցիք կազմեցին մի պատերազմական ծրագիր, որով յոյներից և ռուսներից մի բանակ Մակեդոնիա պիտի մտնէր, մի երկրորդ բանակ Պելոպոննեսից դուրս գար, Լամպրոսին Եւբէայի մօտ ձեռք մեկնէր, Լիվադիայով անցնէր և Սալոնիկի մօտ այն առաջին բանակի հետ միանար։ Բայց երբ կայսրուհու մեծամեծ խոստումները սապոնի փրփուրի պէս յօդս ցնդեցան, Լամպրոսն ռուսներից բարձիթողի եղած ջարդուեցաւ, երբ յունաց դատը Եաշիի խաղաղութեան ժամանակ զոհուեցաւ. այն ժամանակ այս փոքրիկ լեռնական ժողովուրդը Ախերոնի ափերին ծանրապէս տուժեց եւրոպական վէճերին խառնուելու համար։ Սուլեցոց Ռուսաստանի հետ ունեցած կապակցութիւնից Ալին օգտուեցաւ, ցոյց տալով Դիւանին, որ Սուլին դաւադրութեան և ապստամբութեան բոյն է. սուլթանից հրովարտակ ստացաւ նոցա ընկճելու։ Նորա առաջին յարձակումը 1790 թուի գարնանը խորտակուեցաւ։ Նորա ալբանացիք չէին համարձակւում սուլեցոց ամայի լեռները մտնելու և ցրուեցան Պարամիւթի դաշտը կողոպտելու, երբ յանկարծ սուլեցիք դուրս պրծան իւրեանց բնական ամրութիւններից, յանկարծակիի եկած թշնամիներին ցրուեցին, մինչև Եանինա հալածեցին և ամեն կողմից թուրքաց հեռաւոր երկիրներն աւերեցին։ Ալին ամեն միջոց ձեռք առաւ այս պարտութեան նախատինքի վրէժը լուծելու. նա մինչև իսկ իւր ախոյեան Իբրահիմին խաղաղութիւն առաջարկեց, որպէսզի սուլեցիք նորանից գաղտնի պաշտպանութիւն չստանան։ Մահմեդականութեան շահերի համերաշխութիւնը կերակշիռ հանդիսացաւ։ Ընդհանուր ատելութիւնը քրիստոնէութեան դէմ այնպէս զօրեղ ազդեց, որ Իբրահիմը սուլեցիներից ձեռնթափ եղաւ և Ալու հետ հաշտուեցաւ։ Նա համաձայնեց իւր կրտսեր դուստրն Ալու երկրորդ որդի Վելի-բէյին կնութեան տալու, և սխալուեցաւ ուղարկելով Ալուն մի գունդ օգնական զօրք։ Արդ Ալին հաւաքեց այն բազմաթիւ թշնամիներին, որոնց սուլեցիք գրգռել էին իրենց դէմ ասպատակութեանց ժամանակ։ 1792 թուի յուլիսի 1-ին Ալին 10,000 հոգով Եանինայից դուրս եկաւ։ Որպէսզի սուլե-

ցէք անվրդով մնային, Ալին խուսափեց յարձակումից. Նա իւր գունդերը հաւաքեց այն պատրուակով, իբրև թէ ուզում է զսպել Արգիրո-Կաստրոյի անհանգիստ բնակիչներին, որոնք ներկա մերժել էին նորա ուղարկած բէյին ընդունելու: Նա գրեց սուլեցոց երկու՝ Բոչիա և Սաւելլաս գլխաւորներին, ուղարկում էր «ողջոյն և համբոյր նոցա աչքերին», գովում էր նոցա քաջութիւնը և խնդրում, որ գործակցեն: Բոչիան չափազանց խելօք էր և ծուղակ չընկաւ. իսկ Սաւելլասը հրապուրուեցաւ և 70 հոգուց կազմուած ընտիր մարտիկներով միացաւ Ալուն: Ալի փաշան այժմ իրօք պատրաստութիւններ է տեսնում, իբրև թէ արշաւելու է Արգիրո-Կաստրոյի դէմ: Բայց այս ուղղութեամբ մի քիչ տարածութիւն կտրելուց յետոյ կանգ առաւ և բանակ դրեց: Նոր էին սուլեցիք թողել իրենց զէնքերը, որպէսզի իրենց ազգական խաղերը՝ վազք և ոստումն սկսեն, երբ Ալին հրամայեց նոցա շրջապատել և շղթայի զարկել: Սոցա տարան Եանինա: Սոցանից երկուսը յուսահատական դիմադրութիւնից յետոյ ընկան, մի երրորդը յաջողեց փախչել. գնդակների տարափի տակ նա լող տալով անցաւ Կալամասը իւր հայրենակիցներին դաւաճանութիւնը յայտնելու: Այսպիսով երբ Ալի փաշան իրօք «սարսափելի Սուլիի» դէմ առաջացաւ ամեն ինչ պատրաստ էր նորան ընդունելու համար: Նա վարանում էր, թէ կարող կը լինի ուժով յայտնի ներս խուժել և կրկին դիմեց ազգական նենգութեան: Հրամայեց, որ Սաւելլասը իւր առաջ բերուի և ամենափայլուն առաջարկներ արաւ նորան, եթէ իրեն օգնէ Սուլին նուաճելու: Խոստացաւ նորան Ալբանիոյ հրամանատար նշանակել: Իսկ հակառակ դէպքում սպառնում էր կենդանի կենդանի տապակելու: Սաւելլասը առարկեց, որ ինքն իբրև մի ցեղապետ չէ կարող պահանջուած ծառայութիւններն անել, բայց եթէ իրեն թոյլ տան վերադառնալ իւր հայրենակիցների մօտ, կ'անի ինչ որ Ալին ցանկանում է: Ալի փաշան համաձայնեց այս առաջարկին այն պայմանով, որ Սաւելլասը իւր տասներկու տարեկան որդուն՝ Ֆոտոյին պատանդ թողնէ:

Սաւելլասը ազատ արձակուեցաւ և վերադարձաւ Սուլի: Այնտեղ գլխաւորներին ժողով հրաւիրեց, բացատրեց նոցա փաշայի ծրագրերը և յորդորեց, որ եռանդուն դիմադրութիւն

ցոյց տան առանց իւր ընտանիքի մասին մտածելու: Երբ պաշտպանութեան համար ամեն ինչ պատրաստ էր, փաշային գրեց. «Ես ուրախ եմ որ խաբեցի քո պէս մի խարդախի: Այստեղ եմ կանգնած հայրենիքս մի աւազակի դէմ պաշտպանելու: Իմ որդին պիտի մեռնի, բայց ես զգում եմ, որ անվրէժ չի մեռնի: Ինձ կը դատապարտեն, որ ես անսիրտ հայր եմ, որ որդուս զոհել եմ ինձ ազատելու համար. սակայն ես պատասխանում եմ. եթէ դու մեր լեռները նուաճէիր, ոչ միայն նա, այլև նորա ընտանիքը և իմ հայրենակիցներս կը զոհուէին: Ոչ մի ձեռք չէր մնալ, որ նորա վրէժը հանէր: Թող միայն քեզ յաղթենք և ես նորից զաւակներ կունենամ; վասնզի իմ կինը երիտասարդ է: Եթէ իմ այնքան երիտասարդ որդին չկամենայ ուրախութեամբ մեռնել հայրենիքի համար, ապա նա արժանի չէ ապրելու և իմ անունը կրելու. ապա նա մեր հայրենիքի արժանի որդի չէ, եթէ նա արիութեամբ մահուան դիմադրել չէ կարող: Հապա, ճն յառաջ եկ, դաւաճան, ես վրիժառութեան ծարաւ եմ»: Քո ոխերիմ թշնամի Սաւելլաս:

Նիբուհրն իրաւամբ Պուքեւիլի այս պատմուածքը ճիշտ Թուկիդիդեսեանի հաւասար է դասում: Այստեղ երևում է դեռ հին, հելլենական համոզմունքը. այս այն վեհապանծ զոհաբերութիւնն է հայրենիքի համար, որ արժանի է մեր մեղկ, դիւրայօյզ ժողովրդին իբրև օրինակ ծառայելու: Այստեղ աւելի վեհ ոգի կայ, քան Վիլհելմ Տելլը, եթէ միայն կարելի է պատմականը առասպելականի հետ համեմատել: Ֆոտոյին քաշեցին Ալու որդի Վելիի առաջ. սա նորան հաղորդեց, որ ինքը նորան փաշայի հրամանով պէտք է կենդանի կենդանի տապակէ: «Ես քեզանից չեմ վախենում, պատասխանեց տղան, հայրս իմ վրէժը կը հանի»: Մի այսպիսի երիտասարդ հոգու դիւցազնական սրտոտութիւնը Ալի փաշայի վրայ խորապէս ազդեց. Նա խնայեց Ֆոտոյի կեանքը, որ պատերազմի վերջը ազատուեցաւ և մեծանալով դարձաւ ազատութեան պատերազմի նշանաւոր դիւցազներից մինը: Այս խաբէութեան վրայ զայրացած փաշան պատրաստում էր այժմ Սուլիին մի գլխաւոր հարուած տալու. զինեց մի նոր բանակ, խոստացաւ ժայռամրոց վերելակողներին 500-ական պիաստր.

և 20-ն յուլիսի 1792 ամի նորա զունդերը յառաջ խաղացին Ախերոնի ձորով: Նոքա աւելի առաջ անցան քան մինչև հիմայ գնացել էին: Սուլեցոց հրամանատար Բոյխան կեղծ ճակատամարտից յետոյ թողեց, որպէսզի թշնամին առաջանայ մինչև երրորդ աշտարակը, որ պաշտպանում էր Կիխուրայի կիրճը: Բայց ահա ընդհանուր յարձակման նշանը տրուեցաւ, 400 մարդ Բոյխայի որդու հրամանատարութեան ներքոյ դարանից դուրս պրծան յարձակուողների վրայ: Սաւեյլասը վրիժառու մոլեգնութեամբ յառաջ վազեց. նորա կին Մոսխոն իւր ցեղակից կանանց օգնութեամբ բարձունքից քարեր էր գլորում, որ այս նեղ վիճակի համար պատրաստել էին: Միևնոյն ժամանակ Տիխոսի պահապան զօրքը դուրս պրծնելով կտրեց ալբանացոց ետևը: Կոտորածն ընդհանուր դարձաւ: Փաշայի երկու հազար վարձկաններից միայն 140 հոգի պրծան. սուլեցոց կորուստը հասնում էր մի քանի հարիւր մարդու: Մահմեդականների գլուխներից բուրգեր շինեցին, իսկ դիակները Ախերոնի մէջ քցեցին: Ալին դիտում էր այս կռիւը մերձակայ մի բլուրից և կատաղութիւնից ատամները կրճտելով փախաւ դէպի Եանինա: Իւր պարտութեան ամօթը ծածկելու համար հրամայեց, որ իւր մուտքի ժամանակ պատուհանները փակեն, և 14 օր մենակ իւր պալատում փակուած մնաց: Նորա զինուորները յոգնածութիւնից և սարսափից ուժասպառ եղած միայն առանձին առանձին խումբերով վերադարձան. սուլեցիք նոցա ետևից ընկած հալածեցին մինչև Եանինայի արուարձանները: Այստեղ նոքա հանդիպեցան այն եպիսկոպոսին, որ Ալու անունով խաղաղութիւն խնդրեց: Ալին ստիպուեցաւ սուլեցոց յանձնել ամբողջ երկիրը Եանինայից վեց մղոն հեռու, մինչև Դերվիխիանա, բոլոր գերիները վերադարձնել և թուրք գերիների համար հազարական պիաստր փրկանք վճարել: Դաշնագրութեան յօդուածները Ալին ի հարկէ ճշտութեամբ չկատարեց: Սակայն այն մեծամեծ յեղաշրջումները, որ տեղի ունեցան Թուրքիայում, խանգարեցին նորան սուլեցոց դէմ մի նոր արշաւանք սկսելու: Նորա համբերութիւնն առաքինութեան փոխուեցաւ, մի բան որ նա շատ լաւ անել գիտէր: Նա հոգ տարաւ իւր տնտեսական դրութեան մասին, որքան կարող էր շատ դրամ կորզեց և ալբանացոց ծանրա-

բեռնեց հարկերով: Եւ որովհետև Սկոդրայի Կարա-Մուստաֆան «Ֆերմանլի» հրատարակուեցաւ, Ալին Դռան հաւատարիմ աւատական իշխան ձևացաւ այդ մահապարտին ընկճելու, և այս առթիւ Կ. Պոլսի և միջին Ալբանիոյ հանգոյց Օխրիդան իբրև լաւ աւար ձեռք բերաւ: Սելիմի ժամանակուայ խռովութիւնները, այն յուզմունքները, որ ֆրանսացոց յեղափոխութիւնը քցել էր անպատրաստ Թուրք պետութեան մէջ, կարողացաւ Ալին վարպետութեամբ յօգուտ իւր գործածել: Կամպօ-Ֆորմիոյի խաղաղութեամբ Յոնիական կղզիներն անցան ֆրանսիային: 1797 թուի յուլիսի 5-ին Ժենտիլի զօրավարը պարզեց եռագոյնը Կորֆուի ալիքների վրայ: Այժմ Ալու նենգութեանց համար ընդարձակ ասպարէզ էր բացւում: Վենետիկի հանրապետութիւնը մինչև ցարդ զէնքով կամ խորամանկութեամբ մայր ցամաքի փաշաներին ծովից հեռու էր պահել: Լեպանտոյի ճակատամարտից յետոյ Թուրքերի ոչ մի դրօշակ Կորֆուի նեղուցը չէր անցել: Վենետիկի դոժերը խանդածութեամբ հսկում էին Ադրիական ծովի ազատութեան վրայ: Հանրապետութիւնը Դռնից ստացել էր հրովարտակ, որ Եպիրոսի ափերին ծովից մի մղոն հեռու ոչ մի ամրոց չպիտի շինուէր, Ալու մաքսատունը Սալագորայում անպաշտպան էր: Ուստի Ալու ճիգն ու ջանքն եղաւ նախ Ֆրանսիոյ նոր պետի շնորհին արժանանալ: Նապոլէոնի Կորֆուի ֆրանսացոց հրամանատարին տուած հրահանգից տեսնում ենք, որ Ալու այս ջանքերը պիտի դիւրանային: Նապոլէոնը 10-ն նոյեմբերի 1797 ամի գրում էր. «Երբ դուք, քաղաքացի զօրավար, արգելում էք Ալի փաշային մեզ պատկանեալ գործերին խառնուելու, միւս կողմից պէտք է, որքան ձեզանից կախուած է, նորան նպաստէք: Մեր հանրապետութեան շահը պահանջում է, որ այս փաշան զօրանայ, իւր ախոյեաններին ջարդէ, որպէսզի այնպիսի նշանաւոր իշխան դառնայ, որ կարողանայ մեր հանրապետութեան ծառայութիւններ մատուցանել: Մեր ձեռքի տակ գտնուած հաստատութիւնները նորան այնքան մօտ են, որ անկարելի է երբեւիցէ նա դադարի մեր բարեկամութիւնից շահուելու: Ուղարկեցէք զինարուեստական և սպայակոյտի սպաներ նորա մօտ, որպէսզի տեղեկանան Ալբանիոյ դիրքին, բնակչութեան և սովորութեանց. պատրաստել տուէք

աշխարհագրական և տեղագրական նկարագրեր մեզ համար այժմ այնքան հետաքրքրական երկրի մասին՝ Ալբանիայից մինչև Մոռէա. և աշխատեցէք ծանօթանալ այն խարդաւանքներին, որոնցով այս բոլոր ժողովուրդները զբաղւում են։ Անհրաժեշտ է, քաղաքացի զօրավար, որ դուք փայփայէք այն բոլոր ժողովուրդները, որոնք Պրեւեզայի շրջակայքումն են, ինչպէս առհասարակ ամենքին, որոնք մեր տիրապետութեանց սահմանակից են, և արդէն կարծես թէ այնպէս լաւ տրամադրուած են դէպի մեզ»։ Ալին ըստ երևոյթին Յոնիական կղզիների նոր հարևանների հետ լաւ էր տրամադրուած։ Նա մեծ պատիւներով ընդունեց Ժենտիլու դեսպան Ռոզային, որի թուլութիւնները սակայն շուտով նկատեց. եռագոյնը ստացաւ և կապեց, իսկ փոխարէնը նորան հասցրեց Եպիրոսի ամենագեղեցիկ յոյն Զոիտզա անունով աղջիկը. Ալու պալատում Ռոզան կատարեց իւր հարսանիքը։ Միևնոյն ժամանակ Ալի փաշան ուրախացնում էր իւր նոր ֆրանսացի բարեկամների սրտերը հրապարակաւ ջերմագին յայտնելով իւր քաղաքական դաւանակցութիւնը։ Նա ապահովեցնում էր Պրեւեզայի ֆրանսացոց հրամանատարին, իբրև թէ ինքը ժակոբէնների կրօնի հարազատ աշակերտ է, և թախանձագին խնդրում էր, որ իրեն ուսուցանեն կարմանեօլ պարի ձևերը։ Սակայն միայն քաղաքական անչափահասը կարող էր այս բռնաւորի հաւատարմութեամբ և պարզամտութեամբ գրաւուել։ Ալու համար 1789 թուականի յեղափոխութեան գաղափարները միայն իւր ոյժը մեծացնելու միջոց էին, որոնց վրայ նա ինքը ծիծաղում էր, հենց որ այլևս իրեն պէտք չէին։ Նա Ժենտիլուց թոյլտուութիւն ստացաւ Կորֆուի նեղուցով անցնելու. շուտով և գաղտնի արշաւանք կազմեց Արտայի ծովախորշում, 1798 ամի զատկի երեկոյեան Լուկովօ ծոցում խարիսխ ձգեց. զատկուայ տօնի կէս գիշերին թոյլ տուաւ, ինչպէս վաղուց ի վեր մտադիր էր, որ իւր ալբանացիները սուրբ Վասիլի և Նիվիտսայի քրիստոնեայ համայնքների վրայ յարձակուեն, եկեղեցիները կողոպտեն, տները մոխիր դարձնեն, բնակիչները կոտորեն և սուրբ Վասիլիի վանքում ամրոց չինեն, որով նա իշխում էր Կորֆուի նեղուցի վրայ։ Ալու գործակալները չտապեցին այս անշքակապութիւնը նպաստաւոր կերպով բացատրելու. Դուան

ստիպուած եղաւ նորա քաջագործութիւնները անհաւատների դէմ վարձատրել շնորհելով նորան «Արսլան» պատուանունը։

Բացի այդ նա ուզեց բոլորովին դիւր գալ Դիւանին, որովհետև առաջարկեց մի ալբանացի օգնական գնդի գլուխն անցած մեծ վեզիր Հուսէյինին միանալ և սուլթանի գնդերի հետ միասին ուխտադրուժ Պասվան-օղլու դէմ գնալ պատերազմելու։ Քառասուն փաշայ Ասիայից և Եւրոպայից հաւաքուեցան Վիդդինի պատնէշների առաջ. երկար ժամանակից ի վեր սուլթանն աւելի պատկառելի բանակ չէր ունեցել իւր հրամանի տակ։ Ալին եկաւ 8,000 հոգուց կազմուած ընտիր գունդերով և կարողացաւ շուտով բարեկամներին և չարակամներին պատկառանք ներշնչել։ Եթէ նա թուրքերի վատ դրութիւնը վաղուց ի վեր ճանաչած չլինէր, բաւական էր միայն այս արշաւանքը նորա աչքերը բանալու և համոզելու, որ ոչ մի տեղ այնքան դիւրին չէ մասերի համար ամբողջից զատուելու, ոչ մի տեղ ուժեղ կամքի տէր մէկը լաւագոյն ակնկալութիւններ բաժանուելու համար չունի, ինչպէս Թուրքիայում։

Անմիաբանութիւն և ապստամբութիւն ծագեց թուրքերի բանակում։ Պաշարողների մեծ մասը համակրում էր Պասվան-օղլուն իբրև հին թուրքերի շահերի ներկայացուցչի։ Ֆրանսացոց Եգիպտոս արշաւելու լուրը բոլորովին շփոթեց թուրքաց բանակը։ Ալին, որ նախատեսում էր Ֆրանսիոյ և Դռան ընդհարումը, մեծ վեզիրին ցոյց տուաւ իւր որդի Մուխտարի թղթերը, որոնք հաղորդում էին, թէ յոյների մէջ մի կասկածելի յուզմունք կայ և ապստամբութիւն է սպասւում ֆրանսացոց դրդմամբ։ «Գիւղացիք, տեղեկացնում էր Մուխտարը, սկսում են երգել Թեսալացի Ռիգասի յունարէն թարգմանած մի երգը, որ մարսելէզ են անուանում։ Արտայի կոնսուլը նոցա բաժանել է 4,000 եռագոյն»։ Այս լուրերի վրայ Ալին թուրք ընդհանուր հրամանատարից իրաւունք ստացաւ Եանինա վերադառնալու։

Ըստ երևոյթին նա ֆրանսացոց հետ դեռ լաւ էր։ Նապոլէոնը Մալտայից ուղարկել էր Ալու մօտ Լաւալետ սպային նորան ասելու, թէ նա ֆրանսացոց մատուցանելիք ծառայութեանց, արիութեան և քաջութեան չափով կը վարձատրուի և կը բարձրանայ։ «Իմ մեծարգոյ բարեկամ, գրում էր ֆրան-

տացոց զօրավարը 17 յունիսի 1798 ամի, Ձեզ ողջութիւն և առողջութիւն ցանկանալուց յետոյ պատիւ ունիմ Ձեզ յայտնելու, որ ինձ վաղուց ի վեր յայտնի է Ձեր տածած անձնուիրութիւնը դէպի Ֆրանսացոց հանրապետութիւնը։ Այս պատճառով ես ցանկանում էի միջոց գտնել Ձեզ յարգանքս յայտնելու։ Օգտուելով յարմար առիթից շտապում եմ Ձեզ այս բարեկամական նամակը գրելու. և ես ապսպարեցի իմ Թիկնապահներից մէկին, որ այս բարեկամական նամակը բերէ և անձամբ Ձեզ մատուցանէ։ Այլև նորան ապսպարեցի Ձեզ իմ կողմից որոշ գաղտնի ծանուցումներ անելու. և որովհետև նա Ձեր լեզուն չէ հասկանում, ուստի ընտրեցէք Ձեր հաճութեամբ մի վստահելի և ապահով թարգման Ձեր հետ ունենալիք խօսակցութեանց համար։ Ես Ձեզանից խնդրում եմ, որ հաւատաք նորա բոլոր իմ կողմից ասելիքին և նորան շուտով ինձ յետ ուղարկէք մի պատասխանով, որ Թուրքերէն և Ձեր սեփական ձեռքով գրած լինի»։ Ալին երկար ժամանակ ցոյց էր տալիս, իբրև թէ Ֆրանսացոց զօրավարի պատրանքներից բոլորովին հրապուրուած է։ Նա Վիգգինից վերադառնալուց յետոյ յայտնեց Կորֆուի Ֆրանսացոց պաշտօնեային, որ մտադիր է ամենախիստ չէզոքութիւն պահպանել։ Ի պատիւ Ռոզա Թիկնապահի Ցիլատէչում մի շքեղ հանդէս կազմեց, սակայն բարեկամական հաւաստիքների միջոցին պատուիրեց այս անմեղ մարդուն բռնել, շղթայի զարկել և քարշ տալ Եանինա։ Այնտեղ վարձատրութեամբ և կտտանքով կորզեց նորանից ճշտագոյն տեղեկութիւններ Ֆրանսացոց զօրքի ոյժի մասին և այս Ֆրանսացուն Կ. Պոլիս տանել տուաւ, պատրուակ բռնելով՝ թէ լրտես է։ Նա իւր դիմակն այժմ դէն քցեց և 1798 թուի հոկտեմբերին դիմեց դէպի Պրևեզա, որ պաշտպանում էին միայն 400 բնակիչ և 300 Ֆրանսացի Լա-Սալսետ զօրավարի առաջնորդութեամբ։ Արտայի արքեպիսկոպոս Իգնատիոսը քաղաքը պաշտպանողների մէջ երկպառակութիւն էր սերմանել յօգուտ Ալու. երբ Ալին հոկտեմբերի 23-ի գիշերը 5,000 ալբանացիներով յարձակում գործեց, պրևեզացիք իրենց մինչև հիմակուայ դաշնակիցներին երեսի վրայ թողին։ Ֆրանսացիք պաշտպանւում էին դիւցազնաբար, բայց ի վերջոյ ստիպուեցան գերակշիռ ոյժին տեղի տալ և

անձնատուր լինել։ Քաղաքը երկու օր կողոպտման և աւերման մատնուեցաւ, բնակիչները քաւեցին իրենց դաւաճանութիւնը ամենախիստ կերպով, նոքա անգէն կոտորուեցան, նոյն իսկ 200 փախստական, որոնք խուսափել էին Վոնիտցա և Իգնատիոսի յորդորանքով վերադարձել էին, ստահակութեամբ խողխողուեցան։

Պրևեզայի արեան բաղանիքը ընդհանուրի ուշադրութիւնը դարձրեց Եանինայի փաշայի վրայ։ Դուռը շնորհեց նորան ձիու երրորդ ագինիչը։ Ծովապետ Նելսոնը նորա յաղթութիւնը շնորհաւորեց։ Սակայն փառամոլ Ալու համար Պրևեզայի նուաճումը նորագոյն ձեռնարկութեանց առաջին քայլն էր. Նա տիրեց Վոնիտսային, օգնեց ռուսներին և Թուրքերին Կորֆուի պաշարմանը, և ձգտում էր նոյն իսկ Յոնիական կղզիների վրայ ոտք դնելու։ Սակայն նորա փորձը Պլայայի մօտ Սանկտա-Մաւրայի նեղուցն անցնելու և կղզուն տիրելու՝ անյաջող անցաւ, երբ ճիշտ ժամանակին ռուսաց նաւատորմիղը վրայ հասաւ. այլև նորա դիտաւորութիւնը յանկարծակի Պարգայի վրայ տալ՝ ի դերև ելաւ ռուսաց ծովապետ Օկասկովի ձեռքով։ Ալին ստիպուեցաւ Գամենիտսան և Բուտրինտօն նուաճելով գոհ մնալ։ 1800 թուականի մարտի դաշնադրութիւնը, որ ապահովում էր Յոնիական հանրապետութեան անկախութիւնը ռուսների և Թուրքերի հովանաւորութեան տակ, վերջ դրաւ նորա դէպի արևմուտք յառաջ խաղալուն։ Արդ Ալին աւելի ևս հաստատամտութեամբ վճռեց նորանոր ձեռնարկութեանց դիմելուց առաջ իւր պետութեան ներքին թշնամի սուլեցոց ընկճել։

Նա բորբոքեց իւր ալբանացոց կրօնական մոլեռանդութիւնը նոցա առաջ դնելով Թուրքերի զօրութեան քայքայումը, որ սոցա աւերակների վրայ պիտի բարձրանայ Ալբանիոյ զօրութիւնը. ուստի և նոցա պարտականութիւնն է իրենց հաւատոյ թշնամիներին ջնջել։ Մշտապէս բաժան մահմեդական տարրերը նոյն իսկ սիւննիներն ու շիաները հաւասարապէս ատելով քրիստոնեաներին միաբանում էին սոցա դէմ. այդ գիտէր Ալին։ Նա հրապարակաւ յայտնում էր դերվիշների և շեյխերի միջոցաւ դիւթուած ալբանացոց, որ իբրև թէ ինքն ամենևին աչք չունի քրիստոնեաների երկրային հարստութեան

վրայ և գոհ կը մնայ այն վարձատրութեամբ, որ ինքը երկրի վրայ կատարած բարութեանց համար կ'ստանայ միւս աշխարհում։ Եթէ ինքը յաղթի, կը կամենար «հաջի» դառնալ, և մի տեկկայում՝ խցում բնակուել և իբրև դերվիշ ապրել ու մեռնել, բայց քանի դեռ քրիստոնեաներ կան երկրի երեսին, ինքը չէր կամենայ հանգիստ մնալ։ Նա երդուեցաւ ղուրանով, որ զէնքերը վար չի դնիլ, մինչև սուլեցիք ռայա չդառնան, և Ալբանիոյ ցեղապետները իւր օրինակին չհետևեն։

Նա հաւաքեց 10,000 հոգուց կազմած մի բանակ և դիտմամբ կեղծ լուրեր տարածեց, թէ ուզում է ռուսներից Կորֆուն խլել և ֆրանսացոց Եգիպտոսից հալածել։ Սուլեցիք այսպիսով խաբուած ապահով պիտի մնային։ Ապա յանկարծ դիմեց Սուլիի դէմ. 1800 թուականի յունիսն էր։ Նա կաշառել էր սուլեցոց գլխաւոր Գ. Բոտսարիսին 25,000 պիաստրով, որպէսզի սա իւր հայրենակիցներին քնացնէր և իւր ցեղի պաշարը Ալու ձեռքը մատնէր։ Սուլեցիք յանկարծակիի եկան, բայց իրենց արիութիւնը չկորցրին։ Նոցա գլուխն անցաւ այն Ցոտօն, որի առնական քաջութիւնը վաղ ամենածանր զրկութեան մէջ երևաց, որ Հաննիբալի պէս դեռ տղայ հասակում երդուեց յաւիտեան թշնամի մնալ իւր ժողովրդի թշնամիներին և իբրև տղամարդ քաջութեամբ և առնական արժանիքով այնպէս փայլեց, որ հայրենակիցները սովորաբար երգում էին «Սաւելլասի սրով»։—

Ալու առաջին յարձակումները յետ մղուեցան. Նա որոշեց պաշարումը խստացնել և ելումուտքը կտրել, և պատուիրեց շուտով մի շարք ամուր աշտարակներ շինելով լեռների անցքը փակել։ Շրջակայքում երկիրը մղոններ հեռու Ախերոնի ափերին աւերուեցաւ, որպէսզի պաշարեալները հնար չունենան իւրեանց ձիերի համար կեր ճարելու։

Դրացի փաշաները հրաւիրուեցան Սուլիի պաշարմանն օգնելու։ Ալու վաղեմի ախոյեան Բերատցի Իբրահիմը 2,000 հոգով օգնութեան հասաւ։

Որպէսզի սուլեցիներին ուղիղ ճանապարհից խոտորէ և զբաղեցնէ, այս Կուրիլլօն յարձակուեցաւ մի ամուր գիւղի վրայ Կիաֆայից չորս մղոն հեռու։ Սաւելլասը շտապել էր նեղ ընկած կողմին օգնութեան. և որովհետև սուլեցիք տաք կռուից

յետոյ յաղթական յառաջ նետուեցան, Սաւելլասը մի դարանից վիրաւորուեցաւ և գետին ընկաւ։ Թուրքերը կարծեցին, թէ նա մեռել է և խոյանեցան նորից յարձակում գործելու։ Երբ արևը խոնարհուեցաւ և յաղթութիւնն անորոշ մնաց, վիրաւորուած ցեղապետը երդուեցրեց իւր ընկերներին, որ իւր գլուխը կտրեն մարմնից և չհամբերեն, որ վեզիրին իբրև յաղթանակի նշան մատուցուի այն։ Վերջապէս գիշերը կռուողներին բաժանեց. ուժասպառ սուլեցիք իրենց արիւնաքամ և շնչասպառ առաջնորդին յետ տարան Կիաֆա։

Ձմեռը մօտենում էր և դեռ Սուլի ժայռամրոցը անընկճելի էր մնացել։ Թուրքերի բանակում տիրում էր սով և հիւանդութիւն. այն կրօնական պարտաւորութիւնը, որ ալբանացիք արշաւելիս յանձն էին առել, հազիւ հազ դեռ պահում էր նոցա միասին դրօշակի տակ։ Ալին այլևս չէր կարող իւր դաշնակիցների վրայ յոյս դնել։ Երևացին ըմբոստութեան կասկածելի նշաններ։ Պարամիւթիոյ և Մարգարիտու բէյերը սկսան համակրել դիւցազնասիրտ լեռնականներին, որոնց անկումը զուգէ կորստաբեր լինէր Ալբանիոյ բոլոր անկախ համայնքների համար։ Այսպիսով Ալին ստիպուած եղաւ խաղաղութեան առաջարկներ անելու, որ սուլեցիք ընդունեցին և 24 պատանդ ուղարկեցին Եանինա, որովհետև նոքա էլ վերին աստիճանի նեղութեան մէջ էին գտնւում։ Սակայն հազիւ երկիւղալի հակառակորդներից մի այսպիսի մեծ թիւ բռնաւորի ձեռքն էր ընկել, երբ նորա մոլեկան քինախնդրութիւնը յաղթեց խելօքութեանը. նա պատուիրեց վերցնել սուլեցոց զէնքերը, որ նոքա Եանինա հանելով եկեղեցու դրան վերև չեմքից կախել էին. պատանդներին էլ բանտ քցեց և սուլեցոց հաղորդեց, որ նոցա բոլորին կ'սպանէ, եթէ չհպատակուեն։ Սակայն Ալու այս տեսակ վարմունքը գրգռեց միայն իւր դիւցազնական հակառակորդների դառնութիւնը, նոքա յայտարարեցին, թէ աւելի լաւ է, որ իրենց լեռներում հիւծուին մաշուին, քանց Ալու պէս մի հրէշի հպատակուին։

Ապարդիւն անցան և այն փորձերը, որ Ալին արաւ մի քանի աչքի ընկնող առաջնորդներ կաշառելու։ Դիմօ Ծերուասը, որին Ալին առաջարկել էր 800 քսակ ոսկի և ամենաբարձր պատիւներ Եանինայում, եթէ մատնէ իւր ժողովուրդը, այս

պատասխանն ուղարկեց. «Շնորհակալ եմ քեզանից, վեզիր, բայց խնդրում եմ փողդ քեզ պահես, որովհետև մի այդպիսի խոշոր գումար ես չէի կարող մինչև իսկ համրել. այլև այդ չարժէ իմ հայրենիքի մի քարին։ Քո խոստացած պատիւն ինձ չէ հրապուրում։ Իմ հարստութիւնն ու պատիւը զէնքն է, որով ես կամենում եմ իմ անունն անմահացնել և իմ քաղցր հայրենիքը պահպանել և պատուել»։

Սուլեցոց անընկճելի ընթացքը մեծացրեց այն հռչակը, որ նոքա վայելում էին նոյն իսկ իրենց հակառակորդների մէջ։ Տասնութ ամսուայ պաշարումից յետոյ նոցա համար հանգստեան և յուսոյ ժամ հասաւ։ 1801 թուականի վերջում Եպիրոսի բէյերի մեծ մասը գլուխ ունենալով Իբրահիմ Բերատցուն և Մուստաֆա Դելվինոյուն՝ անջատուեցան Ալուց, պաշարեալներին տուին կենսական պիտոյքներ և ռազմամթերք, այո՛ մինչև իսկ սուլեցոց հետ պաշտպանողական և յարձակողական դաշինք կռեցին։ Ետոլիոյ արմատոլեցիք Պալէոպուլոյի և եռանդուն հայրենասէր Բլախաւասի առաջնորդութեամբ միացան նոցա հետ, Կոլոկոտրոնիսն աճապարեց Մեսենիայից օգնութեան հասնելու։ Եանինայի վեզիրի զօրութիւնը կարծես խարխլւում էր։ Բայց Ալին ճանաչում էր իւր հակառակորդներին։ Դրսից նա իրեն ցոյց էր տալիս անվրդով, սակայն լռելեայն մի զարմանալի գործունէութիւն էր եռում փոթորիկն շտապեցնելու։ Նորա գործակալները պէտք է մի ապստամբութիւն պատրաստէին, որից ստիպուած Իբրահիմը շուտով տուն վերադառնար. Պարամիթիայում և Խամուրիում իւր փողի շնորհիւ երկպառակութիւն քցեց. այն սպան, որ պէտք է պահպանէր Դելվինոյի ամրոցը, դաւաճանեց իւր տէր Մուստաֆային և այն վայրը, որտեղ վեց սուլեցի պատանդ էին գտնւում, յանձնեց փաշային 1802 թուի ապրիլին։ Ալին իսկոյն հրամայեց գերիներից չորսն սպանել, Դիմօ Դրակոսի որդուն և Սաւելլասի եղբօրը խնայեց նկատի ունենալով նոցա ազգականներին։ Բայց երբ Սաւելլասն այս լսեց, վեց գերիների համար հոգեհանգիստ կատարել տուաւ, «վասնզի, ասաց նա, ով Ալու ձեռքումն է, ինձ համար մեռած է»։

Ալու եռանդուն գործունէութեամբ Սուլիի պաշտպանութեան դաշնակցութիւնը իւր սաղմում խեղդուեցաւ։ Պա-

շարումը կրկին սկսուեցաւ աւելի մեծ աշխուժով, քաղցի և նեղութեանց բոլոր սարսափը պատեց պաշարեալներին։ Թէև սուլեցիք իրենց անզէնների, կանանց և երեխաների մեծ մասը Պարգա և Յոնիական կղզիներն էին տարել իբրև ապահով տեղ, սակայն և այնպէս հաւաքած պաշարը շուտով պակասեց։ Պաշարողները տիրեցին ջրհորներին, պաշարեալներն ստիպուեցան ամրոցի պարիսպներից երկար պարաններով սպունգներ կախ տալ, որպէսզի կարողանան ծծել այն մի քանի կաթիլ ջուրը, որ մնացել էին ժայռերի խոռոչներում։ Խոտ ու արմատք խաշում էին մի բուռն ալիւրի հետ և աշխատում էին պակաս կերակրով նուազող ոյժերը պահպանել։ Դիմանում էին ցրտի, ձեան և անձրևի. կէս թալկացած, խոր ընկած աչքերով, խորշոմած այս մարդիկ կարծես թափառական դիակներ լինէին, որոնք հազիւ հազ իրար ճանաչում էին։ Սակայն բոլոր նեղութեանց ժամանակ, պատմում է Պեռհեւոսը, նոցա միտքն անընկճելի մնաց. նոցա ատելութիւնը բռնաւորի դէմ աւելի և աւելի սաստկանում էր, երբ մարմինները թուլութիւնից թալկանում էին, և նոյն իսկ իրենց ցեղի կանայք, հենց որ տխրագին նայում էին թալկացած ամուսինների դէմքին, շշնջում էին «մահ, բայց ոչ հպատակութիւն»։ Այս ամենաթշուառ նեղութեանց միջոցին ժողովրդի ոգին չկորցրեց իւր աշխոյժը և իւր հումորը։ Երբ Ալին մի կոչով 500 պիաստր նշանակեց մի սուլեցու գլխագին, սուլեցոց առաջնորդները առաջարկեցին մի Թուրքի գլխի համար 10 փամփուշտի վառօդ։ Երբ սուլեցոց էշերից մէկը մոլորուելով ընկել էր պաշարողների ձեռքը, յետ պահանջեցին, խոստանալով փոխարէնը հատուցանել. և երբ Թուրքերը համաձայնեցին, սուլեցիք ետ ուղարկեցին մի քանի օր առաջ գերի ընկած մի Թուրք յայտնելով՝ թէ արժեգին են ուղարկել։

Ինչպէս սովորաբար պատահում է արտակարգ ժամանակներում մարդկանց ոյժերն ու գործերը սովորականից գերազանց են լինում, այսպէս էլ սուլեցոց այն հոյակապ, մոլեկան և յուսահատական կռուին երևան եկաւ մի անձնաւորութիւն, որի ամբողջ էութիւնը գերբնականի և հրաշալի բնաւորութիւն էր կրում։ Այդ՝ Բարսեղեան կրօնաւոր Սամուէլն էր, մի համարձակ և եռանդուն մոլեռանդ, որ իւր կեանքի

նպատակ էր դարձրել սուլեցոց դիմադրութեան ոգին և կռիւն Ալու դէմ նորից վառելու։ Նա ինքն իրեն անուանում էր «Վերջին դատաստան» և ժողովրդին սարսելի և մահառենչ քարոզներով մատնացոյց էր անում այն ուղին, «ուր մահը և բնութիւնը սքանչացած կրկին պիտի տեսնէին հողեղէնին անվախճան փառքում»։ Ժողովուրդը նորան ընդունում էր ինչպէս Աստուծոյ առաքեալի։ Նա պատուիրեց պատնէշներ շինել և Սուրբ Պարասկեւիում, Սուլիի և Կիաֆայի միջև, իբրև ապաստանարան մի նոր ամրոց կառուցանել։ Երբեմն անյայտանում էր մերձակայ շուկաները գնալու, կեանքի պիտոյքներ ճարելու, որ նա ստանում էր փոխարէնը տալով տէրողորմեաներ, սրբերի մասունքներ և պատկերներ, և վերադարձին նորան տեսնում էին միշտ առջևի շարքերում, այն տեղերում, որտեղ վտանգն ամենից շատ էր։

Այս խորհրդաւոր քահանայի առաջնորդութեամբ բախտը մի անգամ էլ թեքուեցաւ Սուլիի քաջ պաշտպանների կողմը։ Ալին հրաման ստացաւ Կ. Պոլսից, որտեղ ուշադրութիւն էին դարձրել Թեսպրոտիոյ անցքերի վրայ, իւր հակառակորդների հետ համաձայնուելու, և Կ. Բոտսարիսի միջոցով նոցա խաղաղութիւն առաջարկեց, եթէ միայն Ֆոտո Սաւելլասին աքսորէին։ Ֆոտոյի ծառայութիւնները կրօնաւորի նոր աստղով նսեմացել էին. չափազանց հեշտութեամբ պատրաստ էին համարձակ ցեղապետին զոհելու։ Ցեղի գլխաւորները մի գաղտնի խորհրդում նորանից երդում առան, որ նա իւր որևիցէ անձնական ցանկութիւնը ստորադասէ հասարակաց բարիքին և իւրեանց լեռներից հեռանայ։ Իզուր նա ջանաց ցոյց տալ, թէ ինչ վտանգներ են գալու իրենց գլխին Ալու ձեռքից. նոքա յամառ մնացին։ Այն ժամանակ նա գուշակեց գալիք ծանր թշուառութիւնը, հրաժեշտ առաւ, հրդեհեց իւր հայրենի տունը, որ թշնամու ձեռքով չպղծուի, և մի քանի մտերիմների ուղեկցութեամբ հեռացաւ իւր հայրենի լեռներից։ Այժմ Ալին հասել էր իւր նպատակին և ընդմիջեց իւր բանակցութիւնները սուլեցոց հետ։ Ընդհակառակը Ֆոտոյին ամենափայլուն առաջարկներ արաւ, հրաւիրեց նորան Եանինա, թախանձեց, որ սա հայրենակիցներին մատնէ իւր ձեռքը։ Ֆոտոն նորան թէև բացատրեց, թէ ինքը իբրև մի առանձին անհատ, որ իւր անձի վրայ փորձել է

ժողովրդի փոփոխական սէրը, չէ կարող իւր ժողովրդի վրայ որոշ ազդեցութիւն անել. բայց զուր անցաւ։ Այն ժամանակ Ֆոտոն վերջապէս յանձն առաւ Ալու միջնորդ դառնալ. իբրև թէ կը փորձի իւր հայրենակիցներին համոզելու, որ ամենախիստ պայմաններն անգամ ընդունեն, և եթէ չյաջողէր, խոստանում էր Եանինա վերադառնալ։ Նա շտապեց դէպի Կիաֆա, որտեղ նորա առաջին հոգսն եղաւ Ալու խորամանկութիւնը բաց անել և իւր ժողովուրդն երդուեցնել միայն այն ժամանակ բռնաւորի հետ խաղաղութիւն հաստատելու, երբ Սուլիի անկախութիւնը կ'երաշխաւորուի։ Իզուր այժմ իւր զղջացած բարեկամներն ստիպում էին, որ Ֆոտոն մնայ և առաջուայ պէս իրենց առաջնորդէ, մի վայրկեան դեռ անձկութեամբ լսում էր նոցա բացատրութիւնները, բայց իւր պատուով երաշխաւորել էր փաշային. ինչպէս մի նոր Ռեգուլլոս իւրայինների ձեռքից դուրս պրծաւ և վերադարձաւ Եանինա, որտեղ զայրացած փաշան նորան բանտ և շղթայի զարկեց։

Երեք տարի տևեց Ալու և սուլեցոց այս անհաւասար կռիւը. դեռ 1803 թուականին պաշարեալները Սամուէլի առաջնորդութեամբ մի փայլուն յաջողութիւն ունեցան, երբ Վիլլայի մօտ ալբանացոց նորակառոյց մարտկոցներից մինը յօդս ցնդեցին։ Ալին կատաղութիւնից մոլեգնեցաւ իւր թշնամիների յաջողութեանց վրայ, և այնպէս ծեծեց իւր Էմինէհ կնոջը, որի բերանից ի պաշտպանութիւն սուլեցոց մի խօսք դուրս թռաւ, որ սա սարսափից մեռաւ. Նա իւր որդոց յանդիմանում էր իբրև մեղկերի, որովհետև սոքա չկարողացան մի այդպիսի փոքր խմբի դիմադրութիւնը փշրել։ Վերջապէս նորա արծաթը յաջողեց, ինչ որ զէնքը չէր կարողացել։ Պաշարեալների մէջ գտնուեցաւ մի Յուդայ՝ Պիլիօ Գուզի անունով, որ վախկոտութեան տխուր հռչակ էր ստացել, որովհետև մի ճակատամարտում փախել էր։ Ուստի սուլեցոց սովորութեամբ նա հասարակաց բանադրանքի էր ենթարկուել. Նորա կինը կարող էր միայն ամենից վերջը ջուր տանել հասարակաց ջրհորից, որտեղ սուլեցի կանայք ըստ իւրեանց այրերի քաջութեանց պիտի շարուէին։ Նա վրէժ էր նիւթում, և անպարտաճանաչութիւնից առ հայրենիք մնում էր մի քայլ դէպի դաւաճանութիւնը։ Նորան խոստացան 10 քսակ դրամ

և նա 1803 ամի սեպտեմբերի 25 լոյս 26 երկու հարիւր Թուրք գաղտնի արահետով Սուլի առաջնորդեց, որոնք նորա տանը թագնուեցան։ Երբ Ալու որդի Վելին սեպտեմբերի 26-ին առաւօտեան յարձակում սկսեց, թագնուածները դուրս եկան և ընկան սակաւաթիւ պաշտպանողների քամակից. կարճատև և տաք կռուից յետոյ սուլեցիք ստիպուեցան յետ նահանջել և դէպի Սուրբ Պարասկևի քաշուել, որտեղ Սամուէլ կրօնաւորը խաչանիշ դրօշակը ցցել էր և ամեն ինչ պատրաստել էր վերջին օրհասական մարտին։ Եւ որովհետև Ալին չէր ուզում պաշարեալներին ծայրայեղութեան հասցնել, ուստի Սաւելլասին բանդից արձակեց այն պայմանով. որ սա իւր հայրենակիցներին յորդորէ իրենց կամքով անձնատուր լինելու և դուրս գաղթելու։

Բայց Սաւելլասն օգուտ քաղեց իրեն շնորհուած ազատութիւնից Պարգա շտապելու և պարգացոց հետ բանակցելու, որ իւր ցեղի կանանց և երեխաներին իրենց մօտ ընդունեն։ Նա խորհում էր բանաւորին խորամանկութեամբ խաբել, և երբ իմանար թէ անգլենները ապահով են, կռիւը նորից վերսկսէր։ Սակայն բանակցութիւնը պարգացոց հետ շատ երկարեց, նորան մատնանիշ արին Կորֆուն, և դեռ այնտեղից պատասխան չեկած, արդէն չափազանց ուշ էր, նորա ծրագիրը մատնուեցաւ Վելուն և Ալուն. Նորան մնում էր միայն Սուրբ Պարասկևի վերադառնալ, որպէսզի կրօնաւորի հետ միացած ազատութեան վերջին վայրը լեռներում պահպանէ։ Այստեղ կռւում էին այս քաջերը, մինչև որ այլևս հնար չկար դիմադրելու և Վելին, թշնամիների առաջնորդը, նոցա քաջութեամբ հիացած համաձայնուեցաւ դաշնադրութեամբ անձնատուր լինելուն։ 12-ն դեկտեմբերի 1803 ամի նոքա թողին իրենց հայրենիքը, գլխաւոր խումբը Սաւելլասի, Դրակոսի և Սերբասի առաջնորդութեամբ քաշուեցան Պարգա, մի երկրորդ խումբ Կուտոնիկասի և Բոտսարիսի առաջնորդութեամբ դէպի Սալոնգօ և մի երրորդը դէպի Ռենիասա։

Պարասկևիում մնացել էր միայն Սամուէլ կրօնաւորը հինգ ընկերով։ Նա պէտք է անձնատրութեան պայմանները որոշէր և ընդունէր այն գումարը, որ թշնամին Պարասկևիում դեռ մնացած ռազմամթերքների համար խոստացել էր։ Երկու

Թուրք և Ալու մի քարտուղարը ներկայ էին, որպէսզի պայմանները վերջացնէին։ «Եւ արդ, ասաց քարտուղարը Սամուէլին նորան փողը վճարելիս, ինչ ես կարծում, ինչ պատիժ է որոշել քեզ համար վեզիրը, որ այդպէս յիմարաբար նորա ձեռքն ընկար»։—«Նա ոչ մի պատիժ չէ կարող տալ, առարկեց Սամուէլը, որ սարսափեցնէ այն մարդուն, որ վաղուց ի վեր կեանքն ատել է և մահն արհամարհել»։ Միևնոյն ժամանակ նա վեր թռաւ, կրակեց իւր ատրճանակը վառօդի արկղի մէջ, որի վրայ նստել էր. մի ահեղի պայթիւն առաջացաւ, կրօնաւորը և Թուրքերը թաղուեցան Սուրբ Պարասկևիի փլատակներում։ Մի յոյն, որ բանակցութեանց ժամանակ դռան չէմքին էր կանգնած, փախաւ. դիւցազնական կրօնաւորի մարմնից ոչ մի հետք չգտնուեցաւ։

Ալու համար Սամուէլի վերջին դիւցազնական գործը մի պատրուակ դարձաւ սուլեցոց դաշնադրութեան պայմանները խախտելու։ Հալածելով ընկաւ նա մեկնողների ետևից, և միայն Սաւելլասը, որ կաշառելով գալիքը արագացրել էր իւր ընթացքը, յաջողեց Պարգա հասնել առանց մեծ կորուստի։ Սուլեցոց երկրորդ խումբը, որ դէպի Սալոնգօ էր չուել, կարծում էր, թէ տեղի ամրութեան պատճառով պաշտպանուած կը լինի, որովհետև Սալոնգօն, ինչպէս և Սուլին, գտնւում էր մի բարձր քարաժայռի վրայ Ախերոնի ափին և միայն մի նեղ մուտք ունէր։ Երկու օր ամբողջ այս նպաստաւոր դիրքում Թուրքերի յարձակումները յետ մղեցին։ Բայց նոցա կենսական պիտոյքները և վառօդը վերջացաւ, թշնամին յաջողեց տիրել այն աղբիւրին, որտեղից նոքա ջուր էին տանում։ Առաջին անգամ կանայք նկատեցին յուսահատական դրութիւնը. նոցանից 60-ը իրենց զաւակներին գիրկ առած առաջացան դէպի մի դարևանդ՝ դուրս ցցուած ժայռ, որ կախուած էր բարձրից Ախերոնի վրայ. նոցա ներքև խորքում փրփրում էր գետը, բայց այնքան խոր ներքևում, որ գետի խոխոջիւնը հազիւ հազ լսելի էր լինում։ Այստեղ մի կարճատև խորհուրդ արին, գրկեցին իրենց զաւակներին վերջին անգամ և չպրտեցին անդունդը. ապա ձեռք ձեռքի տուին, սկսեցին յունական պարը, և երգելով իւրաքանչիւր անգամ պարագլուխը իւր հերթին, գլուխ պտտացնող, աչքեր մթնացնող բարձր խոյթից

վայր էր նետում։ Սալոնգոյում յետ մնացածները ջանացին գիշերը դուրս նետուել և ազատուել․ բայց թշնամին հսկում էր և յաղթահարեց նոցա օրհասական ոգորումից յետոյ. 800 հոգուց հազիւ 150 հոգի հասան հարեան Պարգան։

Սալոնգոյից Ալին դիմեց Ռենիասա, ուր փախել էին 20 սուլեցի ընտանիքի կանայք և երեխաներ։ Անզէններն ևս զոհ դարձան Սուլիի դիմադրութեամբ զայրացած ալբանացի բիրտ զինուորներին։ Դեսպօն, Սուլեցի Բոտցիսի այրին, իւր դուստրներով և թոռնուհիներով պաշտպանւում էր Կուլա աշտարակում, և բոլորը իրենց յօդս ցնդեցին, որովհետև չէին կամենում ողջ ողջ ատելի հակառակորդի ձեռքն ընկնել։ Վերջին մնացորդը, 1,000 սուլեցի, որոնք Կ. Բոտսարիսի առաջնորդութեամբ քաշուել էին Սելտսօ վանքը, 1804 թուականի յունուարից մինչև ապրիլ Ալու ենթազօրավարներին եռանդուն դիմադրութիւն ցոյց տուին. սակայն սոքա էլ արիւնահեղ կռիւներից յետոյ գերակշիռ զօրութիւնից ընկճուեցան, միայն 45 հոգի կարողացան Բոտսարիսի առաջնորդութեամբ թշնամու զօրքը ճեղքելով Պարգա հասնել. միւսները թշնամու սրին ճարակ դարձան կամ Ախելոոսի ալիքներին զոհ գնացին։

Այս կռիւը, որով Ալին սուլեցոց բնաջինջ արաւ, նորա փառքը նորից հռչակեց մահմեդականների մէջ։ Սուլթան Սելիմը նորան անուանեց «Ռումիլի վալեսի» և նորան յանձնեց մի կարևոր գործ, Մակեդոնիան և Թրակիան «Կերսալեան» հրոսակներից ազատելու, որոնք մինչև Ֆիլիպպոպոլիս և Պելագոնիա ասպատակում և ամեն տեղ հաղորդակցութիւնը խանգարում էին։ Ալին 10,000 ալբանացիներով 1804 թուականի գարնանը յառաջ խաղաց դէպի Մոնաստիր, հալածում էր աւազակներին իրենց որջերից և գոհութեամբ սրտի տեսաւ, որ Դելվինոյի և Սկադրայի բովանդակ զօրքը, Թեսալիոյ սպահիները, եւրոպական Թուրքիոյ փաշաների երկու երրորդ մասը նորա դրօշակների տակ հաւաքուեցան։ Նա 80,000 մարդով երևաց Ֆիլիպպոպոլսի առջև, ուրիշներին զգուշացնելու համար խստութեամբ պատժեց բռնուած Կերսալեաններին և գլխատել տուաւ Նասկուպի և Սմոկովայի փաշաներին, որոնք հովանաւորել էին ելուզակութիւնը։ Սակայն իւր զօրքի մէջ ծագած խռովութիւնը, որ Դիւանում եղած նորա թշնամիքը

պատրաստել էին, նորան ստիպեց Վերդարի վրայով վերադառնալ, աւարով բեռնաւորուած նա դարձաւ իւր տունը՝ Եանինա։

Թեպէտև նա բաւական պատճառ ունէր Դռան շարակամութեան համար գանգատուելու, որ այժմ շտապով իւր հակառակորդ Սկոդրայի վեզիրին Ռումելիի վեզիրութիւնը յանձնեց. սակայն և այնպէս առերես ամենախոր յարգանք էր մատուցանում։ Խելօքութիւնը նորան թելադրում էր, որ երկար ժամանակ Դիւանին հաւատարիմ ծառայ ձևանայ։ Այս դիտաւորութեամբ յոյն կլեֆտների ձեռնարկութեանց դիմադրում էր, որ 1805 թուականի ամառը կանոնաւոր ձև էր ստացել։

Ալին յիրաւի պատճառ չունէր կլեֆտների ազգային ձգտմանց համակրելու։ Յոյների անկախութեան դիտումները չէին յարմարում նորա քաղաքական ծրագրերին. նա ուզում էր անշուշտ Պիւռհոսի և Սկանդարբեգի աւանդութիւնները կենդանացնել, բայց ոչ Պերիկլէսինն ու Եպամինոնդասինը։ Ուստի երկար ժամանակ էլ ջանաց սուլթանի հեղինակութիւնը յոյների դէմ անխախտ պահել. Սուլիի օրինակն ապացուցեց, թէ Ալին որքան քիչ մտադրութիւն ունէր փոքրիկ կլեֆտական լեռնային համայնքներին խնայելու. և ԺԹ. դարու սկզբին յոյների ամենալաւ ոյժերն սպառւում էին Եպիրոսի բռնաւորի դէմ մղած կռւում։ 1805 թուականի ամառը Կարպենիզիում կլեֆտների կազմած պատերազմական խորհուրդը կարող է համարուել Ալու դէմ մղած կարգաւորեալ դիմադրութեան սկիզբը։ Այնտեղ եկած համաձայնութեան համեմատ 1805 թուականի ձմեռը կլեֆտների հռչակաւոր ցեղապետներից մինը, Նիկոտսարասը, մի խումբ ընտիր կլեֆտների գլուխն անցած չուեց դէպի հիւսիս, որպէս զի սերբերին և սոցա առաջնորդ «Կարա» Գէորգին սուլթանի դէմ մղած կռւում պաշտպանէ։ Նա յաջողութեամբ հասել էր Ստրիւմոն և Պրաւիի մօտ փայտեայ կամուրջն անցնելու վրայ էր, երբ պաշարուեցաւ 3,000 թուրքերով, որոնց Ալին այնտեղ էր ուղարկել կլեֆտների ճանապարհը կտրելու։ Նա չէր կարող ո՛չ առաջ և ո՛չ ետ շարժուել, իւր երեք հարիւր զօրականի կեանքը կախուած էր իրենց եաթաղանի՝ թրի ծայրից։ Երեք օր դիմացան անհաւասար կռուին, մինչև որ նոցա ռազմամթերքն սպառուեցաւ։

Նոքա ուտում և խմում էին լեռների ձիւնը և դիմադրում էին թշնամու անդադրում կրակին։

Նոցա համար ուրիշ միջոց չկար, բայց եթէ սրով ճանապարհ հարթել. չորրորդ առաւօտն էր, արևը ծագեց. ահա Նիկոտսարասը հրամայեց յարձակումն (γιουρούσι=գիուրուզի) սկսել։ Կլեփտներն իրենց հրացանները դէն քցեցին, քաշեցին թրերը և յուսահատութեամբ գետի վրայ պրծան։ Թուրքերը նոցա մոլեգնութիւնից յանկարծակիի եկած ետ քաշուեցան և անցքը մի վայրկեան առանց հսկողութեան թողին։ Բայց հենց այս ակնթարթն էր պէտք։ Յոյներն աճապարեցին այն կողմն անցնել, պոկեցին կամուրջի հիւսիսային կողմի չղթաները, չպրտեցին Ստրիմոնի մէջ և յաղթական գոռում գոչումով չուեցին յառաջ՝ դէպի հիւսիս։ Սակայն նոցա դիւցազնական արիութիւնը ապարդիւն անցաւ. Ռոդոպէ լեռներում Թուրքերի մի զօրեղ բանակ փակեց նոցա ճանապարհը. և Նիկոտսարասն ուրախ էր, երբ մի վտանգալից նահանջից յետոյ կարողացաւ նորից հասնել իւր ծննդավայր Ալասոնան։ Շատ հեռուից, Սէն-Կլուից, Նապոլէոնը գովասանեց իւր եպիրացի դաշնակցի քաղաքականութիւնը։ «Պէտք է ջանալ, գրում էր նա Տալէյրանի ձեռքով Ալի փաշային, սերբերին զսպել և յոյներին խոնարհեցնել, որոնք իսկապէս ռուսների օգնական գնդերն են»։

Ալին կարող էր ի նկատի առնել, որ իւր նախանձաւորութիւնը Դուռը պիտի ճանաչէ և գնահատէ։ 1806 թուականի դեկտեմբերին Ռուսաստանի և Թուրքիոյ մէջ ծագած պատերազմը պէտք է բարձրացնէր նորա հաւատարիմ զգացմանց արժէքը։ Ֆրանսացոց դեսպանութեան միջնորդութեամբ նորա որդոց՝ Վելուն և Մուխտարին տրուեցաւ Մոռէայի և Լեպանտոյի փաշայութիւնները։ Համբերութեամբ տարան, երբ նա Թուրք բերդապահ զօրքը Պրեւեզայից քշեց և քաղաքում իւր զօրքը դրաւ, երբ նա լուրջ պատրաստութիւններ էր տեսնում Յոնիական կղզիները նուաճելու։ 1806 թուի ամառը քիչ էր մնացել, որ նա Սուրբ Մաւրան առնէր. յոնիական ծերակոյտը օգնութեան կանչեց մայր ցամաքի կլեփտներին. այն ժամանակ Կապոդիստրիասը իբրև յոնիական երիտասարդ պետութեան քարտուղար Բոտսարիսի և Կատսանտոնիսի հետ

բանակցեց, և յոնիացոց ու կլեփտների միացեալ ջանքերով կարողացան սպառնացող վտանգի առաջը յաջողութեամբ առնել։ Տիլզիտի խաղաղութիւնը միանգամայն խանգարեց Եպիրոսի երկրաքաղց բռնաւորին իւր ծրագրած աւարը ձեռք ձգելու։ Աշխարհի բաժանման ուրուագծում, որ այն ժամանակ Ալեքսանդր Ա. և Նապոլէոնը ծրագրեցին և յետոյ Էրֆուրտում հաստատեցին, տեղ չկար Եպիրոսի թագաւորութեան համար։ Իզուր Ալին իւր գործակալների ձեռքով առաջարկեց, որ Նապոլէոնը նորան ընդունէ ֆրանսացոց պետութեան վասալ և փոխարէնը շնորհէ Յոնիական կղզիներն իբրև ժառանգական իշխանութիւն։ Ֆրանսացոց կայսրը պատուիրեց նորան չոր չոր հաղորդել, թէ այլևս չէ կամենում ոչինչ նորա մասին լսել. բայց եթէ նա ապագայում կը համարձակի Ֆրանսիոյ և Դռան միջև եղած դաշնադրութիւնները ոտի տակ տալ, այն ժամանակ նորան պատժել կը տայ սուլթանի ձեռքով։ Ալին կանչեց ֆրանսացոց կոնսուլ Պուքևիլլին։ Նա ջանաց իւր ոխը ծածկել։ «Բոնապարտը, ասում էր նա, իմ վրայ չարացել է, խընդրում եմ քեզանից, նորա նախարարին գրես, եթէ այդ մեծ մարդն ինձ դռնից դուրս հանէ, ես նորից պատուհանից ներս կը մտնեմ, որովհետև ես կամենում եմ իբրև նորա ծառայ մեռնել»։

Երբ Ալու յոյսերը Յոնիական կղզիների մասին ի դերև ելան, կրկնապատկեց եռանդը իւր իշխանութիւնը ցամաքում ընդարձակելու և ամրացնելու։ Կլեփտների կռուի ցանկութիւնը ռուս-թուրքական պատերազմով շատ բորբոքուել էր. թեսալացի Եւթիմիոս Բլախաւասի արժանիքն է, որ աւելի խորապէս հաստատեց կլեփտների Ալուն դիմադրելու միտքը և ազատութեան ազգային կէտ նպատակին պարզ ու պայծառ յոյների առաջ դրաւ։ Թէպէտև նա նուիրուած էր կրօնաւորութեան, բայց իւր հօր մահուան ժամանակ փախաւ վանքից և գնաց կլեփտների մէջ։ Որքան վառ էր նորա հայրենասիրութիւնը, այնքան անհաշտ էր ատելութիւնը Եպիրոսի բռնաւորի դէմ։ Երբ Կարպենիսիի ժողովին մասնակցողների մեծամասնութիւնը Ալու հետ հաշտուեցաւ, նա խռովեց և առանձնացաւ, նորա համար չկար ոչ մի համաձայնութեան և ոչ մի խաղաղութեան ճանապարհ յոյների և բռնաւորի միջև։ 1807

թուականի ամառը նա բարձրացրեց ազատութեան դրօշակը Օլիմպոսի բարձունքների վրայ։ Նորա վարմունքին հաւանում էին Յունաստանի հիւսիսում, անդամ Թուրքերի մայրաքաղաքում, որտեղ Ալու զօրութեան աճումը և նորա անկոչ ապետական ծառայութիւնները յոյների դէմ ծուռ աչքով էին դիտում։ Ուստի սկսուեցաւ արդէն այն ժամանակ փոխադարձ ոգորումը, որ յետոյ յունաց ապստամբութիւնն էապէս արագացրեց և Դիւանի ոյժերի առաջն առաւ։ Բլախաւասը Պինդոսի արևելեան ստորոտը ընտրել էր իւր հետևողների համար ժողովատեղի. այնտեղից կամենում էր հարաւային Թեսալիա մտնել և հենց որ բաւական գունդեր միասին ունենար Ենինա դիմէր։ Բլախաւասի եղբայրները Պինդոսի անցքերի բանալի կատարինուաճելով՝ առաջին հարուածը պիտի տային։ Բայց Ալին արթուն աչքով հսկում էր իւր հակառակորդների շարժումների վրայ։ Նորա որդի Մուխտարն ամենակարևոր դիրքը բռնել էր արդէն 4,000 ալբանացիներով, երբ Դեմետրիոս Բլախաւասը վրայ հասաւ. յոյները նախ ետ մղուեցան, ապա պաշարուեցան և կոտորուեցան։ Բլախաւասի յոյսերը խորտակուեցան։ Այնուհետև մի ժամանակ իւր բախտը իբրև ծովահէն փորձելուց յետոյ հրապուրուեցաւ և մի դաշինք կռեց, որով երաշխաւորուեցաւ նորա կեանքն ու սեփականութիւնը, իսկ ինքն անզէն անձնատուր եղաւ թշնամիներին։ Անձնատրութեան դաշինքը Ալու ձեռքին յաճախ լարած թակարդներից մինն էր։ Բլախաւասին նախ պրկեցին, որպէսզի դաւակիցների անունները բերանից կորզեն և ի վերջոյ մահուան դատապարտեցին։ «Ենինայում էր, այսպէս է պատմում Պուքեվիլը, երբ ես Եւթիմիոս Բլախաւասին առաջ այնքան յաճախ Պինդոս լեռներում իւր զինուորների հետ հանդիպելուց յետոյ կրկին տեսայ. բայց աւա՜ղ, սերայլի բակի մէջտեղ մի սեան կապած։ Արևի ճառագայթներն այրում էին նորա արուրագոյն գլուխը, որ մահուան դիմադրում էր, և քրտինքը ոլոռ ոլոռ նորա մօրուքից կաթում էր։ Նա գիտէր իւր վիճակը, և բռնաւորից էլ աւելի հանդարտ, որ նորա արեանն էր պապակում, իւր աչքերը զուարթութեամբ ինձ վրայ էր ուղղում, կարծես թէ կամենում էր ինձ իւր վերջին ժամուան վկայ կոչել։ Նա արդարի անդորրութեամբ տեսնում

էր այդ ժամուայ մօտենալը, անդողդող, անձայն և անբողոք կրեց դահճի հարուածը, և նորա Ենինայի փողոցում քաշկռտուած անդամները ցոյց էին տալիս սարսափահար յոյներին Թեսալիոյ վերջին ցեղապետի մնացորդը»։

Ալու յաղթութիւնը ծանր հարուած էր ազգային գործի համար։ Քաջատեղեակ օտարականներ, ինչպէս Դուգլասը, այն ժամանակ յոյների համար ամենամեծ վտանգը ոչ թէ Թուրքերին այլ Ալի փաշային էին համարում, և հաւատում էին, որ Ալբանիոյ վերածնութիւնը կը խանգարէ Յունաստանի վերածնութեանը։ Բոլոր նշաններից երևում էր, կարծես թէ Ալին Թուրքաց քաղքայուղ տէրութեան չեզոքակուտից մի զօրեղ զինուորական տէրութիւն կը հիմնի։ 1809 թուի ամառը նա իւր անգլիացի բարեկամների հետ խօսք կապեց մի բարդ պատերազմական գործողութիւն սկսել Բերատցի Իբրահիմի և Յոնիական կղզիների դէմ։ Նա 40 տարուց ի վեր լցուած էր Իբրահիմի դէմ վրէժխնդրութեան հոգով և կարողացել էր այն աստիճանի կեղծել, որ Իբրահիմի աղջիկներն ուզել էր իւր որդոց. բայց չէր մոռացել, որ Իբրահիմն երբեմն իւր ախոյեան փեսացուն էր և նորան, անարգ «Լիապին», յետ էր մղել։ Առանց իւր որդոց խօսքերին և Դռան սպառնալիքներին ունկն դարձնելու, պատուիրեց վարձկանների առաջնորդ ալբանացի Օմար Վրիոնիսին, որին յեղափոխութեան ժամանակ դեռ շատ կը հանդիպենք, որ Բերատը պաշարէ։ Կոնգրևի հրափամփուշտները (Raket), որ Ալին ստացել էր անգլիացիներից, ահագին կերպով ազդեցին. Իբրահիմը ստիպուեցաւ անձնատրութեամբ դաշինք կռել։ Ալին յառաջ եկաւ, իբրև թէ կամենում է նորա և Օմէրի միջնորդ հանդիսանալ, սակայն խեղճ ծերունուն Աւլոնա քշուելու, և Օմէրին նորա տեղ դրաւ։ Երբոր Կ. Պոլսից սուրհանդակ եկաւ մի սպառնալից հրովարտակ ձեռին՝ խորամանկ Ալին մի սրտառուչ խաղ խաղաց։ Համբուրեց հրովարտակը, դրաւ գլխին և արտասուք թափեց, երբ հրովարտակը կարդում էին։ Սուլթանի թշնամիները, այսպէս էր հրապարակաւ յայտնում, իրենց չարութեամբ այնքան հեռու էին գնացել, որ Իբրահիմին պաշարել էին, իսկ ինքն իբրև թէ օգնութեան հասնելով պաշարումը վերացրել էր և Իբրահիմին ապահով Աւլոնա տարել։

Այսպէս հասկացան երկրի բոլոր վարիչները և սուլթանին հաղորդեցին մի յայտարարութեամբ, թէ Իբրահիմը ֆրանսացոց հետ միասին մտածում էր դաւադրութիւն անել, ուստի նորան պաշարել էին, բայց Ալին նորան իրենց ձեռքից խլեց և Աւլոնա տարաւ: Դուռը՝ տեսնելով կատարուած իրողութիւնը լռեց, մանաւանդ որ Ալու ոսկին լրացրեց պակասը:

Բայց ֆրանսացիք մտադիր չէին անվրդով դիտելու Ալու կամայականութիւնը: Մինչդեռ վեզիրը անգլիացոց հետ դաշնակցութիւն էր հաստատում, ֆրանսացոց զօրավարները կազմեցին ռազմական մի ծրագիր, որ Դուռն ընդունեց: Կորֆուից Մարմոն զօրավարը Դալմատիոյ սահմանների կողմից պիտի յարձակուէր Ալու վրայ: Սակայն Մասենայի նահանջը Պորտուգալիայից, Սպանիայում անյաջողութիւնները Նապոլէոնին դրդեցին, որ Մարմոնի գունդերը արևմուտք կանչէ:

Եպիրոսի կասկածամիտ իշխանը անտեղեակ չէր հակառակորդների շարժմանց և ծրագրերին, որ իւր դէմ գաղտնի նիւթւում էր: Անբախտ Իբրահիմը պիտի քաւէր Ալու բարկութիւնը: Ալին պատուիրեց, որ նորա վերջին ապաստանարանի վրան յարձակուին, մինչև Լիապուրիոյ լեռները հալածեն, բռնեն և քաշ տան Եանինա, որտեղ նա մինչև իւր կեանքի վերջը գերի մնաց: Մի վեզիր միւսի ձեռքով շղթայուած՝ անլուր բան էր Թուրքերի պետութեան տարեգրութեանց մէջ: Բայց Ալին մեղմացրեց Դիւանի բարկութիւնը նուէրներով, և արդէն նորա զօրութիւնն այնքան աճել էր, որ Կ. Պոլսում խոհեմութիւն համարեցին նուէրները շնորհակալութեամբ ընդունել և պատիժը յետաձգել: Ալբանիոյ բոլոր փաշաները, յոյն կլեփթների բոլոր գլխաւորները այժմ հպատակում էին այս սատրապին՝ նախարարին:

Միայն դեռ էլի մնում էին նուաճելու Դելվինոյի Մուստաֆա փաշան, Արգիրո-Կաստրո և Գարդիկի քաղաքները, ինչպէս և Լիապի ցեղապետները, որոնք միացել էին միւսներին: Ալին նուաճեց Դելվինոն, Մուստաֆայի երկու որդուն գերի բռնեց և նորան ստիպեց Գարդիկի ապաւինելու: Ապա դիմեց Արգիրո-Կաստրո, որ թւում էր թէ ապահով է իւր բնական դիրքի շնորհիւ, որովհետև տները առանձին առանձին հովտից վերև լանջերում և շրջապատի լեռների դարևանդների

վրայ են շինուած, և ամէն մէկը մի ջոկ ամրոց կարող էր համարուել: Արգիրո-Կաստրոն ալբանական քաղաքի օրինակ է: Մասնաւոր կագ ու կռիւները երբեք վերջ չունէին: Ընդհանուր զինադադարը բացառիկ դէպքերից էր, օր չէր անցնում, որ երկու թշնամի տուն իրար դէմ չկռուէին: Երբեմն էլ պատերազմի կատաղի ոգին տիրում էր բովանդակ քաղաքին. միայն երբոր քաղաքի արտաքին շահերը պահանջում էին, լռում էին մասնաւոր թշնամութիւնները, որպէսզի արտաքին ընդհարումներից յետոյ նորից սկսուեն:

Այսպէս էլ բոլոր կուսակցութիւնները միացան, երբ Ալին Դելվինոյի առումից յետոյ 1812 թուին Արգիրո-Կաստրոյի դէմ գնաց: Նա արդէն վաղուց ի վեր դաշտում գտնուած մի բլրի վրայ Արգիրո-Կաստրոյի հանդէպ փոքրիկ ամրոց էր շինել տուել, որի պահնորդ խումբը պիտի նեղէր քաղաքացոց, հովտից նոցա համար գալիք պաշարը կտրէր, նախրի տաւարը քշէր տանէր, հողագործութիւնը խանգարէր: Այսուամենայնիւ քաղաքում, երբ Ալին հովտով անցնում էր, միշտ թնդանօթների հարուածով ողջունում էին փադիշահի «վալուն», և շատ կաստրոցիք նորա մօտ ծառայութեան էին մտնում:

Այս վերջին պարագայից օգտուեցաւ Ալին քաղաքին տիրելու: Երբ նա կարծեց, թէ ճիշտ ժամանակը հասել է, յանկարծ մի նորագոյն ձեռնարկութիւն պատրուակ բռնելով պատերազմական տուրքը կրկնապատկեց և այս լուրը մեծ շուքով Արգիրո-Կաստրոյում յայտարարել տուաւ: Մեծ բազմութիւն քաղաքից նորա մօտ խռնուեցաւ. այժմ նա յաջողեց քաղաքին առանց դժուարութեան տիրելու, որովհետև մնացեալները ոյժ չունէին դիմադրութիւն ցոյց տալու:

Միանգամ քաղաքին տիրելով՝ Ալին իւր սովորական ձևով աշխատեց ամրացնել այն: Ազդեցիկ ընտանիքներից շատերը աքսորուեցան հեռաւոր վայրեր և ստիպուեցան իրենց կալուածքները աւելի նուազ արժէքաւորների հետ փոխանակել: Մի դարևանդի վրայ, որ քաղաքը բաժանում էր երկուսի, Ալին միջնաբերդ շինեց Վենետիկեան ոճով, լի կամարաձև նկուղներով: Ի հարկէ նա շինել տուաւ հապճեպով և անխնամ, ինչպէս միշտ, այնպէս որ այս գործը նորա բովանդակ շէնքերի

վճակն ունեցաւ և շուտով աւերակ դարձաւ։ Փոխանակ քարերը ներքուստ իրար հագցնելու, պատի ամեն մի երեսն առանձին էր շարել տալիս և միջի դատարկ տարածութիւնը լցնում էր փոքրիկ քարերով, առանց մտածելու գոնեա թէ սուաղը կրից է թէ հողից։ Այսպիսի պատերին որոշ աստիճանի ամրութիւն տալու համար դիմեցին փայտի օգնութեան, երեք կամ չորս ոտ բարձրանալուց յետոյ սովորաբար դնում էին պատի երկու կողմերի վրայ մի շարք բարակ գերաններ, որոնք իրար հետ միանում էին լայնութեամբ դրուած փայտէ կապերով, այս փայտէ աստիճանները պիտի կազմէին քարէ պատերի կմախքը։ Շատ անգամ յետոյ այսպիսի պատի շարուածքի մի կողմն ընկնում էր, մինչդեռ միւսը կանգուն էր մնում, կամ մէկը մնում էր կոկ, մինչդեռ միւսը ուռչում էր։

Ալին Արգիրօ-Կաստրօ ամրոցն այնպէս շտապով շինել տուաւ, որ տարի ու կիսուայ մէջ պատրաստ էր հետը պալատ և ուրիշ կարեւոր շէնքեր պարիսպների ներսում։ Ծերացող բռնաւորի շարժմանց մէջ երեւան եկաւ մի ջղային աճապարանք, կարծես թէ վախենում էր պիտի չհասնի մի տեւական բան անելու և սկսածը չկարողանայ աւարտել։ Մօտեցել էր վայրկեանը երկար յետաձգուած վրէժը գարդիկեցիներից հանելու։ Գարդիկին էլ բնական ամուր դիրք ունէր։ Քաղաքը շինուած էր մի կոնաձև լեռան վրայ և տներն էին քարէ, ժանտոր և ծերպածակերով ներսից հրացան արձակելու համար. բոլորն էլ հենց փոքրիկ, պաշարեղէնով լի ամրոցներ էին, որ պէտք էր պաշարմամբ առնել։ Բացի Մուստաֆայից Գարդիկիում կար մի գաղտնի դեսպան, որ Կ. Պոլսից ուղարկուած էր դիմադրութեան դրդելու։ Միւս կողմից Ալուն գրգռում էր Խայնիտցան, որ իւր Լիբակովօ սերայլում որդու մահն էր ողբում։ Պաշարումը երկարեց, բայց գարդիկեցիք, որոնք սովոր էին հողագործութեան զբաղմունքների և լեռներում խաշնարածութեան, իրենց ճնշուած զգացին և վհատութեան նշաններ երեւցին նոցա մէջ։ Ալու քաջարի սպաներից մինը, Աթանասի Վայան, տիրեց ռազմագիտական տեսակէտից կարեւոր ագարակին, որ իշխում էր քաղաքի մի մեծ մասի վրայ։ Գարդիկեցիք քաշուեցան քաղաքի այն թաղը, որ թշնամին դեռ չէր նուաճել և այստեղ ստորագրեցին հնազանդութեան մի թուղթ։ Նօթանասուն եօթ

պատանդ, որոնց թւում էր Մուստաֆա փաշան, զինուորների հսկողութեամբ Եանինա տարուեցան։ Նոցա ճանապարհը զարդարուած էր ծաղիկներով։ Եանինայում նոցա ընդունեցին երաժշտութեամբ և ցնծութեան ձայներով։ Ալին ինքը, որ նոցա սպասում էր, գնաց նոցա ընդ առաջ, և երբ նոքա գետին խոնարհեցին, բարձրացրեց և միայն մի քանի թեթև կշտամբական խօսքեր ուղղեց, որպէսզի նոքա խաբուին և ապահով լինին։ Այս նորա սովորական խորամանկութիւններից մինն էր։ 1812 թուականի մարտի 6-ի գիշերն էր լոյս 7, երբ մարդասպաններին հրամայեց յարձակուել պատանդների վրայ, բայց նոքա հաւաքուեցան միասին, կրակ արձակեցին յարձակուողների վրայ և նոցա փախցրին։ Արեւածագին Ալին հրամայեց զէնքերը նոցանից առնել, և պատրուակ բռնելով՝ թէ կամեցել են փախչել, տանել տուաւ Սոտիրաս վանքի բակը, որ լճի մէջտեղումն էր։ «Որդիս, յայտնեց արտասուալիր բռնաւորը Պուքեվիլլին, ճակատագիրը լրացած է, իմ թշնամիները՝ չնայելով իրենց վերջին փախչելու փորձին չէին կարող իմ շնորհը խախտել, ես նոցա իմ ձեռքի տակ եմ պահում առանց նոցա վնասելու։ Հաւատա ինձ, սիրելի կոնսուլ, և մոռացիր քո կանխակալ կարծիքներն իմ մասին։ Ես այլեւս քեզանից չեմ խնդրել, որ ինձ սիրես. ես քեզ կ'ստիպեմ, քանի որ ես այժմեանից վճռել եմ բոլորովին այլ կարգի հետեւել։ Թշնամիներս իմ ձեռքի տակ են, ես բարեգործութիւններով նոցա կը խոնարհեցնեմ։ Գարդիկին պիտի դառնայ Ալբանիոյ ծաղիկը և Արգիրօ-Կաստրոյում կամենում եմ իմ ծերութեան օրերն անցկացնել։ Այս են իմ վերջին ծրագրերը և եթէ կարողանայի Պարգան ես ձեռք բերել, այն ժամանակ իմ ցանկութիւնները կատարուած կը լինէին։ Ես չեմ ուզում, որդի, քեզանից խնդրել որ իմ անելիք ճանապարհորդութեանս ուղեկցես, եղանակը չափազանց վատ է։ Գրիր այս բոլոր լսածդ քո դեսպանին, որովհետեւ իմ թշնամիները կ'ամբաստանեն ինձ Կ. Պոլսում, և լաւ է որ ճշմարտութիւնն աւելի շուտ տեղ հասնի։»

Կոնսուլը չխաբուեցաւ, երբ այս գեղահնչիւն ապահովացումները լսեց։ Ալին իւր քրոջ հետ Լիբախովոյում խորհրդակցելուց յետոյ աճապարեց Գարդիկի հասնել իւր վեհանձն դիտաւորութիւններն իրագործելու։ Խնդրիա դղեակում Ցելիգնոսի

աջ ափին նա ատեան կազմեց։ Մունետիկները նորա անունով գարդիկեցոց ընդհանուր ներումն աւետեցին և հրաւիրեցին բոլոր արուներին տասը տարեկանից ի վեր Խնդրիա գնալու, որպէսզի նոյն իսկ վեզիրի բերանից լսեն այն յայտարարութիւնը, որ նոցա բախտաւորութիւն է խոստանում։ Չնայելով այս սիրուն խօսքերին քաղաքում չփոթութիւն էր տիրում։ Մզկիթները լի էին ծերերով և երիտասարդներով, որոնք դիմում էին Աստուծոյ և մարգարէի օգնութեան, կանայք ողբում էին և իրենց ամուսիններին ցաւագին գնաք բարև էին ասում։

Երբ գարդիկեցիք Խնդրիա եկան և բռնաւորի առներն ընկան, նա կարծես փափկել էր, աչքերին արտասուքներ երևացին, նոցա հանգստացնում էր և անուանում իւր սիրելի զաւակներ։ Ի վերջոյ նոցա հրաւիրեց, որ դիմեն դրացի Վալիարա խանի՝ իշխանի բակը, որտեղ նոցա բախտը վերջնականապէս պիտի որոշուէր։ Այնտեղ տարուեցան գարդիկեցիք իրար ետևից նորա թիկնապահների առաջնորդութեամբ։ Ալին աչք ածեց բակը, ապահովապէս իմացաւ, որ բակը ոչ մի կողմնակի ճանապարհ չունի, ապա պատուիրեց 666 հոգի գերիներից այդ փակ տեղը տանեն։ Այնուհետև իւր զօրքի առաջով անցնելով մի զինուորից խլեց կարաբինան և գոչեց բարձրաձայն. վրան այսինքն սպանիր։ Սակայն մահմեդականներն անշարժ մնացին, այն մի խուլ մրմռոց անցաւ բոլոր շարքերով. նոքա յայտնեցին, որ չեն կամենում իրենց ձեռքերը շաղախել հաւատակիցների արիւնով։ Այլև Միրիդների «Սև» գունդը մերժեց անզէնների դէմ այդ հրամանը կատարելու և պահանջեցին, որ գարդիկեցիներին ետ տրուին զէնքերը, ապա թէ կը կամենային հաւասար պայմաններում նոցա դէմ կռուել։ Ալին կատաղութիւնից փրփրում էր, նա կարծում էր պէտք է վրէժառութիւնից հրաժարուի. և ահա յոյն Աթանասիոս Վայան նորա ձեռքին գործիք դարձաւ և յոյն գունդերով իշխանի պատերի վրայ յարձակուեցաւ։ Յանկարծ դժբախտ գերիները տեսան, որ մի խումբ զինուորներ բակի պատն են բարձրանում և հրացանները նոցա վրայ ուղղում, և երբ Ալին կռուակցինով նշան տուաւ, բոլորը հրացաններն արձակեցին. ուրիշները պատերի տակ լցնում էին հրացանները և տալիս

վերև գտնուածներին, որպէս զի անընդհատ կրակի բռնեն։

Պաշարեալներն աշխատում են վայնասուն բարձրացնելով իրար ետև թագնուել, քարեր են վերցնում, որ իրենց կեանքը թանգ ծախեն և մարդասպաններից ոմանց էլ վիրաւորում են. բայց հետզհետէ դադարում է գոռում գոչումն ու դիմադրութիւնը, գերեզմանական խորին լռութիւնը տիրում է բակում, որտեղ մօտ 700 դիակ վկայ էին Ալու վրէժառութեան։ Դիակներն անթաղ մնացին, դռները պատով շարուեցան և այս արձանագրութիւնը գրուեցաւ. «Այսպէս թող կորչին Ալու տան բոլոր թշնամիները»։

Սոփրաս վանքում բռնուած պատանդներին էլ նոյն օրը գլխատել տուաւ։ Կանայք և աղջիկներն էլ խայտառակումներից զերծ չմնացին, մատնուեցան բիրդ զինուորների ձեռքը, նոցա քարշ տուին Խայնիտցայի առջև, որ անիծելով և չարչարելով նոցա ծամերը կտրել տուաւ և իւր գահաւորակի բարձերը լցրեց։ Ապա պաշտօնական մունետիկները յայտարարեցին, որ ոչ ոք իրաւունք չունի Գարդիկու կանանց և աղջիկներին ընդունել և պահել, որ նոքա պէտք է քշուին անտառներ և գիշակեր թռչունների կամ սովի մատնուին։ Մի ողբերգական բան կայ այս հնաւանդ հատուցման սարսափելի իրագործման մէջ, և Խայնիտցայի անձնաւորութիւնը մռայլ կերպով մեր միտքն է բերում հիւսիսային դրոյցի Կրիմհիլդէի դէմքը։

Միայն մի բարեկամ ընտանիքի Ալին խնայել տուաւ, սակայն արգելեց, որ ոչ մի տուն այն տեղում չշինուի, քանի իւր տոհմը կ'իշխէ։ Այսօրուան օրս վրէժառութեան հետքերը ջնջուած են. այն վայրը, որի վրայ թափուեցաւ երկուսի՝ արիւնռուշտ քոյր—եղբօր անէծքը, ծածկում է նորից այն խնայուած ընտանիքի սերունդների ձեռքով և եկուորներով. մի ապացոյց, որ կեանքի ընդհանուր ընթացքը մարդկութեան մէջ աւելի զօրեղ է քան առանձին անհատների աւերելու ձգտումը։

Այս սարսափելի վիճակն ևս, որ հասաւ մահմեդական քաղաքի գլխին, չկարողացաւ Դիւանը գործունէութեան դրդել. այլ ընդհակառակը Դիւանը անգլիացոց դիտումներով փոխուեցաւ և հակուեցաւ բռնաւորի կողմը, որովհետև 1812 թուա-

կանի մայիսին Բուխարեստի խաղաղութիւնը Ռուսաստանի հետ կնքուել էր և Նապոլէոնի աստղը մարում էր։ Ալին անգլիացիներին նեղութեանց ժամանակ չափազանց օգտակար էր եղել, ինչպէս Հուգսն (Hughes) ասում է, այնպէս որ սոքա չէին կարող յաջողութեան ժամանակ նորան մոռացութեան տալ։ Անգլիացոց կառավարութեան այս շնորհիւ Ալին Եպիրոսում ձեռք ձգեց վերջին վայրը, որ դեռ մնում էր ընկճելու։ Պարգան համարեա թէ նոյնչափ բարձր է Բիանկօ հրուանդանի պէս, ընկած Կորֆուի հարաւային ծայրին մի ժայռոտ թերակղզում, որ ծովը երեք կողմից ողողում է։ Ցամաքի կողմից շրջապատուած է ձոր պարտէզներով, մրգաբեր ծառերով, թզենիներով, մանդրեան նարինջենիներով (Mandarine) և լիմոնի ծառերով լցուած են քաղաքի արձակ վայրերը մինչև Թեսպրոտիոյ լեռները։ Բնակիչները երբեք չէին խոնարհուել մահիկի՝ կիսալուսնի իշխանութեան տակ, նոքա 1401 թուականից ի վեր մտել էին վենետիկցոց հովանաւորութեան տակ և այդ ժամանակից սկսեալ այնպէս քաջութեամբ ետ էին մղել թուրքերի բոլոր յարձակումները, ինչպէս սուլեցիք։ Ալին զանազան պատրուակներով Կորֆուի ֆրանսացոց զօրավարներից պահանջում էր, որ Պարգան իւր ձեռքը մատնեն, որ Սուլիի յաղթահարուելուց ի վեր նորա տենչանքների գլխաւոր առարկան էր։ Սակայն Նապոլէոնի անդառնալի հրամաններն արգելում էին այս ծանուցումներին ականջ դնելու։ Ալին 1814 թուականի փետրուարին մի նոր խաբէութեան փորձ արաւ, բայց ապարդիւն անցաւ, պարգացիք և ֆրանսացիք անքուն հսկում էին, և յարձակուողները արիւնշաղախ և կաբագլուխ յետ մղուեցան։ Երբոր Ալին այս լուրն առաւ, կատաղաբար թաւալում էր իւր գահաւորակի այս ու այն կողմը. նա երդուեցրեց անգլիացոց կոնսուլ Ֆորեստուն, որ մի նոր յարձակումն անելիս օգնեն իրեն բրիտանական գունդերով. և այն ժամանակ ահա բոլոր բնակիչներին էլ սրէ կ՚անցնի։

Սակայն Ֆորեստին վարուեց պատուաճանաչ մարդուպէս և անգլիացոց զօրավար Կամպբէլլի հետ որոշեց, որ Պարգան ֆրանսացոց հեռանալուց յետոյ անգլիացիք զինուորապէս նուաճեն, բայց քաղաքականապէս անկախ հրատարակեն։

Բայց քանի որ շուտով այնուհետև անցքերը բոլորովին Նապոլէոնին հակառակ ընթացք ստացան, պարգացիք անձամբ իրենց քաղաքը յանձնեցին անգլիացոց և օգնեցին՝ ֆրանսացոց բերդապահ զօրքը յանկարծակիի բերելու։ Երեք տարի Պարգան մնաց անգլիացոց հովանու տակ, որ ընդհանրապէս համարւում էր, թէ Յոնիական հանրապետութեանն է պատկանում։ Ի հարկէ Պարգան դաշնադրութեանց մէջ յատկապէս չէր յիշւում, բայց ըստ ինքեան սպասելի էր, որ Անգլիան իբրև քրիստոնեայ պետութիւն իրեն վերապահէր Պարգան հովանաւորելու իրաւունքը, եթէ նոյն իսկ իրաւական տեսակէտը մի կողմ թողնէին և անգիտանային, թէ Պարգան յիրաւի վենետիկցոց էր պատկանել, բայց ոչ երբեք թուրքերին։ Բայց ինչ կշիռ ունէին իրաւունքն ու պարտքը մի քաղաքականութեան կշեռքի թաթում, որ ղեկավարւում էր անմիջապէս տանը թխած հաշիւներով։ Պարգայի վաճառումը, որ բաւական երկար ժամանակ գաղտնի մթութեամբ էր պօղուած, այժմ պարզ մեր աչքերի առաջ է դրուած։ Ալու ոսկին այն շարժիչ ոյժն էր, որի շուրջը պտտում էր ամեն ինչ այս զզուելի առևտրի միջոցին։ Ալին կարողացաւ յաջողեցնել, որ Դուռը համաձայնեց ճանաչել Անգլիոյ գերիշխանութիւնը Յոնիական կղզիների վրայ միայն այն պայմանով, եթէ Դռանը տրուի Պարգան։ Մի գաղտնի դաշնադրութիւն ևս հաստատուեցաւ, որով Դուռը Պարգան իւր հաւատարիմ վասալ Ալուն պիտի յանձնէր։ Անգլիացիք, որոնք ի վաղուց հետէ միայն շօշափելի օգտին՝ ոսկու ուժին են երկրպագել, գոհացան Ալու դէմ դաշինքի ժամանակ պայման դնելով յօգուտ պարգացոց, որով սոքա կորցրած հայրենիքի փոխարէն պէտք է դրամական հատուցումն ստանային։ Անգլիացոց բանիմացները Պարգան ամբողջապէս գնահատեցին 500,000 ֆունտ ստերլինգ։ Իսկ Ալու միջնորդները միայն 50,000 ֆունտ ստերլինգ, և այս ու այն կողմ քաշքշելուց յետոյ, ինչպէս որ սովորաբար փերեզակների առևտրի ժամանակ տեղի է ունենում, համաձայնեցին առանց պարգացոց հարցնելու, և 150,000 ֆունտ ստերլինգը բաւական համարեցին։ Հեռանալու ժամանակ սահմանուեցաւ 10-ն մայիսի 1819 ամի։ Ժողովրդական երգն ասում է.

«Պրեւեսայից երեք թռչուն թռան դէպի Պարգա քաղաքը,

երրորդը որ ամենասեւն էր, բարձրաձայն ողբում էր և երգում. «Թուրքերը, Պարգա՛, խուժում են, Թուրքերը քեզ շրջապատում են, կռուելու համար այստեղ նոքա չեն գալիս, դաւաճանութիւնը քեզ զոհեց, քեզ վեզիրը չյաղթեց իւր բազմաթիւ զօրքով, նապաստակների պէս Թուրքերը փախչում էին միշտ պարգացոց հրացաններից. դու ունէիր քաջ տղամարդիկ, այո և ունէիր դիւցազնուհիք, գնդակները նոքա ուտում էին հացի պէս և վառօդը կերակրի պէս. ինչպէս երբեմն Քրիստոս վաճառուեցաւ անարդարութեամբ, այժմ էլ դու ես վաճառւում»: Երգը նկարագրում է ժողովրդի տրամադրութիւնը, երբ հաղորդեցին Ալու գունդերի մօտենալը, որոնք ամեն կողմից դէպի քաղաքն էին յառաջանում: Յիրաւի պարգացոց դրութիւնը յուսահատական էր: Նոքա ծնկաչոք ընկան սրբերի պատկերների առաջ և Մարիամ Աստուածածնից և սուրբ Նիկողայոսից օգնութիւն խնդրեցին: Նոքա գերեզմաններից հանեցին իրենց նախնիքների ոսկրները, որ ցարդ ազատ հողում էին հանգչել, և շուկայում ձիթենու ցախից մի խարոյկ կազմեցին և այրեցին: Նոքա մոլեգնութեամբ որոշեցին, որ իրենց հարազատ կանանց և երեխաներին սպանեն, հենց որ Թուրքերը քաղաք մտնեն, և ապա յուսահատական կռիւ մղելով Թուրքերի դէմ մեռնեն: Մի անգլիացի սպայ շտապեց Կորֆու հասնել, որպէսզի Մայտլանդ (Maitland) կառավարչին հաղորդէ, որ եթէ սա Ալու առաջ չկտրէ, Սագունտի տեսարանը քրիստոնեայ Եւրոպայի առաջ կը կրկնուի: Մայտլանդը Պարգայ է ուղարկում մարդասէր, ամենքից սիրուած Ադամս զօրավարին. Նորա լուրջ ազդերով յաջողւում է պարգացոց ծայրայեղ որոշումից յետ կասեցնել և համոզել, որ Կորֆու նաւեն: Երբոր հուրը պլպլում էր և նոցա հայրերի ոսկրները այրում լափում էր, այս դժբախտները թողին իրենց հայրենիքը, որպէսզի Յոնիական կղզիների վրայ ապաստան գտնեն: Նոցա հետևից իսկոյն ալբանացիք Պարգա մտան, եկեղեցիները փոխուեցան մզկիթների. և մի երամակ չիւ դերվիշներ հաստատուեցան Ալու հովանու տակ բնութեան այս հրաշալի բուրաստանում: Քրիստոնեաների ազատութեան ցամաքային վերջին պատուարը ընկել էր. հատուցման գումարը, որ Ալին անգլիացոց պարտական էր, շուտով հաւաքեց

արտակարգ հարկ նշանակելով իւր տէրութեանց բոլոր բնակիչների, նոյն իսկ զինուորների և իւր սեփական ծառաների վրայ:

Իսկապէս Պարգան նուաճելուց յետոյ նա հասաւ իւր զօրութեան հեռակէտին: Նորա իշխանութիւնը տարածւում էր մի ծովից մինչև միւսը բովանդակ Հեմոս թերակղզու վրայ, աւելի շատ գանձեր և գունդեր ունէր քան Դիւանը, և նորա տուած պահպանագրերը (Geleitsbrief) ամեն կողմ աւելի հարկ ունէին քան նոյն իսկ սուլթանի ֆերմանները: Նորա մայրաքաղաք Եանինան փայլում էր բնակիչների հարստութեամբ և կրթութեամբ: Քաղաքն ունէր ընտիր դպրոցներ և այնտեղ էին հաւաքւում բոլոր մտացի և նրբակիրթ մարդիկ: Կրթուած շողոքորթներ բոլոր աշխարհներից գտնւում էին Ալու արքունիքում, որոնք նորա անունը և նորա արժանիքները մինչև երկինք էին բարձրացնում: «Աւազակի և մեծահոգի» իշխանիս ձօնում էին ֆրանսերէն և յունարէն գրքեր. Վեննայում ի պատիւ նորա մի ոտանաւոր տպագրուեցաւ: Արևելքն այցելող անգլիացիք Բայրոններ, Հօբհաուսներ, Հուգսներ, Դուդլաններ, Նորթ և ուրիշները չէին յապաղում Եպիրոսի «Մեծ փաշային» իւրեանց յարգանքը մատուցանելու: Նորան համեմատում էին հին դարու ամենազարմանալի մարդկանց հետ, կոչում էին Նոր Պիւռհոս. ապա նա ողորմածութեամբ ականջ էր դնում շողոքորթական խօսքերին և հաճութեամբ խօսում էր իւր հռչակաւոր նախահօրից «Բուռհոսից, որ հռովմայեցոց ջարդել էր»: Բայց Ալին իսկական բանուորների պէս հիմնովին արհամարհանքով էր նայում հասարակաց կարծիքի վրայ. գիտութիւնը և գիտնականները համարում էր նա հաճելի ճոխութիւն և իշխանութեան հարկաւոր զարդեր: Նորան առանձին ուրախութիւն էր պատճառում խիստ իրապաշտ (realist) երևալ և շեշտել իւր գերազանցութիւնը գրչակներից: Նա սիրով և հաճութեամբ գիտնականների գաղափարները ժողովրդի կրօնական հաւատի հետ միևնոյն աստիճանի վրայ էր դնում: Պուքեվիլլի հետ Խամուր լեռները ճանապարհորդելիս հասաւ Դգերովինա լիճը, որի մասին յոյները զարմանահրաշ բաներ էին պատմում, որն իբրև թէ անտակ է և այնտեղ քցած ամեն ինչ կլանում է: Ալին ծիծաղելով և մատնացոյց անելով ծովը

պատմեց, որ ինքը առաջ յաճախ նաւակով շրջել է այնտեղ։ «Կոնտուլ, ասաց նա Պուքեվիլլին, եթէ լիճը կլանում է իր մէջ քցած մի բան, շատ շատ այդ քարեր կը լինին։ Եւ այդ ծովն անտակ էլ չէ։ Ես խորութիւնը չափել եմ տուել խորաչափով, և իմացել, որ եզերքին 30—40 կանգուն է, իսկ մէջտեղում 120։ Եւ երբ Պուքեվիլլը պատմեց, թէ Եանինայի վարժարանի մի ուսուցչապետ պնդում է, թէ այս լիճը գետնի տակով սահում է անցնում, Ալին անզուսպ ծիծաղ սկսաւ։ «Այս մարդիկ, ասաց նա, չեն կարող ոչինչ բնական բան տեսնել։ Ուսուցչապետը երկար ժամանակ այստեղ ապրել է, բայց մարդիկ մի անգամ այդպէս են, այս ուսուցիչն էլ կամեցաւ աւելի սիրով հին գրաւոր պատմութիւններից բարբանջել, քան իրականութիւնը ճանաչել։ Այս մարդն ահա, շարունակեց Ալին, ցոյց տալով իր թիկնապահներից մէկի վրայ, այն մարդկանցից է, որոնք չեղած բաներ են կարդում։ Մի մտածեցէք, նա պնդում է, որ ժանտախտը առաջանում է բազմաթիւ փոքրիկ կենդանիներից, որ նկատւում են սուր խոշորացոյցի տակ»։

Որպէսզի իր շրջապատողների սահմանափակ լինելը աւելի ևս ծաղրէ, փաշան հրամայեց գինի բերել, և շատ դժկամակ ձևացաւ, երբ իր թիկնապահը Մահմէդի օրէնքը յիշեցրեց։ «Լռիր, կոչեց սպառնագին, իմ երկրում ես եմ մարգարէ, և եթէ ես կամենայի, դու իսկոյն ինձ մարգարէ կը խոստովանէիր։ Եանինայում պալատի բակում հենց այն ժամանակ վեց գլուխ էր դրուած, որ պիտի Կ. Պոլիս ուղարկուէին, և թիկնապահը չտապեց հնազանդել, որպէսզի այդ թիւն ակամայից չշատացնէ։ Փաշայի այս բնորոշ ստամբակութիւնը հաւատոյ և աւանդութեան դէմ առաջնորդում է մեզ նորա էութեան զարմանալի կողմը հասկանալու, առանց որի Ալին կը մնար մի հոգեբանական հանելուկ։ Պէտք է թուրքերի կրօնական ազատ հիմունքները միշտ աչքի առաջ ունենալ և յիշել, որ Ալու որդի Մուխտարը բացարձակ անցել էր շիաների վարդապետութեան կողմը և կասկածում էին, թէ փաշան էլ ծածուկ նոյն համոզմունքներին է հետևում։

Ոչ ապաքէն շիաների պետական կազմի աւելի ազատ ըմբռնումը բոլորովին համաձայն էր Ալու գաղափարներին, հենց որ խնդիրը գալիս էր թուրք պետութեան կարգերը

ցնցնելու։ Երբ սիւննիների ուղղափառ վարդապետութիւնը պաշտպանում էր բարձրագոյն իշխանութեան անհրաժեշտութիւնը և Աստուծուց հաստատուած լինելը, այն ժամանակ շիաների աւելի ազատ հայեացքները ամուր յենակէտ էին գտնում մի ըմբոստ փառամոլի ձգտմանց։ Բայց շիաների գաղափարների այս ազդեցութիւնը պարզում է նաև, թէ ինչու Ալին, որ մի կողմից այպանում էր բազմութեան հաւատն ու սովորոյթը և ծաղրում ուղղափառների երկիւղածութիւնը, իսկ միւս կողմից նոցա առաջ խոնարհում էր։ Դերվիշների ոտքի հողն էր ուզում դառնալ։ Այս դոռոզ իշխանը անում էր ամեն մի ծառայութիւն, որ այս կեղտոտ արարածները նորանից պահանջում էին, նա նոցա, երբ ուզէին, ծխամորճ և սուրճ էր մատուցանում, համբերութեամբ տանում էր, երբ սոքա փողոցում նորա ձիու սանձից կախ էին ընկնում, վիրաւորական խօսքերով և անիծելով քարոզում և հալածում էին, հայհոյում էին նորան անուանելով «անաստուած» և «անհաւատ խոզ», այո մինչև իսկ քարեր և հողի կոշտեր էին շպրտում նորա վրայ։ Այս կարծես թէ մի հատուցումն լինէր այն ճնշման համար, որ փաշան ուրիշների վրայ գործ էր դնում, շնորհիւ այն իշխանութեան, որ այս անարգ աղանդը նորա վրայ ձեռք էր բերել։ Երբ նա իր ամբարտաւանութեամբ Կ. Պոլսից Եանինա ուղարկուած ուլեմաներին հարստահարում էր, պատժում էր իր հոգևորականների ամբարտաւանութեամբ։

Սնոտիապաշտութիւնը, որի համար նա ուրիշներին ծաղրում էր և պարծենում էր թէ ինքը յաղթել է սնոտիապաշտութեան, այս դռնով նորից ներս մտաւ։ Դեռ երիտասարդ հասակում իր հանդերձը վաճառել էր, որպէսզի մարոկկոցի մի աղքատ և մուրացիկ դերվիշի օգնէ. այն կոտրտուած օղակը, որ սա իբրև շնորհակալիք նորան տուել էր, կրում էր վզին ինչպէս յուռութք՝ համայիլ, որին և վերագրում էր իր կեանքի ընթացքի յաջողութիւնը։ Նա հաւատում էր իմաստունների քարին։ Նա բացէիբաց պնդում էր, որ ինքը 150 տարի պիտի ապրի և մի օր Կորֆուի տէր դառնայ, որովհետև մի պարսիկ դերվիշ այդ գուշակել էր։ Ի հարկէ այսպիսի մի հաւատ և այն վախը, որ նա ունէր փոթորկից և ժանտախտից դժուար էր միմեանց

հետ հաշտեցնել։ Բայց նա շատ հոգս չէր անում կրօնական գաղափարների ներքին բովանդակութեան համար։ Նորա ինքնուրոյն շինարարութիւնը ծագում էր այն հանգամանքից, որ մի սիւրիացի նորան խորհուրդ էր տուել միշտ շինութիւններ անել, որովհետև իբրև թէ նորա կեանքի ապահովութիւնը կախուած է շինութեանց անդադրում յօրինուածքից։ Երբ Իբրահիմ Մանսուրը նորանից հարցրեց, թէ ինչ կապ կայ մի մարդու կեանքի և մի պատի միջև, և նկատեց, թէ հարկ չկայ շէնքեր անելու, քանի որ միւս գուշակութիւնը նորա կեանքը 150 տարով երաշխաւորել է, Ալին առարկեց. «Այն երկու շէխերն ես կարելի է իրաւունք ունին, եւրոպացու կամայականութիւն կը լինէր չհաւատալ այն բաներին, ինչ որ այնպիսի մարդիկ են ասում, որոնց ծառայ դառնալու մենք արժանի չենք։ Միթէ կարելի չէ, որ ինձ համար սահմանուած լինի 150 տարի ապրել և այս բոլոր ժամանակամիջոցում շինութիւններ անել»։ Նա յայտնապէս զայրացաւ, երբ Իբրահիմը չուզեց համոզուել, որ Աստուած կարող է նորա օգտին բնութեան օրէնքներից բացառութիւն անել և հրաշք սահմանել, ինչպէս այդ եղել է ի սէր Մահմեդի և ուրիշ հռչակաւոր անձանց։ «Եթէ ես մարգարէ ես չեմ, յայտնեց նա, բայց չէ որ մի մարդ եմ, որին վիճակուած է ուրիշներից բարձր կանգնելու, և հետևաբար Աստուած կ'անէ ինձ համար ինչ որ ուրիշների համար չէր անիլ»։ Եւ երբ Իբրահիմը դիտել տուաւ, եթէ նա անպատճառ դերվիշների վարդապետութեանց է կամենում հետևել և շինութիւններ անել, թող ճոխ շէնքերի փոխարէն հիւանդանոցներ և ապաստարաններ շինել տայ աղքատ ուղևորների համար, այն ժամանակ երևան եկաւ Ալու իսկական ինքնակալական թագնուած մեծամտութիւնը։ Այսպիսի բարեգործական հաստատութիւններ կարող է իւրաքանչիւր մասնաւոր անձն հիմնել, կարծում էր նա, բայց մի այնպիսի մարդ որ ինքն է, պէտք է ապագայ սերունդներին իւր զօրութիւնը յայտնէ։ Այլև չպէտք է այնպէս երևայ, իբրև թէ ինքը կամենում է հասարակաց կարծիքը շողոքորթել, նա ուզում է երկիւղ ազդել, և ոչ թէ սիրուած լինել։

Ալու ամբարտաւանութիւնը և հնարագիտութիւնն աւելի բնորոշ կերպով յայտնուեցաւ, երբ 1819 թուականին նորան

լուր բերին, որ նորա պալատը Տեպելենիում չանթահար է եղել և մոխիր դարձել։ Նա իսկոյն այնտեղ աճապարեց և համոզուեցաւ, որ ներքնատները, որտեղ նա պահել էր իւր թանկագին իրերը և գանձերը, անվնաս էին մնացել։ Ապա նա տարածել տուաւ իւր բովանդակ պետութեան մէջ մի կոչ, թէ ինքը իւր ծննդավայրում այլևս մի տեղ չունի, ուր կարողանայ իւր գլուխը դնել։ Հրաւիրեց բոլորին, որոնք իրեն սիրում են, սէրը գործով ցոյց տալու և օգնելու. մի օր նշանակեց նոցա տուրքերն ընդունելու։ Որոշեալ ժամանակին բովանդակ Ալբանիայից մարդկանց մեծ բազմութիւն թափուեցաւ Տեպելէնի, որտեղ զարմացմամբ տեսան Եանինայի փաշային, որ իւր այրուած պալատի դարպասի մօտ մուրացկանի հագուստով ծալապատիկ և մերկ գլխով մի տապատակի վրայ նստած էր։ Նա ծխում էր մի փոքրիկ կեղտոտ ծխամորճ և ձեռքին բռնել էր ալբանական կարմիր գդակը իւր հպատակներից ողորմութիւն ստանալու համար։ Ձեռաց նորա մտերիմներն ստացան նշանաւոր գումարներ, որ այժմ բերին մատուցին նորան ինչպէս պատահական տուրքեր, որպէսզի հարուստների նախանձաւորութիւնը գրգռեն։ Եթէ մէկը պակաս նպաստ էր տալիս քան թէ Ալին սպասել էր, այն ժամանակ Ալին համեմատում էր այն անձանց տուածի հետ, որոնք իրենց «գրկել էին» իրենց անձնուիրութիւնը ապացուցանելու համար։ «Ձեր փողը յետ առէք, ասում էր նա մի տեսակ մեղմ ու մելամաղձոտ ձայնով, պահեցէք ձեզ համար. Ինչ օգուտ կայ Ալուն այսպիսի չնչին բանից, մի մարդու համար, որին Աստուծոյ բարկութիւնը հասել է։ Նորան ոչ մի տեղ չէ մնացել, իւր այս ծեր գլուխը և ճերմակ մօրուքը դնելու։ Սակայն եթէ Աստուած տալիս է և նորից առնում է, դարձեալ ետ կը տայ, և այն ժամանակ ահա ես էլ կ'իմանամ իմ թշնամիներս բարեկամներից զանազանել»։ Այսպիսի խօսքերն այնպէս ազդեցին, որ մարդիկ իրենց նպաստները կրկնապատկեցին, եռապատկեցին, և Ալին այս կատակերգութեամբ շատ աւելի նշանաւոր գումար ստացաւ, քան նորա պալատի վերաշինութեան համար պէտք էր։ Հարկապահանջութեան այս ինքնահնար ձևը ապացոյց է, թէ որքան խոր արմատ էր գցել ժողովրդի մէջ Ալու վախը և նորա անյագ

վրիժառութիւնը։ Բայց պէտք է իրօք տարակուսել, թէ արդեօք երկրի վայրենի և բնածին հանգամանքների համար մի երկաթեայ բազուկը բարիք չէր և բռնապետութիւնը մի օրհնութիւն։ Ալին անողորմ կերպով մտնում էր իւր հպատակների սեփականութեան և ընտանեկան իրաւունքների մէջ։ Նա թոյլ չէր տալիս անշարժ կալուածք վաճառել առանց 10 տոկոս իւր գրամարկղի համար պահանջելու։ Նա իրեն հրատարակեց ընդհանուր ժառանգ բոլոր արու ժառանգ չունեցողների։ Նա իւր հպատակներին ստիպում էր, որ հին հացհատիկները իւր ամբարներից առնեն և անգը նորը տան։ Գիւղացիներից պահանջում էր սուլթանին տալիք տասանորդի կրկնակին. Նա այնքան տանջում էր ազատ հողատէրերին, մինչև որ սոքա ուրախ էին լինում, եթէ իրենց հողերը չիֆլիկ ագարակ էին դառնում։ Խառնւում էր ամենամտերմական մասնաւոր յարաբերութեանց մէջ, ամենայն ամուսնութեան համար նորա հաստատութիւնն էր պէտք, շատ անգամ ստիպում էր մարդկանց ամուսնանալու, որոնք չէին ուզում։ Բարոյագիտութեան ամենաչնչին յանցանքների համար սարսափելի կերպով պատժում էր, մինչդեռ նա ինքը վարւում էր այնպէս, կարծես թէ ազատութեան հրովարտակ ունէր վայելքների համար։ Մուխտար փաշայի սիրուհի յոյն Եւփրոսինէ աղջկայ սոսկալի վիճակը, որ իւր 16 ընկերուհիների հետ Եանինայի լճում խեղդուեցաւ, դեռ ապրում է երգի և ժողովրդի յիշողութեան մէջ։ Սարսուռ էր գալիս եւրոպացի այն ճանապարհորդների վրայ, որոնք Եանինա գալով յանկարծ մի փողոցի անկիւնում տեսնում էին կախուած մարդու ձեռք կամ գլուխ։ Հարկաւոր է վերանալ և մէկ կողմ թողնել պատմական մտածութիւնը, որպէսզի տեսնենք և իմանանք, որ այս չարիքի մէջ կար բարիքի սաղմը։ «Դու չես ճանաչում ալբանացոց և յոյներին, ասաց Ալին Իբրահիմին, այն միջոցին երբ ես մի եղբօրը սոսու ծառից կախ եմ տալիս, միւս եղբայրը նոյն ծառի տակ բազմութեան մէջ գողութիւն է անում։ Եթէ մէկին այրել եմ տալիս, որդին նորա աճիւնը գողանում է ծախելու։ Նոցա համար սահմանուած է, որ ինձ ենթարկուին, և ես, միայն ես կարող եմ ահ ու դող ազդելով նոցա սանձահարել»։ Այս խօսքերի մէջ խոր իմաստ կայ։ Մինչև ԺԹ. դարու սկիզբը

Ալբանիայում իշխում էր բռունցքի իրաւունքը։ Բնակչութեան մի մասն ապրում էր միւսի հաշուին։ Կեղեքումը և ճնշումը հզօրների աշխատանքի աղբիւրն էր։ Աւազակութեամբ և տաւար գողանալով ապրում էին թոյլերը։ Թշուառութիւնն էր խաղաղ և քրիստոնեայ գիւղացոց վիճակը։ Զինուորական տղամարդկանց մեծ մասը գնում էր օտարութիւն և վերադառնում էր աւարով և ասպատակային բիրտ մտքերով։ Բայց Ալի փաշան խորտակեց միջին դարն ու աւատական տէրութիւնը և քաղաքակրթութեան համար երագոյն միահեծանութեամբ ուղի հարթեց։ Նա վերջ տուաւ զանազան ցեղապետների և գաւառների անկախութեան։ Զնջեց ժառանգական իշխող տոհմերը։ «Ոչ մի ռամկավար, պատմում է Պուքեվիլը, չէր կարող աւելի սաստիկ ճառել աւատական ազնուականների և նոցա արտօնութեանց դէմ քան Ալին։ Մարդ ակամայ յիշում է այն կռիւը, որ Եւրոպայում միապետական տարրը միջին դարի վերջում յաջողութեամբ մղեց ազնուականութեան դէմ։ Ալին կռիւ էր մղում աւազակ ասպետների և ելուզակների դէմ նոցա սեփական միջոցներով։ Նորա հաստատութիւնը վերջ տուաւ նոցա հրեշաւորութեանց. ճանապարհները նորա ժամանակ այնչափ ապահով էին դարձել, որ կարելի էր աչքը խուփ ամբողջ երկիրը շրջել, ինչպէս որ լակեաց ալբանացին մնջկատակութեամբ հասկացնում էր դգակն աչքերին քաշելով։ Ռայաները նորա իշխանութեան տակ գտնում էին արդարադատութիւն առանց կողմնապահութեան. եթէ ինկատի չառնենք այն բացառութիւնը, որ կար յօգուտ այս ինքնակալի, հաւասարութիւն էր տիրում օրէնքի առաջ։ Ալին այսպիսով մի ժամանակ կատարեալ յեղաշրջում մտցրեց երկրի տնտեսական և առևտրական քաղաքական յարաբերութեանց մէջ։ Մինչդեռ առաջ ցամաքային առևտուրն էր գերակշիռ, ալբանացի վաճառականները ապրանքներ էին ստանում Տուրնովոյի և Ամբելակիոյ գործարաններից, Սերէսի, Սալոնիկի, Կ. Պոլսի շուկաներից և ծովային առևտուրը ֆրանսացոց բաժին էր ընկել, Ալու միջոցով ուղղուեցաւ դէպի ծովափը և Յոնիական կղզիները. 1815 թուականի խաղաղութիւնից յետոյ սկսուեցաւ հաղորդակցութիւն Անգլիոյ և Աւստրիոյ հետ. Ֆրանսիան շուկայից ետ մղուեցաւ։

Մի այսպիսի յեղաշրջումն ի հարկէ խաղաղ համոզմունքի ճանապարհով չէր կարելի իրագործել: Միայն բռնի ուժով կարող էր Ալբանացոց պէս մի ժողովուրդ քաղաքակրթութեան բարիքներն ընդունել: Ալբանիոյ ինչպէս և Յունաստանի համար լուսաւորեալ բռնապետութիւնը (Despotismus) պէտք է միջին դարուց դէպի նոր դարն մի անցում կազմէր: Այս նախապատրաստող քաղաքակրթական գործունէութեամբ նսեմանում է Ալու քաղաքական և զինուորական նշանակութիւնը: Ալու հետ մեռաւ Հեմոս Թերակղզու բովանդակ հարաւային մասում ալբանական տէրութիւն հիմնելու միտքը, որ ըստ հմուտ ճանապարհորդների, ինչպէս Դուգլասը, մեծ վտանգ էր սպառնում յունաց ազատական ձգտմանց, մինչդեռ նորա տնտեսական — քաղաքական և կուլտուրական — պատմական ստեղծագործութիւնները, որ ինքը բանի տեղ չէր դնում և մասամբ էլ չկամեցաւ, նորա ճանապարհները, ջրանցքները, վարժարանները և գպրոցները նորանից աւելի երկար ապրեցին: Որպէսզի ալբանացոց մի սեփական պետութիւն, մի քաղաքական ստեղծագործութիւն թողնէր իրենից յետոյ, Ալին պիտի տոգորուած լինէր մի հոյակապ ազգային գաղափարով, որին և հետամուտ լինէր: Շիայի միտքն այդ բանին չէր հասնիլ: Ալբանացոց ցեղը այն հիմքը չէր, որի վրայ կարելի լինէր Թուրք պետութեան մի նոր կազմուածք կառուցանել: Ինքն Ալին այն մարդը չէր, որ մի մեծ ազգային գաղափարի ներկայացուցիչ հանդիսանար: Նա սիստեմատիկ գլուխ չէր: Նորա բոլոր գործողութիւնները վայրկենական ներշնչման և անձնական կամայականութեան բնաւորութիւն էին կրում: Որպէսզի մի սեփական ալբանական այնպիսի պետութիւն հիմնէր, որ կարողանար բոլոր ապագայի փոթորիկներին դիմադրել Մեհմէդ-Ալու պետութեան պէս, պէտք է Ալի փաշան իւր քմահաճոյքները և իւր խանդածութիւնը նոյնպէս զսպէր. նա պէտք է իւր վայրենի խառնուածքը, որտեղ կարևոր էր, սանձահարէր և բռնութեան միջոցները վայրագութեան հետ այնպէս վարէր, ինչպէս Եգիպտոսի տիրապետողը: Բայց այն կեղծիքը, որով Ալին ամենքի մօտ ամեն ինչ էր, ֆրանսացոց մօտ ժակոբէն, Թուրքերի մօտ ուղղափառ, յոյների մօտ քրիստոնեաների բարեկամ, այն ախտագործութիւնը, որով նա

հենց իւր մերձաւորներին և բարեկամներին ամենից առաջ կործանում էր, այն ագահութիւնը, որ արտակարգ նեղութեանց միջոցին ևս երևան էր գալիս, վերջապէս մարդատեցութեան և կասկածոտութեան այն սիստեմը, որով նա հրճւում էր, այս բոլորն ահա տեղ չէին տալիս մի լուրջ և տևական ազգային գաղափարի և ազդեց նորա դէմ և տարեցտարի չեզոքացնում էր նորան: Նա՝ ինչպէս իւր բժիշկ Մետաքսասն ասում էր, ամեն մէկի վզին հիւսել էր մի կարճ կամ երկար պարան: Բայց այս պատճառով բոլորն էլ, որոնց հետ նա շփւում էր, նոյնպէս կասկածով էին վերաբերւում նորան, և նա չէր կարող մինչև իսկ իւր որդոց և մերձաւոր ազգականների հաւատարմութեանը վստահել: Եթէ նա հասկանար անձնազոհ բարեկամ և պաշտպան լինել նոցա, որոնք այդ որոնում էին, այն ժամանակ նա հաւատարիմների մի անհաղթ խումբ կը ժողովէր իւր շուրջը և մարդկանց պատուարը նորան աւելի լաւ պաշտպանած կը լինէր սուլթանի դէմ քանց իւր ժայռամբոցի ամուր պարիսպները Եանինայի մօտ և այն խոր լիճը, որ ողողում է այն պատերը: Նա ինքը նախազգացումն ունէր, թէ մի աղէտ է իրեն սպառնում, ինքն իրեն չէր պատրում իւր գործերի տևականութեամբ և իւր դրութեան հաստատութեամբ: Նա իւր որդոց ասում էր, «Վեզիրը մի մարդ է, որ մուշտակը հագին վառօդի տակառի վրայ է նստած և մի կայծ կարող է նորան յօդս ցնդել»: Ճիշտ այն ժամանակ, երբ նա իւր զօրութեան հեռակէտին էր հասել, պիտի երևար, որ այդ զօրութեան տակը փորուած էր և որ մի կեղծ և ինքնամոլ բռնաւոր ի վերջոյ բոլորից երեսի վրայ կը թողնուի և կը դաւաճանուի:

Այդ աղէտն իսկ տարօրինակ կերպով կախուած էր մեր յիշատակած կրօնական հակադրութիւններից: Իսմայիլ-Պաշո-բէյը, թէև Ալու ազգական և նորա կողմից իւր երկրորդ որդի՝ Մոռէայի փոխարքայ Վելիի մօտ սելիհդար՝ զինակիր էր նշանակուած, մի խիստ հին Թուրք էր և մոլեռանդ սիւննի: Արդ շնորհիւ Վելիի վատ կառավարութեան Մոռէայում և Մոռէացոց 1812 թուի բողոքների բանն այնտեղ հասաւ, որ Դիւանը մէջ մտաւ և Վելուն հրամայեց, որ Տրիկկալա քաշուի: Սակայն Ալին առաջուց Մոռէացոց բողոքների հոտն առել էր, և

իւր որդուն հաղորդել տուաւ, որ սուլթանին չհնազանդի, այլ զանազան պատրուակներով Մոռէայից հեռանալը յետաձգէ։ Ինքը կ'ազդէ, որ ֆերմանը յետս կոչուի և 100,000 ալբանացի ունի կազմ ու պատրաստ, որոնց կարող է նորան օգնութեան ուղարկել։ Նման ձևով հաղորդեց և Պախօ-բէյին աւելացնելով՝ թէ ամենայն զիջողութիւն կը համարէ յանցանք։ Սակայն Պախօ-բէյը հաստատ մնաց ուղղափառ հաւատին, որով իշխանութիւնը Աստուծոյ է համարւում և իշխանին իրաւունք ունի իւր հպատակներից անպայման հնազանդութիւն պահանջելու։ Սա Վէլիին բացադրում է, որ նորա հայրը կամենում ապստամբել և իւրն մարգարէի փոխանորդ հրատարակել։ Թէ Ալու կրքոտ բնկումը ծագում է ծերութիւնից, որ երբեմն երբեմն նորա մտածողութեան ույժը թուլացնում է։ Թէ չպէտք է մի այդպիսի մեծ յիմարութիւն անէ, որ սուլթանի բարկութիւնը չշարժէ, «և տեղ չկայ, ուր թագնուինք»։ Թէ սուլթանը Վէլիից Մոռէայի վեզիրութիւնն առել է բարի գիտաւորութեամբ և տեղը նորան մի ուրիշ, աւելի հարուստ վեզիրութիւն հայրենիքի մոտերքում ապահովել է։ Եւ եթէ նա գոհ չէ այդ բանով, ինքը իւր Դիւանում ունեցած ազդեցութեամբ մի որև է նահանգ նորա համար ապահովապէս կ'որոշէ։

Սուննիական օրէնքները Վէլիի մոտ գերակշիռ հանդիսացան։ Նա հնազանդեց սուլթանին և ինքը ճանապարհ ընկաւ դէպի Լարիսա, որովհետև Մոռէայի նոր փաշան արդէն Նաւպլիայումն էր։ Սակայն գործի այս ընթացքը չէր կարող երկար ժամանակ Ալուց թագուն մնալ, նա տեղեկացաւ, որ իւր հերձուածողական փառամոլութիւնը Պախօ-բէյի ուղղափառութեամբ խայտառակուել է։ Նորա կատաղութեան Պախօ-բէյի դէմ չափ չկար։ Նա պատուիրեց, որ Լարիսայում իւր հարազատ որդու պալատում նորա վրայ յարձակուին. Պախօն միայն իւր ոգու արիութեամբ մահից պրծաւ. այն վայրկենին, երբ մարդասպանները նորա վրայ հրացան էին պարպում, թագնուեցաւ իւր ձիու փորի տակ։ Այլև Կարիստոսում Օմէր-բէյի մոտ և Թրակիայում Դերմալիս-Մոհամմէդ-բէյի մոտ Պախօն իւր թշնամու որոգայթներից հանգիստ չգտաւ։ Վերջապէս նա յաջողեց Կ. Պոլսում պաշտպանութեան մի վայր

գտնել. որտեղ դարձաւ բերան այն բոլորի, որոնք գանգատներ ունէին Ալու կամ նորա որդոց դէմ։ Նա կարողացաւ իրան ցոյց տալ ինչպէս բռնաւորութեան զոհ և այնպէս սուլթանի աչքը մտնել, որ անուանուեցաւ կապուճի-փաշայ՝ Դիւանի ատենակալևս։

Ալին հոգսերի մէջ ընկաւ, որովհետև իմացաւ իւր ոխերիմ թշնամու բարձրանալը։ Բայց նա դեռ կարծում էր, որ կարող է սուլթանին վախեցնել, և վճռեց իւր այն յանդուգն քայլերից մէկն անել, որոնց հետևանքը մինչև այժմ միշտ իւր սպասածին համապատասխան էր եղել։ Նա երկու ալբանացի աւազակ Կ. Պոլիս ուղարկեց պատուիրելով, որ Պախօ-բէյին սպանեն։ Սոքա հարցնելով իմացան Պախօ-բէյի բնակարանի տեղը և այն կողմն արշաւեցին ու դարան մտան։ Տեսան, որ նա կանգնած է վերի սենեակում, որի մի մեծ պատուհանը բացւում էր փողոցի կողմը։ Նոքա ձիերը քշեցին պատուհանին բոլորովին մոտիկ և ներսը հրացան արձակեցին, բայց Պախօն ցած կռուեցաւ պատի մոտ և գնդակները նորա գլխի վրայով անցան։ Ելուզակները հաղձեղով փախան Մակեդոնիա, բայց ֆերմաններ ու ընդադեսպաններ հասան ետևներից. մինչդեռ մէկը յաջողեց Եանինա փախչել, միւսն Ադրիանուպոլսի մոտ բռնուեցաւ և գերարանի վրայ խոստովանեցաւ, որ Ալուց վարձուած է եղել։ Արդ Ալու բոլոր թշնամիները միացան և բացադրեցին այս սպանութեան փորձն իբրև մի ամպարշտական դաւ սուլթանի դէմ։ Ի՛նչ խայտառակութիւններ դեռ ևս գործելու ընդունակ չի լինիլ Ալին, երբ յանդգնեց հալածել մի փախստական, որ փախել մտել էր սուլթանի ողորմածութեան ստուերի տակ։ Իրօք որոշուեցաւ Ալուն կործանել և Եանինայի փաշայութիւնը Պախօ բէյին յանձնել։ Շատ շուտ մի արտաքին առիթ նպաստեց այս որոշումն իրագործելուն։

Այստեղ միանում են այն թելերը, որոնք կապում են Ալու ապստամբութիւնը յունաց յեղափոխութեան հետ։ Հեմոս թերակղզում օդը խեղդիչ էր, որով կարելի էր կռահել, թէ մի մեծ խռովութիւն պիտի ծագէ և քաղաքական բոլոր խմորուած նիւթերը պիտի լուծուէին ու բռնկուէին։ Ճնշուած ռայայ ցեղերը, սերբերը, մանաւանդ յոյները յուզւում էին։ Ալին գի-

տէր, որ յոյն կապիտանները և մեծամեծները իրար և արտասահմանի հետ գաղտնի յարաբերութիւններ ունին։ Նա որոշեց հաւատարիմ մուսուլման ձևանալ. և ինչքան էլ որ այս քայլը նորա առաջուայ կրօնական հայեացքներին համապատասխան չէր, գործը կրօնական տեսակէտով Կ. Պոլիս յայտնեց և ծանուց այն վտանգը, որ իսլամականութեան սպառնում էր այս «խենթ յոյներից»։

Երբ Ալու զեկուցումը հասաւ, նախարարները խորհրդի կոչուեցան, որին ներկայ էին մեծ վեզիրը և Դիւանի բարձրագոյն պաշտօնեաները։ Ալու ոսոխները միաձայն պնդում էին, որ այդ Ալու փառամոլական խարդաւանքներն են, որոնք ուղղուած են այժմ Դիւանի հաւատարիմ հպատակների դէմ։ Պէտք է նորան արգելել յոյների դէմ թշնամական քայլեր անելու, որ նոցա անօգուտ սեղը միայն պիտի գրգռեն։ Այս նկատումները յաղթող հանդիսացան, յայտնեցին որ Ալու ծանուցումը սուտութիւն և խաբէութիւն է, և պատրաստուեցան Լրջութեամբ նորան դիմադրելու։ Բռնաւորը վաղուց արդէն մտածել էր, թէ կարելի է, որ ապստամբութիւն ծագէ։ Վտանգի վայրկեանին հանդէս եկան նորա անխիղճ և վայրագ ոգու օժանդակ միջոցները։ Նա դիմեց կրօնական հակադրութեանց այն կրքերին, որոնց խռնավայրը ի վաղուց կարծես արևելքն է։ Նա ամենալաւ խօսքեր էր շռայլում չիտներին և մահմեդական ազատախոհներին, և խոստանում էր յոյներին ոսկէ լեռներ և անկախութիւն։ Նա բանակցում էր սերբերի և չեռնագորցիների հետ, բոլոր դժգոհների հետ կապեր էր հաստատում և դաւադրութիւն սարքում։ Երբ Դուռը իւր կողմից ջանաց յոյն ցեղապետներին շահել, Ալին բռնեց և սպանել տուաւ սուլթանի պատուիրակներին։ Նա ամենաքաղցր շողոքորթական խօսքերով դիմեց կլեփտներին, որոնց մինչև ցարդ հալածում էր։ Յոյների առաջ նա խմում էր ամենասուրբ Աստուածամօր կենացը և նոցա խոստանում էր, որ քրիստոնեայ կը դառնայ։ Շիա դերվիշների առաջ ոգևորւում էր Ալիով և Ֆատմայի սերունդներով։ Նա 1820 թուականի մայիսին հրաւիրեց Ալբանիոյ թուրք և քրիստոնեայ ցեղապետներին Եանինա մի տեսակ պետական խորհրդի, նոցա բացատրեց, որ դիւրին կը լինէր նոցա օգնութեամբ սուլթանի

զօրքերը ջարդել և Կ. Պոլսի գահերի առաջ խաղաղութեան պայմաններ թելադրել։ Իսկ եթէ թողնեն, որ ինքն ընկնի, այն ժամանակ շուտով կարգը կը հասնէր նուաղ զօրեղներին, որ Ալբանիան իւր անկախութիւնն ընդ միշտ կը կորցնէ, որ նոցա առաջ պարզ գրուած է, կամ պատուով կռուել Ալու դրօշակի տակ կամ նորանից ետոյ խայտառակութեամբ կործանուել։ Ալին ճանաչում էր իւր ալբանացիներին, և այսպիսով պակաս չէին այն գրգիչները, որոնցով կարելի էր այն վայրենի և մոլեկան բնաւորութեանց վերայ ազդու կերպով ներգործել. ուստի խոստացաւ իւր գանձերը նոցա հետ բաժանել, որովհետև հայրենիքը և ազատութիւնը, ինչպէս ասում էր, աւելի բարձր են քանց երկրի բոլոր ոսկին։ Երբ բռնաւորը մինչև իսկ ի հաստատութիւն իւր իմաստուն սատացուածների վենետան դրամներով լի փոքրիկ մի տակառ ժողովի մէջտեղ գլորել և բաց անել տուաւ, ամբողջ դահլիճը թնդաց հլութեան հաւաստիներով և ցնծութեան ձայներով. «Կեցցէ Ալի փաշան, Ալբանիոյ ազատութեան վերանորոգիչը»։ Իհարկէ չէր էլ կարելի սպասել, որ այն բնութեան որդոց հասկացողութեան շրջանը աւելի հեռու անցնէր, քան մօտաւոր շօշափելի շահերը։ Բռնաւորների ճակատագիրն է, որ նոքա ազատութիւնը շատ ուշ են սկսում քարոզել, և Ալին որ այս ժողովրդին կամայական կառավարութեան օրինակը տուել էր, չպիտի գանգատուէր, որ ալբանացիք մինչև ցարդ իրենց անծանօթ վարդապետութիւնից այնչափ հասկացան, որչափ ամեն մէկին բարի էր թուում։ Այս ճշմարտութիւնը ակնյայտնի երևեցաւ, երբ Ալին իւր ոտը դրած ճանապարհը շարունակեց, ձևացաւ դարու գաղափարներով տոգորուած և յայտարարեց, թէ եպիրացիներին քարտէզ այսինքն ազատութեան հրովարտակ է շնորհելու։

«Մի քարտէ՞զ, հարցնում էին իրարից զարմացած թուրքերը, մի՞թէ մենք մեր ղուրանը չունինք։ Այս ինչ է նշանակում։ Այս թշուառականը խօմ չէ՞ ուզում մարգարէի սուրբ օրէնքները եղծանել։ Ալբանացոց զինուորները խօսակցում էին, թէ արդեօք այդ քարտէզով իրենց ռոճիկը կ՚աւելանայ թէ ոչ։ Միայն յոյներն ուրախանում էին և ծիծաղելով գոչեցին. «Մեզ տուէք քարտէզը, մեզ պէտք է»։ Ալին իրօք Կոլովո անունով մի գործակալ ուղարկեց Կորֆու և պատուիրեց նորան, որ

այնտեղ մի կազմակերպուած վարչական սահմանադրութեան տարրերը ժողովէ: Կոլովյի համար դժուար չեղաւ սովորական սահմանադրական կաղապարով մի ստուերագիծ կազմել, որովհետև Կորփուցիք իրենց իշխողներից կարճ ժամանակուան ընթացքում զանազան քարտէզներ ստանալու բախտ էին ունեցել: Սակայն վերադարձին պատուիրակը Թուրքերի ձեռն ընկաւ և գրութիւնն առհասարակ այնպէս չուտ փոխուեցաւ, որ արդէն այլևս ոչինչ չէր կարելի վճռել սահմանադրական բանաձևերով, այլ մի միայն զէնքով: Բովանդակ Հեմոս թերակղզին փոթորկալից շարժման էր ենթարկուել և ալիքները պիտի բախուէին նորա վրայ, ով որ յառաջացրել էր: 1820 թուականի յուլիսին հրատարակուեցաւ սպառնած հատտի-շերիֆը, որով Ալին յայտարարւում էր սուլթանի դաւաճան և ֆերմանլի, պետութեան մահապարտ թշնամի, եթէ նա 40 օրուան ընթացքում Կ. Պոլիս չգար և «բախտի դրան ոսկեզօծ շեմքի» առաջ չարդարանար: Ալին գիտէր, թէ ինչ է նշանակում հատտի-շերիֆի չարագուշակ նախադասութիւնը, նորա մտքումն էլ չէր անցնում կապուած ձեռքերով թշնամու ձեռն ընկնել:

Երբոր նա այս լուրն իմացաւ, գոչեց. «Հա՛, գերի ընկած ստրկուհու որդին իմ կեանքս է ուզում, բայց յոյս ունիմ Աստուծոյ, որ իմ և նորա միջև սահմանը Ադրիանոպոլիսը կը լինի»: Մեծ պետութեանց քաղաքականութիւնը մինչև ցարդ նորա համար այնպէս նպաստաւոր էր երևացել, որ կարող էր միջամտութեան սպասել իւր օգտին: Նա գիտէր իւր հին բարեկամներին՝ անգլիացոց, որոնք դեռ քիչ առաջ կամակար յօժարութեամբ Պարգան մատնել էին նորա ձեռքը. վստահ հաւատում էր, որ կարող է նոցա օգնութեան վրայ յոյս ունենալ: Սակայն բրիտանացիք անձնասիրութեան և ուխտադրժութեան արուեստում Ալուց վարպետ երևացին, նոքա նորա օգնութեան խնդիրքին սակաւ մխիթարական պատասխան տուին, թէ սիրով կը պահեն նորա գանձերը, սակայն և իրենց սկզբունքն է Թուրքիոյ ներքին գործերին չխառնուել: Իւր այս նեղութեան ժամանակ հին բանաւորը դիմեց մինչև ցարդ դառնութեամբ ատած Ռուսաստանին, նա իւր մօտ կանչել տուաւ Պատրասի ռուսաց կոնսուլի բարեկամ Պապարիգոպուլոսին և նորան պատուէրներ տուաւ ռուսաց նախարար

Կապոդիստրիասին և Նեսելրոդէին յայտնելու. նա խոստանում և պատրաստւում էր 40,000 հոգուց կազմուած օգնական գնդեր հանել, եթէ Ռուսաստանը Դիւանին պատերազմ հրատարակէ: Մի զարմանահրաշ պատահմունքով նոյն՝ յոյնը իւր հայրենակիցների կողմից պէտք է Պետերբուրգ ուղարկուէր, որպէսզի տեղեկանար, թէ յոյներն ինչ օգնութիւն կարող են գտնել ռուսաց կողմից, եթէ ապստամբեն: Այս պատճառով նա սկզբում չէր կամենում Ալու առաջարկներն ընդունել, բայց վերջապէս Պատրասում Գերմանոս արքեպիսկոպոսի խօսքերից համոզուած՝ ընդունեց այդ առաքելութիւնը և գնաց միաժամանակ իբրև Եպիրոսի բռնաւորի և յունաց ազատութեան պատուիրակ: Ամենախորհրդաւոր և ամենանեղ կերպով կապուեցան Ալու և յոյն ազգի յարաբերութիւնները: Ալին առաջներում, երբ Պլուտարքոսի Զուգակշիռքը նորա առջև կարդում էին, իւր քերականագէտին ասել էր. «Այսպիսի նախնիքներին յիշելով, զաւակներս, յիրաւի ձեզ շատ թշուառ պիտի զգաք: Այրեցէք ձեր գրքերը»: Ինչպէս զարմանալի կերպով դերերը փոխուել էին: Ալին պէտք է իւր կողքին բարձրացող նոր ոյժերին ծառայէր և ազգային նպատակների մի միջոց դառնար, նորագոյն Պիւռոսի բռնաւորութիւնը պէտք է ճշմարտապէս նախախնամութեան անօրինութեամբ յունաց ազատութեան մայր դառնար:

Այն բանակը, որ Ալին Դիւանի դէմ հանում էր, մեծ մասամբ կազմուած էր յոյներից, նոցա շարքերում կռւում էին ազատութեան պատերազմի ապագայ դիւցազնները, Դիակոսները, Ոդիւսեանները, Կարաիսկակիսները և Մարկո Բոցարիսները: Իսկ Ալու համար ի հարկէ այս կապը ճիշտ այնպէս օրհասական եղաւ, ինչպէս յոյների համար օգտակար: Ալին սխալ արաւ, որ անբաւական և անվստահելի ոյժերով ձեռնարկեց մի պատերազմական ծրագիր, որ երբեմն մի քանի խիզախ անգլիացի սպաներ՝ նորա միջոցների մասին չափազանց գաղափար կազմած լինելով խորհուրդ էին տուել: Նա Օմէր Վրիոնիսին 15,000 մարդով Մեցովոյի կրճով Լարիսա ուղարկեց, մի այլ ընտիր գունդ Սելիխտարիսի հրամանատարութեամբ՝ Մակեդոնիա, որպէսզի նմանապէս Լարիսայի շուրջը գործէ: Բանակի մեծագոյն մասը նա Վասիարիսի

առաջնորդութեամբ ուղարկեց դէպի Բերատ, որպէսզի այնտեղ զօրաժողովը լրացնելով աջ թեքուին և ապա դէպի ընդհանուր ժամադիր տեղը՝ Լարիսա արշաւեն, որտեղից ապստամբութեան բոլոր կռուող ոյժերը դէպի Ադրիանապոլիս պիտի ուղղուէին։

Սակայն այժմ երևեցաւ, թէ ինչպէս չուտ մի բնաւոր նեղութեան ժամին երեսի վրայ է մնում։ Առաջնորդները, որոնց եռանդի վրայ Ալին ծրագիրն իրագործելիս պիտի յենուէր, նորա դէմ գաղտնի դաւ էին սարքել։ Նոքա Թուրքերի հետ բանակցութիւն սկսան. Օմէր Վրիոնիսը հրաւիրեց Պախօ-բէյին և Դամալիսին Թեսալիա արշաւելու, և որովհետև նոքա չէին վստահանում, ինքը Թեսալիայից ետ քաշուեցաւ և Ալուն հաղորդեց, որ Թուրք զօրեղ և բազմաթիւ զօրք է յառաջանում և ինքը Թուրք անթիւ հեծելազօրքին տեղի տալով ետ է քաշւում։ Սելիխտարիսը յայտնապէս ձեռնթափ եղաւ բաժանուեցաւ բնաւորից և մի կոչ հրատարակեց նորա դէմ ապստամբելու։ Վասիարիսը անշարժ մնաց Բերատում, նա բանակցում էր Սկոդրայի վեզիրի հետ և համոզում էր Ալու որդի Մուխտարին, որ հօրը թողնէ հեռանայ և վեզիրին անձնատուր լինի։ Միւս որդին Վելին էլ տատանուեցաւ. երբ որ Թուրք զօրքի ձախ թևը Պեհլեւանի առաջնորդութեամբ Թերմոպիլէի կրճով արևելեան Հելլադա մտաւ, Ոդիսեսին ետ մղեց, Ետոլո-Ակարնանիան նուաճեց և միաժամանակ Թուրքաց մի նաւատորմ Պրեւեսայի առաջ երևեցաւ, Վելին անձնատուր եղաւ և յանձնեց իր կանանոցը, իր գանձերը, պաշարը և քաղաքը։ Ֆերմանլիի երկու որդիքը զգուշութեամբ Անատոլիա տարուեցան։ «Դժբախտ Ալի, դու միայն հաւեր ես մեծացրել» ասելով իրաւամբ ողբում էր վեզիրը։ Կասկածոտութեամբ և մարդկանց արհամարհելով մեծացած Ալին ոչ մի տեղում այլևս ապահով ապաւէն չէր գտնում։ Նորա մինչև հիմակուան կրօնական-քաղաքական ծրագրերի ներկայացուցիչ դերվիշները դարձան գործիք իր թշնամիների ձեռքին։ Օմէրի առաջնորդութեամբ դաւադիրները Հասան դերվիշի ձեռքով նորան բացադրեցին, որ նա իր զինուորներին անձամբ խրախուսէ, և այսպէս նորան հրապուրեցին Օմէրի բանակը։ Այնտեղ նոքա վարձ բաժանելիս կռիւներ սարքեցին.

նոցա դիտաւորութիւնն էր խռովութեան միջոցին բնաւորին բռնել։ Սակայն Ալին իւր ձիու արագընթացութեան շնորհիւ փախաւ պրծաւ. Նա յաջողեց մի խումբ հաւատարիմ թիկնապահներով Եանինայի ամրոցը հասնել, որտեղ իսկոյն փակուեցաւ և պատրաստուեցաւ յամառութեամբ պաշտպանուելու։ Նա ունէր առատ ռազմամթերք և կենսական պիտոյքներ, և պահակը տակաւին 6,000 հոգու էր հասնում։ Մի զրահաւորուած նաւատորմ լճի վերայ հիւսիսային լեռների հետ կապ էր պահում։ Թէպէտև Ալին դաւադրութեամբ և դաւաճանութեամբ թուլացաւ, բայց տակաւին երկիւղալի թշնամի էր։ Թուրք զօրքը շատ դանդաղ էր մօտենում և չունէր ծանր թնդանօթաձիգ ոյժ։ Համբարքը կանգ առաւ։ Պախօ-բէյը 1820 թուականի հոկտեմբերի սկզբին սկսաւ ռմբակոծել Ալու ամրոցը, բայց անհետևանք անցաւ։ Չէր կարելի մի արագ ելքի էլ սպասել, որովհետև Թուրք դրօշակի տակ հաւաքուած ալբանացի հրոսակները իրենց շահն էին համարում պատերազմի երկարելը։ Այն ժամանակ Կ. Պոլսում յիշեցին այն քաջարի սուլեցոց, որոնք ձիգ տարիներ Եանինայի վեզիրին դիմադրել էին։ Գուցէ թէ նոքա Մահմուդի կառավարական քաղաքականութեան կամակար գործիք դառնային։

Սուլթանը Պախօ-բէյին իրաւունք տուաւ Ալու այս հին թշնամիների հետ բանակցելու և Սուլին նոցա յետ տալու։ Այս մի վճռական նշանակութիւն ունեցող վայրկեան է։ Սուլեցիք տասնութ տարի Յոնիական կղզիներում պանդխտութեան հացը կերան. նոցա սիրտը տրոփում էր լի անձկութեամբ դէպի հայրենի լեռները, որ նոքա ամեն օր հեռաւոր կապուտում նշմարում էին։ Նոքա ուրախութեամբ ուրեմն ընդունեցին Թուրքերի առաջարկները, անցան Կորֆուի նեղուցը և երևցան Եանինան պաշարող բանակում։ Սակայն շուտով առիթ ունեցան խորհելու, թէ արդեօք խելացի է, որ չափազանց աննենգ լինին դէպի սուլթանը։ Թուրքերի ընդհանուր հրամանատարն ամենևին նշան անգամ ցոյց չէր տալիս նոցա իւրեանց հին բարձր Կիաֆա ամրոցը տանելու, բայց միշտ պատրաստ էր նոցա Ալու գնդերի հանդէպ ամենավտանգաւոր տեղերն ուղարկելու. կարճ ասած սուլեցիք պէտք է կատարէին Թուրքերի դաշնակցի պարտիքը և գուցէ երբ Ալին

պարտուէր, իրենց խոստացուած իրաւունքներից էլ խաբէութեամբ զրկուէին։ Այլև նոցա վիրաւորում էր Պախօ-բէյի ամբարտաւան վարմունքը, որովհետև սա մինչև հիմակուան յաջողութիւնները վերագրում էր իւր սեփական իմաստութեան և քաջութեան և նոր օգնական գնդերի վրայ կէս արհամարհանքով և կէս կասկածանքով էր նայում։ Արդ երբ Ալին իւր հակառակորդի այս սխալից օգտուեցաւ, սուլեցոց աղնիւ խօսք տուաւ, որ «նա դառնան իրենց հօր և բարերարի մօտ», ոչ ապաքէն լաւ անմնում են այդ քամահանքից, որ թուրքերի հետ դաշինքն իրենց շահերի դէմ է։ Այն ժամանակ սոքա սկսան առաջւոր Ռապսիստա գիրքից, որին տիրել էին, խոր գաղտնապահութեամբ պաշարեալների հետ բանակցել։ Մարկօ Բոտսարիսը գիշերը նաւակով անցաւ Լիթարիտոս ծովադեակը և Ալուց ընդունուեցաւ ամենագեղեցիկ խօսքերով, այս քնքուշ փաղաքշանքով։ «Դու այժմ իմ թանկագին որդին ես, ասաց նորան ծերունի բռնաւորը, որովհետև թշնամին ինձ զրկեց իմ հարազատ որդիներից»։

«Քո որդիքը, քո բարեկամները, վրայ բերաւ Բոտսարիսը, և արար աշխարհը քեզ ուրացաւ, միայն մենք սուլեցիքս, որոնք քեզանից յիմահ հալածուեցանք, քո անյոյս դրութեան մէջ քեզ օգնութեան ձեռք ենք կարկառում, յուսով ենք որ դու էլ պարագաները կը գնահատես և դաշինքին այս անգամ հաւատարիմ կը մնաս»։

Ալին այժմ արդարացնում էր իւր առաջուան ուխտադրժութիւնները և հալածանքները Դիւանի հրամաններով, և Բոտսարիսն այնպէս ձևացաւ, իբրև թէ գոհ է այս պատճառանքով։ Յունաց ապստամբութեան ծրագիրը, որին ինքը մասնակից էր, իմաստուն կերպով ծածկեց։ Ընդհակառակը ճնշուած բռնաւորին խոստացաւ, որ մայր ցամաքի և Մոռէայի յոյները թուրքերի դէմ գլուխ կը բարձրացնէին, որպէսզի վերադառնան Ալու հայրական կառավարութեան ներքոյ, որ սուլեցոց դիտաւորութիւնն է իսկոյն թուրքերի վրայ յարձակուել և Եանինայում պաշարեալներին այս դառածութեամբ (Diversion) անդորրութիւն տալ։ Խորագէտ յոյները այժմ Եանինայի վեզիրին հաւատացնում էին, ինչ որ նոքա երկու տասնեակ տարի առաջ նորա ձեռքից քաշել էին։ Նա նոցա

համար միայն միջոց էր, «Ալու խարդախութիւնները» այնուհետև դարձան սուտարատիպ պատճառանք. օտարի այս դրդման վերարկուի տակ նոքա ծածկում էին իրենց անկախ ձգտումները։

Բոտսարիսն Ալու հետ մի պաշտօնական դաշինք կռեց, երկու կողմից պատանդներ տուին. և 6 դեկտեմբերի 1820 ամի ըստ հին տոմարի, ինչպէս Կուտսոնիկաս նկատում է, «յոյն ազգի համար մի փառաւոր և յիշատակութեան արժանի օր, երբ հարիւր սուլեցի հեռացան թուրքերի բանակից, որպէսզի իրենց հայրենիքը զէնքի ուժով նուաճէին և բովանդակ Յունաստանի ապստամբութեան ազդանշանը տան *)։ Մի խորամանկ հնարքով նոքա ձեռք բերին ամրոցը Վարիադհէսի ամուր «Պիւրգոսը», որ նոքա իրենց գործողութեանց ամենառաջին յենարանը դարձրին։ Նոքա մի ժամանակաւոր տեղա-

---

*) Περραίβου Ἀπ. Πολεμικὰ σ. 40. Δ. Κουτσονίκα Ἱστορία τοῦ Σουλίου. Τοῦ Ἀλῆ Πασσᾶ. Γενικὴ Ἱστορία τῆς Ἑλληνικῆς Ἐπαναστάσεως Ἀθ. 1863. I. էջ 187. II. էջ 131 եւ հետեւեալները։ Իրողութիւն է, որ յունաց յեղափոխութիւնը ոչ թէ սկսուել է 1821 թուականի գարնանը, ինչպէս մինչ ցարդ ընդունում էր, այլ արդէն 1820 թուականի դեկտեմբերին ծագեց։ Ֆինլայը աշխատում է այս նշանաւոր իրողութիւնը մթնացնել ասելով, իբրեւ թէ սուլեցիք ոչինչ չգիտէին Յունաստանի ազգային ապստամբութեան մասին, երբ նոքա յետ նուաճեցին իրենց հայրենիքը՝ Սուլին։ History of the greek Revolution 1861, էջ 103։ Սակայն նա սխալւում է։ Բոտսարիսը եւ սուլեցոց գլխաւորները գիտէին հետերիայի գաղտնիքը։ Եւ սուլեցիք իրենք, թեպէտեւ ծագմամբ ալբանացի, այնուհետեւ իրենց յոյն էին զգում։ Այս բարբարոսներն էլ հելլենացել էին։ Բացի այդ Կուտսոնիկասը սուլեցոց սուլթանի դէմ գործածի մանրամասնութիւններ է հաղորդում, որ անտարակոյս ցոյց են տալիս, թէ սուլեցիք ոչ թէ անգիտակցութեամբ հելլենական քաղաքականութեան էին ծառայում, ինչպէս կարծես ընդունում է Ֆինլայը, այլ որ նոքա շատ լաւ գիտէին, թէ ինչ են անում, երբ Կիաֆայի բարձունքներում ազատութեան դրօշը բարձրացրին։ Հմմ. հեղինակիս յօդուածը «Griechische Historiografie», Heidelberger Jahrbüchr 1866. Nr. 26 27, էջ 415 եւ հետեւեալները։—

կան կառավարութիւն նշանակեցին, իւրաքանչիւր փար՛թաղ ըստ հին սովորութեան ընտրեց իւր առաջնորդը, գիւղացոց հրաւէր կարդացին նոցա հպատակուելու և սուլթանի դէմ զինուելու։ Զարմացքն ու երկիւղը պատեց շրջակայ բնակիչներին, որոնք չէին ըմբռնում սուլեցոց դիւցազնական որոշումը։ Գիւղացիք զանազան կողմերից թափուեցան, որպէսզի այս ապստամբներին իրենց խօլական որոշումից յետ կանգնեցնեն։ Ի՞նչ են կամենում այս մի բուռն մարդիկ սուլթանի զօրութեան դէմ անել, Մահմուդը, որ Եանինայի բռնաւորին գետին տապալեց, սուլեցոց յեղափոխութիւնից պիտի դողայ, ընդհակառակը նոցա պիտի ջնջէ։ Բայց սուլեցիք անդրդուելի մնացին։

Երբ այս դէպքի մասին տեղեկութիւն հասաւ Եանինան պաշարող թուրք բանակին, ալբանացիք, որոնք ճանաչում էին իրենց սուլեցի զինակից եղբայրների քաջութիւնը, զարհուրեցին։ Նոքա չկարողացան տանել թուրքերի ծաղրն ու հեգնանքը, մի վրանից միւս վրանն էին վազում, յորդորում էին փաշային չքամահել այս հակառակորդներին, որոնց փախուստի վրայ նոքա ծիծաղում էին։ Անցքերն արդարացրին նոցա երկիւղը։

Սուլեցիք յաջողեցին իրենց հին հայրենիքը բանի ուժով և կիրթան հնարագիտութեամբ նուաճել։ Նոքա ութ հոգուց մի ժամանակաւոր կառավարութիւն նշանակեցին, որի գլուխն անցաւ Նոտիս Բոտսարիսը, մինչդեռ Մարկօ Բոտսարիսը պէտք է վարէր պատերազմական պաշտպանութեան գործը։ Նոքա պատգամաւորներ ուղարկեցին Պիսա արտայի Իգնատիոս արքեպիսկոպոսին, որպէսզի եռանդուն յունասէրի օրհնութիւնն ինչպէս և ռազմամթերք և պաշարեղէն խնդրեն։ Նոքա գաղտնի հաղորդակցութիւն ունէին Յոնիական կղզիների ազգային կուսակցութեան ամենից եռանդուն հետևողների հետ։ Իրենց հայրենի լեռների կատարներից, ազատութեան այս դիտարանից անյողդողդ նայում էին, թէ ինչպէս թշնամին ամբողջ կիսաշրջանակում Եանինայից մինչև Արտա և Պրեւեզա գունդեր էր հաւաքում, այն հետզհետէ Սուլին ամեն կողմից շրջապատում։ Կ. Պոլսից խիստ հրամաններ արձակեցին, թէ սպասում են ամենակարճ ժամանակում լսելու, որ ապստամբ անհաւատները այլևս գոյութիւն չունին։

Արդ հետևեալ կռիւներում սուլեցիք մկրտուեցան յունական ազատութեան արեամբ։ Սիրտ էր առնում Ալի փաշան, որ իւր ծովադղեակից հեռադիտակով դիտում էր, թէ ինչպէս թուրքերը սուլեցիներից հալածուած տագնապով աշխատում էին իւրեանց բանակը փախչել և պատսպարուել։ Նա որոշեց դուրս գալ մի ընդհանուր յարձակում գործել, որին պէտք է աջակցէին թուրք բանակում գտնուող ալբանացիք և սուլեցիք։ Նա շողոքորթութիւններով լի մի նամակ գրեց իւր սուլեցի սիրելի զաւակներին և նոցանից խնդրեց, որ իրենց լեռներից թուրքերի վրայ յարձակուեն, երբոր հրափամփուշներով նշան տուի։

Պաշարման վիճակը կախուած էր սուլեցիներից։ Սուլիում կազմուած պատերազմական խորհրդում իրօք խնդիրը վերաբերում էր ամենածանր զինուորական-քաղաքական հարցերին։ Պէտք էր արդեօք ազատել այն հին թշնամուն, որ իւր նեղութեան վիճակում բարեկամ էր դարձել։ Պէտք էր արդեօք նորան իւր բախտին թողնել և ազգային գործը մաքրել այն կեղտից, որ կպչում էր նոցա բռնաւորի հետ ունեցած նիզակակցութեամբ։ Ժողովրդի առողջ բնազդը վճռեց խնդիրը։ Մտածեցին, որ դատարկ են այդ ալեւոր ամբարշտի խոստումները, որ անում է նա, երբ վրէժխնդրութեան աստուած նեմեսիսը վրայ է հասել և նորանից երեսը՝ շուռ տուել. մտածեցին, որ Ալին իւր ազատութիւնից օգտուելով կ՚աշխատի կրկնապատիկ եռանդով հելլէնների ազգային դատի դէմ սուլթանին ծառայութիւններ անել, որպէսզի սորանից ներումն ստանայ։ Վճռեցին նորան իւր բախտին թողնել։ Այս վճիռը առաւել նշանաւոր էր, որովհետև այսպիսով ոչ միայն Ալու, այլև Սուլիի ճակատագիրն էր որոշւում. սեփական հայրենիքը պէտք է զոհուէր Յունաստանի դատը շահելու համար։ Ալուց խնդրեցին, որ յետաձգի, իսկ այն պատգամաւորին, որ նամակը տանում էր, արձակեցին Եանինա հասնի միայն այն ժամանակ, երբ յարձակման պայմանաժամն անցել էր։

Ամենայն վստահութեամբ Ալին 16-ն յունիսի ըստ հին տոմարի սկսեց դուրս գալ և իւր մեծ յարձակումն անել. բայց թուրքերի քամակից սպասելիք զառածութիւնը տեղի չունեցաւ, ջարդուած կորագլուխ պաշարեալները յետ մղուեցան։

Այս վայրկենից սկսած Ալին յարձակողական դիրքից ստիպուեցաւ հրաժարուել, նա տեսաւ, որ իւր օժանդակիչ միջոցները չքանում են, հաւատարիմների շարքերը դատարկւում են. նա սպասում էր իւր անկմանը։ Սուլթանը վճռած լինելով՝ ինչ գնով էլ որ լինի իւր ըմբոստ վասալից պրծնելու, պարծենկոտ և անընդունակ Պախօ-բէյից առաւ հրամանատարութիւնը և վստահացաւ Եգիպտոսում փորձուած մի հին զինուորի, Մոռէայի փաշայ Խուրշիտին, որ շարունակէ պատերազմական գործողութիւնները։ Հազիւ Խուրշիտը Եանինայի բանակում երեւացել էր և պաշարումը թարմ ուժով սկսել, երբ լուր հասաւ, որ իւր սեփական փաշայութիւնը՝ Մօռէան բոլորովին յուզուել խռովել է, որ իւր կանայքն ու գանձերը Տրիպոլիցում վտանգի են ենթարկուել, որ յունաց ընդհանուր ապստամբութիւնը ծագել է։ Սակայն քաջ հին զինուորը իրեն հասած այս անձնական հարուածով ձեռքից չթողեց իւր գլխաւոր խնդիրը՝ Ալուն պաշարելը, և այսպիսով յունաց ապստամբութեան բռնկումը նեղն ընկած Եպիրոսի բռնաւորին ոչ ազատութիւն բերաւ, ոչ էլ թեթեւութիւն։

Ալին օգուտ տուաւ յոյներին, առանց փոխարէնը յոյներից առանձին օգուտ ստանալու։ Ընդհակառակը Դուռը իւր բոլոր ոյժերը լարեց վտանգաւոր վասալին ջնջելու, որի խարդաւանքներին սխալմամբ վերագրում էին յունաց ամբողջ շարժումը։

Յիրաւի յոյների ձեռքին էր իրենց առաջուայ թշնամուն ազատել և նորան վարձատրել այն ծառայութեան համար, որ նա յունաց գործին ակամայ արել էր։ Սուլեցիք 1821 թուականի ամառը եռանդով գործում էին թուրք պաշարող բանակի քամակից, նոքա կտրում էին Խուրշիտի պաշարը Արտա տանող ճանապարհին, նոքա յարձակուեցան Պենտեպիղհադիայի կրճի վրայ, այժ նոքա 1821 թուականի նոյեմբերին Ալի փաշայի Միացեալ ալբանացոց հետ միասին Արտայի դէմ մի խարդաւանք ձեռնարկեցին, այրեցին և կողոպտեցին քաղաքի մի մասը. բայց նոցա բոլոր արշաւանքների ժամանակ պարզ երեւում էր, որ աւելի իրենց սեփական օգուտն էին խորհում. քան իրենց հին թշնամու փրկութիւնը։ 1821 թուականի վերջերին նոքա ալբանացի Թահիր Աբբասի ձեռքով Մաւրոկորդատոսի

առաջ դրին մի պատերազմական ծրագիր, որով մի զօրեղ, յոյն բանակ Ալի փաշայի ալբանացոց հետ միասին Եպիրոսի վրայ պիտի յարձակուէին, Եանինայի պաշարումը վերացնէին, Ալի փաշային ձեռք ձգէին և զգուշութեամբ ու ապահով Մօռէա բերէին։ Ապա մտածում էին Թեսալիա յարձակուել և պատերազմը Թուրքիոյ խորքերը փոխադրել։

Այս ծրագիրն այն առաւելութիւնն ունէր, որ սուլթանը չէր կարող օգտուել Ալու ռազմական փորձառութիւնից և Ալուն ապահովապէս ձեռքի տակ ունենալով՝ այլեւս ի չիք էր դարձնում այն տարկութիւնը, որ կարող էր ազգային տեսակէտից այս բռնաւորի ազատութեան դէմ ծագել։ Սակայն այս ծրագիրը խորտակուեցաւ Մօռէացոց եղկութեամբ, բայց ամենից աւելի շնորհիւ այն հանգամանքի, որ ալբանացի Թահիրին անհոգութեամբ թողել էին Ալբանիա վերադառնալ, որ այնտեղ Յունաստանում տեսածն ու լսածը հաղորդել էր։ Այս տեղեկութիւններից ալբանացիք իմացան, որ այստեղ խնդիրը այնչափ չէ վերաբերում Ալու օգտին անելիք ծառայութեան, որչափ յունաց ապստամբութեան և անկախութեան, իսկ այս վերջինիս համար նոքա բնաւ կամք և յօժարութիւն չունէին ձեռնտու լինելու և սուրը պատեանից հանելու։ Այս վայրկեանից սկսեալ լուծուեցաւ յունաց և ալբանացոց միջի դաշնակցութեան կապը, որ ըստ ինքեան անտոկոր, ոչ էլ գոնեա յատուկ Եպիրացոց չփաթութիւններից էր ծագել։

Բայց Ալին ինքը, որ ցարդ միշտ ուրիշներին իբրև միջոց գործ էր ածել, տեսաւ թէ որչափ դառն է ուրիշների նպատակներին միջոց դառնալ։ Յոյները նորան խաբել էին և նորա մահուան ոգորումը ծառայեց միայն նոցա յեղափոխութեան։ Երկար ռմբակոծումը վհատեցրեց պաշարեալներին, Ալուամբարներն հրկիզուեցան, ամեն ինչ պատրաստ էր վճռական յարձակման. և ահա 1821 թուականի հոկտեմբերին Խարիս Գիասկասը դաւաճանութեամբ Լիթարիտա ամրոցը պաշարողների ձեռքը մատնեց։ Ալին գտաւ տակաւին մի վերջին ապաստանարան. նա փախաւ Իչկալէ միջնաբերդը, որտեղ գտնւում էին նորա գանձերը, նորա կանանոցը և վառօդանոցը։ Նա տատանւում էր, թէ արդեօք ինքն իրեն յօդս ցնդէ, թէ Խուրշիտի հաւատարիմներին վստահի, որ պատուիրեց նորան

տանելու, թէ Թող Ալին չվախենայ, թէ սուլթանը հրամայել է գերու հետ իւր աստիճանին վայել կերպով վարուել, որ ինքն էլ Կ. Պոլիս գրել է ներման համար։

Այն յուսահատութիւնը, կեանքի այն ուժգին վայելքը, որով մարդիկ կառչում են վերջին փրկարար տախտակին, հոգս չէ թէ այսպիսով շատ շատ մահուան տանջանքն է երկարում, այժմ մոլորեցրին Ալուն թշնամիների առաջարկները լսելու։ Նա պահանջեց միայն, որ Խուրշիտը նորից ապահովացումն տայ, որով նա իրաւունք ունենայ Կ. Պոլիս ուղևորուելու և սուլթանի հետ խօսելու, ապա գոհ կը լինի եթէ գլխատեն էլ։ Նա գուցէ յոյս էր տածում յունաց ապստամբութեան մասին ծանրակշիռ գաղտնիքներ բաց անելով՝ ներումն ստանալ։ Այսպէս հրապուրուեցաւ Խուրշիտից և իւր վերջին թաքստոցից դուրս գալով դիմեց Պանտելէյմոն վանքը, որ գտնւում է Եանինայի լճի մի կղզու վրայ։ Նա հանգիստ էր, որ իւր բացակայութեան միջոցին ամրոցում ամեն ինչ ըստ հնոյն է և որ իւր վառօդանոցն այրող պատրոյգը իւր փորձուած զինուոր Կաղ Չամ սպայի ձեռքին պիտի մնար։ Սա իւր այս հաւատարիմին ամենախիստ կերպով պատուիրել էր, որ ոչ մի թուրք զինուոր միջնաբերդը ներս չթողնի, բացի այն դէպքից, երբ մէկը իրենց երկուսի մէջ պայմանաւորուած նշանը բերէ։ Մի որև է այլ դէպքում նա պիտի միջնաբերդը յօդս ցնդեցնէր։

Խուրշիտը գերի փաշային կղզում մեծամեծ պատիւներ ցոյց տուաւ. նա նորան խաբում էր, թէ ինքն արդէն եօթն անգամ Կ. Պոլիս գրել է, որպէսզի թոյլ տան Ալուն այնտեղ գնալ, բայց իրօք խելքն ու միտքը միայն այն էր, որ իմանայ թէ Ալու և Չամի պայմանաւորուած նշանն ինչ է։ Կաշառքով յաջողեց իմանալ այս գաղտնիքը, որ էր մի շարան բուստ, որ Ալու մօտ էր լինում, որի ուղարկելը Չամի համար նշան պէտք է լինէր, որ ամեն ինչ լաւ է և որ Չամը կարող է միջնաբերդից հեռանալ։ Ալուն աւելի և աւելի հաւատացնում էին, թէ անկեղծօրէն կարեկցում են նորան և յոյս էին ներշնչում, թէ Դիւանը շատ շուտով նպաստաւոր որոշում կ՚անէ. բայց մի օր բուստի շարանը յանկարծ անյայտացաւ, և Ալին կասկածեց և մռայլեց, երբ որ չնայելով նորա բոլոր խուզար-

կութեանց չգտնուեցաւ։ Շուտով այնուհետև երևեցաւ Կաղ Չամը և, երբոր Ալին շփոթուած նորանից հարցրեց, թէ ինչու նա հեռացել է իւր տեղից, ցոյց տուաւ ճակատագրական բուստի շարանը։ «Վա՜յ, գոչեց Ալին, դաւաճանները ինձ խորամանկութեամբ բռնեցին»։ Այս միջոցին Մոռէայում Խուրշիտի յաջորդ նշանակուած թուրքաց ընդհանուր հրամանատարի թիկնապահ Մեհմէտը ամեն օր այցելում էր Ալուն, թէև նոցա մէջ բոլորովին խօսք չէր լինում բուստի շարանի և միջնաբերդը յանձնելու մասին։ Բայց Մեհմէտը պահնորդները շարունակ շատացնում էր, մինչև որ բաւականաչափ գնդեր հաւաքեց կղզում, որպէսզի եթէ Ալու մնացած սակաւաթիւ ծառաները դիմադրութիւն ցոյց տան, կարողանայ ճնշել։ Զինուորների մի բաժանմունք բռնեց Ալու բնակարանի նախայարկը։ Փետրուարի 5-ին տեղի ունեցաւ երկու վեզիրների վերջին տեսակցութիւնը։ Մեհմէտը խօսակցում էր մաշուած ծերունու հետ կեղծութեամբ յուսադրելով նորան սուլթանի ողորմածութեամբ։ Մեկնելիս Ալին նորան իւր յարգանքները յայտնեց մինչև դուռը, խոր կռացաւ, և Մեհմէտը, որ այս վայրկենին էր սպասում, երբ ծերունու արթուն աչքը վայր էր նայում, հանեց իւր խանչարը՝ դաշոյնը և մխեց ապստամբի սիրտը։ Հանգիստ ներքև գնաց նա և իւր զինուորներին յայտարարեց. «Տեպելէնցի Ալին մեռաւ»։ Ալբանացիք խռովութիւն հանեցին, բայց փայլուն վարձատրութեան խոստումների միջոցով արագ զսպուեցան. ալբանացիք և թուրքերը ցնծում էին, «Շուն Կարա Ալին մեռաւ։ Արեւշատութիւն սուլթան Մահմուդին և սերասկէր Խուրշիտին»։

Փետրուարի 23-ին Խուրշիտի թիկնապահը ապստամբի գլուխը Կ. Պոլիս տարաւ, որ դրուեցաւ սերայլի մեծ դարպասի առջև։ Մի քանի շաբաթ յետոյ չորս ուրիշ փաշաների գլուխներ միևնոյն խորշում ի ցոյց էին դրուած։ Այս գլուխներն էին Ալու որդոց Մուխտարինը, Վելունը, Սալիկինը և Վելու որդի Մահմուդինը։ Նոցա յօժարակամ հպատակութիւնը և դաւաճանութիւնը իրենց չէր փրկել։ Հօրը, որդոց և թոռան թաղեցին Սելիւրիայի դռան առջև. մի մեծաշուք արձանագրութիւն փառաբանում է Ալլահին և ուսուցանում է արևելեան բարեպաշտութիւն այն անցորդին, որի աչքը յառում է այն

հինգ մարմարեայ չիբուխներին։

Այսպիսի վախճան ունեցաւ այն մարդը, որ Ալբանիան միջին դարուց հանել և դէպի նոր ժամանակն էր առաջնորդել, որ բռունցքի իրաւունքի և աւատականութեան դարաշրջանը երկաթի ձեռքով փակել էր։ Եպիրոսում ազատ կրօնական հիմունքներով պետութիւն կազմելու փորձն անյաջող էր անցել, կարծես թէ որպէսզի աւելի փայլուն լուսով հանդէս գայ այն ազգային շարժման յաջողութիւնը, որ խորհրդաւոր կերպով կապուած էր Ալի փաշայի կեանքի հետ։ Ալբանացոց բռնաւորութեան աւերակների վրայ պէտք է յոյների ազատութիւնը յաղթանակէր։

Այս յարաբերութիւնները յունաց ապստամբութեան հետ մասնակից են անում այն գաղտնի ընկերութեան «Հետերիայի» վրայ, որ ԺԹ. դարու երկրորդ տասնամեակի վերջին ամբողջ Թուրքիան հեղեղել էր։ Այս ապստամբութիւնը և Հետերիան անմիջապէս նախապատրաստել են յոյների յեղափոխութիւնը։ Հետերիայի ծագման մասին այժմ այլևս չէ կարող տարակոյս լինել *)։

1812 թուականին Աթէնքում ապրող օտարների ազդեցութեամբ այնտեղ մի ընկերութիւն կազմուեցաւ, որ կոչւում էր «Մուսասէրների Հետերիա» այսինքն Մուսասէրների Ընկերութիւն։ Այն ժամանակից երբ Լորդ Էլգինը Յունաստանից նաւերով հնութիւններ էր տարել, ամենքն զգացել էին հնութեան գանձերի կարևորութիւնը։ Մուսասէրների Ընկերութեան նպատակն էր պահպանել հնութիւնները, մի թանգարան, մի մատենադարան հիմնել և դպրոցներ կառուցանել։ Այս հետզհետէ յոյս էլ կար խաղաղ ճանապարհով Յունաստանի արտաքին դրութիւնը բարւոքել։ Այս էր իսկական արտայայտութիւնը այն խաղաղ միջնորդական քաղաքականութեան, որ սեփական է ուսումնական և կրթուած դասակարգերին։ Մարդիկ շատ պահպանողական կերպով էին մտածում, որ իրենց բոլոր յոյսը դնեն օրինական կարգի ներկայացուցիչների՝ իշխանների և Վեննայի վեհաժողովի վրայ։ Դիմեցին

*) Տես հեղինակիս շարադրութիւնը «die Häterie» Sybels Zeitschrift XVI. 294 եւ հհ. 1866։

այն յոյնին, որ վայելում էր Աղեքսանդր Ա. կայսեր ամենամեծ վստահութիւնը, կոմս Կապոդիստրիասին, նորան անուանեցին ընկերութեան գահերէց, և սա աշխատել էր Վեննայում ժողովուած իշխանների ուշադրութիւնը գրաւել այդ ընկերութեան վրայ։ Վեհաժողովն այն ժամանակ դատարկել էր բոլոր զուարճութեանց և զեղխութեանց բաժակը մինչև տակը. ժողովականները յօրանջում էին շուայտութեան ծոցում։ Այս ժամանակ առա մի ուրախարար փոփոխութիւն եղաւ այս հանդիսաւոր զբօսանքների, պարահանդէսների, կենդանի պատկերների և թատերասիրական ներկայացումների միջոցին պճնուել հին հելլենական խնդիրների ճաճանչով։ Նախարարներ, գահիշխաններ և իշխաններ սիրով և յօժարութեամբ պատրաստ էին դնել այն ոսկեայ կամ արուրեայ մատանին, որ Մուսասէրների արտաքին նշանն էր։ Աղեքսանդր կայսրը, Բաւարիոյ և Վիւրտեմբերգի թագաժառանգները անդամ գրուեցան և դրամական օժանդակութիւն տուին։

Եթէ ի նկատի առնենք այս անմեղ գիտական ընկերութիւնը՝ Մուսասէրների Հետերիան, որ արքունիքների շնորհներով էր ապրում, որի անդամները Վեննայում, յետոյ Միւնխէնում էին ժողովւում և Հելլադայի վերածնութեամբ էին ոգևորւում, բացայայտ կ'երևայ, թէ այս այն մարդիկ և այն միջոցները չէին, որ Յունաստանն ազատէին։ Գիտնականները չեն եղել այն, որոնք սնուել մեծացել էին դասական անցեալի բովում, այլ մարդիկ, որոնք Յունաստանի անցեալը լսելով էին միայն ճանաչում և իրենք հազիւ կարդալ գրել գիտէին. ոչ թէ խելացի և ունեոր մեկենասներ են եղել, այլ մարդիկ, որոնք չնչին աշխատանքով, լոր ազելով կամ ձիթապտուղ հաւաքելով իրենց գոյութիւնը պահում էին. ոչ թէ գրչի և գիտող մարդիկ են եղել, այլ գործի մարդիկ. և վերջիվերջոյ ոչ ապաքէն մի ժողովրդի բախտը որոշում է կռուի պատրաստականութիւնը, հուժկու ջլոտ բազուկը։ Այս հակադրութիւնը պարզ երևում է Հետերիայի զարգացման պատմութեան մէջ։ Միայն իսկական աղբիւրները չճանաչելուց և ուրիշների հայեացքները անմիտ կերպով կրկնելուց կարող էր այնտեղ հասնել, որ Մուսասէրների Հետերիան նոյն աստիճանի վրայ դրուէր Սպանիոյ և Իտալիոյ գաղտնի ընկերութեանց կամ

Ռիգասի քաղաքական Հետերիայի հետ և նորան վերադրուէր յոյն ազգայնութեան ազատութիւնը։

Մուսասէրների ընկերութեան հիմնուելուց երկու տարի յետոյ կազմուեցաւ մի աւելի զուտ քաղաքական գործի և վճռական գործողութեան վրայ հիմնուած գաղտնի ընկերութիւն «Ֆիլիկի Հետերիան» այսինքն Բարեկամների Ընկերութիւն, որ Մուսասէրների Հետերիային՝ ընկերութեան այնպէս էր յարաբերում, ինչպէս սուրը՝ գրչին։ Ֆիլիկի Հետերիան կազմուեցաւ ռուսական հողում. մի երևոյթ, որ չնչտելու է։ Հարաւային Ռուսաստանի կարևոր առևտրական կենտրոն Օդեսայում, որտեղ յոյների և ռուսների շահերը վաղուց հետէ չփւում և կապւում էին, մի պատկառելի, բայց աննշան և անուսում արտաքի յոյն վաճառական՝ Սկուֆասը երկու ուրիշ մութ պատուաւոր մարդկանց՝ Աթանասիոս Սակալովի և փրանմասոն այսինքն ազատ որմնադիր պատմոսցի Ե. Քսանթոսի հետ կազմեցին մի ընկերութիւն, որ սկզբից և եթ քաղաքական նպատակներ աչքի առաջ ունէր։

Սակալովը առաջուց Պարիսում նման գաղափարներով տոգորուած էր։ Շուազէօլ Գուֆֆիէ նախարարի հովանաւորութեամբ ուրիշ երիտասարդ յոյների հետ միասին մի ընկերութիւն էր կազմել յոյն երիտասարդների կրթութեան համար, որ իւր քաղաքական միտումները ծածկեց «Յունական Հիւրանոց» տարօրինակ անուան տակ *)։

Երբ այս երեք համամիտ մարդիկ Օդեսայում ժողովուեցան, գանգատւում և սաստիկ բարկանում էին Վեննայի վեհաժողովի անտարբերութեան վրայ, որ Արևելեան Հարցից ամենայն զգուշութեամբ խուսափեց, փոխանակ Թուրքերի դէմ մի նոր խաչակրութիւն կազմակերպելու։ Սոքա որոշեցին Վեննայի հզօր իշխաններին, որոնք Յունաստը տակ աշխարհագրական անուն էին համարում, ցոյց տալու որ մի յոյն ազգ

*) Δοκίμιον περὶ τῆς Ἑλληνικῆς Ἐπαναστάσεως παρὰ Ι. Φιλήρονος. Աթէնք 1861. Հատոր IV. էջ 9։ Նիւթիս վերաբերեալ գրականութիւնը. մանաւանդ Քսանթոսի, Սկիւլիտսիսի, Հոմերիդիսի. Կալերվասի եւ այլոց գրուածքների մասին համեմատի վերոյիշեալ «die Häterie» շարադրութիւնը.

կայ։ Ո՛րքան վեհաբար պիտի ժպտար իշխան Մետերնիխը, որ իւր պատկերի տակ նշանաբան գրեց. «Միայն ոչ մի ոգևորութիւն», եթէ նա տեղեկանար, որ երեք երիտասարդ բանդագուշակ հետաւոր արևելքում դաւադրութիւն կազմեցին նորա Վեննայում և Պարիսում հիմնած եւրոպական պետութեանց քաղաքական սիստեմը յեղաշրջելու։ Եւ սակայն այս աննշան տղամարդկանց խիզախ ձգտումները պէտք է տարիների ընթացքում յաջողութեամբ պսակուէին։ Սկուֆասը և իւր ընկերները վճռեցին մենակ գլուխ բերեն, ինչ որ երկար ժամանակից ի վեր իզուր սպասում էին եւրոպայի իշխանների մարդասիրութիւնից։ Նոցա ընկերութիւնը, Ֆիլիկի Հետերիան, ուզում էր բոլոր քրիստոնեաներին զինել, որպէսզի խաչը մահիկի վրայ բարձրացնէ։ Որ այս ընկերութիւնը գաղտնիք պիտի մնար, ցոյց էր տուել այն փորձանքը, որին Ռիգասը և Եւթիւմիոս ենթարկուել էին։ Արտաքին ձևի վերաբերութեամբ օգտակար եղան Սակալովին իւր Պարիսի՝ Քսանթոսին իւր փրանմասոնական յիշողութիւնները։ Հետերիան բաժանւում էր եօթն աստիճանաւորութեանց, կրտսերագոյն՝ «դաշնեղբայրներից» սկսեալ, աշկերտներ, քահանաներ, հովիւներ, հովուապետներ, նուիրեալներ և բարձրագոյն նուիրեալներ։ Վերջին երկու բաժանմունքներն ունէին զինուորական բնաւորութիւն և ուղղակի որոշուած էին պատերազմի համար։ Այս բոլոր աստիճաններին նուիրուելու և նախապատրաստուելու համար խրախուսում էին կռուելու և գործելու։ Նորընտիրները պէտք է գիշերը մի աղօթարանում չոքէին, ապա խորհրդաւոր արարողութիւններով քահանան յարութեան պատկերի առաջ նոցանից հաւատարմութեան, տոկունութեան, լռութեան և անպայման հնազանդութեան երդումն էր առնում։ Չնայելով այդքան տարբեր բաժանմունքներին մարդ քիչ նոր բան էր իմանում, եթէ մէկից միւսն էր բարձրանում։ Նուիրապետական այս աստիճանաւորութիւնը աւելի ծառայում էր ամբողջ գործին հանդիսաւորութիւն և արժանաւորութիւն տալու, քան թէ էապէս հարկաւոր էր։ Վերին դասերում մարդս շատ աւելի խելօք չէր քան ստորիններում։ Դաշնեղբօրը սովորեցնում էին, որ նա պէտք է պատրաստի զէնք ունենայ և 50 փամփուշտ մի փամփշտանոցում, որպէսզի

վերից հրաման ստանալուն պէս գործ գնէ: Աշկերտը գաղտնի նուիրական ժամին լսում էր. «Կռուէ հաւատոյ և հայրենիքի համար, ատիր, հալածիր և արմատախիլ արա հաւատոյ, ազգի և հայրենիքի թշնամիներին»: Քահանան իմանում էր, որ Հետերիայի կէտ նպատակին իւր ժողովրդի ազատութիւնն է: Նոյնը յայտարարուած էր և վերին դասի անդամներին: Բայց երբ բարձրագոյն նուիրեալը ընդունւում էր, վարժապետը նորան կարկառում էր սուրը ասելով. «Քո հայրենիքն է քեզ տալիս, գործ դիր նորան ծառայելու համար»: Շատ բազմաթիւ էր քահանաների թիւը: Քահանաները կարող էին եղբայրներ ընդունել և իրենց սեփական քահանայական աստիճանը շնորհել: Եւ որովհետև նորընծաները պէտք է իրենց ուսուցիչների ձեռքը մի որոշ գումար գնէին, ուստի շատերը ընտրում էին քահանայութեան աստիճանը և այն գործ էին դնում փող ձեռք բերելու: Տարօրինակ կերպով խառնւում էին հին և նոր ժամանակի ըմբռնումները, երբ քահանան իւր նորընծային աւետարանի վրայ երդւեցնում էր, բայց միաժամանակ նորան հաւատում էր, որ ինքը նորան ընդունում է այն կարողութեան զօրութեամբ, որ նորան շնորհել են Եղևսինի քրմապետները: Ֆիլիկի Հետերիայի հիմնադիրների ուսման աստիճանը երևում է ընդունուելի անդամներին տալիք սովորական հարցումով. «Թէ արդեօք նոքա գիտեն մի անծանօթ գիւտ»: Վանդլի հետերականները հաւատում էին, որ կայ իմաստունների քարը, և աշխատում էին հասարակ մետաղներն ազնիւ քարերի փոխել:

Այս արտաքին վարմունքը շատ տեսակ պայթագրութիւն յարուց: Տրիկուպիսը Հետերիայի վարչութիւնն անճաշակ և անպէտք է համարում, իսկ Գերվինուսը տխմար: Բայց մարդիկ մոռանում են, որ ագահխի տարօրինակութիւններ, որոնք ընկերութեան լաւան են ներկայացնում, երբեք չեն պակասել, որ բազմութիւնը հենց տարօրինակ, խայտաբղէտ և խորհըրդաւոր բաներով է սովորաբար գրաւում: Ուզում են թող հետերականների տգիտութեան և անամօթութեան վրայ գանգատուին, մի բան հաստատ է, որ այս մարդիկ գոնեա գիտէին, թէ ինչի են ձգտում, որ նոքա ոչ թէ կողմնակի ճանապարհներով խօսքով և գրով, այլ չփիչխտակ կամենում էին հայրե-

նիքն ազատել: Ի՞նչ պիտի լինէր ապստամբութիւնը, «եթէ, Ֆիլեմոնի խօսքով ասենք, ժողովրդի մարդկանց փոխարէն, նշանաւոր դիրքի մարդիկ ազգային գործն սկսած լինէին, հարուստ վաճառականներ և այնպիսիներ, որոնք իրենց ծննդաբանութիւնը հասցնում են մինչև Ամմոնի Արամազդը»:

Ինչքան էլ որ այս պատճառով Հետերիան յունաց ազատութեան պատերազմի միակ զարկը չհամարուի, ինչքան էլ գաղտնի ընկերութեան միջոցը ամենուրեք իբրև փորձուած և ճիշտ չգովուի այնտեղ, որտեղ մի ազգի յուսահատութեանց և իրաւունքների մէջ հակադրութիւնը մինչև անտանելի աստիճանի է բարձրացել, այնքան աւելի պէտք է խոստովանել, որ Ֆիլիկի Հետերիան նշանաւոր գործ է կատարել, որ ուսումնականների և պալատականների՝ Մուսասէրների Ընկերութիւնը բոլորովին նսեմացրեց և սորա ծանր և միակողմանի վերածնութեան (Regeneration) գործը արագ գործողութեամբ կատարեց: Ֆիլիկի հետերականները չանգոսնեցին այն առաջուան անմեղ Հետերիայի դաշնակցութիւնը, այլ տարածեցին, թէ միևնոյն անդամները երկու Հետերիայի մէջ էլ գործում էին, որ մուսասէրներն էլ ծածուկ միևնոյն բանին էին ձգտում, ինչպէս Ֆիլիկի հետերականները: Նոր Հետերիան աճեց Մուսասէրների Ընկերութեան հովանու տակ, որպէս մակաբոյծ, ինչպէս որ Տրիկուպիսը քամահելով նկատում է: Գերվինուսն էլ պախարակում է ստութեան և խաբէութեան ոգին, որ սկզբից և եթ ամբողջ սիստեմը բռնել էր: Սակայն մի յեղափոխական և պատերազմական ընկերութիւնից չէ կարելի սպասել, որ բոլոր քայլերում անբիծ լինի և խիստ օրինաւոր խիղճը գոհացնէ: Օրինական միջոցներով այս դէպքում ոչինչ չէր կարելի անել. խորամանկութիւնն ու խաբէութիւնը ճնշուածների զէնքը դարձաւ: Ամենեքին չէին քաշւում պարծենալու, թէ ռուսների հետ կապ ունին, որպէսզի Հետերիայի նշանակութիւնը բարձրացնեն: Ամենայն ծանրութեամբ ցոյց էին տալիս հեռաւոր և մութ հեռանկարը, ամբողջը չարժող սկզբունքը, և շատ մեծ սրատեսութիւն պէտք չէր իմանալու, որ [illegible] ընկերութեան բարձրագոյն կառավարութիւնը կամ, ինչպէս ասում էին, 'Αρχή-ն ռուսաց կայսրն էր համարւում: Զննելով այն հիասթափութեանց, որոնց Յունաստանը առա-

ջուան ապստամբութեանց ժամանակ զոհ գնաց, այս տաքարիւն ժողովուրդը դեռ չէր յոգնել Ագաթանգեղոսի մարգարէութեան հաւատալուց, թէ «Հիւսիսից կարմրաթուխ մարդկանց ցեղի ձեռքով» ազատութիւն պէտք է սպասել։ Որ Ֆիլիկի Հետերիան պատահաբար ռուսաց հողում էր ծագել այս մտքով շահագործւում էր։ Ռուսաց կոնսուլների պատրաստական պաշտպանութիւնն ապահով գրաւական էր, որ ռուս արքունիքը հելլենական հակումներ ունի. հետերականները հանդէս եկան իբրև խորագէտ քաղաքագէտներ, նոքա գիտէին թուերը հաշուել և մարդկանց երևակայութեան և նուիրական իղձերից օգտուել։ Ինչու են կամենում նոցա դատափետել, որ նոքա օգուտ են քաղել առիթից։ Տրիկուպիսն ինքն ասում է, թէ Ֆիլիկի Հետերիան «այն մնացած կը լինէր, ինչ որ էր, այսինքն ոչինչ», եթէ հնարած չլինէին, թէ ռուսները օգնելու են։ Ցերաւի սկզբում սակաւ մխիթարական էր երևում, երբ Ֆիլիկի հետերականների փայլուն յոյսերը և խոստումները խորը քննէին։

Ընկերութիւնը նախ և առաջ ի նկատի չունէր շատ ընդարձակուելու։ Վարչութեան մէջ մտնում էին միայն քիչ և յատկապէս յարմար անձնաւորութիւններ։ Հիմնադիրների վրայ մինչև 1819 թիւն աւելացան Գալատիս, Կամիցոպուլոս, Ա. Սեկերիս, Ա. Գացիս, յետոյ Լևենտիս, Դիկէոս, Իգնատիոս և Մաւրոկորդատոս, վերջապէս Պատոմիադիս և Իպսիլանդիս, այնպէս որ նոցա թիւը 15-ից չանցաւ։

Չնախատեսուած անցքեր սպառնում էին հետերականների գործը սաղմում և եթ խեղդել։ Մի իթակացի երիտասարդ Նիկոլայոս Գալատիս, որ աւելի յանդգնութեամբ և յաւագնութեամբ քան խելօքութեամբ աչքի էր ընկնում, 1816 թուին Սկուֆասի ձեռքով ծանօթացաւ գործին և վարչութեան անդամ անուանուեցաւ։ Այն քաղաքական դերը և նշանակութիւնը, որին նա բոլորովին յանկարծ հասաւ, երիտասարդ բանդագուշի գլուխն էր խփել։ Ստիպմամբ և մոլեգնութեամբ, խնդիրներով և արտասուքներով աշխատում էր նա Հետերիայի համար նորահաւատներ գրաւել և չէր քաշւում խաբեբայութիւնից, որ նորան և իւր գործը վարկաբեկ պիտի անէին։ Նա Մոսկուայում և Պետերբուրգում իրեն հրատարակեց «կոմս»

և հելլէն ժողովրդի պատուիրակ։

Նա պարծենում էր, որ ինքը Կապոդիստրիասի հետ նոյն յոնիական ծագումն ունի և աչքի էր ընկնում իւր շարժումներով, այնպէս որ ռուս ոստիկանութիւնը նորան ուրիշ երկու հետերականների հետ, որոնց նա անզգուշութեամբ վտանգի էր ենթարկել, բռնեց և բանտարկեց քաղաքային բանդում։ Ոստիկանապետ Գորգոլիսը բռնեց նորա թղթերը, բաց արաւ հետերականների ամբողջ գաղտնիքը և իսկոյն զեկուց Ալեքսանդր Ա. կայսեր։ Սա շատ շփոթուեցաւ և տատանւում էր յունասիրութեան և յեղափոխութեան երկիւղի մէջ այս ու այն կողմը։ Սա խորհրդի կանչեց իւր Կապոդիստրիաս նախարարին և այս ճարպիկ դիպլոմատը կարողացաւ յաջողեցնել ոչ միայն իւր մեղսակցութեան ամենայն կասկած ցրել, այլ և կայսեր միտքը փոխել ի նպաստ թեթևսոլիկ երիտասարդ դաւադրի։ Պեռհեւսն ու Արգիւրոպուլոսն ազատ արձակուեցան և դրամական հատուցումն ստացան։ Իսկ Գալատիսն արտաքսուեցաւ Մոլդաւիա։ Երբ նա Եաշի եկաւ, ռուսաց կոնսուլ Պինին նորան իւր մօտ կանչեց և իբրև թէ որպէս վարձ նորա ցաւերի 500 կոլոնատի վճարեց։ Այս նուէրի հետ նշանակալից բացատրութիւն տալով, թէ նորան հովանաւորում են, «որպէսզի նա իբրև անդամ մի ընկերութեան, որ կամենում է Թուրքաց լուծը թօթափել, սոցանից չը նեղուի»։ Մի այդպիսի վարմունք լիովի համապատասխանում էր այն բնորոշ երկրուն քաղաքականութեան, որ վճռական քայլերից սարսափելով ետ ետ էր քաշւում, մինչև իսկ դրսից լաւ տպաւորութիւն թողնելու համար ուրանում էր գործի մարդկանց և պատժում, բայց գաղտնի համակրում էր դաւադրութեան և ծածուկ նպաստում։ «Համբերութիւն», գոչում էր Ալեքսանդր կայսրը աչքի ընկնելու չափ, երբ Կապոդիստրիասները կամ Իպսիլանդիսները նորան դրդում էին, որ իւր տան բանալին՝ Կ. Պոլիսը ձեռք բերի, Թուրքերին եւրոպայից վանդի։ Բայց նա պէտք է մտածէր, թէ ինչպէս կայսեր բերանից ամէն մի կիսատ ակնարկ յոյները բացատրում էին իբրև մի կատարեալ խոստումն։ Գալատիսը, որ վախեցել էր թէ Եաշիում նորից կը բռնուի, ուրախութիւնից շփոթուեցաւ, երբ տեսաւ որ կարծես թէ իրեն պաշտօնապէս ճանաչեցին, և քարոզչու-

թեան գործը վարւում եռանդով շարունակեց։

Նա գրաւեց Գէորգ Լևենտիս Թարգմանին, որ մի խելամուտ, հայրենասէր և գործունեայ մարդ էր, որ լաւ հասկանում էր «ռուսաց ազդեցութեան մետաղը հելլենական ոսկի դարձնել»։ Լևենտիսը 1817 թուականին միտք յղացաւ յունաց ապստամբութեան հետ միաժամանակ Սերբիան ոտքի հանել։ Նա քննել տուաւ նշանաւոր սերբ զօրական հեկոյ Կարա Գէորգու մտադրութիւնը։ Նոքա գիշերները Գալատայում Եաշիի մօտ հաւաքւում էին, որտեղ և Գալատիսը իբրև Կապոդիստրիասի եղբօրորդի և Անեայի կարգի տալիս «ներկայ էր լինում»։ Լևենտիսը այս սերբին ծանօթացրեց Հետերիայի գաղտնիքներին, նորան երդուեցրեց և խորհուրդ տուաւ Սերբիա գնալ, կառավարչական իշխանութիւնը ձեռքն առնել, և եթէ Դուռը ռուսների խարդաւանքներից վախենալով նորան իշխանութիւն առաջարկէ, ընդունէ, որպէսզի հելլենական դատին իւր բարձր դիրքով աւելի լաւ ծառայէ։ Կարա Գէորգն ամեն բանի պատրաստ էր. նա շտապեց ռուսական անցագրով անցնել Բուկովինա, Զիբենբիւրգէն և Բանատը դէպի Սեմենդրիա, որտեղ նա սիրալիր ընդունելութիւն գտաւ Վեստոյից, որ հետերականների բարեկամ էր։ Սակայն նորա շարժումները չէին խուսափել աւստրիացոց ոստիկանութեան աչքից։ Բելգրադի փաշային տեղեկութիւն էին տուել և սա պահանջեց Միլոշից վտանգաւոր թշնամուն միջից վերացնել։ Միլոշը գիշերով մի խումբ զինուորներ ուղարկեց Սեմենդրիա և մահուան սպառնալիքով ճնշեց Վեստոյին, այնպէս որ նա իւր հիւրին սպանեց։

Սերբ-յունական պայմանեալ գործակցութիւնը այժմ խորտակուեցաւ։ Մի այսպիսի քայլ, հազիւ փոխարինելի անձնաւորութեան մահը, ինչպէս «սև» Գէորգինը, Հետերիայի մէջ շփոթութիւն տարածեց։ Այնուհետև սերբերից օգնութիւն ստանալու բոլոր ջանքերն էլ իզուր անցան։ Միլոշը չէր կամենում իւր ձեռքերը կապել տալ և միայն յաջողուեցաւ նորան այնտեղ հասցնել, որ նա ոլորմոլոր դարձուածքներով յայտնեց իւր համաձայնութիւնը լինելիքի համար։ Յոյներն սկսեցին տեսնել, որ Սերբիային ապաւինել չէ կարելի, որ պէտք է մօտենալ իսկական յոյն աշխարհին։

Ընկերութեան հիմնադիր Սկուֆասը վճռեց խիզախ մտածմունքով թշնամու վրայ նորա տան մէջ յարձակուիլ. Նա հաստատուեցաւ Կ. Պոլսում և այդտեղից 1818 թուականի ապրիլից սկսեալ հետերական քարոզչութեան գործը վարում էր։ Բայց նորա վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ նոյն տարուայ յուլիսին, Հետերիայի համար մի մեծ հարուած էր։ Միևնոյն ժամանակ Գալատիսի յիմարութիւնները սկսան կասկածելի կերպով նկատելի դառնալ։

Նա Հետերիայի վարիչներից անդադար փող պահանջելով տաղտկացնում էր նոցա, և ընդհմին չէր կարելի չկասկածել, որ նա հայրենիքի բարիքի հետ և իւր անձնականը առանձնապէս ինկատի ունէր։ Նորան իւր ընկեր Պենտեդեկասի միջոցով Դանուբեան իշխանութիւններից կանչեցին Կ. Պոլիս։ Բայց երբ նա ընկերութեան վայրում ևս ժխտ երևաց, ժպիրհ սպառնալիքներ արաւ և Թուրք նախարար Հալէտ էֆենդու հետ, որ նիշանջի էր և Մահմուդի սիրելին, ունեցած հաղորդակցութեամբ յատկապէս հպարտանում էր, Հետերիայի խորհուրդը հաստատ որոշեց այս երկդիմի արբանեակից ազատուել։ Գալատիսը 1818 թուականի վերջին պատուէր ստացաւ Պելոպոնէս շրջելու. նորան ուղեկից տուին այնպիսի հետերականներ, որոնց հաւատարմութեան և վճռականութեան վրայ կարելի էր վստահել։ Երբ նոքա մի օր ճաշին Հերմիոնէի մօտ իջեանել էին և Գալատիսը դղքենու շուաքին պառկել էր հանգիստ ու զով և մի հայրենասիրական օրհներգ էր սկսել, հետերականներից մինը մօտեցաւ նորան ետևից և իւր ատրճանակը շատ մօտիկից պարպեց վրան։ «Ես ինչ եմ արել ձեզ» գոչելով Գալատիսն աւանդեց իւր հոգին։ Մարդասպանները, որոնց մտքում գաղտնութիւնն ու զգայնականութիւնը հաւասարապէս կերպով խառն էր, իրենց զոհի վերջի խօսքերը փորեցին դղքենու կեղևի վրայ։ Նոքա կարող էին զղջումը հայրենասիրական մտածմանց քօղով ծածկել։ Ինչքան ուզում են սպանութիւնն իբրև քաղաքական նպատակների միջոց դատապարտելի համարեն. սակայն բնորոշ կերպով երևում է, թէ որպիսի վճռականութեան էր հասել Հետերիան։ Անօգուտ և կասկածաւոր տարրերի ջնջումն ամենալաւ կերպով ապացուցանում է, որ այս մարդկանց կամքը

կարիքների թափի տակ ամրապնդուել էր։

Սկուֆասի մահից յետոյ Կ. Պոլիսը շնորհիւ Թուրք ոստիկանութեան կուրութեան մնաց ընկերութեան կենտրոն։ Քսանթոսի տանը վարչութիւնը շարունակում էր իւր խորհրդակցութիւնները։ Այս տեղից սկսան քարոզչութիւնը սիստեմատիկ կերպով կարգաւորել։

Թուրքիոյ բոլոր նահանգներում հաստատուեցան եփորիաներ՝ պարէտութիւններ կամ ներկայացուցիչ պաշտօնէութիւններ, որոնց անդամները հետերականներից հասարակ մեծամասնութեամբ պիտի ընտրուէին։ Իւրաքանչիւր պարէտութիւն ունէր մի առանձին դրամարկղ և լիազօրութիւն ունէր իւր շրջանում գործելու և բոլոր միջոցները ձեռնարկելու, որ Հետերիայի ազգային նպատակը պահանջում էր։ Բայց անմիջական յարաբերութիւն պիտի ունենար վարիչ կառավարութեան հետ, որից կախուած էր ամենակարևոր հարցերի որոշումը։ Շրջիկներ գնում էին այս ու այն կողմը, որոնց գործունէութիւնը վիճակագրութեամբ կարելի է ցոյց տալ։ Ա. Գացիսը յանձն առաւ պատրաստել մայր ցամաքը Պելիոնից սկսեալ։ «Մի զլանար, գրում էր նա 9-ն յուլիսի 1818 ամի Քսանթոսին Կ. Պոլիս, մեզ մեր դպրոցի հաստատման նպաստելու»։ Հիւդրա և Մոռէա ուղարկուեցան յոյն զինուորականներ, որ հենց նոր Ռուսաստանից վերադառնում էին, որտեղ նոքա Թուրքերի դէմ արած ծառայութեան փոխարէն վարձ էին ստացել։ Սոցա մէջ աչքի էր ընկնում Պեռհեւոսը, որ 1818 թուականի յուլիսից Պելոպոննէսում գործում էր, որտեղ նորան եռանդով աջակցում էին Անագնոստարասը և յետոյ Դիկէոս արեղան (Պապա Ֆլեսասը)։ Ամենից առաջին գործն էր ապահովել Մանի թերակղզին, որ զինուորական տեսակէտից կարևոր էր։ Ցեղապետներից գլխաւորը՝ Մաւրոմիխալիսը արդէն ծանօթացել էր Հետերիայի գաղտնիքին, Պեռհեւոսը նորա համար երևաց որպէս բարի հրեշտակ։ Բայց Մանիացոց բէյը այնպիսիներից էր, որոնք գաղափարներով չեն կերակրւում, որոնց պէտք է շօշափելի կերպով ապացուցել, թէ ինչի համար պիտի ոգևորուեն։ Նա 1819 ամի փետրուարի 2-ին մի միամիտ նամակ գրեց «վարիչ կառավարութեան», որ սկսւում էր այն խօսքով, թէ հին

սպարտացիք չէին ամաչում իրենց աղքատութիւնից, և որ նոցա սերունդները իրենց քարքարոտ և անբերրի երկրի անկիւնում այն աղքատութիւնը ժառանգութիւն են ստացել. և խնդրում էր, որ նամակ գրողին 500,000 գրոշ ուղարկեն։ Վարիչ կառավարութիւնը անկարող եղաւ այս հրամայական պահանջը գոհացնել և վճռեց եկեղեցու ազդեցութիւնը իւր նպատակի համար գործադրել, ուստի և դրդեց ընկերութեան գաղտնիքին ծանօթ Գրիգոր պատրիարքին 30-ն յուլիսի 1819 ամի, որ Մաւրոմիխալիսին գրեց, նորան գովեց «յունաց թանգարան» կառուցանելու եռանդի համար և հաւատեց նորան եկեղեցու հովանաւորութիւնը։ Այս գոնեա այնքան նպաստաւոր ազդեցութիւն ունեցաւ, որ Մաւրոմիխալիսին պատկառանք պիտի ներշնչէր դէպի մի ընկերութիւն, որի նպատակները, ինչպէս երևում էր, խրախուսում էր Օրթոդոքս եկեղեցու գլուխը։ Պեռհեւոսը յաջողեց դրդել նորան հաշտուելու Լակոնիոյ ամենազօրեղ հակառակորդ ընտանիքների Գրիգորեանց և Տրուպակեանց հետ։ Այս երեք ընտանիքները համաձայնեցան ըստ դաշնագրութեան, որ երբ իրենց ցեղի գլխաւորը կանչէ, պատրաստ կանգնեն, և շուտով բովանդակ Լակոնիան նոցա միացաւ միևնոյն պատրուակով մի «Հելլենական թանգարան» կառուցանելու։ Ուխտեցին 15-ն հոկտեմբերի 1819 ամի «դպրոցը» այսինքն հայրենիքը, սեփական արեամբ պաշտպանելու։ Պեռհեւոսը ուրախ ուրախ հաղորդեց այս մեծ հետևանքի մասին Կ. Պոլիս և յայտնում էր իւր վստահութիւնը, թէ շուտով կարելի կը լինի ապստամբութիւն հրատարակել։ Երախտապարտ լակոնացիք նորան անուանեցին պատուաւոր քաղաքացի։ Թէև Թուրք կառավարութիւնը նորան տարագրել էր և 500 գրոշ նորա համար գլխագին նշանակել, բայց և այնպէս նա շարունակում էր իւր առաքելութիւնը կատարել։ Մեսենայում էլ նա միացրեց իրար թշնամի ընտանիքները յօգուտ ընդհանուր հայրենիքի, և 1820 թուականին Հետերիան տարածուած էր Պելոպոննէսի բոլոր դասերում։ Կիւկլադեան և Սպորադեան կղզիներում, փոքր Ասիոյ ափերին, Յոնիական կղզիներում, նոյն իսկ Երուսաղէմում սկսան շրջիկները 1818 թուականի վերջերից ի վեր գործել։ Հետերականների հաղորդակցութիւնը Կ. Պոլսի հետ այնտեղից

աւելի կանոնաւոր և բանուկ էր լինում քան մայր ցամաքից։

Հետերիայի ծննդավայրում՝ հարաւային Ռուսաստանում համախոհների թիւը սկսել էր շարունակ աճել։ Կիեւում Գ. Կատակացիսը 1818 թուականի սկզբում ընդունեց Նիկողայոս Իպսիլանտիսին։ Եռանդագին հարցնում էր նոր դաշնանդամը ամբողջ գործի վարչութեան մասին։ «Հետաքրքիր մի՛ լինիր, այսպիսի հետաքրքրութիւն արգելուած է ուսուցման մէջ»։-«Ա՜հ, այս այնպիսի կանոններ են, որ իրենց բացառութիւններն ունին»։-«Անշուշտ, վրայ բերաւ Կատակացիսը, բայց ես էլ աւելի բան չգիտեմ, որովհետև իմ վարժապետն էլ աւելին չգիտէր, կամ այնպէս էր ձևանում»։ Նիկողայոս Իպսիլանտիսն էլ այժմ դարձրեց իւր երկու եղբայրներին Գէորգին և Դեմետրիոսին։

Սակայն Ալեքսանդր Իպսիլանտիսը չէր կամենում ընդունուել, մինչև որ բովանդակ գործի վարչութեան մասին ապահով չլինէր. և եղբայրների բոլոր հետախուզութիւններն այդ մասին ապարդիւն եղան։ Նիկողայոսը ուղևորուեցաւ Օդեսա, դէպի ուր ցոյց էին տալիս դաշինքի առաջին հետքերը, բայց 'Αρχή-ն այսինքն պետը մնաց, նորա համար անբացատրելի գաղտնիք։ Սակայն և այնպէս նա էլ չյապաղեց քարոզչութիւնը եռանդագին կատարելու. նորա յորդորներով 1819 թուականի ամառը ընկերութեան մէջ ընդունուեցան Ռիցոս Ներուլոսը, 1820 թուականի սկզբին Գ. Մանոսը և Գրիգոր Սուտսոսը՝ կառավարող իշխանի եղբորորդին։ Բայց չնայելով այս նշանաւոր անուններին, չնայելով տարածման և յաջողութեան, Հետերիայի գլխաւորների մէջ զարթնել էր մի տեսակ հոգս և տանջող գիտակցութիւն, որ իրենք ամենագեղեցիկ և ընտիր ոյժերը ապարդիւն վատնելու ճանապարհի վրայ են։ Նոքա զգում էին իրենց սեփական ոչնչութիւնը, և որչափ անհամբեր յոյները մղում էին, որ հաւատի իմանան բարձրագոյն վարչութիւնը և Ռուսաստանի հետ ունեցած գաղտնի կապակցութիւնը, այնչափ աւելի ամբողջ գործի վարիչները զգում էին, թէ կամ պէտք է իրենց շառլատանութիւնը բացեն և ամբողջ աշխարհի առաջ ամօթահար լինեն, կամ որ նոքա պէտք է ջանային մինչև հիմակուայ վարմունքը մի շատ նշանաւոր հիմունքի վրայ հաստատել և

այսպիսով յանդիմանութիւններից և պատասխանատուութիւնից ազատ լինէին։ Բայց այսպիսով մի վճռական հանգոյց սահմանուեցաւ։ Այն ինչ որ ցարդ աւելի պատահմունք էր եղել, դարձաւ ծրագիր, ռուսական միտումը բացայայտ եղաւ։ Որոշեցին ամբողջ գործի ղեկավար 'Αρχή-ի վրայ ծածկուած քօղը բաց անել և մի նշանաւոր անձնաւորութիւն Հետերիայի գլխին դնել, որի փայլուն առաւելութեանց առաջ ամեն մի անվստահութիւն պէտք է լռէր։ Սակայն նեղութեան միջոցին աւելի դիւրին է ասել, թէ ինչ է հարկաւոր քան թէ գտնել։ Եւ երբ հետերականները իրենց սեփական շրջանում այս ու այն կողմն էին դիտում, ի հարկէ գտնում էին թեկնածուներ, բայց ոչ մի այնպիսին, որին բոլորը հաւանէին։ Յիրաւի տալիս էին իշխան Կարաջայի, Կոստանտին Մուրուզիի կամ Ալեքսանդր Մաւրոկորդատոսի անունները, բայց այս ազնուական փանարեցիք մեծ ժողովրդականութիւն չէին վայելում, նոցա անունները չէին կարող բազմութիւնը ցնցել, ընդհակառակը երկիւղ կար, որ փանարեցոց դէմ խոր արմատացած անվստահութիւնը, նորից պիտի արծարծուի։ Ուստի հայեացքն ինքն իրեն ուղղուեցաւ օտար աշխարհ. ինչպէս որ մարդիկ սիրով հեռաւորին վերագրում են ընտիր և գրաւիչ հմայք, կամ ինչպէս հայերս ասում ենք «հեռաւոր խաչը զօրաւոր կը լինի»։ Ամենից առաջ երկու մարդ կար, որոնց վրայ Յունաստանը արդէն տարիներից ի վեր պարծանքով նայում էր, որովհետև նոքա յոյն անունը արտասահմանում շատ բարձրացրել էին, մինը մի խելացի և բազմահնար դիպլոմատ, միւսը մի քաջ և հայրենասէր զօրական, կոմս Յոհան Կապոդիստրիան ու իշխան Ալեքսանդր Իպսիլանտիսը։

Այն փայլուն և անսովոր ասպարէզը, որ կոմս Կապոդիստրիասը հասարակ յոնիական պետական քարտուղարութիւնից հասել էր նախարարութեան պաշտօնի և Ալեքսանդր Ա.-ի սիրելին էր դարձել, մեծամասնութեան կարող էր շլացնել, սակայն հենց այս մարդու դիպլոմատիկ ճանապարհով արագ բարձրանալը շատ լուրջ կասկածներ էլ պիտի զարթնեցնէր։ Վասնզի դիւանագիտական զբաղմունքը սպառնում է ներքին մարդուն ուտել սպառել, ամենայն մաքուր ոգևորութիւն խեղդել և ամեն օր կեղծիք և խաբէութիւն ծնելով յառաջ է

բերում այն սահմանափակ խելօքութիւնը, որի հիմնական ուսմունքը իրաւունքի և բարոյականութեան հակառակ է ընթանում: Մի մարդ, որ միայն հրապարակաւ հանդէս է գալիս ճշմարտութիւնը պքօղելու, որ այնպէս է ցոյց տալիս, թէ բան է հասկանում, երբ ոչինչ չգիտէ, և որ անդէտ է ձևանում, երբ շատ լաւ գիտէ, որ միշտ մտածում է իւր զգացմունքները կեղծել, որի վարժութիւնն է ուրիշների դիւրահաւատութիւնից օգտուել և որի բարոյականութիւնն են կազմում մանր միջոցները, մի այսպիսի մարդ երևում էր թէ անյարմար է մի ժողովրդական ընկերութեան գլուխն անցնելու և մի ազգային կուսակցութեան գլուխ դառնալու: Այնուամենայնիւ հետերականների մեծամասնութիւնը նորա կողմն էր հակւում և առաջարկեց Պիսացի եպիսկոպոս Իգնատիոսի միջոցով նորա միտքն իմանալ, թէ արդեօք նա այս առաջարկութիւնը յանձն կ'առնէ: Միայն մի թոյլ փոքրամասնութիւնը Իպսիլանտիսի կողմն էր, որովհետև «սուրն է միայն հասցնում կէտ նպատակին, և հետևաբար Հելլադային հարկաւոր է զինուոր և ոչ թէ քաղաքագէտ»: Պէտք է խոստովանել, որ փոքրամասնութեան այս հայեացքը Հետերիայի կազմութեան սկզբունքներին աւելի համաձայն էր, քան մեծամասնութեանը: Այս թերևս զգաց ընկերութեան հիմնադիր Ծանթոսը և միանգամայն հարկ համարեց փոքրամասնութեանը չվիրաւորել, ամենայն երկպառակութեանց առաջն առնել: Այս պատճառով մի միջին ճանապարհ առաջարկեց և յայտնեց, որ թէ դեսպանագէտի և թէ զօրականի պէտք կայ. ուստի ինքը կ'ուղևորուի Պետերբուրգ և դուռը կը բաղխի. նոցանից որը, Կապոդիստրիասը կամ Իպսիլանտիսը, կը բանայ, նա էլ կ'ընդունէ Հետերիա Ընկերութեան հաշիւները, գործերը և անսահման գլխաւոր տիտղոսը: Այսպիսով լռելեայն ընդունւում էր մեծամասնութեան ցանկութիւնը. վասնզի իսկապէս հաստատ որոշուած էր և այն երկուսի աստիճանին համապատասխան, որ նախ Կապոդիստրիասին դիմեն: Գոնեա այս պարզ երևում է 1818 թուականի սեպտեմբերի 22-ին ընկերութեան արձանագրութեան որոշումից: «Ստորագրեալներս, որ վարում ենք Ֆիլիկի Հետերիայի ձեռնարկութիւնները և միայն այն ժամանակ ուզում ենք բաժանուել, երբ իւրաքանչիւր ոք,

ինչպէս որ արդարացի է, իւր զբաղմունքների պատճառով ուրիշ ուղղութիւն կ'ընտրէ, հաստատ որոշեցինք և վճռեցինք հետևեալը, որ պէտք է մեզ ծառայէ իբրև կանոն մեր իրար և ուրիշների հետ ունենալիք յարաբերութեան ժամանակ:

1. Վարիչներից ոչ ոք ապագայում անկախ ճանապարհ չբռնէ և չգնայ, այլ բոլոր իրենց գործողութիւնները միմիայն Հետերիայի բարիքն ի նկատի պէտք է առնեն: Այս պարտականութեան ենթարկւում են այն բացականերն էլ, որոնք այժմ որ և է կերպով շարժման մասնակից են: Սակայն Անտոնիոս Կոմիցոպուլոսին և Աթանասիոս Սեկերիսին այսօրուանից վեց ամիս ժամանակ է տրւում, Անթիմոս Գացիսին երեք ամիս՝ իրենց գործերը կարգաւորելու և վերջացնելու: Եթէ նոքա այս վճռի համաձայն չվարուեն, այնուհետև կընկատուեն սուտ անդամ: Միայն Պանագիոտիս Սեկերիսին, որովհետև նորա Կ. Պոլսում մնալը ցանկալի է, իրաւունք է տրւում, որ իւր պարապմունքը այնքան ժամանակ շարունակէ, որքան որ նա բարւոք կը համարի:

2. Վարիչները պարտաւոր են իրենց գործ դրած միջոցների և կարգադրութեանց մասին իրար հաղորդել, միասին Հետերիայի դրամները ընկերութեան օգտին գործ դնել, ինչպէս և թղթերի վրայ իրաւունք ունին բոլորը, և երբեք մինը իրաւունք չունի ըստ իւր ցանկութեան վարելու և կառավարելու:

3. Ոչ ոք չպէտք է հրապարակ հանէ կառավարութիւնը, ոչ էլ վարիչներից մէկի անունը տայ, ոչ էլ նկատել տայ, թէ ինքը վարիչ է, և ոչ էլ թէ մի բան իմացել է կառավարութեան մասին: Առանց միւս վարիչ անդամների համաձայնութեան չէ կարելի ընդհանուր կամ տեղական ապստամբութիւն սկսել: Կարծիքների տարբերութեան դէպքում մեծամասնութիւնն է վճռում:

Միայն Էմանուէլ Ծանթոսը բացառաբար կարող է յայտնել վարիչ կառավարութեան մասին, որ մեկնում էր կոմս Ցոհան Կապոդիստրիասի հետ խորհրդակցելու. Նա իրաւունք ունի միայն սորան կառավարութեան մասին յայտնելու: Ցոհանը մտնում է վարիչների թուի մէջ և ստորագրում այս արձանագրութիւնը, մինչդեռ Ծանթոսը պարտաւոր է անմի-

ջապէս իր կոմսի հետ ունեցած բոլոր յարաբերութեանց և թղթակցութեանց մասին վարիչների մեծամասնութեան հաղորդել: Կ. Պոլիս, 22-ն սեպտեմբերի 1818 ամի: Անթիմոս Գացիս, Պանագիոտիս Սեկերիս, Էմանուէլ Քսանթոս, Նիկոլայոս Պատսիմադհիս, Աթանասիոս Սակալով, Գէորգ Լևենտիս, Պանագ. Ա. Անագնոստոպուլոս, Անտոնիոս Կոմիզոպուլոս»:

Այս կարևոր վաւերագրից տեսնում ենք, որ միայն ութ անդամից կազմուած էր վարչութիւնը, և որ կառավարութեան մեքենայի գաղտնիքը ամենայն հոգածութեամբ ծածուկ էր պահւում: Միայն վարչարանի մի անդամը՝ Սեկերիս վաճառականը մնալու էր Կ. Պոլսում: Անագնոստոպուլոսը գնաց Դանուբեան իշխանութիւնները, որտեղ նա ի հարկէ չուտով այնտեղի Հետերիայի անդամների ղեկավարների հետ դժտուեցաւ: Փառամոլ և կրքոտ Դիկէոս (Պապա Ֆլեսաս) վարդապետին վարչութեան մէջ ընդունելով՝ Անագնոստոպուլոսը յամենայն դէպս մի արժանիք ձեռք բերաւ խնդիրն արմատական մտքով որոշելու: Սակալովը գնաց Պիսա, որպէսզի Իգնատիոս արքեպիսկոպոսին և Ալեքսանդր Մաւրոկորդատոսին վարչութեան մէջ ընդունի: Ինքը Քսանթոսը դիմեց դէպի Պելիոն, որ Ա. Գացիսի հետ խորհրդակցէ և ընկերութեան փաստաթղթերը նորա մօտ ապահով տեղաւորէ: Ապա նա վերադարձաւ Կ. Պոլիս, որպէսզի 1819 թուականի փետրուարին իր առաքելութիւնն սկսէ: Նա Բուկարեստի և Կիևի վրայով ուղևորուեցաւ Մոսկուա: Այնտեղ զբաղուեցաւ մի ազգային բանկ հիմնելու, որ մի միլիոն ռուբլի դրամագլխով 6 տոկոս շահ բերելով՝ պիտի ծառայէր Հետերիայի պատերազմական նպատակներին, մի ձեռնարկութիւն, որ սակայն յաջողութիւն չունեցաւ: Համարեա թէ մի ձիգ տարի Քսանթոսը անցկացրեց իր ճանապարհորդութեանց վրայ: Նորա բացակայութեան միջոցին քիչ էր մնացել, որ Հետերիայում ամեն ինչ քայքայուի: Գաղտնիքն այնպէս խստութեամբ պահել չէր լինում, ինչպէս սեպտեմբերի 22-ի դաշնագրութիւնը ցանկացել էր. հարկաւոր է թուրքերի անհաւատալի անհոգութիւնն և անզգածութիւնը (apathie), որ անուշադիր թողնէր զանազան կողմից բարեկամներից և թշնամուց, իրենց անգլիացի դաշնակիցնե-

րից և Ալի փաշայից հասած ցուցմունքները: Ընդհանրին յոյների տենդային անհամբերութեամբ իսկ մատնուեցաւ գործը: Վասնզի ամեն կողմից թափւում էին ընկերութեան կենտրոնատեղին. պահանջում էին վարիչ կառավարութեան և ռուսների աջակցութեան մասին ստոյգն իմանալ: Պետրոբէյն արդէն Կամարինոսին ուղարկել էր Կապոդիստրիասի մօտ, որպէսզի դրամական օժանդակութիւն խնդրէր իր հայրենասիրութեան համար: Պելոպոնէսի աշխարհիկ և հոգևորական մեծամեծները 1820 թուականի սկզբին Տրիպոլիտսայում մի համաժողով կազմեցին և վճռեցին մի վստահելի անձն ուղարկել, որ վարիչ կառավարութեան հետքը գտնի: Նոցա ընտրութիւնն ընկաւ Յոհան Պապարիգոպուլոսի վրայ, այն հաւատարիմ անձի, որին Ալի փաշան ևս Ռուսաստան ուղարկեց իբրև միջնորդ օգնութիւն խնդրելու: Պելոպոնէսացիներից Պապարիգոպուլոսն ստացաւ երկու նամակ, մինը, որ նորան վարիչ կառավարութեան մօտ լիազօր էր դարձնում, միւսը, որ in blanco՝ ճերմակ պատրաստի թուղթ էր և միայն դասակարգերի մեծամեծների ստորագրութիւնն ունէր: Վերջինիս վրայ կարող էր պատգամաւորը ստորագրեալների պատասխանատուութեամբ գրել այն, ինչ որ հանգամանքները պահանջում էին, երբ նա իսկական կառավարութիւնը, ծրագրերը և միջոցները իմանար:

Պելոպոնէսացիք ցանկանում էին, որ վարիչ կառավարութիւնը Պելոպոնէսի եղբայրներից մի էֆորիա՝ պարէտութիւն նշանակէ, որին պարտաւորւում էին հլու հնազանդ մնալ, հակառակ դէպքում պատժուէին Հետերիայից դուրս քշուելով: Այլև որ Պելոպոնէսի և Յոնիական կղզիների նպաստները ընկերութեան մի դրամարկղում հաւաքուէին և ոչինչ առանց մեծամեծների և կառավարութեան թոյլտուութեան չծախսուէր, և որ Հիւդրայում գտնուած եղբայրներից մէկին յանձնուի կառավարութեան Պելոպոնէսի էֆորիայի հետ ունենալիք թղթակցութեանց միջնորդ լինել:

Այսպիսի հրահանգներով Պապարիգոպուլոսը ճանապարհ ընկաւ, նախ և առաջ ամենաբարձր կառավարութիւնը գտնելու: Միևնոյն ժամանակ Օդեսայի նշանաւոր յոյներից մինը՝ Վարդալախոսը գրեց կոմս Կապոդիստրիասին նորանից հար-

ցնելու, թէ նա ինչ գաղափարներ ունի Հետերիայի մասին և ինչպիսի դիտումներ ունի Ալեքսանդր կայսրը ապստամբութեան մասին Յունաստանում։ Ռուս նախարարին սակայն իւր հայրենակիցների հաւանալի անհամբերութիւնը շատ անպատեհ էր։ Նա Կորֆուում մնացած ժամանակ ամենուրեք ջանաց հանգստացնել և Observations sur les moyens d'améliorer le sort des Grecs 6|18 avril 1819 թուականին հրատարակուած գրքոյկում մի ջատագովական նուիրեց կանոնաւոր յառաջադիմութեան նախ և առաջ ցանկալի համարելով կղերական իշխանութեան բարձրացումը։ Այժմ նա Վարդալախոսին մի անողորմ պատասխան հաղորդեց, թէ կայսրը ոչինչ չգիտէ Հետերիայից, նա ինքը ամենայն պատասխանատուութիւն եղածի համար մերժելով մերժում է։ Նա երդուեցնում է Վարդալախոսին, որ սա խօսքով և գործով յոյներին յետ կասեցնէ դէպի կորուստ դիմելուց։ Նման պատասխան տուաւ նա երիտասարդ դիւանագէտ Նեգրիսին, որ նոյնպէս ուզում էր տեղեկանալ «ռուսաց մասի» մասին, որ իբրև թէ բովանդակ գործը վարում էր։ Կապոդիստրիան իրօք սարսափեց այն տագնապից, որ հետերական շարժումներից յայտնւում էր։ Նա պետական անձի սրատեսութեամբ նկատում էր, որ Հեմոս թերակղզում հաւաքուած այրուելու նիւթին հարկաւոր է աբեթ, որ բոցը մինչև երկինք հանէ. բայց նա ինքը կոչուած չէր զգում բոցը բորբոքելու և անհամար դժբախտութիւններ իւր ազգի գլխին բերելու։ Ուստի երբոր պելոպոնէսացոց և Ալու պատգամաւորները Կամարինոսներն ու Պապարիգոպուլոսները Ս. Պետերբուրգում երևացին և ժտութեամբ ապստամբութեան աջակցութեան համար պահանջում էին ռուսաց քաղաքականութիւնն իմանալ, և փող, ամենից աւելի փող, այն ժամանակ կարող էր կոմսի հակառակութիւնը ազատութեան մեծ գործի ամեն մի ձեռներեցութեան դէմ աւելանալ։ Նորա նուրբ դիւանագիտական բնաւորութեան, նորա ազնուական փակ էութեան չէր համաձայնում ժողովրդական տարրերի հետ շփումն ու հաղորդակցութիւնը. պէտք էր հոգալ, որ իւր սեփական պաշտօնը կայսեր առաջ, ինչպէս նորերս Գալատիսի դէպքով, վտանգի չենթարկուի։ Ուստի Կապոդիստրիան ամենից առաջ ձգտում

էր, որ այս յանդուգն պատուիրակների առաջ չխայտառակուի. Նա յետ քաշուած մնաց և դուրս չեկաւ իւր դրութիւնից և հեռու կեցաւ։

Այս քաշուած մնալը ի հարկէ անհնարին՛ եղաւ, երբ Հետերիայի ընդհանուր պատուիրակ Քսանթոսը Պետերբուրգում յայտնուեցաւ և կարծես թէ կոմսի կրծքին դէմ արաւ ատրճանակը։ Թեթևսոլիկ ուղևորը մի ամբողջ տարի անցկացրեց իւր սեփական և ընկերութեան գործերի համար այս ու այն կողմ թափառելով. երբ նա վերջապէս 1820 թուականի փետրուարին իւր ուղևորութեան նպատակին հասել էր, ամենանյարմար վայրկեանն էր, որ կարելի էր մտածել։ Ալեքսանդր կայսրը թշնամացել էր յառաջադիմականների հետ։ Եւրոպայի հարաւային արևմուտքից հասած լուրերից դժկամակ նա վատ էր տրամադրուած։ Այն զինուորական ապստամբութիւնը, որ Կադիքսում Ամերիկա ուղարկուելիք գնդերի մէջ ծագել էր, կատարեալ յաջողութիւն էր ունեցել։ Ֆերդինանդ Է. Թագաւորը ստիպուել էր 1812 թուականի կորտեսի՝ Սպանիոյ ազգային ժողովի վարչութիւնը վերահաստատել և երդուել։ Սակայն արևելեան պետութիւնները Սպանիոյ միապետի դէմ գործ դրած այս ճնշումը համարեցին մի նախադէպ, ռամկավարութեան մի յաղթանակ։ Նոքա վախենում էին իրենց իշխանական առանձնաշնորհութեանց համար և այն էին մտածում, թէ ինչպէս կարելի է յեղափոխութեան առաջն առնել։ Ուստի այդ վայրկեանին, երբ խնդիրն այն էր հարաւում ժողովրդական շարժման առաջ մի թումբ քաշել և Սրբազան Դաշնակցութեան արդէն սակաւ ինչ թառամած դափնիները նորից թարմացնել, այսպիսի ժամանակ յունաց մի գաղտնի ընկերութեան պատուիրակը չէր կարող ռուսաց արքունիքում ուրախութեամբ ընդունուիլ։ Ինքն ըստ ինքեան զայրացած առաջուան ժպիրհ հարցմունքներից, այժմ Կապոդիստրիան ամենից աւելի պատրաստ էր եւրոպական մեծ փոթորիկներին դիմադրել և ընդնմին իւր բարձր դիրքում մնալ։

Քսանթոսը նորա մօտ մտաւ Անթիմոս Գացիսի մի յանձնարարականով, որտեղ ասւում էր. «Յիշո՞ւմ էք, տէր կոմս, երբ մենք Վիեննայում մեր ազգի եղկելի դրութեան վրայ խօսում էինք և դուք ինձ ասացիք. Չկա՞յ արդեօք Ձեր մէջ և ոչ

մի Թրասիբուլ։ Տեսէք, թէ որքան Թրասիբուլներ են այժմ ձեզ ներկայանում»։ Սակայն հին դարու դէմքերի մասին արած այս ակնարկը անուշադիր մնաց։

Բասնթոսը աւելի ևս թախանձագին ստիպում էր և յայտնում, որ ապստամբութիւնն անխուսափելի է, և Կապոդիստրիասը չպէտք է անտարբեր մնայ և, հրաժարուելով իւր ազդեցիկ առաջնորդութիւնից, յոյների յոյսը կտրէ։ Կոմսն ստիպուած եղաւ վերջապէս իւր համոզմունքը յայտնելու։ Նա բացէիբաց մերժեց առաջնորդ լինել, բայց խոստովանեց, որ ընկերութեան հիմնական մտքերին համաձայն է, ի վերջոյ Բասնթոսին յայտնեց. «Եթէ այժմ ես չեմ կարող, կարող են մեծամեծները, հենց որ այս կ'իմանան, ուրիշ միջոցների դիմել, և ես մաղթում եմ, որ Աստուած օգնէ ձեզ հանելու ձեր կէտ նպատակին»։

Բասնթոսը հասկացաւ, որ դիւանագէտից այլևս ոչինչ սպասելու չէ, քան համակրութեան մի մանուածապատ արտայայտութիւն. նա յետ դարձաւ Մոսկուա և իւր յոյսը դրաւ այն զինուորի վրայ, որի երևակայութիւնը կարելի էր աւելի արագ յանկարծակիի բերել և հայրենասիրութեանը նիւթ մատակարարել։ Ալեքսանդր Իպսիլանտիսը Ֆանարի ամենանշանաւոր և ամենահին ընտանիքից էր, որ ծագում էր Տրապիզոնի մօտի Իպսիլի գիւղից։ Այս ընտանիքը պարծենում էր, որ իւր երակներում կայսերական արիւն է հոսում, քանի որ Կոստանտին Իպսիլանտիսը 1390 թուականին պսակուել էր Էմանուէլ Գ. կայսեր դստեր հետ։ Աղա Յոհան Իպսիլանտիսի որդի Ալեքսանդրը խելացութեամբ և ճարտարութեամբ բարձրացաւ և 9-ն օգոստոսի 1774 ամի հասաւ Դռան թարգմանի պաշտօնին։ Շուտով այնուհետև դարձաւ Վալախիոյ հոսպոդար, և խելացի կառավարութեամբ յաջողեց ցարդ շատ անխնամ մնացած երկրի օժանդակ միջոցները բարձրացնել, կազմեց մեծ մասամբ յոյներից մի կայուն բանակ և ազգային միութեան հողը հարթեց։ Ութսուն տարեկան զառամեալ հասակում գլխատուեցաւ։ Նորա որդի Կոստանտինը, որ նմանապէս Դռան թարգմանի պաշտօն էր ստանձնել, խառնուեցաւ Եւրոպայի մեծ քաղաքական բարդութեանց։ Եւ որովհետև նա ռուս արքունիքին անձնուէր էր և չէր քաշւում Ֆրանսացոց

դիւանագէտների դիտաւորութեանց արևելքում խոչընդոտ հանդիսանալ, ուստի Նապոլէոնը նորան սաստիկ թշնամի էր և բանը այնտեղ հասցրեց, որ Կոստանտինը ստիպուած հեռացաւ Կ. Պոլսից և քաշուեցաւ Կիև։ Նորա հինգ որդիներից աւագը՝ Ալեքսանդրը արդէն վաղ մտել էր ռուսաց ծառայութեան։ Նա Նապոլէոնի արշաւանքներին փայլեց։ Դրեզդենի մօտ զրկուեցաւ ձեռքից թնդանօթի հարուածով, Կուլմի մօտ բարձրացաւ մայորութեան՝ համարակալութեան։ Երբ Ալեքսանդր կայսրը հարցրեց նորանից, թէ արդեօք գոհ է իւր նոր աստիճանով. նա մի անհամեստ պատասխան տուաւ, թէ «ինքը լաւագոյն վարձատրութեան արժանի էր և սպասում էր»։ Ցարը այս մարդու յանդգնութիւնը սրտաբացութիւն համարեց և սկսաւ այն ժամանակից իւր ուշքը նորա վրայ դարձնել։ Սակայն քաղաքականութեան մէջ կոմս Կապոդիստրիասի խելամտութիւնը կայսեր աչքին աւելի բարձր էր։ Երբ Իպսիլանտիսը Արևելեան հարցի և Յունաստանի դրութեան մասին ակնարկում էր, միշտ կարեկցական և բարեացակամ, բայց խուսափողական պատասխան էր ստանում։ Եւ յիրաւի իշխանի իբրև պետական անձնաւորութեան ընդունակութեան վրայ եղած անվստահութիւնը դժբախտաբար չափազանց արդարացի էր։ Ալեքսանդր Իպսիլանտիսը մի քաջարի սպայ էր, որին ուր դնէիր ճակատամարտի ժխորում իւր պարտքը կատարում էր։ Բայց նա ևս զինուորի պէս սովոր էր հրամաններ ստանալ և հրահանգուել. մի անկախ դիրքում նորա գլուխը կը խառնուէր. քաղաքագէտ լինելու համար նորան պակասում էր եռանդուն կամք և ինքնագիտակից հետևողականութիւն։ Նա ոգևորութիւն ունէր, բայց ոչ մտքի պայծառութիւն։ Եւ ինչ որ ամենավատն է, չափազանց քիչ անդորր և խոհուն էր, որ մի մեծ քաղաքական ճգնաժամին արհամարհէր կեղծ և խաբեբայական միջոցները։

Արդ երբ Բասնթոսը իշխանին նախ և առաջ Յոհան Մանոսի միջոցով զննեց և, որովհետև հողը յարմար գտաւ, անձամբ Հետերիայի կողմից յառաջ եկաւ իւր առաջարկներով, Իպսիլանտիսը սաստիկ յուզուեցաւ։ Վասնզի Հետերիան, որի ոյժն անյայտ և գործունէութիւնը թագուն էր կատարւում, արտասահմանում շատ աւելի նշանակութիւն էր

ստացել, քան թէ արժէր, և իշխանը դուցէ մտածէր, թէ պակաս է միայն մի զօրեղ ընդհանուր ղեկավարութիւն, որպէսզի եղած օժանդակ ոյժերով մեծ գործ կատարուի։ Անշուշտ իւր անձնական շահը վտանգի էր ենթարկուելու։ Իպսիլանտիսի ընտանիքը նշանաւոր հատուցման գումարներ ունէր Դոնից պահանջելու. Դանուբեան իշխանութեանց միջի կալուածքները արքունիք գրաւուելու պատճառաւ։

Իշխան Իպսիլանտիսն ինքն երկու միլիոն առնելիք ունէր։ Նա գիտէր, որ Ռուսաստանը նորա համար Դիւանից այդ պահանջում էր. գիտէր, որ ամեն ինչ կորցնում էր, երբ ինքը առանց Ռուսաստանի հաճութեան մի այսպիսի յանդուգն ձեռնարկութիւն էր սկսում։ Բայց և այնպէս փառքի տենչը և հայրենասիրութիւնը գերակշիռ հանդիսացան։ Իպսիլանտիսը յայտնեց, թէ պատրաստ է Հետերիայի ընդհանուր ղեկավարութիւնն ստանձնելու։

Եւ որովհետև նա տկարութեան պատճառաւ ստիպուած էր սենեակում փակուած մնալ, ուստի հրաւիրեց կոմս Կապոդիստրիասին և նորան պատմեց եղելութիւնը։ Եւ երբ դիւանագէտ բարեկամը ամենևին չհակառակեց, այլ ոյժ տուաւ նորա մտադրութեան, այն ժամանակ Իպսիլանտիսի վստահութիւնը գործի յաջող ելքի համար աւելացաւ և նա չփչիտակ հարցրեց, թէ արդեօք կարելի է ռուսաց կողմից նիւթական օժանդակութեան յոյս ունենալ. «Բաւական է որ մի քանի հազար ապստամբ Յունաստանում երևան, Ռուսաստանը իւր ոյժերի չափ օգնութեան կը հասնի»։—«Աւելին ես չէի ցանկանում, պատասխանեց Իպսիլանտիսը, երբ ես ընդհանուր ղեկավարութիւնն ըստանձնեցի և ես կայսեր հետ կը խօսեմ իմ մտադրութեան մասին»։ Այս վայրկեանին երևաց, որ Կապոդիստրիասը ուղիղ և պարզ մարդ չէր. նա իւր բարեկամին վճռական կերպով հակառակեց կայսրից բան խնդրելու. որովհետև կայսրը, ինչպէս ասում էր Կապոդիստրիասը, յոյների առաջուան խնդիրներից դժգոհ է և այնչափ պատերազմի դէմ է, որ նորան չի լսիլ։ Բայց երբ Իպսիլանտիսը իւր մտադրութեան վրայ պնդեց, զգուշաւոր դիւանագէտը վերջապէս համոզեց նորան հրաւիրելով իրերի դրութեան մասին մի յուշագիր պատրաստելու, որ խոստացաւ

յաջող դէպքում կայսեր ներկայացնել։ Իպսիլանտիսը Մանոսի հետ ողջ գիշերն աշխատեց և արդէն հետևեալ օրը ցանկացած յուշագիրը ուղարկեց։ Սակայն Կապոդիստրիասը խնդրեց ութ օր յետաձգել։

Երբ պայմանաժամն անցաւ, նա յայտնեց, թէ բնաւ անկարելի է կայսեր այդպիսի առաջարկներ անել, որովհետև Ալեքսանդր Ա.-ը բոլորովին հակառակ է Թուրքիոյ դէմ պատերազմելուն և Անգլիոյ հետ ընդհարուելուն։ Չնայելով այս բոլորին ռուսաց նախարարը ոչ իւր առաջուայ հաւատքներն էր ետ առնում, ոչ էլ դժկամակ էր Իպսիլանտիսի ծրագրից, որ նա Հետերիայի գլուխն անցնի. և միայն չափազանց շատ հասկանալի էր, որ շլացած զօրականը հաստատապէս երևակայում էր, թէ կայսեր համար պէտք է մի կատարուած իրողութիւն, թէ նա լոկ պաշտօնական նկատումների պատճառաւ չէ քաջալերում այն ձեռնարկութիւնը, որին ծածուկ համակիր է։ Կապոդիստրիասը միանգամայն նորան համոզեց, որ ռուսաց ծառայութիւնը չթողնէ, մինչդեռ Իպսիլանտիսն սկզբում ճիշտ տակտով մտադիր էր թողնի դուրս գալ։ Ամեն ինչ արուած էր, որ վառ պահեն այն միտքը, թէ ռուսները աչք կը փակեն, և Իպսիլանտիսը զոհ դարձաւ իւր դիւրահաւատութեան և ուրիշի կեղծելու արուեստին։ Թարմ յոյսերով ոգևորուած այժմ նա հաղորդեց ընկերութեան գլխաւորներին, որ ինքը ընդհանուր ղեկավարութիւնն ստանձնել է և իւր գործողութեանց համար ապստամբութիւնից յետոյ ժողովրդին հաշիւ ու համար կը տայ։ Քսանթոսն այլևս չը քաշուեցաւ, հակառակ 1818 թուականի սեպտեմբերի 22-ի համաձայնութեան (որ ապաքէն Կապոդիստրիասին ունէր ի նկատի), իւր սեփական պատասխանատուութեամբ ընդունեց Իպսիլանտիսի առաջարկները, տուաւ նորան 'Αρχὴ-ի անդամութեան մրցագիր (diplom) և յանձնեց իւր թղթերն ու հաշիւները, որոնց մէջ էր 1819 ամի փետրուարի 19-ի ելքի ցուցակը (որ 121,630 գրոշի էր հասնում)։ Ալեքսանդր Իպսիլանտիսն այնուհետև կրում էր «Εὐεργετικὸς» բարեգործ մականունը, ինչպէս Կապոդիստրիասը «Καλὸς» այսինքն բարի։ 12-ն ապրիլի 1820 ամի Εὐεργτικὸς-ը անուանուեցաւ 'Αρχὴ-ի ընդհանուր վերակացու։ Այս անցքի վայրկենական յաջողու-

թիւնը նշանաւոր է. մի ձեռքի ղեկավարութիւնը իսկոյն զգացւում էր: Ամեն կողմ Իպսիլանտիսը յայտնեց, որ ինքն անուանուած է ընդհանուր էֆոր, պահանջում էր փողով և զէնքով նպաստել և յորդորում էր «Միլտիադէսի ու Լեոնիդասի սերունդներին», որ կռուի պատրաստ լինին: Ամեն ուրեք նորա կոչերը ոգևորութիւն էին ներշնչում: Մոլդաւիոյ իշխան Միխայէլ Սուտսոսը շատ գաղտնի խոստացաւ իւր գործակցութիւնը, նուէրներ ուղարկեց 1000 դուկէն «Բիւզի դպրոցի համար»: Նորա քարտուղար Ռհիգոսը մի ոգևորիչ ձօնով 8-ն Նոյեմբերի 1820 թուականի Իպսիլանտիսին համեմատում էր ոգով Թրասիբուլոսի և Պելոպիդասի հետ, իսկ արտաքինով մի Աքիլլէսի: Նա նորան երդուեցնում էր, որ «նախնիքների փառքի ճանապարհը շողշողուն սրով ցոյց տայ»: Կ. Պոլսում իշխանի առաջին գրութիւնը յաղթանակով տնէ տուն էին շրջեցնում. փոքրիկ թղթի պատառները պահում էին, ինչպէս մասունքներ: Նոյն իսկ ծեր Կոլոկոտրոնիսը, որ բնաւ մի առանձին մոլեռանդ (enthusiast) չէր, յափշտակուեցաւ, երբ ընդհանուր էֆորից նամակ ստացաւ, որտեղ ասուած էր, որ նորա «եռանդը և քաջութիւնը պատշաճաւոր տեղում բաւական յայտնի է»:

«Երկինքն ու երկիրը, այսպէս է պատմում նա յետոյ, կարծես այն գործի արձագանգն էին կրկնում, հայրենիքի չեփորը հնչում էր, և կրակէ գրերով Ալեքսանդր Իպսիլանտիսի անունը ես գրեցի իմ սրտում»:

Մի կենտրոնական ղեկավարութեամբ միանգամայն լարուեցան ներքին կապերը և Հետերիայի մէջ մտաւ մի զօրեղ կազմակերպութիւն: Իպսիլանտիսն ըմբռնեց, որ հին սակաւ ինչ ծանրաշարժ վարչութեամբ ճգնաժամին շատ քիչ արդիւնքի կը հասնին: Նա վերջացրեց դաշնեղբայրների և աշկերտների երկու աստիճանը և ջանք թափեց, որ այլևս չաշխատեն ստորին դասերից նոր անդամներ դարձնելու, որովհետև սոքա դիւրութեամբ առանձին անհամբերների համար դառնում էին խռովարարութեան առարկայ և վաղաժամ ապստամբութեամբ կարող էր ամեն ինչ փչանալ:

Առաջին աստիճան նա հաստատեց քահանաներինը, երկրորդ հովիւներինը և առաջին աստիճանը մտնելու համար

իբրև պայման խստութեամբ պահանջում էր հաւատը քննել: Երկրորդի համար նա աչքի առաջ ունէր գլխաւորապէս բարձրաստիճան հոգևորականութեան անդամներին: Ապա նա վերացրեց հովուապետի աստիճանը և ընծայեալների տեղ դրաւ զինուորական պաշտօնեաներ: Սոքա պէտք է նորա ներկայութեամբ երդուէին հաւատարիմ և հնազանդ մնալ, ստանում էին ասպետութեան հարուած կրկնելով «արժանաւոր» բառը, և վերջապէս սուրը կապում էին նորա մէջքին: Նիկոլայոս և Գէորգ Իպսիլանտիսը առաջին ընդունուածներն էին, որոնցից յետոյ Գէորգ Կանտակուզենոսը և 1820 թուականի օգոստոսին Պեռհեւոսը: Մի զինուորական կարգադրութիւն 15 յօդուածով Հետերիայի անդամներին խիստ կարգապահութեան հրաման արձակեց: Զինուորականները պէտի ուխտէին հայրենիքին հաւատարիմ մնալ, իսկ ստորին դասակարգերը՝ բարձրագոյններին անպայման հնազանդութիւն: Այսպէս ամբողջ Հետերիան զինուորական-ազնուապետական ձև ստացաւ: Էֆորիաների սիստեմի վերաբերմամբ ընդհանուր էֆորը յայտնեց իւր կատարեալ հաճութիւնը. նա առանձին էֆորութեանց խստիւ պատուիրեց հրահանգներով անդամների վրայ արթուն հսկել և իւրեանց պարտքը դէպի ընկերութիւնը կատարել, կանոնաւորեց նպաստները, հայրենիքի անունով ապահովագրեր էր տալիս և «ազդում էր այն ուղղութեամբ, որ կենտրոնական էֆորիաները ռուս կոնսուլներ և կոնսուլական գործակալներ ընդունեն իրենց մէջ»: Ռուսասէր Ֆիլեմոնի այս խոստովանութիւնը շատ մեծ քաղաքական նշանակութիւն ունի: Ընդհանուր էֆորի գրութիւնները, որ Պետերբուրգից էին թուարկւում, իրենց ազդեցութիւնն էին թողնում. տեղը, մարդու անունը նոյնպէս նպաստում էին, որ բոլոր յոյների կրծքում Ագաթանգեղոսի գուշակութիւնից իվեր ռուսաց աջակցութեան ակայծեալ յոյսը իրականութիւն դառնայ: Իրօք, մի դիւթիչ երրորդութիւն էր. 'Αρχή-ն, Իպսիլանտիսը և Պետերբուրգը: Յոյնը աւելի հեռու չէր մտածում և չէր քննում: Շարժումն այնպէս ստացաւ, որ Իպսիլանտիսն այլևս չէր կարող հեռուում մնալ և Պետերբուրգից ամբողջ գործի լարերը քաշել:

«Երբ Պիեմոնտում և Նէապոլսում յեղափոխութիւնը

թռնկուեցաւ, խոստովանում էր նա յետոյ, ինձ այլեւս անհնարին էր միանգամ տուած զարկը յետ առնել, որչափ էլ որ այս զարկի հիմնական գծերը տարբեր էին այն բանից, որ այն երկու երկրներում խռովայոյզ մտքերը յեղափոխութեան էր դրդել»:

Անշուշտ իշխանի համար դժուար էր իւր բարերարից՝ Ալեքսանդր կայսրից բաժանուել՝ ռուսաց դիտաւորութեանց մասին հաւաստի չեղած: Բայց Կապոդիստրիասը ցրեց նորա բոլոր տարակոյսները ընդունելով՝ հետերականների ծրագրերը լիապէս և խորհուրդ տալով՝ որ շուտով սկսի կռուել: Ալեքսանդր Իպսիլանտին անորոշ ժամանակով արձակուրդ խնդրեց ջրեր գնալու և 1820 թուականի յուլիսի վերջին Քանթոսի, Մանոսի և Իպիտսի ուղեկցութեամբ դիմեց Մոսկուա, որտեղ նա իւր հայրենակիցներից ոգևորութեամբ ընդունուեցաւ:

Կիեւում նա հրաժեշտ տուաւ իւր մայր Եղիսաբեթին, որ իբրև «մի երկրորդ Հեկուբա», չկարողացաւ իւր ցաւագին նախազգացմունքը ծածկել, երբ տեսաւ որ իւր որդիքը որոշել են իրենց կեանքը զոհ բերել: Արդէն երևում էին փոթորկի կարապետները: Իշխանի շուրջը վխտում էին յանդուգն արկածախնդիրներ իւրեանց ծրագրերով, որ մէկը միւսից գերազանցում էր խիզախութեամբ և վայրենութեամբ: Մի քանիսներն ուզում էին Իբրայիլի բերդի վրայ յանկարծակի յարձակուել, միւսները Ալեքսանդրիայում հիմնել մի առևտրական բանկ, որ Մեհմէտ Ալուն խաբելով մի քանի հարիւր հազար պիաստր վաստակեն: Պատերազմական գործողութեանց ծրագրեր էին առաջարկւում, որոնցով բովանդակ եւրոպական Թուրքիան պէտք է յուզուէր: Այո, ոմանք այս «Կատիլինեան վաճառական պատանիներից», ինչպէս Ցինկայն է անուանում նոցա, մի ընդարձակ ծրագիր էին կազմել, որ յանկարծ Կ. Պոլսի վրայ յարձակուէին, Թուրքերի նաւատորմն այրեն և սուլթանին բռնեն: Իպսիլանտին այնչափ անխոհեմ էր, որ այսպիսի պատիր, բայց փայլուն ուրուականներով (phantasmagorie) խօլական երևոյթներով մի առժամանակ հրապուրուեցաւ. ի նկատի առնելով՝ որ վճռական վայրկեանը մօտենում է, նորից երդուեցրեց Հետերիայի ամենամեծ

անդամներին, որ նոքա այժմեանից մինչև վերջին շունչը միմիայն հայրենիքին նուիրուին, չտապեց երդուեցնել յոնիական նաւագնացներին, որոնց համոզել էին Թուրք նաւատորմի դէմ դաւ դնելու, և ուշք չդարձրեց նոյն իսկ Կ. Պոլսի էֆորների լուրջ խրատներին:

Որպէսզի գործողութեանց հանդիսավայրին աւելի մօտ լինի և Կ. Պոլսի հետ մշտական հաղորդակցութիւն պահպանէ Իպսիլանտին ուղևորուեցաւ Օդեսա, որտեղ նա Կանտակուզենոսի տանը շատ սիրալիր կերպով ընդունուեցաւ: Իհարկէ նորան ընդդիմացաւ հաշուող, երկչոտ, ունևոր առևտրական դասը, յոյն հարուստ սեղանաւորները՝ «այս ողորմելի ոփշտները», ինչպէս անուանում է նոցա Իպսիլանտիսը, ցոյց տուին տեսակ տեսակ դժուարութիւններ, խոշորացրին վտանգը և քաշւում էին այն զոհաբերութիւնն անելու, որ հասարակ մարդիկ անհնարին չէին խնայել: Իպսիլանտին ստիպուած էր «անձնական փոխառութիւններ անել, ամենակարևոր կարիքները լրացնելու»: Որչափ աւելի չնչին էին միջոցները, այնչափ աւելի զօրացաւ նորա ինքնավստահութիւնը: Նա շարունակեց զարմանալի անդորրութեամբ երևակայեալ բանակների վրայ իշխել և պատիր օդային ամրոցներ շինել: Յուլիսի 30-ին Կիևից Ոլիմպացի Գէորգակիսին «Դանուբեան բանակի ընդհանուր զօրավար» էր նշանակել, Օդեսայից Պեռհեւոսին օգոստոսի 26-ին անուանել էր «Եպիրոսի բանակի» ընդհանուր զօրավար: Ճշմարիտ որ արդէն դժուար է որոշել, ով էր խաբեբան և ով խաբուածը: Պատրանքն աճում է և ռազմական ծրագրի որոշման վրայ: Իշխանը հակամէտ էր, որ Պելոպոննէսի ափը դուրս գայ և հարաւից սկսէ կռիւը, որովհետև նորան ներկայացնում էին Պելոպոննէսն ինչպէս մի զինուած բանակ և Թուրքերի թիւը ցոյց էին տալիս 100,000, իսկ յոյներինը 150,000: Նա կամենում էր գաղտուկ Տրիեստ ուղևորուել, յոյն նաւով Մանի նաւել և այնտեղ 25-ն մարտի 1821 ամի անկախութեան դրօշը բարձրացնել: Սակայն Պելոպոննէսացոց և Ալի փաշայի պատուիրակ Պապարիգոպուլոսը, որ իշխանին Պետերբուրգում չէր հանդիպել և այժմ Օդեսայում նորա առջև դուրս եկաւ, հարաւում զինուորական ույժն այնքան չնչին ցոյց տուաւ, որ Իպսիլանտին սկսաւ տատանուել:

Թուերը բաւական ճիշտ էին, բայց 100,000 Թուրքերը զինուած և մարզուած էին, իսկ Պելոպոննէսի քրիստոնեաների կէսն էր միայն մարտիկ և սորանից էլ առ առաւելն մի երրորդը զինուած։ Պապարիգոպուլոսը իւր սաստի ճշգութիւնը արդարացնում էր պելոպոննէսացոց դասակարգերից նորան տուած ճերմակ վաւերագրով։ Ապա մատնանիշ էին անում որ՝ եթէ ապստամբութիւնն սկսուի Դանուբեան իշխանութեանց մէջ, Դուռը Սերբիոյ և Բուլղարիոյ մասին անհանգիստ լինելով՝ իւր բոլոր գունդերը Դանուբի կողմերը կը կենտրոնացնէ։ «Ապա Յունաստանը կը դատարկուի թշնամիներից»։ Բայց եթէ նախ Պելոպոննէսը ոտքի կանգնէ, այն ժամանակ Թուրքերը իրենց բոլոր զօրութիւնը այնտեղ կուղղեն և ապստամբութիւնը բնում կը խեղդեն։ Թուրքերի դէմ պատերազմներում ծերացած պատմոսցի Սաւվասը, մի փառատենչ, սրտոտ և խորամանկ վարձկան հարիւրապետ, կազմել էր 25-ն սեպտեմբերի 1820 ամի Բուքարեստում մի ծրագիր, որ համաձայն էր այս փաստաբանութեանց։ Սաւվասը կամենում էր նախ սերբերին, ապա բոսնիացոց և չերնոգորցոց խռովեցնել, Դանուբեան իշխանութիւններն ապստամբեցնել, Թուրքերին երկիւղ ներշնչել ռուսաց միջամտութեամբ և վերջապէս մինչև իսկ ռուսաց ներգործութեամբ պարսիկների և Թուրքերի միջև պատերազմ յառաջ բերել, որ Դիւանի ոյժերը բոլորովին ջլատէր։

Այսպէս ամեն բան հանգում էր մի կամկամութեան (Alternative). արդեօ՞ք պէտք էր հարաւում սկսել կռիւը յենուելով զուտ հելլենական ոյժերի վրայ, թէ հիւսիսում՝ վստահելով ռուսների օգնութեան։ Այս կարևոր խնդիրը վճռելու համար Իպսիլանտիսը հրաւիրեց նշանաւոր հետերականներին մի ժողով, որ տեղի ունեցաւ 1-ն հոկտեմբերի 1820 ամի Իսմայիլի գերեզմանատանը։

Այստեղ Պելոպոննէսի մասին հայեացքները բոլորովին հակառակ էին միմեանց։ Դիկէոս վարդապետը առաջ բերաւ պելոպոննէսցիների մի ընդհանուր զեկուցում, որով իբրև թէ զէնքեր, ռազմամթերք և մարդիկ պատրաստ էին և սպասում էին միայն Իպսիլանտիսի երևալուն և ներկայութեան կռիւ սկսելու համար։ Նորան առարկում էին, որ նա մոռացել

է, չգիտէ Պելոպոննէսի դրութիւնը. որովհետև տարիներից ի վեր այդ երկիրը թողել հեռացել է։ Այլև հիմնաւոր կասկած կար, թէ արդեօք իսկական են այն վաւերագրերը, որ այս անվստահելի, միջոցների մէջ շատ խտրութիւն չդրող մարդը ժողովի առաջն էր դնում։ Պեռհեւոսը, որ նորերս Պելոպոննէսը դիտել էր և ճանաչում էր, ամենաստաք կերպով ընդդիմախօսում էր և պնդում, որ այն երկրների պատերազմի պատրաստ լինելը գոյութիւն ունի միայն մի քանի տաք գլուխներում, որոնք ամեն ինչ պիտի փչացնեն։ Բայց Ալեքսանդր Իպսիլանտիսն ստիպուած էր աւելի ես հակուել Դիկէոսի հայեացքին, որովհետև Պելոպոննէսում կռիւն սկսելով Ռուսաստանը աւելի նուազ անյարմար դրութեան մէջ կ'ընկնէր Եւրոպայի առաջ։ Աւելի երկար չկարողացաւ սպասել։ Նա իւր անհամբերութիւնն արդէն առաջուց բնորոշ կերպով յայտնել էր, երբ սեպտեմբերի 9-ին Բասնիթիսին գրում էր.«Շատերն սկսում են տեղի անտեղի խօսել. այս լաւ չէ։ Պէտք է աճապարել. թէ չէ ամեն ինչ սատանայի բաժին կը լինի»։ Իսմայիլի ժողովն ուրեմն արհամարհեց Պեռհեւոսի վեհերոտ իմաստութիւնը և Դիկէոսի եռուն կրքերից տարուեցաւ։ Վճռեցին անմիջապէս Պելոպոննէսում յարձակուիլ, կռիւն սկսել։ Նորից նամակներ և սուրհանդակներ գնացին ամեն կողմ։ Դիկէոսն շտապեց Հիդրա, Պեռհեւոսը Լակոնիա, որպէսզի ամեն ինչ պատրաստէ «ընդհանուր էֆորին» ընդունելու։ Եւ անշուշտ, եթէ մի անգամ սկսած ասպարէզով անյողդողդ յառաջ գնային, հետերիայի ակնկալութիւնները բոլորովին անհիմաստ չէին։

Սակայն առաջնորդի վաղվաղկոտութեամբ նորէն արագ կատարուած վճիռը ջնջուեցաւ։ Հազիւ թէ Իպսիլանտիս իշխանը Քիշնև իւր աներ Կատակազիի մօտ էր հասել, որ փոխեց իւր ծրագիրը։ Ռիգասի վիճակն սպառնագին կանգնել էր նորա հոգու աչքի։ Նա վախենում էր, որ Աւստրիոյ միջով Տրիեստ անցնելիս Աւստրիոյ ոստիկանութեան ձեռքն ընկնի։ Նա որոշեց ուղղակի Իսմայիլի վճիռների հակառակ Դանուբեան իշխանութեանց մէջ յարձակումն սկսել։ Նորան աւելի յարմար եւ թուեց հիւսիսում ապստամբութեան գլուխն անցնել, որովհետև Միլոշ իշխանի յարաբերութիւնը Դիւանի հետ լարուելով մինչև իսկ յոյս կար, որ սերբերը կ'աջակցեն։ Ռուսաս-

տանի և Դռան մէջ եղած դաշնադրութիւնները արգելում էին
այս պետութեանց առանց ընդհանուր համաձայնութեան
առանձին առանձին զօրքով այս իշխանութեանց մէջ մտնելու։
Եթէ Թուրքիան Իպսիլանտիսի ապստամբութեան պատճառաւ
գնդեր ուղարկէր Բուքարեստ, իշխանը համարում էր, թէ
ռուսներն էլ ըստ դաշնադրութեան կը միջամտեն ի նպաստ
իւր։ Միայն այսպէս կարելի է բացատրել այն կատարեալ
կուրութիւնը, որ նորան բռնել էր. միայն այսպէս կարելի է
բացատրել և նորա թռուցիկի այն չարագուշակ նախադասու-
թիւնը, որով նա ռուսների աչք փակելը պարզ ու պարզ
ւետում էր. «Իմացէք, որ մի մեծ պետութիւն մեզ հովա-
նաւորում է»։ Նա իբրև թշնամութեանց սկսելու պայմանա-
ժամ նշանակեց 14-ն նոյեմբերի և հոկտեմբերի 24-ին
Սաւվասին և օլիմպացի Գէորգին նշանակեց ընդհանուր զօ-
րավար և Կարաւիասին՝ զօրավար։ Մի անգամ ևս գրեց
Կ. Պոլիս և գանգատւում էր, որ իւր հրամանները դանդաղ
են կատարւում։ Էֆորները յուսահատուեցան, որովհետև իրենք
շատ լաւ գիտէին, թէ որչափ անհնարին էր հետերականների
երևակայութեան ոյժի խիզախ թռիչքին հետևել, որոնք ուզում
էին, որ մի փոթորկալից գիշեր յանկարծ յարձակուեն նաւա-
տորմի, զինարանների և մայրաքաղաքի վրայ և սուլթանին
ստիպեն, որ անձնատուր լինի կամ ինքն իրեն այրէ։ Նոքա
յայտարարում էին, թէ մի ընդհանուր շարժում տեղի պիտի
ունենայ, որ իրենք չեն կարող յառաջ գնալ, որովհետև այն
ծրագրերն իրագործելու առիթը բաց էին թողել։

Եւ որովհետև Դանուբեան իշխանութեանց մէջ տակա-
ւին ամեն ինչ լաւ կարգաւորուած չէր, Սաւվան ու Օլիմ-
պացին երկպառակուեցան, և Միլոշը լուրջ ոչինչ չէր անում,
ընդհակառակը Հետերիայի վրայ նայում էր առ առաւելն
իբրև սերբերի նպատակներին հարկաւոր միջոց, ուստի Իպ-
սիլանտիսը յետաձգեց յարձակման ժամանակը։ Բայց օրհա-
սական որոշումը՝ հիւսիսում սկսելը մնաց նոյնը։ Հետերա-
կանների գործակալները յաջողեցին Դանուբեան իշխանու-
թիւնները բոլորովին փորփրել, երկրի ճնշուած և անհանգիստ
դրութիւնն էլ աւելի սաստկացնել։ Այդ իշխանութիւնները
մայրաքաղաքի շտեմարաններն էին։ Ինչպէս հին Հռովմում

այնպէս և Թուրքերի իշխանութեան միջոցին նահանգների
բերքերը մենավաճառքներ էին յօգուտ մայրաքաղաքի բնա-
կիչների։ Հոսպոդարները բացի իրենց հասանելիք հողի խառն
հասոյթի տասանորդից իրաւունք ունէին, որ հացահատիկները
և տաւարը նախ իրենք գնէին, մի բան որ ի չարն էր գործ
դրւում և առիթ էր դառնում ժողովուրդը կեղեքելու։ Սովո-
րաբար այս առուած կառավարիչներն իրենք էին հացահա-
տիկների և տաւարի առևտուրն անում, նոքա կարճ ժամա-
նակում մեծամեծ գումարներ դիզեցին և մինչդեռ պահան-
ջում էին, որ ուրիշները խստիւ պահեն մենավաճառութեան
օրէնքը, իրենք խուսափում էին։ Այն ժամանակուան հոսպո-
դար Միքայէլ և Ալէքսանդր Սուտսոսներին էլ երեսով էին
տալիս, որ նոքա հասարակաց հաշուով հարստանում էին. նոյն
իսկ բոյարները՝ ազնուականները մրմռում էին և ժողովուրդը
բարձրաձայն և դառնագին բողոքում էր նոցա դէմ։

Հետերականները որոշեցին ռումանացոց դժգոհութիւնից
օգուտ քաղել. սակայն ռումանացոց տեղական վէճերին խառ-
նուելուց միանգամայն այն վտանգը կար, որ նոքա ստիպուած
պիտի լինէին իրենց սեփական համախոհների՝ Սուտսոսների,
դէմ ելնելու և նոցանից ձեռ քաշելու։ Իպսիլանտիսի և
Միքայէլ Սուտսոսի մէջ անհամաձայնութիւն ծագեց. սա
վերջին վայրկենին կորցրեց իւր Հետերիայի յաջողութեան
վրայ ունեցած վստահութիւնը և Ալէքսանդր Սուտսոսի հիւան-
դութեան պատճառով Վալախիոյ հոսպոդարութեան էր թեկ-
նածում։

Սկուլենիում տեղի ունեցած մի հանդիպման ժամանակ
Միխայէլ Սուտսոսի ներկայացուցիչ Ռհիցոսը գանգատուեցաւ
հետերականների վարմունքից, բայց Նիկոլայոս Իպսիլանտիսը
և Գէորգ Կանտակուզենոսը հիմնաւոր հակառակ գանգատներ
էին անում, պահանջում էին, որ իսկոյն զօրքը կազմակերպուի
և մերժեցին Հոսպոդարի առաջարկները, որոնց կէտ նպատա-
կին էր Կ. Պոլսում իշխանի եղբօրը գրաւել և այսպիսով մի
մարմին ստեղծել, որ կարողանար նոցա հաղորդել Դռան
գիտումները։

Սակայն այս առաջարկներով ուզում էին ժամանակ
վաստակել։ Միմեանցից սառն ու դժգոհ բաժանուեցան։ Միայն

Վալախիոյ հոսպոդարի մահով 1-ն փետրուարի 1821 ամի բանակցութիւնը նորէն սկսուեցաւ։ Արդ Բուքարեստի էֆորիան շարժւում էր, որպէսզի այդ ժամանակամիջոցին մինչև մի նոր հոսպոդար նշանակուելը օգուտ քաղեն Հետերիայի շահերի համար։ Նոքա իրենց կողմը շահեցին Թէոդոր «Վլադիմիրեսկոյին», որ ռուսաց ծառայութեան մէջ առաջացել էր և Վլադիմիրի խաչ ստացել, որպէսզի սա փոքրիկ Վալախիայում ապստամբութիւն սկսէ։ Թէոդորը մի կասկածամիտ, դեռուած և վայրագ ռումանացի էր, որ ոխ ունէր Թուրքերի ինչպէս և յոյների դէմ, որոնց միայն համարում էր Թուրքերի ձեռքին գործիք իւր աւելի նեղ հայրենիք Ռումանիան ստրկացնելու։ Այնուամենայնիւ նա յարել էր Հետերիային, որովհետև նորան դիւր էր գալիս այդ ընկերութեան ռուսօրթոդոքս գունաւորումը։ Նա յոյս ունէր, որ Հետերիան կը նպաստէ մի ռումանական ապստամբութեան, և հետերականները իրենց կողմից ամեն բան արին, որ նա այս ցնորքներով կերակրուի։ Օլիմպացի Գէորգը չոյում էր նորա իշխաքաղցութիւնը և բանն այնտեղ հասցրեց, որ նա ըստ երևոյթին ռումանական, և մինչև իսկ յոյներին թշնամական շարժման համար գործում էր, բայց որ իրօք յունաց ապստամբութեան նպատակներին էր ծառայում։ Նա նորան համոզեց, որ փոքրիկ Վալախիայից իւր հայրենակիցներին Փանարեցիների դէմ ի զէն կոչէ։

Սակաւաթիւ հաւատարիմներով Թէոդորը նուաճեց Չէրնէցոց քաղաքը Տրայանոսի կամրջի աւերակների մօտ և հրատարակեց, թէ ինքն իբրև Դռան հաւատարիմ հպատակ գալիս է հոսպոդարների գործ դրած չարիքներին ու կեղեքումներին վերջ դնելու։

Այս ի հարկէ շատ համաձայն չէր Հետերիայի ծրագրին։ Բայց հետերականները առհասարակ կամենում էին յառաջ բերել մի կատարուած իրողութիւն, որից կարելի լինէր ապստամբութեան համար մի քաղաքական դրամագլուխ կազմել, նոքա կամենում էին, որ մի սկիզբն դրուի, թէև խառնակութեանց սկիզբն լինէր այդ։ Վասնզի այժմ Մոլդաւիոյ հոսպոդարը չէր կարող աւելի երկար իւր անձնամոլական շահերի համար ետ քաշուած մնալ։ Իպսիլանտիսը նորա առաջ

բացարձակ պահանջներ դրաւ, և այդ թոյլ մարդը նեղն ընկած ընդունեց, ինչ որ կարող էր և ստիպուած էր անել։ Նա Իպսիլանտիսի ցանկացած զինուորական հրամանատարներ դրաւ Գալացում, Կիատրայում և Սուստաւայում, հոգս տարաւ պաշարեղէնի և կենսական պիտոյքների համար, տուաւ 135,000 գրոշ և Իպսիլանտիսին խոստացաւ այլև 150,000 նորա ձեռքը դնելու։ Նա իշխանին գրեց. «Ես այնպէս անմիտ և անարժան մէկը չեմ, որ իմ հայրենասիրական եռանդը վարձու տամ։ Ես կամենում եմ և պահանջում եմ միմիայն իմ անձկալի հայրենիքի բախտաւորութիւնը։ Երանի թէ, նորա վերանորոգութիւնը տեսնէի և նորա ամենանուաստ քաղաքացին լինէի»։ Այսպէս նպաստաւոր չէր բանը Սերբիայում, որի գործակցութիւնը Սաւասը շատ ու շատ կարևոր էր համարում, ինչպէս որ նա առհասարակ արտասահմանի վրայ կրթնելը փրկութիւն էր համարում։ Իպսիլանտիսը մի գրութեամբ 7-ն յունուարի 1821 ամի Միլոշին խոստացել էր մի օրինական իշխանի տիտղոս և հետը կցել մի դաշնագրութիւն, որով Յունաստանը և Սերբիան ապագայում դաշնակցական կապով պիտի կապուէին։ Բայց Միլոշը չխաբուեցաւ Հետերիայի պատիր յոյսերից և իւր ջանքերը նուիրեց գլխաւորապէս Սերբիային։ Սերբիայից ուրեմն կարելի էր յիրաւի համակրութիւն սպասել, իսկ ազդու օգնութիւն միայն այն ժամանակ, եթէ այդպիսով Սերբիան նիւթապէս շահուէր։

Ապստամբութեան ամենավերջին պայմանաժամը այժմ մօտեցել էր. Իպսիլանտիսը երկիւղ էր կրելու, որ սանձը իւր ձեռքից դուրս չպրծնի, եթէ նա դեռ աւելի երկար յապաղէր և վայրկեանը ձեռքից բաց թողնէր։ Հետերիային ամեն կողմից վտանգ էր սպառնում, եթէ վերջապէս դուրս չգար և իւր քաղաքական զօրութիւնը ցոյց չտար։ Նորա խիզախ դաւերը բացուել էին, նոյն իսկ օսմանցոց քնկոտ կառավարութիւնը անդադար եղած ցուցմունքներից արթնացել էր։

Ցիլիկի Հետերիայի անդամների մէջ Կ. Պոլսում մի «Յուդա Իսկարիովտացի», ոմն Ասիմակիս և Հերմիոնի մօտ սպանուած հետերականի վրիժառու եղբայր Եւստաթիոս Գալատիսը միասին մատնեցին գործը և մանրամասն տեղեկու-

թիւն տուին Թուրք ոստիկանութեան։ Նաշիում երեխաները փողոցում միմեանց պատմում էին, որ հոսպոդարը դաւաճանում է Դռանը։ Միլոշին ուղարկուած վերջին պատուիրակ Արիստիդիս պոպը՝ տէրտէրը բռնուեցաւ և Վիդդին քարշուեցաւ. սակայն նա ճանապարհին առիթից օգտուեցաւ, իւր թղթերը ոչնչացրեց և ինքն իրեն Ֆետիսլամի ժայռերից վայր գլորեց։ Իպսիլանտիսի թիկնապահներից մինը, Իսպատորոս, որ աճապարում էր դէպի Եանինա Ալի փաշայի մօտ, Մակեդոնիայում յարձակման ենթարկուեցաւ և սպանուեցաւ։ Երբ Պետերբուրգից եկող պատուիրակ Կամարինոսը վերադարձին սկսեց բաց անել, որ ռուսների աջակցութիւնը լոկ մի խաբեբայութիւն է և սարքած բան, հետերականներն ստիպուած եղան նորան սպանել տալ, որպէսզի ճշմարտութեան երեւան գալով ապստամբական ոգու բորբոքումը չխեղդուի։ Այսպէս դաւաճանութիւնն ու բռնութեան գործեր միմեանց վրայ արագ արագ դիզւում էին. աղէտն անխուսափելի էր։ Արդ ամենից աւելի խնդիրն այն էր, սուլթանի և Ալի փաշայի մէջ բռնկած ահռելի կռւում մէկի կողմը բռնել, հարկաւոր էր օգուտ քաղել այն վայրկենից, երբ Դռան գլխաւոր գնդերը Եանինայի պաշարմամբ բռնուած էին։

Յոյների դատի համար արդէն զօրեղ հետեւանքներ էին առաջ եկել։ Արդէն ծածանւում էր անկախութեան դրօշակը Կիաֆայի բարձունքում։ Բոլոր քաղաքացիական և քաղաքական յարաբերութեանց այս խառնափնդոր վիճակը, որ յառաջացել էր Թուրքերի ամենազօրեղ վասալի վտարանջումով, այժմ իւր պտուղներն էր բերում։ Ալին պաշտօնեաներ էր նշանակում, սուլթանն արձակում, մի կողմը գիտակցութեամբ, միւս կողմը համակերպուելով ճակատագրին ձեռնարկել էին մինչև ցարդ եղած կարգերը բոլորովին խարխլել և վերջապէս դիմեցին սրի և ույժի վճռաբեկ ատեանին։ Սակայն բռունցքի և յաջողութեան աւետարանը անպատիժ չէ կարելի քարոզել։ Երկու դիմամարտ ույժերի բաղխումից, որ ցարդ մի երրորդ ույժ ճնշելու համար միացել էին, այժմ այս երրորդը, ճնշուած ռայա ժողովուրդը միայն իսկական օգուտը քաղեց։ Բայց Իպսիլանտիսը հաւատում էր, որ այլեւս կարելի չէ մի վայրկեան անգամ յապաղել։ Մարտի 6-ի գիշերը 1821 ամի նա

հեռացաւ Քիշնեից ուղեկցութեամբ իւր եղբայրների՝ Նիկողայոսի և Գէորգի, ռուսաց գնդապետ Կանտակուզենոսի, լեհացի Գարնովսկու և քարտուղար Մանոսի։ Եօթի առաւօտեան նա հասաւ Սկուլէնի, անցաւ սառած Պրուտ գետը և երեկոյեան դէմ հասաւ Եաշի, որտեղ նա ուխտակիցներով և զինուորներով լցուած Կանտակուզենոսի ապարանքում իւր գլխաւոր կենտրոնավայրը հաստատեց։ Սկսուեցաւ մի իրարանցում, որ աւելի զգացմունքներ և տրամադրութիւններ զարթեցնելու համար էր, քան թէ վերահաս քաղաքական հանգամանքներից զգաստութեամբ տոգորուած լինելուց։ Իպսիլանտիսը գրկեց ներկայ եղող հետերականներին, նոցա տուաւ եղբայրական համբոյրը ասելով. «Ես գալիս եմ ձեզ հետ մեռնելու»։ Թերևս աւելի խելօք վարուած կը լինէր, այսպիսի խօսքերի պաթոսը խնայէր պահէր. վասնզի մի մեծ քաղաքական յեղաշրջման սկզբին ամեն սիրտ պապակում է թարմ մխիթարական խօսքի և գերեզմանական մահահրաւէր տրամադրութիւնը միշտ առանց այն էլ շատ շուտ կը հասնի։ Առաւօտեան մարտի 8-ին Եաշիի բոլոր փողոցների անկիւններում կարդում էին յոյներին ուղղուած մի թռուցիկ։ «Հելլէններ, երկար ժամանակից ի վեր Եւրոպայի ժողովուրդները կռւում են իրենց իրաւունքների և ազատութեանց համար և ձեզ յորդորում են նմանուելու։ Հենց որ ազատ լինիք, ձեր ուշ ու միտքը դարձրէք և ճիգ ու ջանք թափեցէք ազատութիւնը և ձեր բախտը հաստատելու։ Մեր բարեկամները՝ սերբերը և սուլեցիք արդէն պատրաստ են, ամբողջ Եպիրոսը ձեզ է սպասում զինուած և նմանապէս ազատութեան համար ոգեւորուած։ Եւրոպան դժկամակութեամբ իւր հայեացքն է ուղղում մեր դանդաղկոտութեան և շուարման վրայ։ Բովանդակ Յունաստանը պատրաստ է մեզ օգնելու, հնչում է պատերազմի շեփորը և զէնքի շաչիւնը։ Եւրոպան մեզանից քաջութեան հրաշքներ է սպասում, բռնաւորները դողդողում են և սրտապատառ պատրաստւում են ի փախուստ դիմելու։ Եւրոպայի լուսաւորուած ժողովուրդները զբաղուած են իրենց սեփական բարեկեցութեամբ, և համոզուած մեր նախնիքների ազնիւ բնաւորութեանը՝ Յունաստանի ազատութիւնն են ցանկանում։ Օ՛ն, ընկերներ, և իմացէք որ մի մեծ պետութիւն մեզ պիտի

աջակցէ: Ո՛րպիսի յոյն սիրտ կարող է հայրենիքի կոչին անտարբեր և անշարժ մնալ: Եթէ մենք կորստաբեր կուրութեամբ յապաղենք, այն ժամանակ բռնաւորի կատաղութիւնը կը սաստկանայ և ամեն թշուառութիւն ամպերից մեր վրայ կը թափուի: Բարձրացրէք ձեր աչքերը, ընկերներ, և դիտեցէք Յունաստանի ողբալի դրութիւնը: Տեսէք, ձեր տաճարները պղծուած են, ձեր դուստրները ձեզանից խլւում են բարբարոսների հեշտանքներին խայտառակ զոհացում տալու, ձեր տներն աւերակ, ձեր դաշտերն անապատ և դուք ինքներդ դժբախտ ստրուկներ: Խողխողուած Կեսարի արիւնոտ վերարկուն նորա բարեկամը ցոյց տալով հռովմայեցոց ժողովրդին բորբոքեց: Ի՞նչ կ'անէք դուք, հելլէններ, որոնց հայրենիքը իւր արիւնաքամ վէրքերն է ցոյց տալիս: Կանգնենք Մակեդոնիոյ և Թերմոպիւլէի միջև. մղենք պատերազմ մեր նախնիքների շիրիմների վրայ, նախնիք, որոնք իրենց ազատութեան համար կռուեցան և ընկան: Թուրքերը՝ Դարեհի և Քսերքսէսի այս մեղկ սերունդները, շատ աւելի նուազ ջանքերով կ'ընկճուին քան երբեմն պարսիկները»:

Նմանօրինակ բարձր մեծազգորդ մի հրաւիրակոչ արձակեց Հետերիայի ընդհանուր էֆորը Մոլդաւիոյ և Վալախիոյ բնակիչներին, կամ ինչպէս նա պերճաշուք հռչակում էր «Դակիացիներին»:

Ռումանացի գեղջուկը երևի գլուխը թափ տալով լսեց այս զարմանալի լուրը. այն միտքը, թէ մի յոյն իշխան Փանարեցիներով շրջապատուած Դանուբեան իշխանութեանց մէջ իբրև ազատութեան մունետիկ հանդէս է գալիս, մեծ մասին պէտք է դառն ծաղր թուէր: Բայց իրենք յոյները պատճառ չունէին օտար երկրում սկսուած իրենց այս ազատութեան սկզբնաւորութեան վրայ ուրախանալու: Այն ինչ որ Սուլիում սկսուած էր և Պելոպոննէսում շարունակուեցաւ, այդ ցոյց է տալիս, թէ յոյն ժողովրդի նախնական կեանքի զարկը որն է: Բայց որ մի ժողովուրդ, որ Յունաստանի մասին ոչինչ լսել և իմանալ չէր ուզում, Յունաստանի ազատութեան համար ի զէն կոչուեցաւ, իրօք մի ճակատագրական սխալմունք էր: Ուղիղ այդ պատճառաւ նշանակալից է, որ ապստամբութիւնը հիւսիսում խորտակուեցաւ, մինչդեռ հարաւում

ժողովրդական ջանքերը առաջնորդեցին դէպի ազգային անկախութիւն:

Ինչպէս որ Հետերիայի զարգացման պատմութեան մէջ եռանդուն գործունէութիւնն ու հայրենասիրական վճռականութիւնը անջատուեցան դանդաղկոտութիւնից և վախկոտ գործունէութիւնից, այնպէս էլ անցքերի երկար ընթացքում զատուեցան բուն ժողովրդական տարրերը օտար պատուաստուած տարրերից: Յիրաւի, նախախնամութիւնն ինքը գրել է նոր յոյների պետական կեանքի դռան չէմքին այն խրատը, որով Դեմոսթենէսը հազարաւոր տարիներ առաջ աթենացոց դիմեց գոչելով՝ «Պատկանեցէք ձեզ իսկ»:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եր.	Տող	Սխալ	Ուղիղ
1	26	յառաջ	յառաջ
2	9	ոդորումն	ոգորումն
»	15	անցկացնում	անցկացնում
»	25	հետքերը	հեաքերը
4	15	կաշառակերութիւնը	կաշառակերութիւնը
»	16	մահմեդականութիւնը	մահմեդականութիւնը
5	20	վարձադրութիւն	վարձաթրութիւն
8	19	դուշակութիւնը	գուշակութիւնը,
»	21	խանդլերը	Խանդլերը
9	29	արդելեցին	արգելեցին
»	31	դուգազը	գուգազը՝
13	33	կարլի է	կարելի է
14	23	Վօլթերը	Վոլթերը
15	20	ձեռվ	ձեռվ

16	19	բրդուԹիւն	բրտուԹիւն
17	5	ճակատադրական	ճակատագրական
»	34	գրտում էր	դրդում էր
24	12	գրական	դրական
25	31	խաղտեց	խախտեց
38	23	որ է	որ եւ է
43	36	փարեըի՝	փարերի
45	28	կերակչիւ	գերակշիռ
48	5	երրորգ	երրորդ
53	18	Պարդայի	Պարգայի
»	»	ի տերև	ի դերև
54	28	պաշարեալնըը	պաշարեալները
56	36	խեղտուեցաւ։	խեղդուեցաւ։
57	20	չչնչում էին	շշնչում էին
62	25	խանկարում էին	խանգարում էին
76	32	չիի	չիա
82	35	կարոջ եմ	կարող եմ
83	7	բերդ	բերց
84	33	Նդիպտոսի	Եգիպտոսի
88	5	յայանեց	յայտնեց
92	31	ծրադրերի	ծրագրերի
104	29	Ցունաստը	Յունաստանը
108	27	յաւագնուԹեամբ	յաւակնուԹեամբ
109	29	ընկնկլու	ընկնելու
121	6	յայտնուըաւ	յայտնուեցաւ

16	19	[illegible]	[illegible]
17	5	[illegible]	[illegible]
»	34	[illegible]	[illegible]
21	32	[illegible]	[illegible]
26	31	[illegible]	[illegible]
31	33	[illegible]	[illegible]
43	30	[illegible]	[illegible]
45	25	[illegible]	[illegible]
49	5	[illegible]	[illegible]
53	18	[illegible]	[illegible]
»	»	[illegible]	[illegible]
54	29	[illegible]	[illegible]
56	31	[illegible]	[illegible]
57	20	[illegible]	[illegible]
62	25	[illegible]	[illegible]
74	32	[illegible]	[illegible]
82	35	[illegible]	[illegible]
83	7	[illegible]	[illegible]
84	33	[illegible]	[illegible]
88	5	[illegible]	[illegible]
92	31	[illegible]	[illegible]
94	23	[illegible]	[illegible]
103	27	[illegible]	[illegible]
109	29	[illegible]	[illegible]
121	5	[illegible]	[illegible]

Հայաստանի Ազգային գրադարան
NL0421687

17699